



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material







ԱՐԵՎԱՆԻՐ ՄԵԼԻՔ


ԳՐՊԱՆԻ ՄԻԶԱՋԱՅԻՆ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ



ՆԻԿ ԵՐՐԻ

1930



«Հանրագիտակ-Միջազգային Բառարան»ի համար իրը
հիմք գործածած ենք մեր «Բառարան Օտարազգի Բա-
ռերի» գրքոյլը, հրատարակւած Բուտոն, 1912-ին։ Ըս-
դարձակ նոր նիւթերին կցած ենք նաև, իրը առանձին յա-
ւելւած՝ Խ. Հայաստանում ընդունված յատուկ անուննե-
րի եւ բարդ բառերի կրնատումների ցանկը։

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԵԼ՝
DICRAN SIRAMARK,
THE DIXIE PRESS
243 East 24th Street
New York, N. Y.
U. S. A.

ԱԻՂԵՑՈՅՑ

Օտարազգի քաղերի հայերէն տառադարձութեան մէջ
մենք հետեւած ենք կովկասահայերին, որոնք ընդունում
են:—

Լատիներէն համապատասխան Հայերէնին:

B—Բ..

C—Ս, Զ, Կ

D—Դ

G—Գ, Ճ

P—Պ

T—Տ

K (Գերմաներէն) —Կ

Հետեւարար եւրոպական որեւէ լեզվից վերցւած բառ,
ինչպէս absolut (absolut), anti-semitisme, conglomer-
erat, ideal, collective, proletariat եւ այլն՝ մենք գրում
ենք՝ արտօլիտ, անտիսեմիտիզմ, կոնգլոմերատ, իդէալ,
կոլլեկտիվ, պրոլետարիատ, փախանակ Արեւմտահայերի
այս գրելու ապառիւղ կամ ափսոլիւր, գոնելամերադ
կամ բանկլումերար, իտէալ, բոլեֆրիվ, փրոլեքտարիար
կամ բրոլեդարիադ եւ այլն:

Յոյն եւ Լատին պատմազիրները մեզանից 15-20 դար
առաջ Հայերէն յատուկ անունների տառադարձութեան
մէջ Արտօւատ, Տիգրան, Անահիտ, Պապ, Տրդատ, Արշակ
եւ այլն՝ զրած են՝ Artashat (Artachat), Tigranes, Ana-

hita, Pap, Tiridates, Archac, ինչ որ կատարելապէս ներդաշնակ է Արեւելահայ (Կովկասահայ) տառադարձութեան:

Արեւմտահայերի գործածած օտար բառերի իմաստը մեր Հանրազիտակի մէջ գտնելու համար՝ պէտք է նայել Բ-ն՝ Պ-ի փոխարէն, օրինակ՝ Պուտիզմ (Պուտտիզմ) նայել Բուդդիզմ. Գ-ն՝ Կ-ի փոխարէն, օրինակ՝ Կեդդօ նայել Գետո. Դ-ն՝ Տ-ի փոխարէն, օրինակ Տարվինիզմ նայել Դարվինիզմ. Կ-ն՝ Գ-ի կամ Ք-ի փոխարէն, օրինակ՝ Գոնկրէս կամ Քոնկրէս նայել Կոնցրէս. Պ-ն՝ Բ-ի փոխարէն, ինչպէս բարազիդ նայել պարազիտ. Տ-ն՝ Գ-ի փոխարէն, ինչպէս դրանզիդ նայել տրանզիտ եւ այլն:

Խ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Խ. Հայաստանի գրականութեան եւ մամուլին հետեւաղ անձերը մեր Հանրազիտակով օգտւելու պարագային նկատի առնելու են հետեւեալը.—

Նոր ուղղագրութեամբ այրուրենից դուրս են նետւած է եւ օ տառերը. Ե տառը գործ է ածում է-ի հնչումով, օրինակ եակ, եգ (էակ, էգ), Ե հնչումով բառերի մէջ Ե-ից առաջ դրում է յ տառը, որով յե ընդումում է Ե-ի հնչում, ինչպէս Յերեւան, յերեւակայություն, յերեկո (Երեւան, Երեւակայութիւն, Երեկոյ), ո տառը ընդումած է օ-ի հնչում, օրինակ՝ որակարգ, որիորդ (օրակարգ, օրիորդ). Ո հնչումը արտայայտելու համար գործ են ածում վո երկու տառերը, օրինակ՝ վորովիետեվ, վորպիսություն. իւ միացեալ երկու տառերի հնչումը, ինչպէս զիւզ, արիւն, ուրախութիւն բառերի մէջ՝ տեղի է տևել յու երեք տառերի նոյն հնչման — զյուղ, արյուն, ուրախություն. Եա երկու տառերի հնչումը, ինչպէս Գրի-

պորեան, լուսաւորութեան անունների եւ բառերի մէջ՝ փոխարինել է յա երկու տառերի նոյն հնչման — Դրիգորյան, լուսաւորության:

Հետեւոքար՝ Խ. Հայաստանի գրականութեան եւ մամուլի մէջ հանդիպած ե ձայնաւորով սկսող բառերի իմաստը մեր Հանրապիտակի մէջ գտնելու համար պէտք է նայել է-ով սկսող բառերի կարգում, օրինակ եզրիզմ, ելեբսիր, եկոնոմիա բառերի համար նայելու է էզրիզմ, ելեբսիր, եկոնոմիա. յե միացեալ երկու տառերով սկըսուղ բառերի համար նայելու է ե-ով սկսող բառերի կարգում. վո-ով սկսող բառերը պէտք է փնտռել ո-ի շարժի մէջ, իսկ ո-վ սկսող բառերը օ-ի շարժի մէջ:

ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

- Ար .— Արաբերէն
Աճ .— Աճղլիերէն
Աս .— Ասորերէն
Գր .— Գերմաներէն
Լզ .— Լզիստերէն
Թթ .— Թթիւրժերէն
Թր .— Թարարերէն
Լհ .— Լհերէն
Լտ .— Լատիներէն
Հն .— Հնդկերէն
Հր .— Հրեկերէն
Հպ .— Հապոներէն
Մն .— Մոնղոլերէն
Մչ .— Մանչուկերէն
Յն .— Յունարէն
Շվ .— Շվեդերէն
Զն .— Զինարէն
Պր .— Պարսկերէն
Ռս .— Ռուսերէն
Սս .— Սանսկրիտերէն
Սր .— Սերբերէն
Վր .— Վրացերէն
Ք . Ա .— Քրիստոսից առաջ
Ք . Յ .— Քրիստոսից յետոյ
Յտ . Ա .— Յատուկ անուն

Ա

ԱԲԱԺՈՒԽ. Յոր.— Լուսամփոփ — Լամպաների կամ մոմերի լոյսը ամփոփող ծածկոց :

ԱԲԱՍ. Պր.— 1) Պարսկական դրամ, մէկ քումանի 50-րդ մաս, հաւասար մօտ 2 սէնթի. 2) Վրացիների համար՝ Ռուսական 20 կոպէկանոց արծար (Աբասի), հաւասար մօտ 9 սէնթի :

ԱԲԲԱ. Խոր.— Կարողիկ վաճական :

ԱԲԴԱԼԼԱՀ. Ար.— «Աստուծոյ ստւեր», ստրուկ-քափառական դերվիչի ածական, Պարսկաստանում եւ Հնդկաստանում :

ԱԲԴԵՐԵԱՆՆԵՐ. Յն.— Թրակիայի (Յունաստան) մէջ համանուն քաղաքի քնակիչներ, որոնց ազուրուրինը առածի կարգն անցած էր :

ԱԲԴԻԿԱՑԻԱ. Լոտ.— Կամաւոր հրաժարում որեւէ արտօնուրիննից կամ պատոնից, աւելի յանախ՝ քաղաքական քնոյքով :

ԱԲԴՈՒԿՑԻԱ. Լոտ.— Փիլիսոփայուրեան մէջ՝ մէկ կամ մի քանի նախադասուրինների մերժում մի որոշ ապացոյցի համար, որն անհրաժեշտ է պարզ ճեւով ներկայացնել :

ԱԲԵՐՐԱՑԻԱ. Լոտ.— 1) Սովորական ուղղութիւնից կամ չափից շեղում. 2) Մոլուրիւմ :

ԱԲԵՑԵԴԵՐԵԱՆՆԵՐ, Լու.— 1) Տղետ, համբակ, այբ-
ու բէնը չգիտցող. 2) Եզիպտոսում ծնունդ առած Յոյն
կրօնականների մի աղանդ, որոնք բացարձակ տղիտու-
րիւնը միակ միջոցն էին համարում Քրիստոսի բազալ-
ուրեանն արժամանալու համար:

ԱԲԻՌԻՏԱՑԻԱ, Լու.— Մարմնի որեւէ մասի մէջ կին-
ումակուրեան նւազում:

ԱԲԻՒՐԱՑԻԱ, Լու.— Հրավարակային կամ մամուխ
մէջ հրաժարում կրօնից կամ բաղամական որու սկզբուն-
ից:

ԱԲՆՈՐՄՈԼ (Աննորմալ), Յն.— Անբնական, անկա-
նոն. արտասավոր:

ԱԲՈՒԻՑԻՌՈՆԻՍ, Լու.— 1) Այն անհատ, որը ճրգ-
տում է գոյուրին ունեցող մի հին օրէնք կամ դրուրին
տապալել նոր օրէնքով կամ նոր դրուրեամբ. 2) Թօնամի-
հակառակորդ. 3) Միացեալ նահանգներում սեւամորբ-
ների գերուրեան հակառակորդ. 4) Պոռնկուրիւնը խիստ
օրէնքներով հալածելու կողմնակից:

ԱԲՌՆԵՆԵՆՏ, Ֆր.— Որու վարձատրուրեան փոխարէն
սահմանափակ ժամանակաշրջանի համար պայմանաւոր
իրաւունքով օգտևելու արտօնուրիւն ունեցող, օրինակ՝
քերքի բաժանորդ:

ԱԲՌԻՒԳԵՆ, Լու.— Բնիկ. տեղացի:

ԱԲՌԻ, Ար.— «Հայր», որ գործ է ածւում նաև յա-
տուկ անւան տեղ, օրինակ՝ Արու-Լալա՝ Լալայի-Հայր:

ԱԲՌԻԼԻԱ, Յն.— Կամազրկուրիւն — հոգեկան հի-
ւանդուրեան մէկ տեսակ, երբ ենթական իր կամքի տէրք
չէ:

ԱԲՍԵՆՏԻԶՄ (Աքսամտիզմ), Լու.— 1) Ծննդավայրից
տեւական բացակայուրիւն. 2) Հարուստ կալւածտէրերի

Խուսափում գիւղական միջավայրից՝ մեծ քաղաքներում գւարը ու զեղին կետնիք վարելու համար. 3) Ընտրական պայքարի ժամանակ բւէարկութիւնից խուսափում:

ԱԲՍՈԼԻՒՏ, Լու. — 1) Բացարձակ. անպայման. անսուհման. 2) Փիլիսոփայուրեան մէջ՝ անքերի, կատարեալ նումարտութիւն. 3) Քաղաքական իմաստով՝ ինքնիշխան. միահեծան. ինքնակալ — հոմանիս բռնապետին:

ԱԲՍՈԼԻՒՏԻՉՄ, Լու. — 1) Բացարձակութիւն. անսուհմանուրիւն. կատարելուրիւն. 2) Բացարձակապետութիւն, որ հոմանիւ է վայրագ, կոպիտ բռնապետուրեան, ինչպէս Ցարիզմ, Սուլքանիզմ, Յաւիզմ եւ այլն:

ԱԲՍՈԼԻՒՏԻՇՄ, Լու. — 1) Բացարձակութեան հաւատացող. 2) Բացարձակապետուրեան կողմնակից:

ԱԲՍՈՒՐԻԴ, Լու. — Անհերերութիւն. խելքից դուրս մի քան:

ԱԲՍՏՐԱԿՏ, Լու. — Վերացական. մտացածին:

ԱԲՍՏՐԱԿՑԻԱ, Լու. — Վերացականացում. ընդհանրացում, օրինակ՝ տրամաբանուրեան մէջ՝ երբ ներկայացւած փաստերի հիման վրայ պէտք է մի ընդհանուր օրինիք համել, եւ կամ իրերի մէջ նկատի առնել նրանց յատկանական մէկ կողմը եւ ապա միայն այդ իրերի մասին ընդհանուր կարծիք ձեւակերպել:

ԱԲՐԵԿ. — Կովկասեան ռազմիկ լեռնական:

ԱԳԱՄԵՄՆՈՒՆ, Յու. Ա. — Միկենացիների քագաւոր, որ Յոյն միացեալ բանակի ընդհանուր երամանատարն եղաւ Տրոլադական պատերազմի ժամանակ:

ԱԳԱՊԵ, Յու. — Հիմ Յունաստանի մէջ անառակութեան յատկացւած կրօնական յատուկ գիւերմեր:

ԱԳԵՆՏ, Լու. — Գործակալ. ներկայացուցիչ:

ԱԳԻՆՏՈՒՐԱ, Լու. — Գործակալուրիւն. ներկայացնուցուրիւն:

ԱԳԻՆԵԱԱՆՆԵԲ. — Կրօնական աղանդաւորներ Ժ. բդ դարում, որոնք հակառակ էին ամուսնութեան և սեռային հաճոյ բնիքին:

ԱԳԻՏԱՏՈՐ, Լու. — Քարոզիչ. գրգռիչ. դրդիչ, օրինակ՝ կառավարութեան կամ բաղամական կուտակցութեան գործակալ, որի պաշտօնն է որու նպատակի համար յուզել, զրգուել բնակչուրիւնը կամ բրոստուրեան մղել:

ԱԳԻՏԱՑԻԱ, Լու. — Գրգռում. դրդում. յուզում՝ որեւէ նպատակի համար, աւելի շուտ՝ բաղամական-հասարակական շահերի անունով: Ազիտացիս կարելի է մըդել մամուլի, կենդանի խօսի, երդի, նկարի և ներկայացումների միջոցով: Ազիտացիայի նպատակն է համրուրիւնը վնասական բայլերի մղել, առանց երկարատև յետագման:

ԱԳԻՆՈՍԻԹ, Յն. — 1) Փիլիսոփայական տեսուրիւն, որ մերժում է բննելու այն երեւոյրները, որոնք մարդկային մոտի մատչելիութեան սահմանից դուրս են. 2) Կրօնա-փիլիսոփայական տեսուրիւն, որ մերժում է Աստուծոյ գոյուրիմը, հիմնելով բնուրեան մատչելի տրեհալների վրայ, և միաժամանակ բնիունում, որ քերես նա կայ, բայց մեզ համար անմատչելի է, և եւ հետեւարար պէտք չունինք նրանով գրադւելու: Ամերիկայում ամենից յայտնի ազնուսուիկ փիլիսոփաներից մէկն է նկատաձ Կ. Մանկասարեան, որի բազմարիւ անզիւերէն հեղինակուրիւններից ումանք բարգմանւած են տասնեակ լեզուների:

ԱԳՈՆԻԱ, Յն. — Հոգեվարք. մահամերձի տաճշանք:

ԱԳՈՆԻԱՏ, Յն. — Ըմբիւ:

ԱԳՈՆԻԱՍԻԹ, Յն. — Ըմբիւմարտուրեան յարմար.

ըմբիւսամարտութեան արւեստ մարտնամարզական :

ԱԳՐԱՐ, Յն.— 1) Հիմ Արէնիքի մէջ համրային հրապարակ. 2) Շուկայ :

ԱԳՐԱՐ, Լտ.— 1) Հողային. Երկրագործական. 2) Խուռար հոգատիրութեան պատուան հոսանք կամ կուսակցութիւն, որը հետապնդում է մասսային ծանր տուրքերով օտար երկրներից ներածող մքերքների մուտքը կասեցնել, սեփական արտադրութիւնների գիմները բարձրացնելու, ի վճառ սպառող ժողովրդին :

ԱԳՐԱՐ, Յն.— Հոգեկան հիւանդութիւն. Երբ ենթական անկարող է զրաւոր կերպով իր միտքն արտայայտելու :

ԱԳՐԵԳԱՏ, Լտ.— Համանման կամ տարրեր նիւթերի խառնուրդ. միանոյլ գանգուած :

ԱԳՐԻՈՆԻԱԼ, Յն.— Գիւերային տօմախմբութիւն եին Ցոյների մէջ ի պատիւ գիմարքութիւն աստւած Բաքոսի, զքարբութիւններով եւ հերանոս Վայելքներով :

ԱԳՐԻՈՆԻՄԻԱԼ, Յն.— Հոգեկան հիւանդութիւն, Երբ ենթական պահանջ է զգում ոնիր եւ խժդժութիւններ գործելու:

ԱԳՐՈՍԱՆԻԱԼ, Յն.— Հողասիրութիւն, հողամոլութիւն — Երկրագործութեան համար ծայրայեղ սէր:

ԱԳՐՈՆՈՄ, Յն.— Երկրագործութեան մասնագէտ :

ԱԳՐՈՆՈՄԻԱԼ, Յն.— Երկրագործութիւնն ուսումնասիրող գիտութիւն. գիւղատնեսութիւն :

ԱԴԱԹ, Աբ.— 1) Վիճելի հարցերի լուծում ոչ քէ օրինական ձեւով, այլ հնաւանդ սովորութեան համաձայն. 2) սովորոյք :

ԱԴԱՄԱՆԴ, Յն.— Ամենից ընտիր եւ քամկարժէք քար. զնիար. լինում է տարրեր գոյներից. ալմաս :

ԱԴԱՄԵԱՆՆԵՐ, Յտ. Ա. — Քրիստոնեայ աղանդաւորմեր Բ. ից մինչեւ Գ. թղ դար, որոնք «Աղամայ մեղքը չզործելու համար մերժում էին սեռային հանոյներ»:

ԱԴԱԼԶԻՈ (Աղամիօ), Խտ. — Երաժշտուրեան մէջ ճայների մեղմ, հանդարտ եկեղեց:

ԱԴԵԼՌՊՈԴ, ՅՅ. — Ասք չունեցող կենդանի, օրինակ՝ օճ, որդ եւ այլն:

ԱԴԵՊՏ, Լտ. — 1) Որեւէ վարդապետուրեան կամ կրօնական աղանդի ամեղամ. 2) Հետեւորդ. կողմնակից. դաւանակից:

ԱԴԵՖԱԴԻԱԼ, ՅՅ. — Անյագուրդ, հիւանդու ժադցածուրին. ծայրային որկրամոլուրին:

ԱԴԻԱՅՈՒՐԱ, ՅՅ. — 1) Անտարբերուրին կրօնական հաւատալիքների հանդէպ. 2) Կրօնական խորհուրդ ունեցող մի տևել, որի հանդէպ խնդրի առարկայ եղած անձը անտարբեր է. 3) Բարոյական փիլիսոփայուրեան մէջ Ադիաֆորա կոչում են այնպիսի գործողուրիւններ, որոնք ոչ վատ են, ոչ լաւ են, օրինակ՝ զնչել, նառել, երբալ:

ԱԴԻԲՈՒԴԻԱԼ, Սս. — Հնդկական դիցարանուրեան մէջ առաջին. նախնական Բուդդա, հայր աստւած, որից ծագում առին բոլոր միւս երկրորդական Բուդդաները:

ԱԴԻՆԱԾԻԱԼ, ՅՅ. — Անուժուրին, բաւլուրին. մարմնի բնդիհանուր անգօրուրին:

ԱԴԻՒԴԱՆՏ, Լտ. — Զինուրական հրամանատարի կամ միապետի հրամանակատար սպայ. թիկնապահ:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ, Լտ. — Վարչական ձեւով, օրինակ՝ ախոր, բանտարկուրին, մահապատիժ՝ ոստիկանուրեան հրամանով, առանց դատավարուրեան:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ. ԿՈՐԴ. — Երբ օրէնքի փոխարէն

վարչական խնդիրները վճռում են բարձր պատօնելու-
թեան անձնական հայեցողութեամբ կամ հմահանոյ քոյ :

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱԼ. Լտ.— Պետական կամ մասնաւոր
հաստատութիւնների վարչութիւն :

ԱԴՄԻՐԱԼ. Ար.— Մովային գօրքերի բարձրագոյն
իրամանատար. ծովակալ. ծովապիտ :

ԱԴՐԵՆԻՍ. Յն.— 1) Յոյն դիցարանութեան մէջ Կիպ-
րոս կղզու վրայ ծնւած մի հրաւագեղ պատանի, որին
սիրահարւեց իմբը Ափրոդիտէն. սիրոյ ասուածուիին :
Գոխարերական իմաստով՝ հազարդիւտ զեղեցկութեամբ
պատանի : 2) Թիրեռնիկի մէկ տեսակ, չափազանց զեղե-
ցիկ :

ԱԴՐՊՏԵԱՆՆԵՐ. Լտ.— Կրօնական մի աղանդ, որն
ընդունում էր թէ Քրիստոս ոչ թէ իրօք Աստուծոյ որդի
էր, այլ մի որդեզրւած զաւակ :

ԱԶԱՐՏ. Ֆր.— 1) Պատեհութիւնից կախում ունե-
ցող. 2) Յափառակութիւն. իմբնամոռացում. զրգում:
3. Ազարտ խաղեր են բդրախաղ եւ այն ամեն խաղերը,
երբ խաղացողները իմբնամոռացութեան մէջ մեծաքանակ
գումարներ վտանգի են ենթարկում :

ԱԶՆԱՎՈՒՐԻ, Վր.— Նախայեղափոխական վրաստա-
նում տուիմիկ ազնւականների դասակարգ՝ ծոյլ, զեղլս,
պատօնների ետենից ընկած, ցարական բնապետութեան
համոյակատար :

ԱԹԱԲԵԿ. Թր.— Սելջուկեան բնապետութեան ըլր-
ջանում Հայաստանի մէջ վասար հայ իշխանների տիտ-
պոս :

ԱԹԵՆԱՍ-ՊԱԼԼԱՍ, Յն.— Յոյն դիցարանութեան մէջ
Զեւսի (Արամագդ) աղջիկ. ծնւած նրա զիլից, իմաստու-
թեան եւ արդար պատերազմի աստւածուիի :

ԱՓԵՒԶՄ, Յն.— Աստուծոյ գոյուրիւնը մերժող զի-
տուրիւն — անաստածուրիւն։ Արէիզմի տեսուրեամբ
ստեղծագործուրիւնը բնական կոյր ոյժերի մի արտայայ-
տուրիւն է եւ նախախնամական որեւէ հոգատարուրիւն
բաժին չունի տիեզերքի գոյավինակի մէջ։ Իբր ազատ մը-
տածելակերպ՝ Արէիզմը իր ռահիվրաններն ունեցած է դա-
սական Յունաստանի եւ Հռոմի մէջ, ուր բազմարիւ փի-
լիստփաններ եւ զրագէտներ կասկածով նայած են հերա-
նոս աստածների, աստածուրինների եւ ամեն կարգի գե-
րազոյն էակների պատամունքի վրայ, եւ ոմանք համար-
ձակ կերպով հեզնած են ժողովրդական սնոտիապատու-
րիւնները։ Մահմեդական մոլեռանդ Պարսկաստանում
հոչակաւոր բանաստեղծ Օմար Խայամ նրբօրէն ծաղրած է
Աստուծոյ գոյուրեան զաղափարը իր չժնազ ժառնակների
մէջ։ Եւրոպայում, սակայն, կարոյիկ մոլեռանդուրիւնն
ահաւոր հալածանքի ենթարկեց մարդկային մտքի ամեն
մէկ նիզ՝ ժննական բովի մէջ անցնելու դաւանական տե-
սուրիւնների տիրող հոսանքները։ Միի իոնմաւոր կեանքեր
խաւարեցրին Պապի պատօնեանները հաւատաբննական
տանշարաններում եւ խարոյկների վրայ, յանախ դեռա-
տի աղջիկներ եւ փոքրահասակներ խուսանզելով եւ ըս-
պաննելով, իբր հերետիկոսներ — հերաւածողներ։ Կրօնա-
կան սնոտիապատուրիւնը երկար տեւեց, նոյն իսկ հա-
ւատաբննուրեան դէմ պետուրիւնների յարուցած ար-
գելքներից յետոյ։ Տակաւին ոչ այնքան հեռաւոր անց-
եալում, հազիւ 175 տարի առաջ, «Ժաղաքակիրք» Զւի-
ցերիան հանդիսատես եղաւ մի հոյակապ տեսարանին,
եբր Ժընեվի մէջ ամրող ազգարնակչուրեան երկիւլած
աչքերի առջեւ մահապատճի ենթարկեց մի փետրաւոր
արարած — մի աֆաղաղ, որ համարձակուրիւնն ունեցել

Էր ժամանակից դուրս կանչելու, եւ մեղադրւել էր կարովիկ վարդապետների կողմից իբր չար ոգին իր մէջ պահող վիուկ: Արէիզմը Եւրոպայի մէջ գօրաւոր արմատներ նետեց Ֆրանսիական կնուկլոպեդիատների ոքանից յետոյ: Արէիզմը ժաշակերտում է ներկայիս Խ. Միութեան մէջ:

ԱԹԵՒՍ, Յն.— Անաստածուրեան հետեւող, անաստած:

ԱԺԻՈՏԱԺ. Ֆր.— Բորսայի (Ակարան — Լէսչէյնչ) մէջ արժեքուղերի առարկուրին, նրանց զիների անկման եւ վերելքի վրայ հիմնաւած:

ԱԺՈՒՐ. Ֆր.— 1) Արծարեղէն, ոսկեղէն եւ այլ նիւթերի վրայ նուրք ճեռագործ. 2) Թանկազին գոհարները ոսկեղէն կամ արծարեղէն շիմնած քով պատելու արհեստ:

ԱՀԱԻԱ. Յն.— Խլուրին:

ԱՀԱՆՆԵՐ (Ալանացիք).— Ներկայիս Օսետիններ (Օսեր) կոչող կովկասի լեռնական ժողովուրդ, Վլատիկավկազի ուուրչ եւ հիւսիսային վրաստան: Հայ պատմուրեան մէջ յիւրում են իրենց մի ժանի արշաւանքների առիրով՝ Հայաստանի վրայ:

ԱՀԱԲԱՆԴԻԶՄ, Յտ. Ա.— 1) Գեղարւեսի մէջ նաևկի եւ ընտրուրեան բացակայուրին, 2) Տգէտ կարծիք:

ԱՀԱՐՄԻՍ. Ֆր.— 1) Աղմկարար, խոռվայոյզ. 2) Հասարակուրեան մէջ յուզիչ, խարդախ լուրեր տարածող. 3) Լրագրական աղմկարար, անպարկեւտ ուղղուրին: հակառակորդ հոսանքին վնասելու համար:

ԱՀԲԱԴԱԲԱՆ, Ար.— Արարական մի առասպելի համաձայն մարդու մէջ գոյուրին ունեցող մի յախտենական փաքրիկ ոսկոր, որ երբէք չի ոչնչանում, նոյն խոկ

գերեզմանի մէջ, եւ որից պիտի վերածնւի մնուալը՝ մեծ դատաստանի օրը:

ԱԼԲԱՏՐՈՒ, Սպ.— Հսկայ քռչուն, անգղների սերունդից, Աւտորալիական կղզիներում:

ԱԼԲԻՌՆ, Յն.— 1) Յոյն դիցարանուրեան մէջ ծովերի աստած Պոսէյդոնի (Նեպտուն) որդի, որ հիմնադիրն եղաւ Անգլիական պետուրեան. 2) Կելտացիների կողմից Անգլիացիներին տրւած անուն՝ խորամանկ, դաւադիր իմաստով:

ԱԼԲՈՄ, Ֆր.— Գիրք, որի մէջ ամփոփում են պատկերներ, լուսանկարներ, բաց-նամակներ, բանաստեղծութիւններ եւ այլն:

ԱԼԴԵԲՐԱ (Ալներրա), Ար.— Հանրահաշիւ — անորոշքիւրով զրադւող մատեմատիքական գիտուրիւն, հակառակ բւարանուրեան, որ որու քիւրով է զրադւում: Շւրիւ խօսելով՝ հանրահաշիւը վերացական քիւրով զրադւող գիտուրիւնն է, եւ քիւրի փախարէն զիրերով եւ յատուկ նշաններով է արտայայտում, որոնք կարող են որեւէ մեծուրիւն ունենալ:

ԱԼԴԵԲՐԱՆ, Գր.— 1) Համայնքի կողմից ընտրւած ներկայացուցիչ. 2) Անգլիայի եւ Մ. Նահանգների մէջ քաղաքային վարչուրեան անդամ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, Յտ. Ա.— Եզիպտոսի մէջ Պտուղմէոս (Պտղոմէոս) Բ. կողմից հիմնւած հայկապ գրադարան, Քրիստոսից մօտ երեք դար առաջ: Յետագային հոչակաւոր կլէոպատրա Թագուհին նոյսացըրեց այն, իին աշխարհի գրական անգուգական գործերով: Գլխաւոր իրաւակերտ էկմէից զատ ուներ նաև մի տարք նիւղաւորուրիններ, քաղաքի տարբեր բաղամասերում: Քրիստոնէուրեան առաջին ռահվիրանները՝ յոյն

տղէս եւ մոլեռանդ կդերներ այրեցին գրադարանի մի մասը, իբր հերանոսական վճասակար յիշատակարաններ, նիւտ այնպէս, ինչպէս Դրիգոր Լուսաւորիչը ոչնչացրեց նախաքրիստոնէական Հայաստանի ամզին մատենադարանները: Մահմեդականութեան երկրորդ խալիֆը, Օմար (634-644) իր արեան եւ կոտորածի տիրապետութեան մէջ գրաւեց նաև Եղիպտոս եւ հրամայեց ոչնչացմել Ալեքսանդրիայի գրադարանը. դիտելով քէ՝ «Երէ այս գրքերի մէջ կամ այն բաններ գրւած, որ արդէն Ղուրանի մէջ կամ՝ ուրեմն աւելորդ են, Ղուրանն էլ բաւ է. իսկ երէ իրենց մէջ չկամ այն բաններ գրւած, որ Ղուրանի մէջ կամ՝ դարձեալ աւելորդ են»: Եւ միլիոննոր մազադարեայ ձեռագիրներ եւ պատիրուսներ — իին ժաղաքալրութեան անզին հաւաքածոններ՝ իբր վառելիք գործածւեցին Ալեքսանդրիայի 1500 բազանինների մէջ տմբողջ վեց ամիս:

A 13305

Ա.Ե.Ք.ՍԱՆԴԻՐԵԱՆ ՇԲԶԱՆ.— Նախաքրիստոնէական ժաղաքալրական հոյակապ ըրջանն Եղիպտոսի մէջ, իին աշխարհի մտաւոր վերելքի կենտրոնավայրը հանդիսանալով Ալեքսանդրիա մայրաքաղաքը: Աստիճանական անկմանը զնաց քրիստոնէութեան առաջին ըրջանում, յոյն կդերի մեռցնող ուրեմչի տակ, եւ բոլորովին անհետացաւ Արարական բանապետութեան օրով:

Ա.Ի. Ար.— 1) «Վաեմութիւն», «քարձութիւն» իմաստով գործածուող տիտղոս. 2) Յատուկ անուն:

Ա.Ի.ԱՆՆ. Յըր.— Դաշնակցութիւն. համաձայնութիւն. միութիւն:

Ա.Ի.Ի.Ի. Լտ.— Իրաւագիտութեան մէջ՝ անքաստանեալի անպարտութեան ապացոյց այն փաստի հիման վըրայ, քէ ոնիրը գործած միջոցին նա ուրիշ տեղ էր գըտնըում, եւ հետեւաբար չէր կարող այդ ոնիրը գործել:

ԱԼԵԳԱՏՈՐ (Ըլիգեյտը), Ապ. — Ամերիկան կոկորդիոս, մեծութեամբ աւելի փոքր, բան Աֆրիկան եւ Ասիական տեսակները :

ԱԼԻՄԵՆՏ, Լտ. — Ապրուստի միջոց՝ աղբիւր :

ԱԼԻՄԵՆՏԱՅԻԱ, Լտ. — 1) Ապրուստի միջոցների հայրայրում. 2) Ապօրինի մանուկների հոգատարուրին. 3) Մատակարարուրին, օրինակ՝ բանակի, հիւանդանոցի, ապաստարանի եւ այլն :

ԱԼԵԿՊԱՅԻԱ, Լտ. — Խօսակցութեան կամ զրւածքի մէջ յայտնի հեղինակնեց բերւած վկայուրին :

ԱԼԵԿՊՈՐԻԱ, ՑՅ. — Այլարանուրին — առակով, պատմած բով կամ օրինակով միտքը հասկացնելու եղանակ. Խօսակցութեան կամ զրւածքի մէջ :

ԱԼԵԿԹԻՒ, Խտ. — Վիճակահանուրին :

ԱԼԿՈՀՈԼ, Ար. — Հացահատիկներից, պատուղներից եւ բուսական այլ տեսակներից ռողիացումով պատրաստըւած անգոյն հեղուկ, բռնիւող, չառչող, իբր խմիչք՝ զինովցնող : Գործ է ածում իբր դեղ, ինչպէս նաև քիմիական նիւթերի մէջ :

ԱԼԿՈՀՈԼԻՖՈՐ, Ար. — Ալկոհոլի գործածութեան մոլուրին. արքեցողուրին :

ԱԼՄԱՆԱԿ (Ալմանակ), Ար. — 1) Տարրեր հեղինակների գործերից հաւաքածու. 2) Տարեցոյց բազմազան բռվանդակութեամբ :

ԱԼՏԵՐՆԱՏԻՎ, Լտ. — Անիրաժեշտ ստիպողականուրին երկու իրար հակասող վնիւններից կամ կարծիքներից մէկն ընտրելու, օրինակ՝ սէր կամ ատելուրին, պատիժ կամ ներում :

ԱԼՏՈ, Խտ. — Կանացի ցած ձայն :

ԱԼՏՐՈՒԻՖՈՐ, Լտ. — Այլասիրուրին, Օտարասիրու-

Քիւն. — Անտահախնդիր տրամադրութիւն, մղում՝ ուրիշ անհատների, համայնքի կամ ընդհանուր մարդկութեան բարօրութեան եւ երջանկութեան ծառայելու. նոյն իսկ սեփական չահերն ու կեանքը վտանգելու պայմանով :

Ա. ՏՐՈՒԻՍ. Լու. — Ուրիշի բարեկեցութեան հոգ տանող, իմբն իրեն զոհարերող :

Ա. ՔԻՄԻՍ. (Ալխիմիա), Ար. — Ներկայ ժիմիարանութեան միջնադարեան անում: Իրը դրական զիտուրիւն՝ Ալխիմիան իր ժամանակին ներելի քերի վիճակն ուներ, ինչ իարային հրացնների խմբումով. այդ զիտուրեան հետեւորդները հաւատում էին քեր հնարաւոր էր յայտնագործել «անմահութեան ջուրը», որով մահը պիտի հալածեր աշխարհից. փորձում էին գտնելու «փիլիսոփայական ժարը», որ հասարակ մետաղները ուկու պիտի փոխեր:

Ա. ՔԻՄԻԿՈՍ (Ալխիմիկոս), Ար. — Ալխիմիային հետեւող, միջնադարեան ժիմիարան:

Ա. ՅԱ. Ցն. — Ցումական այրուրենի առաջին տառ — ա: Վերջինն է Օմեգա — օ: Մի զրւածքի կամ խօսակցութեան մէջ Ալֆա եւ Օմեգա նշանակում է՝ առաջինն ու վերջինը:

Ա. ՅՈՒՆՍ. — Ցատուկ անուն, որ փոխարերական ինմասուկ նշանակում է անտառակ կիմերին շահագործող, նրանց յանախորդ հայրայրելով. կաւառ:

ԱԿԱԴԵՄԱԿԱՆ Վէճ. Ցն. — Գեղեցիկ, բարձր ոնով վէճ, որ զուրկ է գործնական արժէքից:

ԱԿԱԴԵՄԻԱ. Լու. — Ճեմարան. 1) Մի պարտէզի անուն, որ պատկանում էր Ակադեմոս անումով Ցոյնին, եւ ուր հոչակաւոր փիլիսոփայ Պլատոն դասաւանդում էր իր աշակերտներին. 2) Բարձրագոյն դպրոց, նեմարան,

ուր յատուկ մասնագիտութիւնն է դասաւանդում. 3) Գիտնականների ընկերակցութիւն. կանոն :

ԱԿԱԴԵՄԻԿՈՒԹՅԱՆ, 36.— 1) Ակադեմիայի անդամ, նեմարանական. 2) Գիտույթ տիտղոս, որ տրում է ակադեմիայի կողմից (Խ. Միուրեան մէջ նաև կառավարութեան կողմից) զիտական արժեքաւոր օգտակարութեան համար :

ԱԿԱԴԵՄԻԿՈՒԹՅԱՆ, 36.— Թիւատութիւն. կակագում :

ԱԿԻԵԶԻԱ, 36.— Կնոջ ամլութիւն :

ԱԿՈՌԻՇ, 36.— Երաժշտութեան մէջ տարրեր հընչումների ներդաշնակութիւն :

ԱԿՈՒՍՏԻԿԱ, 36.— 1) Ջայներն ու հնչումներն ուսումնասիրող զիտութիւն — ձայնագիտութիւն. 2) Թատրոնի կամ սրահի ակուստիկա նախակում է ռենժի այնպիսի կառուցածք, ուր նկատի են առնած ձայնական զարգացման եւ արձագանքի պահանջները :

ԱԿՐԱԲԵԼ, Խու.— Ձրաներկ պատկեր :

ԱԿՐԱԲԻՌԻՄ, Լու.— 1) Մի անօր, որի մէջ պահելում են ծովային կենդանիներ եւ բոյսեր. 2) Ցատուկ ռենժ (օկնարան). ուր ողջ վիճակի մէջ պահելում են ջրային կենդանիներ եւ բոյսեր :

ԱԿՏ, Լու.— 1) Վնիք. 2) Պատոնարուդք. 3) Արարք. 4) Թատերական գրւածքի մէջ արարւած. 5) Գործողութիւն. 6) Կատարւած փաստ, իրողութիւն :

ԱԿՏԻՎ, Լու.— 1) Ներգործական ազդու. գործունեայ. 2) Գործուն ոյժ. 3) Գրամական հաշիմների մէջ մուտք. ակտիվ եւ պասսիվ մուտք եւ ելք. 4) Մի հաստատութեան ընդհանուր ստացւածք, կանխիկ գումարներ եւ պարտեր իրար հետ համադրւած :

ԱԿՏԻՎՈՒԹԻՒՆ. Լու.— 1) Գործնէուրիմ. 2) Առ-
խոյժ, եռանդոս աշխատանք. 39 Արդիւնաւէտ գործնէու-
րիմ. 4) Ազդեցիկ, ենթարկող աշխատանք:

ԱԿՏՈՒԱԼ. Լու.— 1) Իրական. 2) Ժամանակակից,
ներկայ պահանջմերին յարմար. 3) Ազդու. ուժեղ:

ԱԿՐՈԲԱՏ. Ցն.— 1) Լարախաղաց (չամբազ). 2) Մա-
մուլի կամ հանրային կենցաղի մէջ ժողովրդի աչքը՝ բայց
ոչ միտքը խարող:

ԱԿՐՈՊՈՂԻՍ. Ցն.— 1) Արէնքի համբաւաւոր պատ-
մական բլուր. միջնարերդով, պետական կարեւոր ռէն-
քերով. որոնց մէջ Պարքենոն. Արէնաս աստւածահու հո-
յակապ արձանը եւ այլն. 2) Ցունական ժաղացներում՝
միջնարերդ :

ԱԿՑԵՆՏ. Լու.— 1) Արտասանուրեան եղանակ. իըն-
չիւն. շետ. 2) Բարրառ :

ԱԿՑԻԱ. Լու.— Արժեքուղղ. առեւտրական կամ ար-
դիւնարերական ընկերուրեան մէջ բաժնետիրուրեան վը-
կայարուղը, ենթակայ բորսային արժեքների տատանու-
մին:

ԱԿՑԻԶ. Լու.— Պետական տուրք. որին ենթարկում
են երկրի ներքին արդիւնարերուրեան որու ապրամբներ,
ինչպէս լուցկի. ծխախոտ, քէյ, օղիներ, շաքար, ժա-
րիւլ եւ այլն:

ԱՀՈՒՐԱՄԱԶԴԱ. Աս.— Հերանոս Պարսկաստանում
Զրադաշտական կրօնի զլիաւոր. հայր աստւած, համա-
պատասխան Հայկական Արամազդին: Նոյնը Որմիզդ:

ԱՀՐԻՄԱՆ. Սս.— Զարուրեան աստւած Զրադաշտա-
կան կրօնի մէջ, համապատասխան Հայկական Միհր աս-
տրծուն: Վերջինը, սակայն, պարսկական Ահրիմանի բա-
ցասական յատկանիւներ չուներ:

ԱՊԱ, Թր.— 1) Մեծ մարդ՝ պատկառելի։ ծեր։ ի-
մասուուն։ 2) Հարուստ հողատէր կամ զործատէր։

ԱՊԱԼԱՐ, Թր.— Կովկասի թարաբների մէջ հարուստ
կալւածատէր։

ԱՄԱԶՈՒՆԵՐ, Ցն.— Հին պատմւածքների համա-
ձայն՝ ռազմիկ կանաց մի ցեղ, որոնք ապրում էին Սկիւ-
րացոց աշխարհում — ներկայ ևրոպական Շուստատան
և Արեւմտեան Սիրիք։ Ամազոնների հեծեալ բանակները
սարսափ էին տարածում օրջակայ ցեղերի վրայ, արիւ-
նարրու, վայրազ պատերազմիկներ լինելով։ Այրերը բառ-
րուկ էին իրենց մօս։

ԱՄԱՇՆ, Ար.— «Ների՛ք», «մեղա՛ք», «բն գերիդ եմ»
իմաստով բացականչութեան ձեւ։

ԱՄԱԿՆԱԹ, Ար.— 1) Պատանդ։ 2) Երաշչիք։ 3) Վըս-
տահելի բարեկամի մօտ պահեստի ձգւած արժեքաւոր իր։

ԱՄԱՏԵՐՈՒ, Ցր.— Որեւէ բանի սիրահար, օրինակ՝
բեմի, խաղի, ճիշտաւուի և այլն։

ԱՄԱՏԵՐԱՎԱՌԻ, Ճպ.— Ճապոնական (ևապոնական)՝
արեւի աստվածուինի, որի ազնիւ սերումդից են Միկաւու-
ները (Կայսրները) և այնուհետեւ ամբողջ Ճապոնի ժո-
ղովուրդը։ Ճապոնները ազգովին Ամատերասուի գաւակ-
ներ լինելով՝ ամեն օր, արեւածազին, լւացւելուց յետոյ՝
պէտք է ողջումնեն ծագող արեւին, խոնարհումով և ա-
զօրքի բառերով։

ԱՄԲԱՐ, Թր.— 1) Պահեստանոց, մքերանոց։ 2) Զրի
աւագան։

ԱՄԲԻՑԻԱ, Ցր.— 1) Պատւախնդրուրիւն։ 2) Խնդ-
նասիրուրիւն։ 2) Զգուում իրականացնելու մի պատւա-
քեր ճեռնարկ։

ԱՄԲՈՒԼԱՆՍ. Յոր.— 1) Թռուցիկ հիւանդանոց. 2. Շուտափոյք օգնութեան բժշկական կառք:

ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ. Յոր.— Այցելու հիւանդների բուժաբան:

ԱՄԲՐՈՍԻԱԾ. Յն.— Յոյն դիցարանութեան մէջ հազ- ւագիւտ վարդերից եւ ծաղիկներից պատրաստւած անու- ժնդէն, որ աստւածներն ուսում էին՝ յաւերժապէս երի- տասարդ եւ գեղեցիկ մնալու համար:

ԱՄԵՐԱ. Յն.— Որու ձեւ չունեցող մանրադիտակա- յին կենսունակ մանրէ:

ԱՄԵՐԱԿԱՆ. Յն.— Յարափոխոխ, տարրեր ձեւեր ըն- դունող:

ԱՄԵՐԻԿԱՆԻՑ. — 1) Ամերիկանացում. զազրականի Ամերիկացի դասնալու ձգտում. մոնալով իր ծննդավայրն ու ցեղային շահերը. 2) Ամերիկեան ողի. 3) Ամերիկեան շահերի պատոպանութիւն. 4) Ամերիկեան ազգայնամո- լուրին:

ԱՄԵՐԻԿՅՆ ԼԵԶԻԾՆ.— Ամերիկեան Լեզէոն.— կա- ռավարութիւնից հովանաւորւած ամերիկեան զինուորների համապետական միութիւն, որոնց նևանարանն է՝ հայրե- նասիրութիւն՝ ամեն զնով:

ԱՄԵՐԻԿՅՆ ՖԵԴԵՐԱԼԵՇՆԸ ԱՖ ԼԵՅԲԸՐ.— Ամերիկ- եան աշխատանիքի (գործաւորական) դաշնակցութիւն: Անգլիական Տրէյդ-իիմիլիքների սխատեմով կազմակեր- պրւած գործաւորների արհեստակցական միութիւնների դաշնակցութիւն: Քարացած, հանրային ջիզ չունեցող, բաղաբական զիտակցութիւնից զուրկ զանգւածներն են. միւս գործիք եղած մի խումբ քախտախնդիրների ձեռ- քում, տիրող դասակարգին ծառայելով. ի վնաս աշխա- տաւորական շահերի: Կազմակերպութիւնը ինքնին բաղա-

ժական ոյժ է Ամերիկեան կեանքի մէջ, իր դեկավարների միջոցով շանալով ամեն կերպ պայքար մղել նոր հռանձների դէմ, մըուրեան մէջ պահելով զործաւոր զանգըածները, իբր կամակատար ծառայ զործատէր դասակարգի:

ԱՄԷՆ, ՀՐ.— Իրաւ է, նիստ է, բող այդպէս լինի:

ԱՄԻՐԱ, ԹՐ.— Եմիր տիտղոսի աղաւաղում՝ մեծ, տէր, պետ, քաջաւոր, իշխան իմաստով: Սուլթանական Թիկրիայում այդ տիտղոսը տրում էր բռնապետին հանելի մեծահարուստ անձին, իրական կամ ենթադրեալ ծառայուրեան համար:

ԱՄԽԱՆԱԿԻ (Ամխանակո), Վ.Ր.— Ընկեր:

ԱՄՆԵԶԻԱ, ՅՅ.— Յիշովուրեան տկարացում:

ԱՄՆԻՍՏԻԱ, ՅՅ.— 1) Քաղաքական յանցանքների ներում. 2) Բնդիանուր ներում:

ԱՄՈՒՆ-ՌԱ, ԵԳ.— Եղիպտական գլխաւոր աստւած,— աստւածների հայր:

ԱՄՈՒՅԻԶԻԶՄ, ՅՅ.— Անձեւուրիւն. տձեւուրիւն. այլանդակուրիւն:

ԱՄՈՒՅԻԶՈԶՈԱ, ՅՅ.— Անձեւ կենդանի, ինչպէս ըսպունգ, պրոտոռա եւ այլն:

ԱՄՈՒԹԻ, Լ.Թ.— Տե՛ս Կուպիդոն:

ԱՄՅԻԿՏԻՈՆՆԵՐ, ՅՅ.— Հին Յունաստանում զանազան ժաղաքների ներկայացուցիչներ, որոնց համագումարն իրաւում ունի պետական քարք պաւոննեաներին եւ նոյն իսկ հանրապետուրիւններին դատելու եւ պատիժներին ենթաքելու:

ԱՄՅԻՈՆ, ՅՅ.— Յոյն դիցարանուրեան մէջ Զեւսի (Արամազդ) եւ Անտիոպէի որդի, որ հմտօրէն նւազում էր իր դիւրական բնարի վրայ, ամբողջ բնուրիւնն իրեն

հպատակեցնելով։ Թերէ բաղաքի կառուցման ժամանակ ժարերը Ամֆիոնի քնարին հնազանդւելով՝ իրենք դասաւրեցին, բաղաքի պարիսպներ կազմելով։ Ամֆիոն փւխարերական իմաստով նշանակում է հմուտ, դիւրող երաժիւ։

ԱՄՓԻՑՐԻԴ. Յն. — Յոյն դիցարանուրեան մէջ ծովերի աստιած Պոսէյդոնի կին։ Պատկերացւում էր իրը մի չժնաղ կին, հսկայ խեցիի մէջ բազմած, որ սլացնում էին ծովային նժոյգներ եւ դելֆին ձուկեր։

ԱՆԱԲԱՍՍ. Յն. — Չուկի մէկ տեսակ, որ կարող է ցամաք ելնել եւ ծառերից վեր սողալ, մրջիւններ որսալու համար։

ԱՆԱԹԵՄԱ. Յն. — 1) Արտաքսում եկեղեցուց. 2) Նըգովկ. բանադրանք։ Կարողիկ եկեղեցու կողմից որդեզբար- տած մի ձեւ, հաւատացեալներին մօտական սարսափի մէջ սպահելու։ Յանախ Երոպայի միապետներն ենք-արկուում էին պապական բանադրանքին եւ ստիպւում նւաստացու- ցիչ եւ անարգ ստրկուրեամբ «Ժաւել» իրենց մեղքերը։

ԱՆԱԼԻԶ. Յն. — Տարրալուծում, Վերլուծում. — Որ- եւ է նիւրի, երեւոյրի, զաղափարի մանրազնին քննու- րիւն, երբ քննուրեան ենք-ակայ առարկաներ փոքրագոյն մասերի բաժնւելով՝ քննուում են, իրենց յատկանական բոլոր երեւոյրներով, ընդհանուր եզրակացուրեան հաս- նելու համար։

ԱՆԱԼԻՑԻՔ. Յն. — 1) Որեւէ նիւրի կամ երեւոյրի բաղկացուցիչ մասերի որուման կամ տարրալուծման ե- զանակ. 2) Փիլիսոփայուրեան մէջ՝ մտածողուրեան հիմ- նական տարրերը քննելու եղանակ. 3) Հանրահաւի (Ալ- գերբայի) գործադրուրինը երկրաչափուրեան եւ տիե- զերագիտուրեան մէջ։

ԱՆԱԼՈՒ, ՅԵ. — Համանման:

ԱՆԱԼՈՒԻԼ, ՅԵ. — Համանմանուրիւն՝ առարկաների. երեւյրների կամ մտածելակերպի մէջ:

ԱՆԱԼԻՌՈՒԹԻՋՄ. ՅԵ. — 1) Ժամանակավրիպուրիւն, ժամանակավրեալ — պատմական քւականների. խառնաշըփորուրիւն, օրինակ՝ Անի բաղամի կործանումը ԺԱ-դարի փոխարէն ժթ. բդ. դարի մէջ յիւել. 2) Հին մտածելակերպ. 3) Գեղքերը խառնաշըփոր ձեւով ներկայացնելու միտում:

ԱՆԱՆԴՐԻԼ, ՅԵ. — Առնականուրեան բացակայուրիւն. սեռային անկարողուրիւն:

ԱՆԱՏՈՄԻՒԼԿԱՆ ՍՐԱՀ. — Գիազննական սրահ:

ԱՆԱՐԻՒԼ, (Յունարէն՝ ան — չէ, ոչ, եւ արխիա — իշխանուրիւն). — Անիշխանուրիւն. — Բաղամական հոսանք, որ մերժում է որեւէ իշխանուրիւն, օրէնք, նըն-շում կամ ստիպողականուրիւն՝ համայնքի, պիտուրեան կամ տիրող անձի կողմից ուրիշ անձի վրայ: Անհատի ծայրագոյն ազատուրիւնն անիշխանական դաւանանքի հիմնաքարն է: Անիշխանականներն երկու ճիւղաւորուրիւն ունին. — 1) Խաղաղ միջոցներով անհատների խըդնի եւ զիտակցուրեան մշակոյրով հետապնդած իդէալին հասնելու կողմնակիցներ, եւ 2) Սարսափով, բաղա-ժական ահարեկումներով բոլոր օրէնքներն ու իրաւակարգերը տապալելու կողմնակիցներ: Առաջին հոսանքը ներկայացնում են կոմունիստ անիշխանականները, երկրորդը՝ Խնդիվիդուալիստ (անհատապատ) անիշխանականները: Սադմային վիճակի մէջ լինելով՝ ոչ մէկ երկրի բաղաժական կենցաղի մէջ աշխառու դեր չունին: Կառավարուրիւններն անխնայ հալածանքին են ներարկում անիշ-

խանականներին, եւ ամէն տեղ տիրող դասակարգերի մամուլը միջոցներ չի խնայում ներկայացնելու նրանց ինչպէս սովորական ոճրազործներին:

ԱՆԴԻՌՈՒՄԱՆԻԱ, Յն.— Նրկսեռ արարած, միաժամանակ թէ արու եւ թէ էզ հերմաֆրոդիտ:

ԱՆԴԻՌՈՒՄԱՆԻԱ, Յն.— Կանանց մէջ հոգեկան հիւանդուրեան մէկ տեսակ, երբ ենթական տղամարդու հանդէպ սեռային անզուսպ հակում է ունենում. կանացի անյազուրդ վաւաշուրուրին: Նոյնը Նիմֆումանիա:

ԱՆԴԻՌՈՒՄԵԴԱ, Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ՝ Լիդիացոց քազաւոր կեփեռսի եւ կասսիոպէյի աղջիկ: Անդրումեդան անարգեց ծովային յաւերժահարսերին — Նիրեկիդներին, եւ ծովերի աստւածը — Պոսէյդոն մի հրեթէ զրկեց կեփեռսի երկիրն աւերելու: Արքայական մեհեանի պատզամախօսի խորհրդով Անդրումեդային իր ծնողները մի ծովամայոնի վրայ ողբայեցին. Պոսէյդոնի զայրոյրը մեղմացնելու համար: Այնտեղ մի ծովային հրեթ խուսանգում էր Անդրումեդաին, բայց դիւցազն Պերսէոս, Զեւսի որդին. մի քեւաւոր նժոյզի վրայ հեծած՝ եկաւ, սպանեց հրեւէին, եւ Անդրումեդային ազատելով՝ ամուսնացաւ ներա հետ: — Անդրումեդայի աւանդավէպը իրը նիւրծառայած է քազմարիւ հեղինակներին եւ նկարիչներին՝ գեղարւեստական զեղեցիկ գործեր ստեղծելու: 2) Համանուն համաստեղուրին: հիւսիսային երկնակամարում, 59 մոլորակներից բաղկացած:

ԱՆԴԻՌՈՒՄՈՒԲԻԱ: Յն.— 1) Կանանց մէջ հոգեկան հիւանդուրեան մէկ տեսակ. երբ ենթական վախ, սարսափ կամ տտելուրին է զգում արական սեռի հանդէպ. 2) Աղջիկների մէջ սարսափ կամ տտելուրին՝ ամուսնուրեան հանդէպ:

ԱՆԵԿԴՈՏ, Յն.— Կարճ, սրամիտ եւ գւարնալի սլառմբւածք :

ԱՆԵՄԻԱԼ, Յն.— Արեամ պակասուրիւն :

ԱՆԵՄԻԿ, Յն.— Սակաւարիւն անձ :

ԱՆԵՄՈՒՊԴԻԱԼ, Յն.— Հոդմերի ծագումը, արագուրիւնը, ոյժն ու ուղղուրիւնն ուսումնասիրող գիտուրիւն — Հոդմազիտուրիւն :

ԱՆԵՆԿԵՅԱԼԻԱԼ, Յն.— Ուղեղի բացակայուրիւն, ձեւափոխում կամ հիւծում :

ԱՆԵՍՏԵԶԻԱԼ, Յն.— Շօսափման եւ ցաւի զգացման բացակայուրիւն կամ տկարացում :

ԱՆԻՄԱԼԻԶՄ, Լտ.— Անասնականուրիւն, անասունին յարմար :

ԱՆԵՆԳԱԼ, Լտ.— Օրէնքի հակառակ, ապօրէն :

ԱՆՆՈՐՄԱԼ, Լտ.— Անրնական, արտառոց :

ԱՆՌՄԱԼԻԱԼ, Յն.— 1) Կանոնաւոր ընթացքից տեղում.

2) Արտասովոր երեւյր :

ԱՆՌՆԻՄ, Յն.— 1) Անանուն, անուն չունեցող. 2) Երամունք ծածկող հեղինակ. 3) Ցանախ գործ է ածուում ինչպէս յատուկ անուն, օրինակ՝ Անոնիմ Ընկերուրիւն — Անանուն Ընկերուրիւն :

ԱՆՌՍՄԻԱԼ, Յն.— Հոստառուրեան նւազում կամ անհետացում :

ԱՆՁՈՒՄԱՆ, Ար.— 1) Աստեղախումբ. 2) Ականաւոր ամձերի խորհրդակցական տեղ. 3) Խորհրդարան, ներկայացուցչական ժողով :

ԱՆՍԱՄԲԸՆԼ, Ֆր.— 1) Որեւէ երեւյրի կամ տւեալների մէջ անջատ մասնիկների ամբողջուրիւն. 2) Թատերական ներկայացման մէջ դերասանների ներդաշնակ խաղ :

ԱՆՏԱԳՈՒՅԻՉՄ. Յն.— Հակամարտուրիւն, քչնամուրիւն, օրինակ՝ ցեղային, կրօնական, կուսակցական, ժաղաժական բնոյրով փոխադարձ տառելուրիւմներ:

ԱՆՏԻԱԿԱՆ (Անտիկ, անտիք), լտ.— 1) Հին ժամանակին, անցեալին յատուկ. 2) Կառարեալ, անքերի, օրինակ՝ անտիական կին, գեղեցկուրիւն եւ այլն:

ԱՆՏԻԴՈՑ, Յն. Հակարոյն:

ԱՆՏԻԹԵԶ, Յն.— Երկու տարրեր զաղափարների հակադրուրիւն. մէկ զաղափարին հակադրւած ուրիշ զաղափար:

ԱՆՏԻԼՈԳԻԱ. Յն.— Մի հեղինակուրեան մէջ հակասուրիւն՝ նոյն հեղինակուրեան մէկ ուրիշ տեղ արտայայտւած զաղափարին:

ԱՆՏԻԼՈՊ. Յն.— Ասիայի եւ Աֆրիկայի մէջ եղջերուի մէկ տեսակ, երբեմն միանւազ տասնեակ հազարների հօսերով:

ԱՆՏԻՆՈՄԻԱ. Յն.— Հակասուրիւն օրէմիների մէջ:

ԱՆՏԻՊԱՏԻԱ. Յն.— Հակակրանք:

ԱՆՏԻՊԱՏԻՔ. Յն.— Հակակրելի, անախորժ:

ԱՆՏԻՍԵՄԻՏԻՉՄ. Յն.— Հակասեմականուրիւն — Սեմական ցեղերի դէմ հակառակուրիւն, քչնամանք, հալածանք: Անտիսեմիտիզմ անւան տակ պէտք է հասկանալ որու հոսանք երկաների դէմ ուղղւած, որ աւելի յարմար է կոչել ՀԱԿԱՀՐԵՇՈՒԹԻՒՆ անունով: Սեմական ցեղերին են պատկանում նաև Արաբներ, Սիւրիացիներ, Ասորիներ, Դրուզներ եւ այլն, որոնց մեծ մասը նոյնչափ քչնամի են երկաներին, որչափ Անտիսեմիտ կոչւածները: Հակահրելուրեան պատմուրիւմը նոյնչափ են է, որչափ Հրեայ ցեղը: Փարանական ըրջանի նզիապուստ, Բարելոնում, Հռոմում, Կարքազէնի մէջ եւ այլն.

Հրեաների դէմ ցեղային գօրեղ հոսանքներ եղած են, համբնը աց ջարդերով, կողոպուտով եւ բռնուրեան ամեն արտայատուրի մններով։ Օգոստոս, Տիրերիոս, Կալիգուլա, Ներոն եւ Հռոմէական ուրիշ բանապետներ երբեմն թերեւ արտօնուրի մններ ճնորհած են Հրեաներին սահմանափակ օրջաններում բնակւելու, երբեմն յատուկ երովարտակներով արգիլած են Հրեաների մուտքը կայսրուրեան սահմաններից ներս, վանտած են եւ կոտորածներին ենթարկած։ Նախաքրիստոնէական հականիքուրինը ցեղային ատելուրեան սլատկերը ներկայացնելով՝ միջին դարերում Եւրոպական երկրներում կրօնական հալածանիքի բնոյրն ընդունեց, կարուիկուրեան դրօւտակ։ Հին եւ միջին դարերի անկազմակերպ, անհետառդական եւ ոչ պարերաբար կրկնուող բանկումներով հականիքուրեան՝ նորազոյն ժամանակներում յաջորդեց սիստեմատիկ կերպով կազմակերպւած մի ռարժում, որ խորը արմատներ նետեց մասնաւորապէս կենտրոնական Եւրոպայում։ Ժամանակակից Եւրոպական Հականիքուրեան մեծ զարկ տւող անձն եղաւ Գօտոր Լոյզեր, Վիեննայի բաղաժանետ եւ Պարլամենտի (Ռէյխսպար) անդամ, որ 1890-ին հիմնեց հականիքական կուսակցուրիւն Քրիստոնեայ Ընկերվարական կուսակցուրիւնը խարուսիկ անւան տակ (Խրիստիխիսէ Սոցիալիստիկէ Պարտայի), որ մի ժամկ տարւայ մէջ ծաւալւեց, հսկայ հոսանքի փոխւելով։ Այսւեց հականիքական ջարդերի եւ աւարառուրեան ռարքը ամբողջ Աւստրիայում, ախորժակ բանալով ուսւական մուր ոյժերի համար։ Յայտնի յետադիմական ցարամոլ Պուրիւկեվիչ, Ռուսական Գումայի (Պարլամենտ) անդամ՝ Շին-Հարիւրակներից խմբեր կազմակերպելով՝ թեսարարիայի մէջ, Քիչենեօվ եւ այլ տեղեր՝ Հը-

բեական արեան բաղանիքներ սարքեց, ցարական ոստիկանների եւ Օռքողոքս տէրտէրմների մասնակցութեամբ : Հակահրէութիւնը ներկայիս գօրաւոր հոսանք է ներկայացնում Ռումանիայում . Հունգարիայում եւ Լիհաստանում, ուր Հրեաների դէմ արիւմալի ընդհարումները պարբերական բնոյրն են ստացած : Ներկայ Հակահրէականները իրենց զործունէուրինը արդարացնում են այն պատճառարանութեամբ, թէ Հրեաները իրենց դրամագլխի ժնորիի գերում են իրենց հետ ապրող բոլոր օտար ցեղերին, տնտեսական բազկերակը իրենց ձեռքի մէջն են պահում եւ իրական տէրն են դառնում այն երկրների, ուր հաստատած են իրեւ օտարածին զաղքականներ : — Խ. Միութեան մէջ խիստ հալածանք է մըդում Անտիսեմիտական որեւէ արտայայտութեան դէմ :

ԱՆՏՈՂՈԴԻԱ. (Անքողոզիա), Յն.— Տարբեր հեղինակներից ընտիր հատւածների հաւաքածու, գրական-բանա տեղծական կամ երաժշտական :

ԱՆՏՐԱԿՑ, Յն.— Թատերական ներկայացման մէջ երկու արարւածների միջեւ դադար :

ԱՆՏՐԱՑԻՏ, Յն.— Լաւգոյն ֆարածուխ :

ԱՆՏՐՈՊՈԹԷՒԶՄ. Յն.— Մարդ անհատին աստւածային յատկութիւնների վերագրում : Կրօնական մոլեռանդուրեան երեւոյրներից մէկը լինելով՝ օգտագործուում էր բռնապետների կողմից : Հռոմէական կայսրները հանոյք էին զգում լսելով իրենց ուղղաւծ «Ո՞վ աստւածային կեսար» ստրկարանութիւնները :

ԱՆՏՐՈՊՈԼՈԳ. Յն.— Մարդաբան :

ԱՆՏՐՈՊՈԼՈԳԻԱ, Յն.— Մարդու բնական պատմաւթիւնը — նրա ծագումն ու զարգացումն ուսումնասիրազգիտութիւն՝ մարդաբանութիւն :

ԱՆՏՐՈՊՈՄՈՐՖԻԶՄ, ՅՅ.— Աստուծոյ էռուրեան մարդկային բնուրիւնն ու կերպարաննքը վերագրելու միտում:

ԱՆՏՐՈՊՈՅԱԶԻԱ, ՅՅ.— Մարդակերուրիւն:

ԱՇԽԲԵԹ, Քր.— Տեղ, ազգ:— Քրդական զատ ցեղերի մականուն:

ԱՌԻԷ, (Լեզզերէն).— Կովկասեան լեռնականների գիւղ, աւան:

ԱՌԻՍՈԴԱՅՆ, Սպ.— «Հաւատոյի Յադրանակը».— Միջին դարերում Սպանիայի, Փորրուզալիայի եւ Կենտրոնական Եւրոպայի մէջ քաղաքուրի, քարձր ազնւականուրեան եւ կարօլիկ կղերականուրեան հանդիսաւոր քափօրդէպի հրապարակային պատժարանը, ուր անհաւատներն ու հերձւածողները զլխատուում էին կամ այրում, եւ կամ իրենց հեղինակուրիւնները խարոյկի մէջ ոչնչացւում:

ԱՊԱՇ, Քր.— Փարիզի սրիկանների եւ ոճրագործների ածական:

ԱՊԱՏԻԱ, ՅՅ.— Անտարքերուրիւն. անհետաքրքրուրիւն. պաղարիւնուրիւն:

ԱՊԱՏԻԿ, ՅՅ.— Անտարքեր. անհետաքրքիր:

ԱՊԱՐԱՍ, Լտ.— 1) Գործիք՝ մելենական, ժիմիական կամ զիտական գործողուրիւնների համար. 2) Որու աշխատանք կատարող մարմին:

ԱՊԻԼԿԱ, Ռս.— Փայտի սղոցարեկի:

ԱՊԻՍ, Եզ.— Հին Եգիպտացիների սրբազն եզ, ամրողութին սեւ, նակտին քառակունի սպիտակ քիծով: Մեհեաններում էր պահուում եւ երկրագործուրեան պաւտապան աստւածուրեան խորհրդանիւն էր նկատում:

ԱՊՈԴՈԶԻԱ, ՅՅ.— Դատարանի մէջ պաւտպան փաստարանի նարի այն մասը, որով դատարանի գքուրիւն:

կամ պատճի մեղմացում է խնդրում իր պատպանած ամբաստանեալի համար :

ԱՊՈԹԵՌ. Յն. — 1) Հանդիսաւոր գովարանում, ներքող. 2) Թատերական ներկայացման մէջ վերջին ըթեղ տեսարան, որ այլարանօրէն հանդիսի նպատակն է խորհրդանուում :

ԱՊՈԼԱՌ. Յն. — Յոյն դիցարանուրեան մէջ Զեւսի եւ Լատոնայի որդի, առնական զեղեցկուրեան աստիած, պատպան բանաստեղծուրեան, երաժշտուրեան, բժեկուրեան եւ արւեստների : Իր խորհրդանիւն էր արեւը :

ԱՊՈԿԱՏԱՍՏԱԼՈՒ. Յն. — 1) Հին Յունաստանի բնագէտ-փիլիսոփաների այն տեսուրիւնը, որի համաձայն ամեն ինչ, որ գոյուրիւն ունի՝ ճգոսում է երկար հոլովումներից եւ յեղաբքումներից յետոյ իր նախնական վիճակին վերադառնալու : Օրինակ՝ տիեզերքը անյիւսատակ անցեալի մէջ աներեւոյք հիւլէնների մի վիրխարի բաղադրուրիւնն էր. հիւլէնները իրար մօս զալով՝ գոյացըրին արեգակներ եւ մոլորակներ. այդ արեգակներն ու մոլորակները ապագային դարձեալ հիւլէնների պիտի վերածին : 2) Տիեզերագրուրեան մէջ՝ որու մոլորակի վերադարձը այն կէտի վրայ, որտեղից անցած է նախապէս :

ԱՊՈՊԼԵԲՍԻԱ. Յն. — Անդամալուծուրիւն արեան գօրաւոր ներխուժումի հետեւանելով ուղեղի մէջ :

ԱՍԿԵՏ. Յն. — 1) Խիստ ծումապահուրեամբ ապրող. ինք իրեն զրկող. 2) Ճգնաւոր :

ԱՍՊԱԶԻԱ. Յն. — 1) Արէնիքի մէջ, Ե. բդ. դարում, Ք. Ա. հոչակաւոր զեղուիի, խելացի, կրրւած, զեղարւեստի, զրականուրեան եւ փիլիսոփայուրեան պատպան : Պերիկլէսի սիրուիին եւ կինն եղաւ, եւ ներքմչողը նրա բաղադրական լաւագոյն գործերի : Իր պալատը

Ժամադրապայրն էր Յունական Ռսլեղարի բոլոր ականաւոր գէմքերի, որոնց մէջ նաև Սոլքատէս : Թերեւ վարչի տէր էր սակայն, եւ իր զեղեցկուրեան ընորհների մէջ ոչ այնքան ժլատ՝ ամուսնական յարկից դուրս : 2) Ներկայ իմաստով՝ սիրուն, կրրւած, սակայն քերեւողիկ կին :

ԱՍՍԻՄԻԱՑԻԱ, Լու.— 1) Յարմարում. հաւասարում. միացում. կլանում. ձուլում. 2) Մի ազգի կողմից ուրիշ ազգի իր մէջ ձուլում՝ կրօնի, լեզվի եւ յատկանք-ական այլ տեխալների միասորումով :

ԱՍՍՈՐՏԻՄԵՆՏ, Ֆր.— Համանման, բայց տարրեր ձեւերով եւ արժեքներով ասլքանների ընտրւած պաշար :

ԱՍՏԱՐՏԻ.՝ Փիւնիկեցիների եւ Սեմական ցեղերի մայր աստւածուին, սիրոյ եւ արգասաւորուրեան դիցուին : Յայտնի էր նաև տարրեր անուններով՝ Աստարօր, Արար, Խատար եւ այլն : Իր խորհրդանիւնն էր լուսինը : Իրեն նւիրւած մեհեաններում մարդկային զոհարերութիւններ էին մատուցում, ինչպէս նաև ազնւատոնի օրիորդներ սիրային հանոյիններ էին նւիրում տանարներում բարեպատ այցելուններին : Հայկական Աստղիկը (Խոմանիւ Աստարտէի) սիրոյ դիցուինին՝ մարդկային զոհարերութիւններ չէր պահանջում, սակայն իր մեհեաններում, Հայաստանի մէջ, ըստ օտար պատմիչների՝ տեղի էին ունենում սիրոյ պատամունքներ մարմնացած ձեւերով : Բարձր դասի օրիորդներ ամուսնանալուց առաջ զերազոյն պատիւ էին համարում Աստղկան մեհեանը մտնել մի ժամի տարի ծառայելու քրմանոյժի դերի մէջ, որ ուրիշ բան չէր, ժամ այցելու ուխտաւորներին սիրոյ դրական վայելքներ տալ ի պատիւ աստւածուին : Ստացւած նւերները, բնականաբար, մտնում էին քրմա-

կան զանձի մէջ : Հերանոս Հայաստանի Աստղկան նւիրած տաճարներում բրիմանոյշների պատոսն էին կատարում նախարարական ազնւազարմ ընտանիքների օրիորդներ, Աստարտէին նւիրած մեհեանների պէս :

ԱՍՏԵՆԻԱ. Յն.— Ուժապառութիւն :

ԱՍՏԵՐԻՒԹՅ. Յն.— Աստղանիւս (*), որ զործ է ածում զրբերի կամ նամակների մէջ, մատնանշելով քէ գրութեան տակը ժամօրութիւն կայ :

ԱՍՏԵՐՈՒԴԻ, Յն.— Մանր աստղերի ընդհանուր անուն :

ԱՍՏԻԳՄԱՏԻԶՄ. Յն.— Տեսողական մի հիւանդութիւն, երբ ենթական իրերը տեսնում է բնականից չեղած ձեւերով, աղնատուած, ծուռ ու մուռ :

ԱՍՏՄԱ. Յն.— Պարբերական չնչահեղձութիւն :

ԱՍՏՐԻԱ. Յն.— Ցոյն դիցարանութեան մէջ Զեւսի աղջիկ, արդարութեան դիցուիի : Երկրի վրայ կատարած մի ըքազայութեան ժամանակ յուսահատուելով մարդկային անարդարութիւնների համար՝ կրկին երկինք վերադարձաւ, ուր աստղի փոխւելով՝ վետարեկ դիտում է հեռակաց անարդար աշխարհը :

ԱՍՏՐՈԼԱՏՐ. Յն.— Աստղապատ, աստղերին աստածացնող :

ԱՍՏՐՈԼՈԳԻ. Յն.— Աստղաբաշխ, աստղագուշակութեամբ զբաղւող : Նոյնը Աստրուման :

ԱՍՏՐՈԼՈԳԻԱ. Յն.— Աստղաբաշխութիւն .— Իին աշխարհի մէջ ծնունդ առած զիտութիւն, որի վրայ յետազային կաղապարւեց զիտական աստղագիտութիւնը : Փարանինների Եղիպտոսում աստղաբաշխութեամբ զբաղւում էին մեհեանական ժուրմեր, որոնք մեր ժամանակւայ հեռադիտակներ եւ զործիքներ չունենալով հանդերձ՝ կտ-

բողացած են բազմարիւ աստղերի շարժումներն ուսումնասիրել մարեմարի բական նառուրեամբ : Բարելոնի, Նիմուէի, Զինաստանի աստղաբաժները հմուտ էին այդ գիտուրեան եւ հետաքրքրական յիւսուակներ քողած են իրենց դիտողուրիւնների ռուրջը : Աստղաբաժնուրեան կասկածելի գոյնը տւող հանգամանքն եղաւ այն, որ աստղաբաժները մոլորակների շարժումների մէջ փընում էին երկրածին մարդկանց նակատագրի վրայ ունեցած խորհրդաւոր ազդեցուրիւնների զաղտնիքը . եւ լեցուն կերպով շահագործում էին իրենց ժամանակակիցների սնոտիապատուրիւնը : Հիմ բռնապետները իրենց անհատական կամ պետական կարեւոր խնդիրներին ճեռք զարկելուց առաջ անհրաժեւու էին համարում աստղաբաժների խորհրդին դիմել : Մարդկային ցեղի մեծագոյն դահիններից մէկը — Աննիրիմուր՝ իր մայրաբանք Սմբրգանդից ոչ հեռու մի նոր քաղաք — Ղարազմը հիմնելով, զարդարեց այն հսկայ ժենքերով եւ բարձրակառոյց աւտարակներով, որոնց վրայից իր օրերի յայտնի աստղաբաժներ դիտում էին երկնքի լուսատուններին եւ իրենց գուշակուրիւններով դեկավարում այդ մեծ մարդասպանի գործողուրիւնները : Մահմեդականացած արարների մէջ աստղաբաժնուրիւնը ծաղկեց, մանաւանդ Բաղդադի խալիֆայուրեան օրջանում, ինչպէս նաև Դամասկոսում եւ Եգիպտոսում :

ԱՍՏՐՈՄԱՆՏԻԱ, Յն.— Աստղագուշակուրիւն — աստղերին նայելով գուշակուրիւններ անելու արիեսու:

ԱՍՖԱԼՏ, Յն.— Կուպրի եւ աւագի խառնուրդ՝ փողոցները յատակելու համար :

ԱՎԱՆԴԱՐԴ, Յն.— 1) Յառաջապահ. բանակի նակատը պատպանող գօրամաս. 2) Քաղաքական նպատակ-

ներով կազմակերպւած պատանեկական խումբերի ընդհանուր անուն :

ԱՎԱՆՍ., Ֆր.— 1) Կանխավճար պայմանաւորւած մի գործի կամ գնւած ապրանքի համար. 2) Ժամանակից առաջ վճարում. 3) Բորսայի (Սակարան) մէջ արժեքը-քերի գիմերի վերելք. 4) Օգուտ. արդիւնք :

ԱՎԱՆՏԻՒՐԱ., Ֆր.— Արկածախնդրութիւն. բախտախընդրութիւն :

ԱՎԱՆՏԻՒՐԻՍՏ., Ֆր.— Արկածախնդիր. բախտախընդիր :

ԱՎԳՈՒՐՆԵՐ, Լտ.— Հաւահմայներ — Հոռմի մէջ ժուրմերի մի դասակարգ, որոնք գուշակութիւններ էին անում քոչունների քոհչք դիտելով։ Հերանոս Հայաստանի Քաւոր-Պետրոսների մի դասակարգ այդ արհեստը մասնագիտութիւն դարձրած էր երկրից-երկիր քափառելով։ Հոռմում, Արէնեում, Ալեքսանդրիայում Հայ Հաւահմայները (քոչուններով կախարդութիւն անող եւ գուշակողները) մեծ անում վաստակած էին. քոչուններ ին մորքելով՝ հանում էին փառոտիքը եւ աղիքների դասաւորութեան մէջ խորիմաստ գաղտնիքներ երեւան հանում, քերեւամիտ կինների սնուտիապաւութիւնը շահագործելով։

ԱՎՏՈԿՐԱՏ, Յն.— Խնմիչխան, խնմնակալ :

ԱՎՏՈԿՐԱՏԻԱ, Յն.— Խնմիչխանութիւն. խնմնակալութիւն.— պետական սիստեմ, երբ բռնապետը իր քմահանոյնու վարում է իրեն ենթակայ ժողովրդի նակատագիրը :

ԱՎՏՈՄԱՏ, Յն.— 1) Խնմնաւարժ գործիք, մեքենայ. 2) Անգիտակից, ուրիշ կառավարող անձ :

ԱՎՏՈՆՈՄԻԱ, Յն.— Խնմավարութիւն:

ԱՎՐՈՐԱ (Առորորա), Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ արշալոյսի աստուածուի, որի պատոնն էր ամեն առաւօտ երկնքի արեւելեան դուռը բանալ, արեւի (Յերիւս) ելքն արտօնելով:

ԱՏԱՄԱՆ, Ռա.— 1) Կազակ գօրքերի երամանատար. 2) Կազակ զիւղի կամ աւանի կառավարիչ. 3) Ցեղապետ. 4) Աւազակապետ:

ԱՏԱՎԻԶՄ, Լտ.— Ժառանգականուրեան մի տեսական օրէնք, որի համաձայն անհատն իր հոգեկան եւ մարմնաւոր յատկանիւներով իր նախահայրերի նմանութուրիւնն է:

ԱՏԱՎՆՏԻՍ, Յն.— Յոյն առասպելի համաձայն նախապատմական մի լայնածաւալ պետուրիւն, Հերքիւնեան Սիւնների (Գիրքալտար) արեւմտեան կողմ: Հզօր եւ բարձր ժաղաքակրթուրեամբ մի երկիր էր, եւ երկրաշարժից յանկարծակի խորտակւելով, անհետացաւ, ովկիանոսի տակ ընկլմելով: Իր անունով ովկյանոսը կոչւեց Ատամունեան: Ներկայ երկրարաններից ոմանք հաւատում են այդ առասպելի իրականուրեան, եւ ենրադրում քէ այդ աղէտը պատահած է 5-10,000 տարի: Ք. Ա. :

ԱՏԱՎԱՍ, Յն.— 1) Յոյն դիցարանուրեան մէջ մի հսկայ, որ իր ուսերի վրայ է պահում երկիրն ու մոլորակները. (հայկական աւանդավիճակով՝ աշխարհը մի վիրխարի ձուկի փորի վրայ դրւած է. ըստ ոմանց՝ մի խոռոր եզի կոտուների վրայ). 2) Աշխարհազրական եւ աստղագիտական ժարտէսների կամ մարդկային մարմնի այլ եւ այլ մասերը ներկայացնող պատկերների հաւաքածու. 3) Ենտաքսի նուրբ եւ փայլուն գործածքի մէկ տեսակ:

ԱՏԻԵՏ, Յն.— 1) Հսկայ, ժաշառող անձ. 2) Մարմ-

նամարզական խաղերի մէջ աչքառու, ուժեղ անձ:

ԱՏՈՄ, Յն.— Հիւլէ — նիւրի փոքրազոյն, անբաժանելի մասմիկ:

ԱՏՈՄԻԶՄ, Յն.— Այն տեսութիւն, որի հիման վըրայ բոլոր մարմինները փոքրազոյն մասմիկներից՝ հիւլէներից կազմւած են:

ԱՏՏՈՐՆէՅ (Էրբրբնի), Ան.— 1) Փաստաբան. օրենսգէտ. 2) Աստորթէյ-քեները՝ կառավարական ռահերի պատսպան փաստաբան. 3) Դիստրիկտ-Աստորթէյ՝ դատախազ (Ռուսերէն պրակուրօր):

ԱՐԱԿ (Արաղ), Մն.— Օդի, ոգելից խմիչք. — Ըստ Մոնղոլական առասպելի՝ սատանայի հնարած մի խմիչք, մարդկանց խելքն առնելու եւ յիմարութիւններ ու յանցանքներ գործել տալու համար:

ԱՐԱՐՆէԱ, Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ մի հըմուտ ոստայնազործ կին, որին Արենաս-Պալլաս աստւածուին սարդի փոխեց, այն յանցանէի համար, որ համարձակւել էր իրենից աւելի զեղեցիկ գորգ գործել: Փոխարերական իմաստով՝ վարպետ ոստայնազործուի:

ԱՐԳՈՆԱՑԻՆԵՐ. Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ հերոսների մի խումբ, որ դիցազն եազոնի առաջնորդուրեամբ Արգոս նաւով Կողմիս (ներկայ Վրաստան) արշաւեցին Ռսկեզեղմ գտնելու համար — այլարամօրէն՝ ուկու համեմեր: Փոխարերական իմաստով՝ հարստութիւն վիտոռող արկածախնդիրներ:

ԱՐԳՈՍ, Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ հարիւրաչեայ մի իշխան, որին Հերան՝ մայր աստւածուին պահակ դրած էր հորքի փոխւած նօին. Ինախոս քազմուրի աղջկան: Արգոսի բնած ժամանակ յիսուն աչքերը գոցուում էին, բայց յիսունը բաց էին մնում: Մերկուրին

(Հերմես) իր սրբնոցի նւազով ստիպեց Արգոսին հարփոք աչքերն էլ գոցելու եւ քննելու, եւ ապա նրա գլուխը կըտրեց եւ Եօին ազատեց : Հերան Արգոսի աչքերը հանեց եւ սիրամարդի պոչի վրայ փակցրեց :— Արգոսի անունը խորհրդանիւն է արքուն հսկողութեան :

ԱՐԳՈՒՄԵՆՏ, Լու.— Որեւէ գաղափարի պատուածութեան համար ներկայացւած՝ փաստ, ապացոյց :

ԱՐԷՊՊԱԳՈՍ, Յն.— Հին Արէնմի մէջ բարձրագոյն դատական տառեան :

ԱՐԻԱԿԱՆ, Սս.— Արփական ցեղեր եւ լեզուներ — Հնդկական եւ Իրանական նախնական բնիկներ եւ իրենց լեզուներ :

ԱՐԻԵՐԳԱՐԴ, Ֆր.— Բանակի մէջ յետնապահ գօրամաս :

ԱՐԻՈՍԱԿԱՆՆԵՐ, Յն.— Արփոս յոյն կղերականի հետեւորդներ : Արփոս 318-ին քրիստոնէական եկեղեցին խառնակեց մի նոր աղանդ մէջտեղ նետելով, որի տեսութեամբ Քրիստոս կատարեալ եւ անբերի լինելով հանդերձ ոչ Աստւած էր եւ ոչ էլ նրա իրական որդի : Արփոսականութիւնը ազդեց նոյնիսկ ժաղաքական դէպֆերի վրայ, Բիւզանդական կայսրներից մի ժանիսը գրաւելով : 325-ին Նիկիոյ մէջ գումարւած Օքքոդոս կղերականների համագումարի մէջ հերետիկոսութիւն յայտարարւեց եւ նզովքի ննը-արկւեց :

ԱՐԻՍՏՈԿՐԱՏ, Յն.— Ազնւական, ծագումով արտօնեալ դասակարգին պատկանող :

ԱՐԻՍՏՈԿՐԱՏԻԱ, Յն.— 1) Ազնւականութիւն.— Արտօնւած դասակարգ, որ միապետական երկրներում բարձրագոյն պատօնների գլուխ է անցնում, գօրավիզ հանդիսանալով տիրող կառավարութեան . 2) Տոհմային ժա-

առնգական արտօնութիւններով օգտւող իշխանական եւ ազնւական դասակարգ. 2) Մակարոյծ, տահագործող դասակարգ :

ԱՐԻՍՏՈՏԵԼԻԶՄ, Յն.— Հռչակաւոր փիլիսոփայ Արիստոտելէսի (384-322 մ. Ա.) տրամարանական մի տեսութիւն, որի հիման վրայ կարելի է ընդունել մի նույնարտութիւն, եթէ նա յենաւած է փորձնականապէս ըստուգրած արտաքին ըմբռնումների վրայ :

ԱՐԵՆԿԻՆ, Խու.— Ժողովրդական երգիչ-ծաղրածու, խայտանամուկ զգեստաւորութեամբ, դէմքը ներկերով շողարած :

ԱՐԻԱԼԻԿ, Յն.— Խօսի կամ զրւածքի հնօրեայ ճեւ, ներկայիս անգործածելի:

ԱՐԹՈՒՐ, Յն. Լու.— Պետութեան կամ որեւէ հաստատութեան հին պատօնաքաղքերի պահեստանոց-հնագարան :

ԱՐԽԵՆՎԱՐԻՈՒՄ, Յն. Լու.— Արխիվի գլխաւոր վարիչ :

ԱՐԿԱԴԻԱ, Յն.— Պատմական Յունաստանի նահանգ-ներից մէկը, որի բնակիչները գեղեցիկ բնութեան մէջ հովապկան պարզ եւ համելի կեանք էին վարում :

ԱՐԿՑՈՍ, Յն.— Մեծ եւ Փոքր Արքային համաստեղութիւն :

ԱՐՍԵՆԱԼ, Ֆր.— Զինւորական մքերանոց :

ԱՐՄԱԴԻԱ, Սպ.— Պատերազմական մեծ նաւասորմիզ :

ԱՐՏԵԼ, Թր.- Արհեստակիցների սահմանափակ քւով խմբակ, որոնք իրենց նիւղի մէջ գործում են միասնաբար առացւած արդիւմքը իրար մէջ բաժնելով: Խորհրդային Միութեան մէջ քաջալերած սիստեմ :

ԱՐՏԵՄԻՍ, Յն.— Ցոյն դիցարանութեան մէջ Զեւսի

եւ լատոնայի աղջիկ, կուսական անարատութեան եւ որսրդութեան աստւածուիի, համապատասխան Հռոմեական Դիտային :

ԱՐՏԻՄԵՐԻԱ, Ֆըր.— Թնդանօրաձիգ զօրամաս :

ԱՐՏԻՍ, Լտ.— 1) Նկարիչ. 2) Արձանագործ, 3) Երաժիշտ. 4) Գերասան. 5) Գեղարվեստի որեւէ նիւդի մէջ մարզւած անձ. 6) Բացասական իմաստով՝ հմուտ խարերայ, սրիկայ, առաւ-փախաւ :

ԱՐՔ (Արխ), Յն.— Գլխաւոր. պետ. աւագ. օրինակ՝ արքեպիսկոպոս — աւագ եպիսկոպոս. արք-դիպլոմատ՝ զիշաւոր ժաղանգէտ. արք-ոնքագործ՝ ոնքագործների մեծ :

ԱՐՔԻՄԵՐԻԿԻ ԼՇԱԼԻ.— Հին աշխարհի հոչակաւոր մաքրեմարիկոս, երկրաշափ եւ մենագետ Արքիմեդի երեւակայական լծակ, որով հնարաւոր է մէկ ճեռով երկիքը բարձրացնել եւ մէկ կողմ ննոել, երէ միայն այդ լծակի համար յենակէտ գտնել :

ԱՐՔԻՄԵՐԵԿԱՆ ՕՐԻՆՅ.— Հոչակաւոր երկրաշափ եւ մաքրեմարիկոս Արքիմեդէսի յայտնագործած օրէնք, (մոտ 250 Թւին, Քրիստոսից առաջ), որի համաձայն որեւ է առարկայ ջուրի կամ այլ հեղուկի մէջ ընկնելով՝ իր ծանրութիւնից կորցնում է այնման, որքան կըռում է իր զրաւած տարածութեամբ ջուրը։ Պատմութեան համաձայն Արքիմեդը այդ համոզմանը եկաւ իր տան բաղանիքում լողած ժամանակ եւ ուրախութիւնից խելակորոյս՝ մերկ վիճակում դուրս ցատկեց փողոց եւ սկսեց վազել, պոռալով։ «Էվրեկա, Էվրեկա — գտայ...»։

ԱՑՑԵԿՆԵՐ.— Մեխսիկոյի կարմրամորք հին ցեղերից մէկը, որոնք կոտորւեցին «Քաղաքակիրք» Սպանիացիների կողմից, եւ իրենց վերջին կայսրը Գուատիմոզի՛

տեսելի տանջանեների ենթարկւեց Սպանիացի քանապետ Գևրիմանդո Կորտէզի կողմից եւ սպանւեց 1530-ին։ Այդ երբեմնի սուտարարիւ ժողովրդից հազիւ մի ժամի հազար մնացած են, անտառներում խղճալի կեանի վարելով։

ԱՐՔԻՊԵԼԱԳՈՍ (Արքիպելագ), Յն.— Իրար մօտ գտնուող կղզիների խումբ։

ԱԻԳԵԱՆ ԱԽՈՌ, Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ Աւգէաս քազաւորի ախոռ, որ տարիներից ի վեր անխընամ ձգւած՝ անհնարին էր մարդկային աշխատանիւնով մաքրել։ Դիցազն Հերակլէս (Հերկիւլէս) քազաւորի հօտերի մէկ տասներորդ մասը ստանալու պայմանով՝ մէկ զիւերւայ մէջ երկու գետերի ընթացքը փոխեց եւ ախոռը հեղեղելով՝ մաքրեց։ Վարձքը չստանալով՝ սպանեց Աւգէասին։ Փոխարերական իմաստով՝ իրաւով միայն մաքրւելիք ապականուրիւն։

ԱՓԻԱՌՆ.— Ազաւաղում Օպիում անւան։ Տե՛ս Օպիում։

ԱՓՐՈԴԻՒՑ, Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ սիրոյ եւ գեղեցկուրեան աստւածուիի, ծնւած ծովային փըրփուրմերից, Կիպրոս կղզու մօտ։ Կոչւում էր նաև Կիպրեան դիցուիի։ Համապատասխան Հռոմէական Վենիտսին, Հայկական Աստղիկին եւ Սեմական Աստարտէին։

ԱԲԵՐՈՆ, Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ տառապանմէի եւ արցունմէի անդրգերեզմանային մի գետ, որի եղերքների մօտ քափառում էին լացող մեռելների ուրականները, իսկ երջանիկներն անցնում էին միւս կողմ, նաւալքար Քարոնի մակոյկով, էլիզիումի (դրախտ) մէջ համգիստ գտնելու։

ԱԲԻԼԱՅ, Յն.— Տրովադական պատերազմի գլխաւոր հերոս, Թեսալիայի քազաւոր Պելէասի որդի։ Սպան-

ւեց Տրովադական արքայազուն Պարիսի ճեռքով :

ԱԲԻԼԱԿՍԵԱՆ ԽՆԴԻՐ.— Զենոն Փիլիսոփայի սովեստական մի խնդիր, թէ արագաշայլն Աքիլլէս չի կարող հասնել դամդաղաշայլ կրիային :

ԱԲՍԻՌՄԱՆ, Յն.— Բացարձակ նոմարտուրիւն, որ ապացոյցի պէտք չունի :

ԱՅԱԳԻԱ, Յն.— Հիւանդուրիւն, երբ ենրական անկարող է կերակուրը կուլ տալու :

ԱՅԱԶԻԱ, Յն.— Ուղեղային խանգարում, երբ ենրական անկարող է իր միտքը բառերով արտայայտելու, թէեւ մարմնապէս առողջ է :

ԱՅԵԲԻԱ, Ֆր.— 1) Գործ. ճեռնարկ. 2) Պատեհուրիւնից կախում ունեցող գործ. 3) Մուր. դարձածք. խարդախուրիւն :

ԱՅԵԲԻԱՍ, Ֆր.— Պատեհուրիւնից օգտւող. մուրգործեր դարձնող. խարերայ :

ԱՅԵՐԻԶՄ, Յն.— 1) Սեղմ արտայայտւած միտք, կարծիք, ասացւածք. 2) Գործառուրեան վրայ հիմնւած ասացւածք. 3) Առածի կարգն անցած խօսք, նախադասուրիւն :

Բ

ԲԱԱԱ. (Բահազ), Աս.— Փիմիկեցիների հայր ասուած, որի տաճարներում մարդկային զոհարերութիւններ էին մատուցւում։ Համապատասխան Բարելոնի եւ Ասորիստանի թել ասուծուն։

ԲԱԲԱ. Թր.— «Հայր»— Պատկառանձի համար տարիքու անձերին ուղղւած ածական, Հայերի մեջ եւս գործածուղ, օրինակ՝ Բարա Գասպար։

ԵԶՈՒԻԻՏ (Ճիզիր, Զիզլիտ), Յտ. Ա. — «Յիսուս-եաններ»— Կարոլիկ կրօնականների միարանութիւն՝ Խօնաւիոս Լոյուայի կողմից հիմնած 1534 թին. Յիսուս-եան Միարանութիւն անունով: Կարս միջոցում Յիսուս-եանները իրենց ցանցը տարածեցին ամբողջ կարոլիկ աշխարհում, նոյն իսկ Եւրոպական միապետներին իրենց ազդեցութեան ենթարկելով եւ ազգերի նակատագրի հետ խաղալով: Հռոմի պապերը յաջողապէս օգտագործեցին Յիսուսեաններին, իրենց ազդեցութիւնն աւելի եւս ընդլայնելու համար: Յիսուսեաններն որդեգրեցին ինկվիզի-

ցիայի (Հաւատաքննութեան) գարհուրանեները, հակառակորդներին ոչնչացնելու, ինչպէս նաև ծաւալւող Բողոքականութեան առջեւն առնելու համար : Պատուհաս եղան Եւրոպական ժողովրդների գլխին, մինչեւ որ զանազան երկրներից դուրս վաճառեցին՝ Փոքրուգալիայից՝ 1759-ին, Ֆրանսիայից՝ 1764ին, դարձեալ Ֆրանսիայից, երկրորդ եւ վերջին անգամ, Նապալեոն Բոնապարտի հրամանով՝ 1808-ին, Խոալիայից՝ 1773-ին : Միաբանութեան փոքրիկ մնացորդներ գոյուրդին ունին այժմ Հարաւային Ամերիկայի հանրապետութիւններում միայն, սակայն բոլորովին գունատուած ազդեցութեամբ (Տե՛ս Խմկվիզիցիա) :

ԵՀՈՎԱՐ. Հր. — Աստւածանչի մէջ՝ Հրեական աստւած, որի համար ատելի էին բոլոր ազգերը, «ընտրեալ» ժողովրդից զատ : Վրէժիսնդիր էր, անգութ եւ դաժան :

ԵՆԻՉԵՐԻՆԵՐ. Թթ. — Թիւրք բռնակալ սուլթանների կոտորածների եւ աւարառութեան ըրջանում Քրիստոնեայ ազգերից փոքր հասակում յափսուակւած եւ յատկապէս վայրագ եւ արիւնարբու զինուրների վերածւած յատուկ դասակարգ : ԺԴ. Դարից սկսած Ենիչերիները օրյաւոր ոյժ սկսեցին ներկայացնել, յատուկ զբւնդեր կազմելով : Հպատակ ոչ-մահմեդական ժողովուրդների գլխին ահաւոր պատուհաս եղան, սպանութիւններով, կողոպուտով, բռնարարութիւններով : Սուլթանների զահերի հետ սկսեցին խաղալ, մէկին սպանելով՝ միւսը զահը բարձրացնելու համար : Մահմուդ թ. սուլթանի հրամանով 1826-ին Պոլսոյ մէջ Ենիչերիները անսպասելի կերպով պատրւեցին եւ կոտորւեցին. այնուհետեւ զաւառմերի մէջ ջարդւեցին :

ԵՈՇԻՎԱՐԱ, Ճպ. — Ճապոնական անառականոցներին

յատկացւած քաղամաս։ Հանրատումները (Զուրոյիա) Ճապոնական ընկերային կենցաղի ամենից քացասական կողմն եղած են եւ ե՛ն ներկայիս։ Ճապոնական աւատական ըմբռնումով աղջիկը հանրութեան սեփականութիւն էր, երբ տակաւին չէր ամուսնացած եւ ամուսնանալուց յետոյ միմիայն՝ իր ամուսնու սեփականութիւն։ Այդ պատճառով նոյն իսկ մի տեսակ առաքինութիւն էր համարում, որպէսզի հասունցած աղջիկները իրենց ծնողների համաձայնութեամբ մի ժանի տարւայ համար անառականոց մտնէին, վաստկած դրամով նրանց օգնելու, ինչպէս նաև իրենց համար օժիտ պատրաստելու։ Նոյն իսկ հարուստ ընտանիքների եւ ազնւական դասի օրիորդներ չէին բաւում Զուրոներ (պոռնիկ) լինելու, մինչեւ որ երեք բառորդ դար առաջ Եւրոպական ըմբռնումներին ենթարկւելով՝ սկսեցին երաժարւիլ հնաւանդ սովորոյրներից։ Հասարակ ժողովուրդը, սակայն, մնում է կառշած վաղեմի ապրելակերպին։ Վերջին 20-25 տարիների ընթացքում Ճապոնացի կանանց միութիւններ սկսած են կատաղի պայքար մղել այդ չարիքի դէմ, պահանջելով զոցել Եռեխվարաները, սակայն օրէնսդրական մարմինները գործնական ոչ մէկ բայլ չգործեցին այդ ուղղութեամբ, բանի որ անառակութիւնը նիւթական մեծագոյն աղբիւրներից մէկն է քազմաքիւ Ճապոն պարլամենտականների եւ ծերակոյտականների համար։ Ներկայիս Ճապոնական Եռեխվարաներ ապաստանում են աւելի բան կէս միլիոն աղջիկներին։

ԵՈՐԿՇԱՅՐ, ԱՅ. — Անգլիական ամենից ընտիր խոզ, 10-15 ճագ ծնող. յանախ 1500-1600 փառւնտ ծանրութեամբ։

ԵՈՒՆԱԿ. — Բոլգարական մարմնամարզական միու-

բիւների անուն, կառավարական հովանաւորութեամբ. յետադիմական, ազգայնամոլ մքնոլորտի մէջ դաստիարակող :

ԵՎԼԴԻՄՈՆԻՉՄ, ՅՆ.— Փիլիսոփայական աշխարհայեաց, որի համաձայն գոյութեան միակ նպատակն երջանիկ լինելն է:

ԵՎԼՄԵՆԻԴՆԵՐ, ՅԱ.— Յոյն դիցարանութեան մէջ խղճի եւ վրէժխնդրութեան աստւածուիներ, համապատասխան Հռոմէական ֆուրիաներին :

ԵՒՐՈՊԱ, ՅՅ.— Յոյն դիցարանութեան մէջ Փիլօնիկեցոց քագաւոր Ազենոսի աղջիկ, որին սիրահարւեց Ձեւս (իւպիտեր-Արամազդ) եւ ցուլի կերպարանի առնելով՝ ներան փախցրեց Կրէքէ կղզին :

ՈՒՂԵՑՈՅՑ

Խ. Հայաստանի նոր ուղղագրութեամբ Ե-ով սկըսւող բառերը նայել բառարանի է-ի տարքի մէջ, օրինակ՝ Եպիկուրեան, Եքսապերտ՝ նայել էպիկուրեան, էքսապերտ :

Զ

ԶԱՄՇ, Գր.— Եղջերուի եւ տան կաժի՝ ձեռնոցների
եւ կամաց նուրք կօժիկմերի համար զործածւող:

ԶԱՅԹԻԿ, Թթ.— Թիւրք ռատիկան:

ԶԵԲՈՒ, Լտ.— Արեւադարձային երկրներում միաս
սապատ կամ երկսապատ եղ:

ԶԵԲՐ, Լտ.— Աֆրիկայի վայրի ճիռու մէկ տեսակ,
սեւ ու սպիտակ ժապաւէնակերպ մորքով:

ԶԵՄՍՏՎՈ, Ռու.— Ռուս բռնակալ Ալեքսանդր Գ.-ի
օրով ստեղծւած գիւղացիական անւանական ինքնավար
հռդատիրութեան սիստեմ, իրականութեան մէջ գիւղա-
ցիուրիմը նպմելու եւ կեղենելու համար հաստատւած:

ԶԵՆԴ-ԱԼԵՄՍՏՎԱ, Սս.— «Կենդանի Խօսք»— Զրադա-
տի կրօնա-փիլիխոփայական ուսուցմունքը պարունակող
գիրք:

ԶԵՆԴԵՐԵՆ, Սս.— Հիմ պարսկական (Բակտրիական)
լեզու:

ԶԵՆԻԹ, Ցն.— Բարձրագոյն կէտ. երկնքի ամենա-
բարձր կէտ, ուղիղ գծով:

ԶԵՆՈՆԻԶՄ, Ցն.— Գ. դարում Ք. Ա. Զենոն Ցոյն
փիլիխոփայի տեսութիւնների հետեւողութիւն, որ Ստո-
իկեան աշխարհայեացք անունով յայտնի է: Զենոնը պարզ
եւ մաքուր կենցաղի ժարողիչն էր. սովորեցմում էր կեն-
սական բոլոր դէպքերի մէջ պաղարին լինել, արհամար-

իել ձախողանքն ու տառապանքը, ժիշով զոհանալ, սառ-
նասիրու կերպով դիմաւորել մահւան, եւ այլն:

ԶԵԽՍ, Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ Կրոնոս
(Ներոնոս), Ժամանակի, եւ Ռէայի (Ներկրի) որդին էր:
Զեւսը հայր աստւածն եղաւ, համապատասխան Հռոմէա-
կան հւայտերին եւ Հայկական Արամազդին: Իր բնա-
կալայր Ոլիմպոս լեռան վրայ ժամանակն անցնում էր
Խնչոյ քններով, եւ կամ երկրի վրայ՝ մահկանացու զեղեց-
կուիհների հետ սիրային արկածախնդրուրիւններով:

ԶԵՓԻՒՄ, Յն.— Թերեւ, համելի հով:

ԶԻԳԶԱԴ, Ֆր.— 1) Կոտրտած զիծ. 2) Նեղ եւ շարու-
նակ մէկ կամ միւս կողմ ծռւող հանապար:

ԶԻԳՖՐԻԴ, Գր.— Գերմանական ազգային աւանդա-
վէպի՝ Նիբելունգների դիցազներգուրեան զիխաւոր հե-
րոս, որի արկածները իրը նիւր ծառայած են Վագների
հոչակաւոր օպերաների շարքին համար:

ԶՈԴԻԱԿ, Յն.— Յոյն աստղագէտների համար երկ-
րակամարի վրայ երեւակայական ըրջազիծ, որի վրայ անց
նում է արեւը: Զոդիակը բաժնւած է տասներկու հա-
ւասար մասերի, այլեւայլ կենդանիների անունով կոչւած,
ինչպէս ցուլ, խեցզետին, ձուկ եւ այլն, որոնք կազմում
են համանուն աստեղային խմբաւորումները (սիստեմ-
ները):

ԶՈՒԼ, Յտ. Ա.— Գ.-րդ դարում Ք. Ա. Յոյն քըն-
նադատ, որ մեծ հոչակ հանեց իր սուր, ծաղրական, քու-
նուտ քննադատուրիւններով, քէեւ յանախ՝ միակողմանի:
Ներկայ իմաստով Զոլի նշանակում է չարամիտ, քունուտ
լեզու գործածող քննադատ:

ԶՈՈՂՈԳԻԱ, Յն.— Կենդանիների կեանին ուսումնա-
սիրող գիտուրիւն — կենդանաբանուրիւն:

— ՀՈՒ (Զոռլոցիական պարտէզ) .— Գագանանոց :

ԶՈՒԾՈՒ (Զուլուսներ) .— Աֆրիկայի սեւամորք կի-
սավայրենի մի ցեղ :

ՁՐԱԴԱՇՏԱԿԱՆՆՈՒԹԻՒՆ, ՍԱ .— Զրադաւոփի հիմնած
կրօնա-քարոյագիտական վարդապետուրին, որ տիրող
կրօնն եղաւ Պարսկաստանում և Միջազգետում : Ոչ մէկ
փաստ չկայ թէ Զրադաւու անունով մէկը գոյուրին ու-
նեցա՞ծ է եւ ո՞ր դարեւրջանում : Զրադաւուականուրինը
ծագումն առաւ մօտաւորապէս 8-10 դար Ք. Ա. : Բագ-
մաստածեան հաւատալիքների խտացումն էր, բարի՝ Ա-
հուրամազդա գերաստուծոյ և չարուրեան՝ Ահրիմանի
յաւիտենական պայքարի աւանդավէսով, աշխարհի տի-
րապետուրեան համար : Ահուրամազդան վերջ ի վերջոյ
յաղը-ող պիտի հանդիսանայ եւ Ահրիմանը ընդմիւտ պի-
տի կորցնէ իր ազդեցուրինը մարդկային նակատագրի
վրայ : Զրադաւուական դաւանանքի միապահաղ թնոյքը
խանգարւեց այլեւայլ նոր զաղափարների կցումով : Զր-
րադաւուականները մերժում էին տանարներում աղօրե-
լը, բացօդեայ պաւուամունքն ընդունելով իր միակ յար-
գանքի ձեւ՝ Ահուրամազդային (Որմիզդին) : Արեւը կեն-
սատու ասուած էին ընդունում, կրակը նրա խորհրդա-
նիւը, որ միւտ վառ էր պահեում մոգերի (բուրմերի)
կոսմից : Թոյոյլատրում էր բոյրերի եւ եղրայրների ամուս-
նուրինը իրար հետ, ինչպէս նաև հայրերը կարող էին
կնուրեան առնել իրենց աղջիկներին, եւ մայրերը իրենց
տղաների կին լինել : Մեռելներին չէին քաղում, քողնե-
լով որպէսզի անգղները լափէին :

Է

ՈՒՂԵՑՈՅՑ

Խ. Հայաստանի նոր ուղղագրութեամբ Ե-ով սկսւող
բառերը նայել այս շարքի մէջ, օրինակ՝ Եպիկուրեան,
Եբապերտ՝ նայել էպիկուրեան, Եբապերտ:

ԷԳՈՒԶՄ, Լու.— Եսականութիւն, Եսամոլութիւն.
ԱԲԱՆԱԿԱՆ շահերի ծայրայեղ զերադասութիւն ուրիշի
շահերից:

ԷԳՈՒԹԷՀՄ, Լու. Յն.— Խճճաստւածացում, խճ-
ճապատութիւն:

ԷԴԻԿՏ, Լու.— Պետական օրէնք. որուում. վճիռ:

ԷԴԻՈԼՈԳԻԱ, Յն.— Ազգարանութիւն, ցեղարանու-
թիւն.— ազգերի կենցաղը, սովորոյթները, պետական-
հասարակական կազմն ուսումնասիրող ընկերարանական
գիտութիւն:

ԷԶՈՑԵՐԻԿ, Յն.— 1) Խորհրդաւոր, գաղտնի ընկե-
րակցութեան անդամ. 2) Խորհրդաւոր գիտութիւններին
հաւատացող :

ԷԹԻՈԼՈԳԻԱ, Յն.— Հիւանդութիւնների ծագումը,
պատճառներն ու ազդեցութիւններն ուսումնասիրող գի-
տութիւն:

ԷԼԱՍՏԻՔ, Լտ. — ձկում. դիւրաքեֆ:

ԷԼԴՈՐԱԴՈ, Սպ. — Առասպելական «Ռուկի Աշխարհ», որ իրը թէ գտնուում էր Ամերիկայում, եւ որի մասին տարածւած զրոյցները անհամար Եւրոպացիներին արկածախնդրութեան մղեցին, Նոր Աշխարհում իրենց բախտը փնտռելու երկիր:

ԷԼԵԳԱՆՏ, Ֆր. — Վայելուչ, օնորհալի:

ԷԼԵԳԻԱ, Յն. — Քնարերգական բախծոտ բանաստեղծութիւն:

ԷԼԵՄԵՆՏ, Լտ. — 1) Որեւէ նիւրի հիմնական մաս, տարր. 2) Հաւաքական իմաստով՝ վիրխարի մարմիններ կամ վիրխարի ոյժեր. օրինակ՝ բնութեան էլեմենտներ տարրերային ոյժեր՝ ինչպէս երկրաշարժ, մրրիկ եւ այլն:

ԷԼԵՔՏՐԻԾ, Յն. — 1) Զօրաւոր ըմպելի. 2) Կենսունակ, ոյժ տուղ հեղուկային դեղ. 3) «Անմահական Զուրք», որը միջնադարեան ըմբռնումով գոյուրիւն ունէր կամ հնարաւոր էր պատրաստել, եւ որի մէկ կարիլը բաւական էր անմահանալու համար: «Անմահական Զուրք» յայտնագործման համար միջնադարեան հարիւրաւոր զիտուններ — Ալքիմիկոսներ իրենց կեանքը մաշեցրին:

ԷԼԵՔՏՐԱ, Յն. — Յոյն դիցարանութեան մէջ մի չքնաղ յաւերժահարս, որը Զեւսից մի տղայ ունեցաւ — Դարդանուս: Վերջինը հիմնադիրն եղաւ Տրովադայի (Տրոյի) պետութեան:

ԷԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Յն. — Յունարէն էլեկտրոն (դեղին սար — քահրիար) բառից, որ փոքր մարմինները իրեն քաշելու գորութիւնն ունի: Յայտնագործեց յոյշ գիտնական Թալէս 640–548 Ք. Ա., (հեղինակը «Կոսմոլոգիա»— Տիեզերագիտութիւն գրքի, որի մէջ բնութեան

ոյժերից զերազոյնն է նկատւած ջուրը) : Էլեֆտրականութիւնը երկու տեսակ ոյժերի արտայայտուրիւնն է — դրական և բացասական: Այդ երկու ոյժերը մշտապէս ձգտում են իրար միանալու. միացումը տեղի է ունենում յանախ աղմուկով և լուսաւորուրեամբ: Անձրեւի գորորիկի ժամանակ էլեֆտրական երկու — դրական և բացասական հոսանքների իրար հանդիպումը օդային վերին խաւերում տեղի է ունենում որոտումով և կայծակով: — Գիտական միջոցներով արտադրւած էլեֆտրական ոյժը ժամանակակից արդիւնաբերուրեան և նարտարարւեստի գլխաւոր ազդակն է հանդիսանում: Զրային հոսանքների օգտագործումն էլեֆտրական ոյժի արտադրուրեան համար առաջնակարգ միջոցն է նկատւած ամբողջ աշխարհում:

ԷԼԵՖՏՐՈՖԻԿԱԾԻԱ. Յն.— Էլեֆտրականացում.— արդիւնաբերական — արտադրական ձեռնարկներն էլեֆտրական շարժիչն ոյժով գործադրելու սիստեմ:

ԷԼԵՖՏՐՈՆ. Յն.— Իր նիւր անմատչելի, անսահմանօրէն փոքրիկ տարր. Էլեֆտրական հոսանքի հիմնական տարր:

ԷԼԵՋԻՌՈՒՄ. Յն.— Յոյն դիցարանուրեան մէջ արդարներին և հերոսներին յատկացւած անդրգերեզմանային պարտէզ, դրախտ: Ըստ ումանց՝ անսահման դաշտ:

ԷԿԶԱՐՔ. Յն.— 1) Բիւզանդական կայսրուրեան մէջ մի ժամի նահանգների ընդհանուր, լիազօր կառավարիչ, փոխարքայ. Օրբողոս եկեղեցու քեմական առաջնորդ, եպիսկոպոս:

ԷԿՁԵԿՈՒՑԻԱ. Լտ.— 1) Դատական պատժի իրազործում. 2) Զինւորական պատժիչ գօրամասի կողմից որունահանգի կամ քանակի պետուրեան հոգամասի ժամանա-

կաւոր զրաւում, զրաւած օրջանի բնակչութեան վրայ ծանրացնելով այդ զօրամասի տեղաւորման եւ պարենաւորման ծախսերը:

ԷԿՈՆՈՄԱ, Յն.— Մորրու տարափոխիկ հիւանդութեան մէկ տեսակ:

ԷԿՈՆՈՄԻԱ, Յն.— 1) Խնայողութիւն. տնտեսութիւն. տնտեսագիտութիւն. 2) Գիւղատնտեսական աշխատանքների որու մէկ օրջան. 3) Քաղաքական էկոնոմիա Ընկերաբանութեան (Սոցիոլոգիա) մէկ մասն է, իր ուսումնասիրութեան նիւթ ունենալով ժողովրդական տնտեսական գոյավիճակն իր բոլոր փուլերի մէջ, ինչպէս նաև աղգերի տնտեսական փոխ-յարաբերութիւնները:

ԷԿՈՆՈՄԻԿԱ, Յն.— Տնտեսական դրութիւն, նիւթական կարողութիւն:

ԷԿՎԱՏՈՐ, Լտ.— Երկրագնդի ռուրզը երեւակայական գօտի, որը նրան երկու մասերի է բաժնում, հիւսիսային եւ հարաւային հասարակած. արեւադարձ:

ԷԿՐԱՆ, Յր.— Շարժապատկերի վարագոյր, որի վրայ արտացոլում են տեսարանները: Անգլիերէն՝ Սկրին:

ԷՄԱՆՍԻՊԱՑԻԱ, Լտ.— 1) Հնաւանդ սովորոյրներից եւ նախապատճեններից հրաժարում. 2) Գերութեան կամ նորտական դրութիւնից ազատում. 3) Կանանց ազատագրութիւն՝ այր մարդկանց հաւասար իրաւումքներին տիրանալով:

ԷՄԲԼԵՄ, Յն.— Խորհրդանիւս:

ԷՄԲՐԻՈԼՈԳԻԱ, Յն.— Սաղմարանութիւն.— Կենդանական եւ բուսական տեսակների նախնական ձեւերն ու նրանց աստիճանական զարգացման ընթացքն ուսումնասիրող գիտութիւն:

ԷՄԻԳՐԱՆՏ, Լտ.— 1) Գաղքական — օտար երկրից

եկած ամճ եւ հաստատւած նոր հայրենիքի մէջ. 2) Հայրենիքից վտարւած:

ԷՄԻՍԱՐ, Լտ.— Քաղաքական կամ կրօնական կազմակերպութեան կամ պետութեան գաղտնի գործակալ, ռազմական կամ յուղելու, խռովութիւններ համելու եւ կամ հոդ պատրաստելու, նուանողական նպատակների համար:

ԷՄԻՐ, Թր.— Կենտրոնական Ասիայի եւ մօտակայ մահմեդական երկրների մէջ՝ միապետ, քաջաւոր, իշխան. — առաջնորդ. ղեկավար. գօրավար:

ԷՄՊՈՒՐԻԶՄ, Յն.— Փիլիսոփայական տեսակէտ, որի համաձայն միայն անձնական փորձառութեամբ եւ արտադին տպաւորութիւններով հնարաւոր է երեւոյթների էռուրիւնն ըմբռնել:

ԷՆԴԵՄԻԿ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ, Յն.— Որու օրջանի մէջ սահմանափակւած վարակիչ հիւանդութիւն:

ԷՆԵՐԳԻԱ, Յն.— Ոյժ. եռանդ. կարողութիւն. աշխուժութիւն:

ԷՆԹՈՄՈЛОԳԻԱ, Յն.— Միջատարանութիւն, միջատագիտութիւն — միջատներին ուսումնասիրող գիտութիւն:

ԷՆԷԱԿԱՆ, Յտ. Ա. — Էնէասի դիւցազներգութիւն: Լատին մեծագոյն բանաստեղծ Վիրզիլիոսի գրած հոյակապ դիւցազներգութիւն՝ էնէասի արկածների ռուրջ, որ ըստ առասպելի՝ Հռոմէական պետութեան հիմնադիրն եղաւ: Ազդւած լինելով Հռոմէրոսի նլիական եւ Ռդիսիական դիւցազներգութիւններից՝ էնէականը միաժամանակ ազգերի գրական դասական գոհարթերից մէկն է համարւում: Վիրզիլիոս ծնւեց 70-ին Ք. Ա. եւ մեռաւ 19-ին, 51 տարեկան հասակի մէջ:

ԷՆԻԳՄԱ, Յն.— Համելուկ, հարցում. լուծւելու համար առաջարկւած խնդիր :

ԷՆՑՈՒԶԻԱԶՄ, Յն.— Շայրայեղ ոգեւորութիւն. յափըստակուրթիւն :

ԷՆՑԻԿԼԻԿԱ, Յն.— Հռոմի Պապի հրովարտակ (կոնդակ), ուղղւած կարողիկ քենցերին :

ԷՆՑԻԿԼՈՊԵԴԻԱ (ինսիկլոպեդիա), Յն.— 1) Համայնագիտարան. բոլոր գիտուրիւններն իր մէջ ամփոփող մը ընդհանուր հաւաքական գիտուրթիւն. 2) Գիտուրեան բոլոր նիւթերի մասին տեղեկուրթիւններ եւ ուսումնասիրութիւններ պարունակող բառարան :

ԷՆՑԻԿԼՈՊԵԴԻՍ, Յն.— Բոլոր գիտուրթիւններին ծանօթ անձ. համայնագիտական պատար ունեցող :

ԷՆՑԻԿԼՈՊԵԴԻՍՆԵՐ, Յն.— Ժ.՝ քարի Ֆրանսիացի ազատական գիտնականների մի խումբ, որոնք դ'Ալամբերի եւ Դիդրոյի ղեկավարութեամբ հրատարակեցին առաջին Հանրագիտական բառարանը, Փիլիսոփայական բովանդակուրթեամբ, մեծապէս նպաստելով մտքերի մը-շակմանը՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխուրթեան համար :

ԷՊԻԳՐԱՆՆԵՐ, Յն.— «Ղերզը Ծնւածներ».— Յունաստամի Բէոտիա գաւառի Թերէ քաղաքը պատարող հօրը քագաւորների գաւակներ, իրենց հայրերի քացակայութեան ժամանակ ծնւած : Հայրերը հետզիետէ մեռան պատարման ժամանակ մդւած կոհիների մէջ, բայց գաւակները տարիքն առնելով՝ շարունակեցին իրենց հայրերի գործը եւ քաղաքը գրաւեցին :

ԷՊԻԳՐԱՄ, Յն.— Մահարաճանի վրայ փորագրւած կարճ ու սրամիտ ոտանաւոր կամ արծակ գրութիւն, մեռածի անհատականութիւնը բնորոշող իմաստով :

ԷՊԻԳՐԱԴ, Յն.— 1) Դէպէերի շարքի մէջ մի փոքրիկ

միջադեպ. 2) Անսպասելի դիպւածք, որը կարն միջոցի համար կանգնեցնում է գործերի բնականոն ընթացքը, առանց սակայն նրանց խանգարելու. 3) Գրւածքի կամ պատմւածքի մէջ նախորդ կամ յետազայ նիւրի հետ անմիջական կապ չունեցող մի տարրեր, միջանկեալ պատմըւածք:

ԷՊԻԿՈՒՐԵԱՆ, Յտ. Ա.— Էպիկուր յոյն փիլիսոփայի (341-270 քուին Ք. Ա.) հիմնած տեսուրիմ՝ զոյուրեան նպատակի եւ բարոյագիտական արժեքի մասին։ Ըստ էպիկուրի՝ մարդ անհատը պէտք է ձգտի անհունօրէն քամելու երջանկուրեան բոլոր հնարաւոր աղրիւրները, որովհետեւ մարդկային կեանքը չունի այլ նպատակ, քան երջանկուրիմ։ Այդ աղրիւրները, սակայն, պէտք է որ հոգեկան-իմացական բնոյր ունենան, հեռու զգայնական-կեննանական պղտոր տրամադրուրիմներից եւ աղաւագւած յուզումներից։ Էպիկուրի մահեանից յետոյ նրա բիւրեղային տեսուրիմները ենթարկւեցին սըխալ մեկնարանուրեան, եւ էպիկուրեան ասելով մարդիկ սկսեցին հասկանալ ուտող-խմող եւ սեռային հանոյ քնների մէջ իր կեանքն անցնող անձ։ Էպիկուրեան ընդունւած «ևե՛ր, ա՛րք եւ ուրախ լե՛ք» երամայականն ուրիշ քան չէ, քան մի անարգանք՝ էպիկուրի անւան նետւած։

ԷՊԻՃԵՏ, Յն.— Սուր ածական, կարծիք, ակնարկ որու անձի, երեւոյքի կամ դէպքի մասին։

ԷՊՈԼԵՏ, Ֆր.— Ուսնոց.— զինուրական կամ քաղաքացիական համագենստի ուսերի վրայի յաւելւածական կարւածք կամ նւան, պատմական աստիճանը ցուցադրող։

ԷՊՈԽԱ, Յն.— Պատմական կարեւոր օքջան. դարեցրջան. դարագլուխ։

ԷՊՈՊԵԱ, Յն.— Ժողովրդական, ցեղային աւանդա-

վէալ. ազգային դիւցազներգուրիւն, որի մէջ նկարազբը-
ռում են ազգային մեծ հերոսների սխրագործուրիւնները,
խտացնելով տւեալ ազգի խառնւածքն ու ցեղային ուրոյն
յատկանիւնները : Համաշխարհային էպոպէաների մէջ ա-
ռաջնուրեան դափնին վաստկած են Հոմերոսի «Իլիական»ն
ու «Ոդիսիական»ը եւ Վիրզիլիոսի «Էնեական»ը : Պարսիկ
բանաստեղծ Ֆիրդիւսու «Շահնամե», որ ոմանց կողմից
դասւում է էպոպէաների շարքում, անտարակոյս գրա-
կան բարձր արժեք է ներկայացնում : Ռուսական Խիա
Մուրոմցի բազագործուրիւնների աւանդավէպը զուրկ է
գրական բացառիկ ներենչումներից, իսկ հայկական «Իա-
ւիդ» եւ Միհերքի ժողովրդական հեթեարների մի բանի քե-
րի վարիանտները ցեղագրական հետաքրքրուրեան նիւր-
կարող են քերեւս դառնալ, խնամքով մշակւելուց յետոյ :
Նւրոպական ազգերից Ֆինլանդացինների «Կալեվալլան»,
Գերմանական «Նիբելունգների» աւանդավէպը, Յրանսիա-
կան եւ այլ դիւցազներգուրիւններից իւրաքանչիւրն ի-
րենց քերուրիւններ ունենալով հանդերձ՝ գրական ուշա-
գրաւ արտադրուրիւններն են եւ տւեալ ժողովրդների նը-
կարագրի ու ցեղային ձգտումների հայելի՝ գումառ կամ
պայծառ լուսաւորուրեամբ :

ԷՍ-ԷՐ.— Սոցիալ-Յեղափոխականների կուսակցու-
թիւն Ռուսաստանում : Արտայայտիչ էր մէկ կողմից
մանրաբուրժուական դեմոկրատիայի եւ միւս կողմից
գիւղացիական շահերի ու ձգտումների : Նա աւելի
շուտ դեմոկրատական քան սոցիալիստական կու-
սակցութիւն էր, իր մէջ համախմբելով ամեն գոյ-
նի պատեհապատճեր : Բեկրեկուող, հիւանդոտ հո-
սանքն եղաւ, հակամարտ ազգեցուրիւններին ենքա-
կայ, եւ արագօրէն բայխայւեց ու ասպարէզից բււեց,

Աերկայիս տիրող կուսակցութեան — կոմունիստական գրոհին առջեւ։ Հոկտեմբերեան Յեղափոխութիւնը վերջ դրեց Սոցիալ-Յեղափոխականների զոյութեան Խորհրդային Միութեան սահմաններում։

ԷՍԿԱԴՐՈՆ, Ֆր.— Հեծելազօրքի վաւու։

ԷՍԿԻԶ, Ֆր.— Գեղարւեստական ստեղծագործութեան նախնական փորձ, ուրագիծ։

ԷՍԿԻՄՈ (Էսկիմոս)։— Հիւսխային ցուրտ երկրների ցեղերից մեկը Գրենլանդիայում եւ Հիւսխային Ամերիկայում։ Էսկիմոները իրենք իրենց ինուիտ են կոչում։ Յեղակից են Արեւելեան Սիրիորի Զուկչէ ցեղին։ Ապրում են որսորդութեամբ եւ ձկնորսութեամբ։ Միամիտ, մեղմ եւ անմշակ տարր են։ Արեւմտեան քաղաքակրթութիւնը մուտք գործեց էսկիմոների մէջ, իր հետ նւէր բերելով օղի, վեներական ախտեր եւ անառակութիւն։

ԷՍԿՈՒԼԱՊ, Յն.— Բժշկութեան աստιած, Ապոլլոնի զաւակ, Յոյն դիցարաննութեան մէջ։ Հրաշագործ բժըսկութիւններ անելուց զատ՝ ոկտես նոյն խսկ մեռելները կենդանացնել։ Զեւսը, աստιածների հայրը՝ սարսափած էսկուլապի հմտութիւնից՝ նրան Պլուտոնին, դժոխքի աստծուն յանձնեց, որը նոյնպէս երկիւղի մատնած էր, խորհելով որ իր պետութիւնը պիտի ամայանար, երէ էսկուլապ շարունակէր իր արհեստը։ Էսկուլապ ներկայացւում է իրը հասուն տարիքի մէջ մտած մարդ, իր մօտն ունենալով մի աքաղաղ՝ խորհրդանիւը մտական արքնութեան, եւ մի օճ՝ նշան իմաստութեան։ Գրականութեան մէջ էսկուլապ անունը յատկացւում է բժշկին։ Հեգմական իմաստով՝ կեղծ, դրամատորք բժիշկ։

ԷՍՏԵՏԻԿ, Յն.— Գեղասէր, գեղարւեստակը, գեղարւեստագետ։

ԷՍՏԵՏԻԿԱ, Յն.— 1) Բնուրեան եւ գեղարվեստի մէջ արտաքին զեղեցիկ ձեւերի ուսումնասիրուրիւն. 2) Գեղեցկուրեան ըմբռնում՝ արտաքին տպաւորուրիւններով:

ԷՍՏՐԱԴ (Էստրադա), Յն.— Բեմ քատրոնի կամ սրահի մէջ:

ԷՎՈԼՅԻՑԻԱՆ, Լու.— Բնաօքում. բարեգում. — Կենդանական եւ բուսական տեսակների աստիճանական կտտարելագործում՝ բնական, բնազդական ձգուումով: Օրինակ՝ կենդանական կեանիչի նախահայրն եղած է Պրոտոպլազմա — մի միարջիջ սաղմ, որից դարերի երկար հոլովումով՝ ծագումն առած են կենդանական հետզիւտէ բարդող տեսակներ, մինչեւ որ կազմւել է ներկայ կենդանական աշխարհը, իր մէջն առնելով նաև մարդը: Դիտական էվոլյուցիայի հիմնադիրն է Անգլիացի հռչակառ բնագէտ Չարլզ Դարվին: — Էվոլյուցիան կդերապահպանողական տարրերի կողմից նկատուած է իր ժըրիստոնէական հաւատալիքների հիմերը ֆանդող վնասակար՝ գիտուրիւն, որովհետեւ նա խախտում է Հրեական այն առասպելը, թէ Աստիածը վեց օրւայ մէջ ստեղծած է աշխարհը. այդ պատճառով էվոլյուցիայի դէմ բուռն պայքար է մղուում յետադիմական հոսանքների կողմից, մանաւանդ Մ. Նահանգներում: Տեսնեսսի նահանգում, Դէյտոն ժամանակաքարար մի դատավարուրիւնից յետոյ, 1925 թիմ՝ դպրոցների մէջ արգիւց էվոլյուցիայի դասաւանդուրիւնը: Այդ տգէտ եւ խաւարամոլ կարգադրուրեան հետեւեցին մի ժամի նահանգներ եւս, ամօրալի պատմէւ կանգնեցնելով գիտուրեան առջեւ:

ԷՎՈԼՅԻՇԻԴ, Յն.— Հիմ Աքենի արտօնեալ, ազնւական դասակարգ:

ԷՎՈԼՅԻԿԱ, Յն.— «Գուայ».— Սիրակիւզի հռչակաւոր

Երկրաշափ եւ մարեմարիկոս Արքիմեդէսի ուրախութեան բացականչութիւն, երբ յայտնազործեց մարմինների ծանրութեան օրէնքը:

ԷՏԱՊ. Յոր.— 1) Մէկ վայրից միւսը դրկուղ կալանաւորմերի խումբ. 2) Ճամրորդութեան ժամանակ իշեւան, կայան՝ հանգատի համար, 3) Բանակի տեղափոխութեան միջոցում մէկ կէտից մինչեւ միւս կէտը երկարող նանապարհ. 4) Ռազմամբերի պահեստանց. 5) Քաղաքական դէպֆերի ժամանակ դեկավար մարմինների վերջնական նպատակակիտ:

ԷՏԻԿԱ. (Էրիկա), Յն.— Բարոյագիտութիւն.— Փիլիսոփայական մտածելակերպ, որը նկատի է առնում մարդկային նկարագրի առանձնայատկութիւնները նրանց բարոյական արժէքի համաձայն:

ԷՏԻՒԴ. Յոր.— 1) Նկարչի գծած նախնական սուերագիծ, որի վրայ նա կադապարում է իր յղացումն ամբողջ կատարելութեամբ. 2) Երաժշտական արտադրութիւնների մէջ՝ նախափորձ. 3) Գրական իմաստով՝ փորձնական արտադրութիւն:

ԷՏՆՈԳՐԱՖԻԱ. Յն.— Ազգարանութիւն, ցեղարանութիւն.— Մարդկային ցեղերի ծագումը, սովորոյթները, զարգացումն ու այլ բնորու յատկանիւններն ուսումնասիրող գիտութիւն:

ԷՐԱ, Յն.— Պատմական որու օրջան. դարագլուխ. դարեւրջան: Պատմականօրէն ժամանակագրական էրաներն են (ազգերի տոմարմների սկիզբը).—

Հրեական՝ Եգիպտոսից Ելքը՝ 1483 կամ 1648 Ք. Ա.:

Հրեական՝ Բարելոնի Գերութիւնից՝ 597 Ք. Ա.:

Քրիստոնէական՝ Քրիստոսի Ծնունդից մինչեւ հիմա:

Ցունական՝ Ալիմպիան Ա. Խաղեր՝ 776 Ք. Ա.:

Հռոմեական՝ Հռոմի հիմնադրութիւն՝ 753 թ. Ա.։
Մահմեդական՝ փախուստը Մելլայից՝ 622 թ. Յ.։
Յքանիական՝ Մեծ Յեղափոխութիւն՝ 1790 թ. Յ.։
և. Միուրեան՝ Մեծ Յեղափոխութիւն՝ 1917 թ. Յ.։
Հայկական, Տառերի Գիւտը՝ 466 թ. Յ.։

ԷՐԱԾՈ, ՅԱ. — Յոյն դիցարանուրեան մէջ՝ բախծութանատեղծուրեան Մուսա:

ԷՐՈՍ, ՅԱ. — Սիրոյ աստւած Յոյն դիցարանուրեան
մէջ՝ Առյօն՝ Կուպիդոն, Կիւպիդ կամ Ամուռ:

ԷՐՈՏԻԿ, ՅԱ. — Սիրային. հետաքր. վաւազու:

ԷՐՈՏՈՄԱՆԻԱ, ՅԱ. — Հետամոլուրիւն. — Հոգեկան
հիւանդութրութիւն, երբ ենթական ամբողջովին կլան-
ւած է սեռային հանոյ բների խորհուրդներով և մտապատ-
կերթներով:

ԷՐՈՒԴԻՑԻԱ, ՅԱ. — Մտաւոր մեծ պաշար, մասնա-
ւորապէս պատմական գիտուրիւնների մէջ:

ԷՐՍԿՈՒՐՍԻԱ, ԼՄ. — Հանոյքի համար կամ գիտա-
կան ուսումնափրուրեան նպատակով ժամանակաւոր
նամբորդուրիւն:

ԷՐՍՉԵՅՆՁ, ԱԱ. — Բորսա: Տե՛ս Բիրժա:

ԷՐՍՊԱՏՐԻԱՑԻԱ, ԼՄ. — Հայրենիքից վտարում:

ԷՐՍՊԵԴԻՑԻԱ, ԹՅՐ. — 1) Գիտական արշաւախումբ՝
որու ըրջանում ուսումնասիրութիւններ կատարելու. 2)
Զինւորական արշաւախումբ. 3) Վարչական հաստատու-
թիւն, որը մշակում է պետական ծրագրներ, որու տեղե-
րում գործադրելու. 4) Ապրանքների կամ փոստային ծր-
ագրների փոխադրուրեան գործով գրադադար պատօնելու-
թիւն:

ԷՐՍՊԵՐՏ, ԼՄ. — Որու նիւղի մէջ մասնագէտ:

ԷՔՍՊԼՈԱՏԱՑԻԱ, Թր.— Շահագործում. հանքային, արդիւնաբերական, հողային եւ այլ աղբիւրների շահագործում, յօցուտ շահագործող անհատի, ընկերութեան, համայնքի կամ պետութեան. 2) Աշխատանքի շահագործում, հարստահարում.— գործաւոր դասակարգի աշխատանքի իւրացում դրամատիրական դրութեան տակ, երբ արտադրութեան արդիւնքը վայելում է ոչ քէ արտադրող աշխատաւորը, այլ նրան օրականով վարձող գործատէրը:

ԷՔՍՊՈՐԾ, Լտ.— 1) Ամեն կարգի ապրանքների արտահանում դէպի օտար երկրներ. 2) Արտահանւած ընդհանուր ապրանքների ժամակն ու արժեքը, վիճակագրական ձեռով:

ԷՔՍՊՐՈՄՏ, Լտ.— Յանպատրաստից արտասանւած կամ երգւած ոտանաւոր, երգ եւ այլն. Վայրկեանի յղացում:

ԷՔՍՊՐՈՊՐԻԱՑԻԱ, Լտ.— Պետութեան կամ դատարանի կողմից անհատների կամ ընկերութիւնների սեփականութիւնն եղած անշարժ կայֆերի, գործարանների եւ արդիւնաբերական ու հողային ամեն կարգի հարստութիւնների բնագրաւում. պետականացում:

ԷՖԵՆԴԻ, Թք.— Սովորական ամրոխից իբր քէ մէկ աստիճան բարձր անհատին տրած յարգանքի ածական:

Էֆֆենց, Լտ.— Արտաքին օբյեկտ վայլից ստացւած տպաւորութիւն. ազդեցութիւն:

Թ.

ԹԱԼԻԱ, Յն.— Կատակերգութեան մուսա յոյն դիցա-
րանութեան մէջ :

ԹԱԼՄՈՒԴԻ, Հր.— Հրեական սուրբ զիրք, Հին Կտա-
կարանից հատւածներով, նրանց մեկնութիւններով, քը-
ծըշկական խորհուրդներով եւ ծիսական բնոյր ունեցող
հրահանգներով :

ԹԱՑ-ԿԻ, Զն.— Զինացի մեծ բարոյագէտ-ֆիլիսո-
փայ Կոնֆուցիոսի (Կումկ-Ֆու-Ցու) վարդապետու-
թեամբ՝ այն նախնական էութիւնը, որը ծնունդ տւած է
գոյութիւն ունեցող միւս բոլոր էութիւններին:

ԹԱՆԱՏՈՍ, Յն.— Յոյն դիցարանութեան մէջ մահ-
տան աստւած, Գիշերայ աստուծոյ որդի եւ Քունի եղ-
քայր :

ԹԱՆՁԻՄԱԹ, Ար.— Սուլքանների օրով բարձրագոյն
հրովարտակ, հպատակներին ուղղած, իբր քէ բարենո-
րսգչական իմաստով :

ԹԱՒԱԴԻ, Վ.ր.— Վրաստանի իշխանական ծագում ու-
նեցող : Թաւադները ցարական բռնապետութեան հովանա-
ւորած դասակարգն էին, մեծ մասամբ աղքատ, ծոյլ,
ոռայլ, ուտող-խմող ճրիակիրների մի ստարաքիւ զան-
գրւած :

ԹԵԶԻՌԱ. Յն.— Յոյն դրցաբանական նւանաւոր հերոս, որին վերագրւած է Կրեքէ կղզու Լարիւրինը ռոսում ապրող մարդակեր Մինոտավրոսին սպանելու հերոսութիւնը։ Թեզէոս, ըստ աւանդուրեան, պիտական վարչուրեան հիմնադիրն եղաւ Ատտիկայում (Յունաստանի զաւաններից մէկը) և Արէնի օրէնսդրական տռաջին կարգերը հաստատեց։

ԹԵՐՄԱ. Յն.— Գրւածքի կամ բանախօսուրեան մէջ հիմնական միտք. իմաստ. նիւր։

ԹԵՐԱՊԵՏԻԿ (Տերապետիկ), Յն.— Բժժկական գիտուրեան այն նիւրը, որը սովորեցնում է հիւանդուրինները բուժելու կերպերը։

ԹԵՐՄՈ ԷԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Յն.— Տաքուրեամբ ստացւած էլեկտրականուրիւմ։

ԹԵՐՄՈՄԵՏՐ, Յն.— Ջերմաչափ. տաքուրիւնը աստիճաններով չափող գործիք, որի մի ժամի տեսակները կան։ Սենտիգրատ՝ 100 աստիճանների բաժանումով, Ռէոմիւր՝ 80 և Ֆակրենհայր՝ 180 աստիճանով։ Կան նաև տարրեր ջերմաչափներ, որոնք ցուցադրում են հազարաւոր աստիճանների ջերմուրիւն, հալւած զանգւածների և մետաղների տաքուրիւնը մատնանող։

ԹԵՏԻՍ, Յն.— Տրովադական պատերազմի զլխաւոր դիցազն Աֆիլէսի մայր, որը նրան ծնելով՝ դժոխքի Ստիքս գետի մէջ լողցրեց, նրան անխոցելի դարձնելու համար։ Աֆիլէս մեռաւ ոտքի կնդակից Վիրաւորւելով, որով մայրը բռնած էր իրեն Ստիքսի մէջ սուզած միջոցին։

ԹԷԶ (Թէզիս), Յն.— 1) Ապացոյցի կարօտ խնդիր, գաղափար, նիւր. 2) Վիճաքանուրեան, դասախօսուրեան կամ գիտական ուսումնասիրուրեան համար ընտրւած

նիւր. 3) Որու դրութիւն, որն անհրաժեշտ է հաստատել դրական փաստերով:

ԹէկիջՄ, ՅԱ. — Աստւածպատութիւն, Աստուծոյ գոյութեամ ընդունելութիւն, հակառակ Սրբիզմին — անաստածութեան:

Թէկ. ԵՌԱՊԻԱԱ, ՅԱ. — Վախճանարանութիւն. — Փիլիսոփայական տեսութիւն, որի համաձայն բնութեան մէջ ոչ մէկ երեւոյք ամիմաստ չէ, այլ ամեն բան իր վախճանական նպատակն ունի, այն է վերջնական կատարելութիւն. երեւոյքներն իմբնարերարար չեն դեկավարում, այլ ներքին որու մղումներից, եւ իրենց զարգացման բարձրագոյն աստիճանին են հասնում երկարատեւ որջաններից յետոյ միայն:

ԹէՌՊՈՆԻԱԱ, ՅԱ. — Բազմաստածեան կրօնների մէջ աստւածների եւ աստւածուհիների ցեղագրութիւն, ցեղարանութիւն, այսինքն նրանց ազգակցական փոխադարձ կապերով գրադւող գիտութիւն:

ԹէՌԱՊԻ, ՅԱ. — Աստւածարան:

ԹէՌԱՊԻԱԱ, ՅԱ. — Աստւածարանութիւն. — Աստուծոյ էռութիւնն ու բնոյքն ուսումնասիրող կրօնագիտութիւն:

ԹէՌԿՐԱԾԻԱԱ, ՅԱ. — Աստւածպետութիւն. — Համայնքի կամ պետութեան այնպիսի վարչածեւ, որը համարում է Աստուծոյ կողմից հաստատած, եւ որի գլուխն են կղերականները: Թէռկրատիա ներկայացնում էին հին Հրեաները իրենց Դատաւորների պետական կազմով, որոնք ուարումներն էին, Հռոմի Պապական Թէռկրատիան, Թիրէքի Դալայ-Լամայի Թէռկրատիա եւ այլն:

ԹէՌՄԱՆԻԱԱ, ՅԱ. — Կրօնական խելագարութիւն. ծայրայեղ կրօնամոլութիւնից առաջացած ուղեղի խանգա-

րում, որը կարող է անհատական լինել, ինչպէս նաև հաւաքական։ Արդիւնք է անսահման տգիտութեան եւ մտածելակերպի միակողմանիութեան, արտաքին ներշնչումներին մատապէս ենթակայ։ Հաւաքական թէումանիայի երեւյրներն եղած են Խաչակրական Արշաւանքները, Մանուկների Խաչակրութիւնը, որոնք իրք քէ Երաւազեմը պիտի առատէին անհաւատներից (Մուսուլմաններից), Շէյխների եւ Մոլլաների առաջնորդութեամբ սարքած Քրիստոնեանների Վայրազ կոտորածները, Հուգեմասների (Թողոքականների) ջարդը կարողիկ խուժանի կողմից, Հրէական Պողրումները Ծուսաստանում եւ այլն։ Զանգըւածային թէումանիան երեւյրներն են նաև Ծուս աղանդաւորների պարքերական քափառումները Քանազայի անտառներում եւ ճանապարհների վրայ, ամբողջովին մերկանդամ, սաղմոսներ երգելով. Ծուհնիական պատամունքները, մերկանդամ զետերի եւ լների մէջ մկրտութեան այլանդակ տեսարաններով, Ծուս Խլիսունների գլւերային պատամունքներն եւ այլն։

Թէ՛ՈՄԱՆՏԻԱ, Յն.— Երկնային ներշնչումներից ազգըւած գուշակութիւններ, ինչպէս Յունաստանի Դելֆեան տաճարում եւ հին ազգերի բոլոր հեքանոս մեհեաններում. հայ քուրմների եւ քրմուհինների գուշակութիւնները պատական Արմաւիրի Սօսանւէր անտառներում, քրիստոնէական ուխտավայրերի «ընկնաւորների» (լուսնունների) գուշակութիւններն եւ այն։

Թէ՛ՈՐԵՄԱ, Յն.— Մարեմարիքական գիտութեան մէջ նւմարտութիւն, որ ապացոյցի պէտք չունի (Ախսիոմայի հակառակ)։

Թէ՛ՈՐԵՑԻԿ, Յն.— 1) Տեսական հայեացքներն իրք հաստատած փասներ գործածող անձ. 2) Վերացական

Առմարտուրիւններն իրը դրական իրողուրիւններ ընդունող անձ : Տեսարան :

Թէ՛ՈՐԻԱՆ, Յն.— Տեսուրիւն . Վերացական սկզբունք :

Թէ՛ՈՅԱԳԻ, Յն.— «Աստուածակեր».— Քրիստոնեաներին տրած ծաղրական ածական հաղորդուրիւն առնելուն (Քրիստոսի մարմինն ու արիւնը նաշակելուն) համար :

ԹՈՒՐԱՆԻՉՅՄ (Տե՛ս Պանքուրամիզմ) :

ԹՈՐԻՆԵՐ, ԱՅ.— Անգլիական խորհրդանում պահպանողականներ, որոնք հնաւանդ սովորոյթների, կրօնական հոսանքների եւ պետական եին կազմի մոլառանդ հետեւորդներն են :

Ժ

ԺԱԿԵԲԻԱՆ, (Ժակրի), Ֆր.— 1358 թուի Ֆրանսիական գիւղացիուրեան անկազմակերպ ըմբռատուրիւն հարստահարող ազնւականուրեան դէմ: Վերջինները նըզմեցին ապստամբներին, անգութ խժդուրիւններ գործելով գիւղերի անպատճան բնակչուրեան դէմ:

ԺԱԿՈԲԻՆՆԵՐ, Ֆր.— Ֆրանսիայում ժաղաքական կուսակցուրիւն ժէ.-րդ դարում, որի համախմբումները տեղի էին ունենում Սէն Ժակի (Սուրբ Յակոբի) վանքում, եւ այդ պատճառով ժակոբիններ էին կոչում: Ռամկա-

վար խմորում ունէին : Այդ կուսակցուքեան անդամակցած են Մեծ Յեղափոխուրքեան ականաւոր դեմքերից Ռօբեսպիլը եւ Մարտուն 1794-ին լուծւեց :

ԺԱՆԴԱՐՄ. Ֆր.— 1) Թրամսիայում ժԱ.-ժԳ. դարձրջանի մէջ գրահակիր տապետ . 2) Ներկայիս բազաֆական ոստիկան :

ԺԱՆԾ. Ֆր.— 1) Ոն, նաշակ՝ իրական կեանքին համապատասխան . 2) Իրական կենցաղից նկարչուրիւն . 3) Տեսակ :

ԺԱՆՊՈՆ. Ֆր.— Աղաւազւած բարբառ, լեզու, օրինակ՝ Հրէաները երկու ժարգոններ են գործածում, աղաւազւած Գերմաներէն եւ աղաւազւած Սպանիերէն :

ԺԻՐՈՆԴԻՍՆԵՐ. Ֆր.— Թրամսիական Մեծ Յեղափոխուրքեան ժամանակ չափաւոր ազատականների կուսակցուրիւն, որը բայցայւեց եւ ոչնչացաւ ժակորինների հետ ունեցած ընդհարումների հետեւանելով :

ԺԻՒՐԻ (Զիւրի, Ճիւրի), Ֆր.— Երդւեալների դատարան, յանախ տգէտ եւ օրէնքից ոչինչ չհասկացող անձերի խումբ, որոնց խղնին է յանձնելում վճիռ արձակել մեղադրեալի նկատմամբ :

ԺՈԿէՅ, Ան.— Զիարքաւին մասնակցող հեծեալ :

ԺՈՆԳԼԵՈՐ, Ֆր.— Զեռնածու, խեղկատակ :

ԺՈՒԼԻԿ, Ռու.— Սատանայուրիւն դարձնող . չարանքնի . խարերայ . շառաւ-փախաւ :

ԺՈՒՐՆԱԼ, Ֆր.— Պարբերաքերր .— Օրաքերր, շարքաքերր կամ ամսաքերր, տեղեկագիր, տօմար :

ԺՈՒՐՆԱԼԻՍ, Ֆր.— Օրագրող . իրապարակագիր :

ի

ԻԲԻՍ, ԵԳ.— Հին Եգիպտացիների պատուծ մի խոռոք քոչում, արագիլի սերունդից, սպիտակ մարմնով և սեւ գլխով ու պոչով։ Օճեր եւ վնասակար այլ սողուններ ոչնչացնելով՝ սրբացած էր ժողովրդի մտքի մէջ։

ԻԲԻՍ, ԱՐ.— Արաբների հաւատալիքով՝ գերազոյն, չար ոգի. սատանայապես։

ԻԲՆ, ԱՐ.— Որդի, շառափի լինելը ցոյց տւող ածական, որ յատուկ անւան առաջն է գործածուում Արաբների մէջ, օրինակ՝ իբն Ռաշիդ — Ռաշիդի որդի կամ Ռաշիդի սերունդից։

ԻԴԻԱ, ՅԱ. — Գաղափար, միտք, յդացում։

ԻԴԻԱՆ, ՅԱ. — 1) Տարձրազոյն մտապատկեր, որ իր մէջ է ամփոփում երեւակայութեան նիւթ եղած մի առարկայ, իր վերջնական կատարելութեան մէջ. 2) Փափաթելի իր, երեւոյք, էութիւն, վիճակ, որին հասնելը անհատի կամ համայնքի վսեմազոյն ձգուումն է նկատուում։ Ըստ Լեվ Տալստոյի՝ «Իդիալը դադրում է այլ եւս իդիալ լինելուց, երբ իրականութիւն է դառնում։»

ԻԴԻԱՆԱԿԱՆ, ՅԱ. — Կատարեալ. անքերի. իրաւագեղ. վսեմազոյն. անհումօրէն բաղաւիկ։

ԻԴԻԱՆԻԶՄ, ՅԱ. — Գերազոյն, վսեմ ձգուում՝ դե-

սլի յաւիտենական, անվախնան կատարելուրիւն. 2) Մը-
տապատկերներն իրականութեան տեղ ընդունելու ձբգ-
տում. 3) Խնքնաներընչւած զաղափարապատուրիւն, կեն-
սուկան բռոր երեւոյքների վրայ լայն հայեացքով նայե-
լու, հաւատալով որ քերուրիւնները վերջիվերջոյ պիտի
սրբագրին, եւ յաղքանակը նշանաւուրեան ու առաքի-
նուրեան է վերապահւած. 4) Գրականուրեան եւ զեղար-
ւեստի մէջ ձգում դէպի վսեմք, կատարեալը:

Ի՞էԱԼԻՍՏ, Յն.— 1) Գաղափարապատ. երեւոյքնե-
րի վրայ լայն հայեացքով նայող. 2) Իրական կեանքի պա-
հանչները չնկատող եւ երազային զեղեցկուրիւններով յա-
փըստակող անձ:

Ի՞էՌՈԳՐԱՅԻԱՆ, Յն.— Գաղափարագրուրիւն, նշա-
նագրուրիւն.— զրուրեան յատուկ եղանակ, որը յա-
տուկ նշաններով տալիս է որու գաղափարներ, փոխանակ
տառեր եւ բառեր գործածելու:

Ի՞էՌՈՂՈԴ. Յն.— 1) Գաղափական կուսակցուրեան
մտաւորական ներկայացուցիչ. 2) Սահմանափակ աշխար-
հայեացքի տէր քննադատ:

Ի՞էՌՈՂՈԴԻԱ, Յն.— 1) Գաղափարների ծագումն ու
հասարակական արժեքն ուսումնասիրող տեսուրիւն. 2)
Գործնական արժեքից զուրկ մտածելակերպ. 3) Նեղմիտ
գաղափարականուրիւն:

Ի՞էԼԼԻՍ, Յն.— 1) Գեղջկական կամ հովւական պարզ
ու համելի կենցաղը նկարագրող բանաստեղծուրիւն. 2)
Գիւղական պարզուկ կեանք:

Ի՞էՌՈՂԱՏՐԻԱ, Յն.— Խնքնապատամունք. սեփական
անձի աստւածացում:

Ի՞էՌՈՄ, Յն.— Խնքնայատուկ ոն. մասնաբարբառ.
գաւառաբարբառ:

ԻԴԻՈՏ, Յն.— Ապոււ. բրամիտ:

ԻԴՈԼԱՏՐԻԱ, Յն.— Կռապաւուրիւն. կուռքերի աստվածացում:

ԻԶԻՍ, Եգ.— Հին Եգիպտական դիցարանուրեան մէջ մայր-աստվածուի, հայր-աստուծոյ — Օզիրիսի կին: Բնուրեան ստեղծագործող ոյժերի պաւոպանն էր եւ արգասաւորութիւնը հովանաւորող:

ԻԹԻՀԱՏ-ԹԵՐԱՔԻԾ, ԹԻ.— Միուրեան եւ Յառաշդիմուրեան կոմիտէ. Թիւրք կեղծ-ազատական կուսակցութիւն՝ նախաժեմալական Թիւրքիայում:

ԻԹԻԼԱՅ, ԹԻ.— Ազգային պահպանդական կուսակցութիւն՝ նախաժեմալական Թիւրքիայում:

ԻԼԻԱԿԱՆ, Յն.— Հոմերոսի հռչակաւոր Յունական դիցազմերգուրիւնը (Էպոպէա), որի մէջ նկարագրած են Տրոյադայի (Տրոյի) տասնամեայ պատերազմները:

ԻԼԻԱ-ՄՈՒԻՐՈՄԵՅ, ՌԱ.— Ռուս ազգային դիցագներգուրեան կենտրոնական հերոս:

ԻԼԻԻԶԻԱ, Լտ.— 1) Տեսական պատրանֆ. 2) անիրագործելի ցնորք:

ԻՄԲԱԿԱՑԻԱ, Լտ.— Եկեղեցական նզովքին ենթարկրած անձի քաղում, առանց կրօնական ծիսակատարութեան, յանախ ընդհանուր գերեզմանից հեռու:

ԻՄՊԵՐԻԱ, Լտ.— Կայսրուրիւն. պետական վարչածեւ, որի գլուխն է անսահման իրաւունքներով մի բռնապետ, կամ սահմանադրական կազմով երկրի մէջ՝ կայսր կամ քաջաւոր:

ԻՄՊԵՐԻԱԿԱՆ, Լտ.— Կայսերական:

ԻՄՊԵՐԻԱԿԱՅՄ, Լտ.— 1) Կայսերականուրիւն. կայսերապաւուրիւն. 2) Աւխարհակալական տրամադրութիւն կամ տիրապետող հոսանք՝ զէնքի ոյժով նորանոր

Նրկրներ նւանելու եւ նրանց բնակչութիւնները տնտեսապէս եւ քաղաքականապէս ստրկացնելու եւ կեղեցնելու։ 3) Կապիտալիստական իմպերիալիզմ — ճգնում դրամագրիսի միջոցով օտար ռուկաների վրայ իշխնելու։

ԻՄՊՈՏԵՆՑԻԱԼ, Լտ.— Տղամարդու սեռային անկարողութիւն։

ԻՄՊՈՒԼՍ, Լտ.— Դրդիչ պատճառ։ մղում։ ռարժառիք։

ԻՄՊՐԵՍՈՐԻԱ, Իտ.— Թատրոնական գործակալ։ տէր։ դեկավար։

ԻՄՊՐԵՍՈՆԻՑԻԱԼ, Ֆր.— Գեղարւեստի մէջ այն ուղղութիւն, որը ճգնում է տալու բնութեան ազդած անմիշական տպաւորութիւնները։

ԻՆԴԵՏԵՐՄԻՆԻՑԻԱԼ, Լտ.— Փիլիսոփայական տեսութիւն, որը փորձում է հևտելու մարդկային կամքի եւ անհատական ազատութեան սահմանները։

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՑԻԱԼ (Ինդիվիդուում).— Անրաժանելի մէկ էութիւն։ անհատ։

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԱԼ, Լտ.— Անհատական, անձնական, մասնաւոր։

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՑԻԱԼ, Լտ.— 1) Անհատապատութիւն, անհատի անսահման ազատութիւն, համայնքի կամ պետութեան հակողութիւնից անկախ։ 2) Անհատի հոգեւորմտաւոր արտայայտութիւնների մէջ ինքնայտուկ դրում, որը նման չէ ուրիշներին։

ԻՆԴՈՒԼԳԵՆՑԻԱԼ, Լտ.— Հռումի պապերի առեւտրական շահարեր աղբիւր եղող «Թողութեան (ներման) վկայական»։ Ամեն կարգի ոնքագործներ իրաւունք ունեին գնելու «Թողութեան վկայականներ», իրենց անցեալ.

ներկայ եւ ապագայ մեղքերի ներումն ապահովելով։ Անհըրածեաւ էր միայն քերեւ խոստովանանք, որպէսզի խոստովանեցնող «հայրը» որուէր քէ գործւած յանցանիքը ո՞ր դասակարգին էր պատկանում, դրա համեմատ տուրք գանձելու համար։ Մեծաքանակ մեղքեր գործողը բնական է աւելի պիտի վնարէր։ Օրէնքը չէր կարող հետապնդել այն անձին, որ Թողուրեան Վկայականն ունենար։ Իոդ չէ քէ ի՞նչ յանցանիք գործած լինէր։ Վկայականի տէրը միաժամանակ ապահովւած էր լինում իր մուտքը արքայուրեան մէջ, որի դուռը հրետակները պարտաւոր էին նրա առաջը բանալու։

ԻՆԴՈՒԿՑԻԱ, Լու.— 1) Փիլիսոփայական մտածելակերպ՝ եկմմաւած դիտողուրիւնների եւ փորձառուրիւնների վրայ. 2) Մասնաւոր նեմարտուրիւններից ընդհանուր նեմարտուրիւններ եզրակացնելու եղանակ։

ԻՆԴՈՒՍՏՐԻԱ, Լու.— Արդիւնաբերուրիւն, նարտարաբւեատ։

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԾՈՒՄ, Լու.— Երկրի արդիւնաբերուրիան եւ նարտարաբւեատի բարձրացում. նոր աղբիւրների եւ արտադրուրեան մեղքենայացման միջոցով։

ԻՆԵՐԾ, Լու.— Անգործութեայ. անշարժ. յարակայուն։

ԻՆԵՐԾԻԱ, Լու.— Մարմինների անշարժ, յարակայուն դրուրիւն, երբ արտաքին հարւածից նրանիք կարող են շարժել անվերջ, միեւնոյն գծով, մինչեւ որ մէկ ուրիշ արտաքին հարւած կասեցնէ նրանց շարժումը կամ ետ մզէ։

ԻՆԻՍԻԱՏԻՎ, Լու.— Նախաճեռնուրիւն։

ԻՆԿԱՆԵՐ.— Հարաւային Ամերիկայի կարմրամորքների մի ցեղ, գլխաւորապէս ներկայ Պերուի հանրապե-

տուրեան եւ սրբակայ երկրամասերում։ Ընդարձակ եւ համզիստ կեամբ ունեցող կայսրութիւն էր, մինչեւ որ ժաղաքակիրք կոչւած Սպանիացիները գրաւեցին Ինկաների երկիրը եւ վայրագ կոտորածներ սարքող հրեան եղաւ Թրամանչիս Պիզարո, իր երկու եղբայրների հետ, որոնց Պերուն գրաւեցին 1533-ին։

Ինկութնի ՏՈՐ, Լու. — Գաղտնի. ծածուկ. իր իրական անունը բազգենող անձ։

ԻՆԿՈՒԹԻ ՏՈՐ, Լու. — Հաւատաքննիչ։

ԻՆԿՈՒԹԻ ՏՈՐ, Լու. — Հաւատաքննութիւն. — Կարուիկուրեան ստեղծած կրօնական հաւատաքննութեան առեան, Դումինիկեան Միարանուրեան վաճեներում, «հերետիկուներին» (հերաւածողներին), վիուկներին եւ եկեղեցու քեմամիներին բննելու, դատելու եւ պատժելու համար։ Առեանի առաջն էին բերում տասնեակ հազարաւոր մարդիկ, կիմեր եւ նոյն իսկ փոքրահասակներ, որոնց դըժախտութիւնն ունեցած էին կրօնաւորների կասկածը գըրաւելու։ Յատկապէս հմարւած դժոխային մեքենաներով տանջում էին, իրք թէ յանցանեները խոստվանեցնելու մտքով եւ սպանում հրեային անգրուրեամբ։ Սպանիացի մեծ հաւատաքննիչը՝ Թումաս Տորկվեմադա (1420-1498) կարողացաւ այդ պատօնի մէջ տասնեակ հազարաւոր «անհաւատներին» ոչնչացմել, ահոելի տանջանքների մէջ։ Մարդկային ցեղի ամենից մեծ դահիններից մէկը դառնալով՝ Տորկվեմադան իրք «սուրբ» նանաշւած է, եւ իր անունով, նոյն իսկ Մ. Նահանգներում դպրոցներ եւ ժամկեներ հաստատւած են։ Գրիգոր Թ-րդ Պապը 1233-ին յատուկ կոնդակով օրինականացրեց Հաւատաքննութիւնը, իննոկենտիոս Դ-րդ Պապը արտօնեց տանջանքների գոր-

ծաղրութիւնը 1252-ին, իսկ Ուրբանոս Դ-րդ Պապը հաստատեց մէկ ուրիշ կոմիտակով։ Հաւատաբննական տանգամիքները տեղի էին ունենում նաեւ Ֆրանչիսկեան միաբանութեան վանքերում։ Յիսուսեան (Ճիզվիր) վարդապետներ եւս ամեն կերպ աջակից էին այդ ոնիքներին։ Ամբողջ Եւրոպան արեան մէջ խեղդւեցաւ այդ սարսափների հետեւանքով, մինչեւ որ պետութիւնները ստիպւած եղան նրանց առջեւն առնել։

ԻՆՍԻՆՈՒԱՑԻԱԼ, Լտ.— Զրպարտութիւն. ամբաստանութիւն. վարկարեկում։

ԻՆՍՏԻԿՏ, Լտ.— Բնագդ. անգիտակից մղում։

ԻՆՍՏԻՏՈՒՏ, Լտ.— Կրթական կամ գիտական հաստատութիւն. դպրոց. նեմարան. կանաո. աշխատանոց։

ԻՆՎԱԼԻԴԻ, Լտ.— 1) Վերքի, ծերութեան կամ այլ պատճառով անկարող, անզօր անձ. գործելու անընդունակ. 2) Անվաւերական. օրէնքի առջեւ անզօր։

ԻՆՎԵՆՏԱՐ, Լտ.— Շարժական գոյքերի եւ ամեն կարգի ապրանքների ցուցակ։

ԻՆՏԵԼԻԳԵՆՑ, Լտ.— Կրթած, զարգացած անձ. մըտաւորական։

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱԼ, Լտ.— Կրթած դասակարգ. մտաւորականութիւն։

ԻՆՏԵԼԻԵԿՏ, Լտ.— 1) Մտածողութեան կարողութիւն. քանականութիւն. 2) Խորհող, զիտակից անհատ։

ԻՆՏԵԼԻԵԿՏՈՒԱԼԻԶՄ, Լտ.— Փիլիսոփայական աւխարհայեացք, որն երեւոյթների բննութեան մէջ գերակըսութիւն է տալիս մտքին, քանականութեան։

ԻՆՏԵՆԴԱՆՏ, Լտ.— Բանակի պարենաւորման պատումէութիւն։

ԻՆՏԵՆՍԻՎ, Լտ.— 1) Բուռն. ուժգին. 2) Արդիւնա-

ւէտ. 3) Հասարակական-տնտեսական իմաստով՝ արդիւնաբերութեան կատարելազործւած սիստեմ. տնտեսական փայլուն դրութիւն:

Ի՞նչերն Ա. Լու. — 1) Պարփակւած. ամփոփւած. 2) Գիշերօրիկ դպրոց. 3) Բժշկական ուսանողների աշխատանքները հիւանդանոցների մէջ:

Ի՞նչերն Ա. Սիսին Ա. Լու. — 1) Միջազգային. միջազգայնական. — Միջազգային աշխատաւորական միութիւն, ինչն առ 1864 թ-ին: Բազմարիւ երկրների բանտորական կազմակերպութիւններն անդամակցեցին Միջազգայնականին, աշխատաւորական գանգւածների մէջ դասակարգային գիտակցութիւն եւ շահերի ու ձգտումների ներդաշնակութիւն ստեղծելով: Ինտերնասիոնալը իր առաջին եւ երկրորդ ըրչաններն ունեցաւ, յանախակի քենումներավ դէսի աջ: Ներկայ երրորդ Միջազգայնականը գտւած կոմիտենատական կազմակերպութիւնն է, իր կենտրոնն ունենալով Խ. Միութեան մայրաքաղաքը Մոսկվան (Տե՛ս Կոմունիզմ): — «Ինտերնասիոնալ» — Միջազգային Ռազմական կոմիտեից: — Եօժեն Պոպիկի կողմից 1871-ին հեղինակւած «Միջազգային երգ», որ 1899-ին Փարիզի Միջազգային աշխատաւորական համագումարում Բանտորական Միջազգային-կոմունիստական կուսակցութեան հիմն (ներքոնդական երգ, ուղղման ընդունուեց):

Ի՞նչերվ. Ենթիվ, Լու. — Մի պետութեան գործերի մէջ միջամտութիւն՝ ուրիշ պետութեան կամ պետութիւնների կողմից:

Ի՞նչերվ. Հիմ, Լու. — Տեսակցութիւն որեւէ կարեւորանմանի հետ հանրային հետաքրքրութիւն ունեցող խնդիրների շուրջ:

Ի՞նչերվ. Ֆր. — 1) Մտերիմ. սրտակից. 2) Գաղտնի:

ԻՆՏՐԻԳ, Ֆր.— Խարդաւանք. նեմգաւոր գործ. խառնակչութիւն. դաւադրութիւն:

ԻՆՏՐԻԳԱՆ, Ֆր.— իմտրիգմերով զրադւող:

ԻՆՑԻՍԱՏՈՒՄ, Լտ.— Հռոմի խելացնոր կայսր Կայիգուլայի (ծննած 12 Ք. Յ., կայսր 37-41 թ.) ձին, որի համար մարմարաւեհն հոյակապ ախոռ կառուցել տւեց, անօրինակ օֆեղ մսուրներով, արքայական կահկարասիւով, եւ որի անումով հրաւերներ էին դրկւում Հռոմի ծերակուտականներին եւ բարձր դասին, ներկայ լինելու ախոռում սարբւած խնջոյքներին: Կալիգուլան հպարտութեամբ ասում էր թէ իր ձին-ինցիտատուս՝ աւելի խելացի էր քան որեւէ ծերակուտական, եւ մտադիր էր Հռոմէական պիտութեան գերազոյն մարմինը — ծերակոյտը պատւել իր չորքուտանի սիրելին ծերակուտական հըռշակելով, բայց որուումը չիրագործած՝ սպանեց դաւադրութեամբ:

ԻՆՖՈՐՄԱՏՈՐ, Ֆր.— 1) Լրատու. 2) Լրտես. մատնիչ:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱ, Ֆր.— 1) Տեղեկագրութիւն. ցուցմունք. 2) Մատնութիւն. 3) Վկայութիւններով հաստատւած հաղորդագրութիւն:

ԻՆՖՈՒԶՈՐԻԱՆԵՐ, Լտ, ՅԱ.— Զքային մանրէներ:

ԻՍԼԱՄ (Խսլամութիւն), Ար.— Մահմեդականութիւն (Տե՛ս Մահմեդականութիւն):

ԻՐԱՆԱԿԱՆ ՑԵՂԵՐ (նաեւ լեզուներ).— Հնդկա-Եւրոպական ցեղերի եւ լեզուների արեւելեան նիւղաւորութիւններ, ինչպէս Հայ, Պարսիկ եւ այլն:

ԻՐՈՒԴԵՆՏԻՍՏՈՒՏՆԵՐ, Լտ.— Խտալական ազգայնամոլներ, որոնք հետապնդում են մայր երկրին միացնելու իտալացիներով բնակեցւած օտար երկրամասեր:

ԵՒՊԻՑԵՐ. Լու. — Հռոմեական դիցարանութեան մէջ հայր-տառւած (Տե՛ս Զեւս) :

ԵՒՐՍԱ, Մն. — Սիրիքի բնիկների խրնիք-վրան, զա- գանեների մարքից շինւած :

ԻՓԻԳԵՆԻԱԼ, Յն. — Տրովադական պատերազմի ժա- մանակ Յունական բանակի երամանատար Ազամեմնոնի աղջիկ : Հայրը ուզեց ներան զոհել Դիանա աստւածու- հուն, ներա պաշտպանութիւնն ապահովելու համար՝ նամբորդութեան ընթացքում, սակայն դիցուեին փախ- ցըրեց ներան Տավրիդ (Տավրիկեան Թերակղզի, ներկայ Առուսական Ղրիմ) : ԻՓԻԳԵՆԻԱՆ Դիանայի տանարի քրմու- հի եղաւ :

Լ

ԱԱԲԻԿԻՐԻՆԹՈՍ, Յն. — 1) Վիրխարի պալատ Կրետէ կղզու վրայ, հազարաւոր սենեակներով, ոլորապտոյտ ներքնուղիներով, որոնց մէջ ընկնողը չէր կարող այլեւս դուրս ելնել : Բնակավայր էր համարւում առասպելական Մինոտավրոս մարդակեր նիւադի . 2) Համանման եւ հա- մանում մի պալատ Եգիպտոսում . 3) Փոխարերական ի- մաստով՝ Խոտնաւեփոր, մանւածապատ դրութիւն, որի մէջ ընկնողը չի կարող մի ելք գտնել :

ԱԱԲՈՐԱՏՈՐԻԱ, Լու. — Քիմիական աշխատանոց, Քիմիական փորձեր կատարելու, դեղեր պատրաստելու կամ գիտական նպատակների համար :

ԱԱԴԱԱ, Աք. — Մահմեդական դժոխում, Զհաննամի մէջ՝ Քրիստոնեաներին յատկացւած յարկարաժին:

ԱԱԶՈՒԻՐ (Ազուր), Գր. Յըր. — 1) Կապոյտ երկիբի. 2) Կապոյտ ներկ. 3) Կապոյտ գոյն:

ԱԱԿԵՑ, Յըր. — 1) Ճաշարանի կամ սրճարանի սպասաւոր. 2) Փոխարերական իմաստով՝ մեծերի եւ հարուստների առջեւ ֆճնող, ռողոքորք՝ փոքրիկ նւէրի ակընկալութեամբ :

ԱԱԿՈՆԻԶՄ, Յը. — Լակոնականութիւն. — Պատմական Սպարտայի մէջ ընդունած խօսակցութեան սեղմ ճեւ, մէկ կամ երկու բառով միտքը բացատրելու:

ԱԱՄԱԱ, Զն. — 1) Թիրէրի մէջ՝ քուրմ. (Դալայ-Լամա՝ քրմապետ). 2) Հարաւային Ամերիկայում եղչերուի մէկ տեսակ :

ԱԱՄԲԴԱՑԻԶՄ, Յը. — Թլւատութիւն, Ռ-ի կամ Ռ-ի փոխարէն և հնչելու քնոյք :

ԱԱՄԻԱԱ, Յը. — 1) Յոյն դիցարանութեան մէջ գայրակղութեան աստιածուիի, երաշագեղ կնոջ գլխով, փարբամ կրծքով եւ օսի մարմնով: Հրապուրում էր անփորձ երիտասարդներին, փարբաւում նրանց եւ արիւնը քամելով մահացնում: 2) Փոխարերական իմաստով՝ կիսաշխարհիկ, արիւնը քամող կին:

ԱԱՆԴԳԵՐԻԽԾ, Գր. — Քրէական միջին դատարան Գերմանիայում:

ԱԱՆԴԳՐԱՅ, Գր. — 1) Հողատէր կոմս. իշխան. 2) Միջնադարեան գերմանական նահանգապետ, կոմսի տիտղոսով :

ԱԱՆԴԼՈՐԴԻՁՄ, ԱՅ. — Խոռոր հողամասերի սիստեմ սակաւաքիւ մեծահարուստ հողատէրերի ձեռնում: Մեծ հողատէրերի կողմից իրենց հողերը մօակող զիւդացիների անպատճանառու շահագործում:

ԱԱՆԴՎԵՐ, ԳՐ. — Պահեստի գօրք Գերմանիայում եւ Աւստրիայում:

ԱԱՆԴՇՈՒԽՄ, ԳՐ. — Զէնք գործածելուն ընդունակ բոլոր արու բնակչութեան սպառազինում՝ պետութիւնը վտանգի մէջ եղած ժամանակ:

ԱԱՆԴՏԱԿ, ԳՐ. — Ներկայացուցչական խառն ժողով Գերմանական պետութիւնների մէջ:

ԱԱԾԿՈՌՆ, ՑՅ. — Տրովադայի մէջ Ապոլլոնի տաճարի քրմապետ, որն իր երկու տղաների հետ երկու վիրխարի օձերից բռնւելով՝ խեղդւեցին: Այդ տեսարանը ներկայացնող մարմարէ անտիկ արձանը, Վատիկանի քանդարանի մէջ՝ արձանազործութեան արւեստի անզուգական գործերից մէկն է համարում: Ենթադրում է որ Ռոդոսի երես արձանազործների՝ Ազեսանդրի, Պոլիդորի եւ Արենդորի կողմից ձեռակերտած է, Օգոստոս Կայսեր օրով, Քրիստոսից 20–25 տարի առաջ:

ԱԱՍՍԱԼԻՁՄ, ՑՅ. Ա. — Ֆերդինանդ Լասալին հետեւող գերման ընկերվարականների մինչ ամկենդան հոսեմ. որը հաւատում էր թէ ընկերվարական իրաւակարգի իրագործումը հնարաւոր է նոյն խոկ մեր օրերում, բարենորոգչական ուղիով, համագործակցութեամբ պետական նորակառոյց օրէնսդրական մի սիստեմի:

ԱԱՑԻՆՆԵՐ. — Ներկայ Խոտանացիների նախահայրեր, — Հոռմէացիներ: Լատինական ցեղերին են պատկանում նաև Ֆրանսիացիներ, Սպանիացիներ, Փոքրուգալացիներ եւ ըստ ումանց՝ Ռումանացիներ:

ԱԱՏՈՒԱ, ՅՅ. — Նմնդարերութեան եւ նորածինների պատապան դիցուեի, Յոյն դիցարանութեան մէջ. Ապոլոնի մայր :

ԱԱՐԵԲ, Լտ. — Հռոմէական տնային պահապան աստւածներ, որոնք մեռածների ուրականներ էին խորերդանըօռում :

ԱԱՑԱՐՈՒԻ (Ապարոնի). — «Աղբատ Ղազարոս» — Նապոլի ժաղաքի ամենից ընկեցիկ քուառ դասակարգ, անտում, ամտէր, մուրացկանութեամբ եւ երէ հազւագիւտ երջանկութիւնն ունենան՝ աժան գործաւորութեամբ ապրող :

ԱԱԽԱ, Խտ. — Հրարխային արտավիժած հալածոյ զանգւած, որը պաղելով բազալտի եւ հրարխային այլ ժարերի է վերածուում, ընտիր սինանիւթ դառնալով :

ԱԵԳԱԼ, Լտ. — Օրինական :

ԱԵԳԱԼԻԶԱՑԻԱ, Լտ. — Օրինականացում :

ԱԵԳԵՆԴԱ, Լտ. — Առասպել, հեթեաք :

ԱԵԳԵՈՆ, Լտ. — Հին Հռոմէական գօրաբաժին՝ 6000 ետևեակ կամ 3000 հեծեալ զինւորներից :

ԱԵԳԵՈՆԵՐ, Լտ. — Լեզեռնի զինւոր :

ԱԵԳԻՑԻՄԻԶՄ, Լտ. — Պետական բռնապետական տիրապետութիւնն ամրապնդելու համար բարոզւած ուսմունք, քէ բազաւորների եւ ամեն կարգի միայետների լուսամութիւնը նախախնամութեան կարգադրութեամբ է եղած :

ԱԵԴԱ, ՅՅ. — Յոյն դիցարանութեան մէջ Սպարտացց քագաւոր Տիմդարէսի հրաշագեղ կին, որի հետ բաղաձիքի մէջ սիրային տեսակցութիւն ունեցաւ ինքը — Ձեւս (Արամազդ), կարապի երեւոյքով նէրան յայտնւելով :

Լեղան մի ձու ածեց, որից ծնւեց հաչակաւոր գեղեցկուհի Հեղինեն, յետազային Տրովադական աղետալի պատերազմի կուտախնճռոք :

ԼԵԶԳԻՆԿԱ. — Կովկասնան լեռնական Լեզգիների ընորհալի պար, ժողովրդականացած Կովկասի բոլոր ցեղիրի մէջ :

ԼԵԿՑՈՐ. Լտ. — Բարձրագոյն դպրոցի դասախոս. պրոֆեսոր :

ԼԵԿՑԻԱ. Լտ. — Բարձրագոյն դպրոցում դասախոսուորիւմ :

ԼԵՆԵԽՆԻՉԱՄ. Յտ. Ա. — Խ. Միուրեան պետական կազմի մեծագոյն կարգախոս Լենինի հետեւողուրիւն. Լենինի ուղղեցիծ : (Տե՛ս Կոմունիզմ) :

ԼԵՊՐԱ. Լտ. — Բորբոռուրիւն: Վտանգաւոր վարակիչ հիւանդուրիւն :

ԼԵՍԲԵԱՆ ՍԵՐ, ՏԵ՛Ս Սաֆիզմ :

ԼԵՎԻԱԹԱՆ. Հր. — 1) Աստւածամիջի Յովիրի գրքի մէջ յիւսած վիրխարի ձուկ. 2) Հրեական հաւատալիւով՝ հսկայ եւ շատ համեղ ձուկ, որը պիտի նաևակեն բոլոր արդար Հրեաներն արքայուրեան մէջ իրենց համար սարքւած խնջոյքի ժամանակ. 3) Ովկիանական մեծ նաւի ածական :

ԼԵՏԱ. Յն. — Յոյն դիցարանուրեան մէջ անդրեիրիմեան մոռացուրեան գետ, որի վրայից անցնելով՝ արդար մեռեալմերի ուրւականները՝ նրա ալիւներին էին յանձնում իրենց երկրաւոր տառապանիների բոլոր յիւսաւակները, եւ թերեւցած՝ էլիզիում (Դրախտ) էին մըտնում :

ԼԵՏԱՐԳԻԱ. Յն. — Տեւական, հիւանդուր ժուն, որը շարաբներ եւ նոյն խոկ տարիներ կարող է տեւել: Են-

քական մեռածի երեւոյք ուժենալով՝ յանախ մոլորեցնում է բրջապատողներին, որոնք անդիտակցաբար քաղում են Արան։ Լետարգիան առաջանում է յատուկ միկրոբից։

ԼիթԴԻ, Ան. — Տիկին. ազնիւ տիկին. օրիորդ։

Լի՛ՊԱՐԴ, Լտ. — Վագրի մէկ տեսակ։

ԼիթԵՐԱԼ, Լտ. — Ազատամիտ. ազատական գաղափարներ ունեցող. ազատական կուսակցութեան անդամ։

ԼիթԵՐԱԼԻԶՄ, Լտ. — 1) Անհատի եւ համայնքի ազատ լինելու հանգամանքն ընդունող աշխարհայեաց։ 2) Հին մտածելակերպներից, նախապահարումներից, պետական-ընկերային կենցաղի ննուումներից հեռու մնալու տեսական, կեղծ եւ սնամէջ ձգտում։

ԼիԳԱ, Լտ. — 1) Ընկերակցութիւն. միութիւն. 2) Կրօնական, զիտական կամ ֆաղաքական կազմակերպութիւնների հաւաքոյք. 3) Այլ եւ այլ միաւորների դաշինք՝ հաւաքաբար իրար հետ գործելու. 4) Պետութիւնների դաշնակցութիւն՝ խաղաղ իրաւախոհութեամբ միջազգային քիւրիմացութիւններն ու հակամարտութիւնները կարգադրելու, օրինակ՝ Ժընևի Ազգերի Լիգա։

ԼիԳԱՏՈՒԹՅՈՒՆ, Լտ. — Ուկու կամ քանկարժէք ուրիշ մետաղների խառնուրդ աժան մետաղների հետ։

ԼիԴԵՐ, Ան. — 1) Ղեկավար, առաջնորդ՝ որեւէ լուրմբի կամ հաւաքոյքի մէջ. 2) Քաղաքական կուսակցութեան առաջնորդ. գործիչ։

ԼիԿԱՆՏՐՈՊԻԱ, ՅԱ. — Հոգեկան հիւանդութիւն, երբ ենթական ինքն իրեն որու անասունի տեղ է դնում, նրա ձեւերն ու շարժումներ է որդեգրում եւ համապատախան ծայներ է հանում։ Մեր Տրդատ քագաւորք, ինչպէս ցոյց է տալիս աւանդութիւնը՝ ենթակայ եղած է խոզային Լիկանտրոպիային։

ՀԻԿԱՆՏՐՈՓՆԵՐ, Յն.— Միջին դարերում, կրօնական աղամազաւորներ, որոնք հաւատում էին մարդկանց եւ անասունների փոխադարձ հոգեփոխութեան: Նոյն մըտայնուրեան տէր անձներ զոյուրիւն ունեն ներկայիս եւս:

ԼԻԿՈՒԴԱՑԻԱ. Լտ.— 1) Որեւէ գործի, ձեռնարկի, իիմնարկուրեան վերջնական հաւելյարդար. 2) Լուծում-կազմակուծում:

ԼԻՆԳՎԱՍՏԻԱՏ. Լտ.— 1) Բազմարիւ լեզուների մասնագէտ. 2) Համեմատական լեզվագիտուրեամբ զբաղւող գիտում:

ԼԻՆԳՎԱՍՏԻԿԱ. Լտ.— Համեմատական (Բազդատական) լեզվագիտուրիւն:

ԼԻՆՈՏԻՊ (Լայնորայփ), Լտ.— Տողաւար մեթենայ, ամրողցական տողը միաձյլ մէկ կտորով շարող:

ԼԻՆՉԻ ՕՐԵՆՔ.— Ամրոխային դատավարութիւնների, ծեծի, տանչամքի եւ մահապատիժների սովորոյքը նախնական կենցաղի մնացորդներից մէկն է, որ մեծ կամ փոքր չափով զոյուրիւնն ունեցած է զրեքէ բոլոր ազգերի մէջ: Օրէնքի ձեռքը չհասած վայրերում խուժանն է որ օրէնքի գլուխն է անցնում: Ռուս մուժիկները ցարական օրջանում իրենց համայնքին վճասակար անձներին, մանաւանդ ձիազողերին՝ բռնում էին եւ ահոելի ծեծի տակ սպանում: Ամուսնական դաւանանուրեան մէջ բռնւած կնոջը պատժելու համար՝ Քիւրդերը, Կովկասի լեռնականներն ու ասիական բազմերանգ ցեղերից շատերը՝ կատղած ձիու պոչից կապելով՝ բաց էին քողնում՝ կտորկտոր անելու: Հին Հրէաները ենովայի հրամանով քարերով սպանում էին անհաւատարիմ կնոջը: Հայերը իրք աւելի մեղմ ժողովուրդ՝ բաւականանում էին «խայտակելով» յանցաւորին. ոչ այնքան հեռաւոր անցեալում

Դարսի գիւղերից մէկում Գաւանակցական Կոմիտէն Հայ ազգի բարոյականութիւնը պատվանելու համար՝ մի որբեւայրի կնոջն իւու վրայ նստեցրեց, դէմքը մուրով ներկեց եւ զուռնայով ու դոլով գիւղի մէջ պատցրեց, որովհետեւ ողորմելին յանդգնել էր սիրային տեսակցութիւն ունենալ գիւղի երիտասարդներից մէկի հետ։ Ալեխանդրապոլի (Լենինականի) գիւղերից մէկում, դարձեալ կոմիտէն՝ մի խեղն սատանային, նոյն գիւղացի՝ իւու վրայ նստեցրեց, դէմքը ետեւ, չորքոտանու պոչը ձեռքին, եւ զուռնայով գիւղի ծուռումուռ փողոցները չափչիւոց յետոյ՝ ժիրն ու ականջները կտրեց, որովհետեւ համարձակւել էր սիրային կապեր մշակել մի զաղքական հարանուկի հետ։ — Եւրոպական ժողովուրդների մէջ այլեւայլ յանցանեների համար խուժանային պատիժները գոյութիւն ունենալ մինչեւ 19-րդ դարի սկիզբները, Գերմանիայում յայտնի էին *Vehngerichte* անունով, Անգլիայում *Lyndorf Law*, Սկովտիայում *Jeddar Justice*, Սպանիայում *Hermanadad*։ — Լինչի Օրէնքի ծագման պատմութիւնը մուրք է սակայն։ Ըստ ումանց՝ այդ անունը ժառանգութիւնն է Զեյմս Լինչ Ֆից Ստեփեն անունով Սկովտացի մէկից, որը բանտապես էր Գալվէյ քաղաքում։ Լինչը իր հարազատ տղային՝ նրա գործած մի սպանութեան համար անձամբ դատեց եւ գլխատեց, 1526-ին, վախենալով որ խուժանը պիտի ազատէր նրան եւ բանտից դուրս հանելով՝ հաւելյարդարի պիտի հնքարկէր։ Ենքաղրութիւն կայ նոյնակա, թէ Ամերիկայի Վիրչինիա նահանգից մի ազարակատէր, Զարլըզ Լինչ անունով, մի յանցաւորին բռնելով՝ անձամբ ծախից կախեց եւ ահոելի ծեծի տակ խռուտանգեց, եւ թէ Լինչի Օրէնք անունը նրանից մնացած է։ Յամենայն դէպս՝ Լինչի Օրէնքը ամերիկեան կենցաղի

ամենից բացասական երեւոյթներից մէկն եղաւ, խուժա-
նային վայրագ կամայականուրեան անսանձ բռիչք տա-
լով, բորբոքելով միջացեղային ատելուրեան կիրքերը, ո-
րոնց յանախ զոհ զնացած են պարզ կասկածի պատճա-
ռով բոլորովին անմեղ անձեր։ Եթէ նկատի առնեի այն
ամժխտելի փաստը, որ Լինչով մեռածների հազիւ $1\frac{1}{2}$ -
 2% -ը սպիտակամորքներն եղած են եւ մնացածը սեւա-
մորքներ՝ որու է դառնում որ Ամերիկան Լինչի օրէնքն
ուղղած է մասնաւորապէս սեւամորքների — Նեզրերի
դէմ։ Լինչի Օրէնքը սարսափի զէնի է, ուղղած մի ըստ-
րուկ ժողովրդի կրծքին, նրան մշտական վախի մէջ պա-
հելու, ուրիշ խօսքով նա ժաղաքական միջոց է որու բը-
նապեսուրիւնը կայուն պահելու այդ բնապետուրեան
ենթակայ մի տկար զանգւածի վրայ։ Լինչահարուրեան
իր պատրւակ գործ է ածուում այն ամբաստանուրիւնը,
քէ սպիտակամորք կիններ բնապարւել են սեւերի կող-
մից, եւ բարոյականուրեան պատպան «սպիտակամորք-
խուժանը գործի է անցնում, ամերիկեան առաքինուրիւնը,
քարձը պահելու համար։ Աչ ոքի մտքովն անզամ չի
անցնում այն իրողուրիւնը, որ սեւամորքների կողմից
բնապարաւած ամեն մէկ սպիտակամորք կնոշ հանդէպ
հազարաւոր սեւամորք աղջիկներ են լլկւել սպիտակա-
մորքների կողմից, առնեց երբէք յանցանիք համարւե-
լու։ Լինչի սովորական ձեւն է կախաղան կամ խարոյկ։
Խուժանը «յանցաւոր»-ին բնելով արագ փախցնում է
բնակուրիւնից հեռու մի վայր, եւ կարն հարց ու փորձից
յետոյ՝ վթիռն արակում եւ անմիջապէս գործադրում։
Բնապարուրեան եւ սպանուրեան համար պատիմներից
զատ, որոնք գործադրում են զրեք բացառապէս Նեգ-

թերի վրայ՝ սպիտակամորք յանցագործների վրայ զործ են դրւում ծեծի, խուտանգումի, նաւր եւ բացախ խմեցընելու եւ կուպրով օծելու պատիժները : «Բարոյականութեան» դէմ զործւած յանցանիքի համար սպիտակամորքի պատժի ձեւն է՝ ենթական մերկացնել, կուպրով օծել, փետուրմեր խրել մարմնի մէջ եւ ազատ արձակել այդ վիճակի մէջ : Հազիադէպ չեն եղած անցեալի մէջ զինւած յարձակումները սեւաբնակ օրջանների վրայ եւ զանգւածային կոտորածներն ու երկիգումները :— Լինչի Օրէնքը թէեւ շատ դէպֆերում խուժանային յանկարծակի բուրնկընդ մոլեգնուրեան արդիւթքն է հանդիսանում, սակայն զրեք 90%-ը դեկավարւել է եւ շարունակում է դեկավարւել Կու-կլոււս-կլանի կողմից (Տե՛ս Կու-կլոււս-կլան), 1865ից սկսած, իսկ այդ բւականից առաջ, սկսելով 1768-ից՝ կլանի պատունը կատարած են նախապէս զայուրիւն ունեցող տարրեր կազմակերպութիւններ : Տասնեակ հազարաւոր սեւեր ոչնչացւած են առանց օրինական հարցաքննուրեան եւ դատավարուրեան : Մանրամասն վիճակագրութիւնը այդ սպանութիւնների անհնարին է գտնել, սակայն 1865-ից մինչեւ 1890 մօտաւոր կերպով հաւեւած են 16,000 նեղբերի սպանութիւններ, իսկ «Զիկագո Տրիբուն» քերքի հաւելով՝ 1885-ից մինչեւ 1912 թ. 35339 նեղբեր էինչ եղած են : Վերջին տարիների ընթացքում զգալապէս նւազած են լինչի դէպֆերը, հանրային կարծիքի ննւման տակ եւ կառավարութեան հիտապնդումների հետեւանքով : Արժէ յիւել տակաւին մի ժամի տարաք առաջ, Օգոստոսին, 1930 պատահած մի ուսազրա դէպֆ .— Նիւ նորքի ամերիկացի կոմունիստների մի ժամանիքներ ժաղաքից ոչ այնքան հեռու, կլմիրա աւանի մօտ անտառի մէջ վրաններ զարկած էին

մէկ-երկու շաբար բացօղեայ հանգիստ վայելելու, երբ յանկարծակի հարփւրաւոր դիմակաւոր կլանսմեններից (կ. կ. կ.-ի անդամներից) պատարւեցին։ Վերջինների հրամանաւարը պահանջեց որպէսզի կիններն ու մանուկները մէկ ժամւայ ընթացքում վրաններից հեռանան, որուապէս ցոյց տալով որ մտադրութիւն կար մնացող այր կումունիստների հետ հաշիմները կարգադրելու։ Սպասող աղետի առջեւմ առնեց ոստիկանութեան յայտնումով, որ պահանջեց պատրող կ. կ. կ.-ից հեռանալ այդ տեղից։ Փարզ է կ. կ. կ.-ի այդ գօրախումբը յայտնել էր այդունք իրը «հայրենասիրական» մարմին՝ Ամերիկան պատպամելու մի ահաւոր վտանգից……

ԼիրԱ. Յն. Լու. — 1) Զորս կամ եօրը լարեր ունեցող եին Յունական հնար. 2) Խոտալական դրամի անուն, Ֆրանկի միաւորք. 3) Համաստեղութեան անուն։

ԼիրիԶՄ, Յն. — 1) Հոգեկան զգայնական վիճակ՝ անձնական յուզումներին ենթակայ տրամադրութիւններով. 2) Գրականութեան մէջ՝ համապատասխան ուղղութիւն — Քնարերգութիւն։

ԼիրիԿ, Յն. — Քնարերգակ բանաստեղծ, անձնական յուզումների եւ ներքնչումների պատկերացումները նկարգրող, որոնք կարող են անկախ լինել արտաքին ազդեցութիւններից։

Լիիթիֆեր, Լու. — Սատանայապետ, Սադայել, գըծովիքի քաջաւոր։

ԼՈԳԻԿԱ, Յն. — Տրամարանութիւն. առողջ մտածելակերպ։

ԼՈԶՈՒՆԳ. Գր. — Նշանարառ. նշանարան. պայմանական բառ, շարունակ ուրիշ բառով փոխարինող. բանակի մէջ զործածւող, պահակների համար։

ԼՈԿԱԾԻՑ, ԱՅ. — Արդիւնաքերական երկրներում գործատէրերի որդեգրած դրութիւն — գործաւորներին արձակուրդ տալու, նրանց տկարացնելու եւ սպասող գործադուլների առջեւն առնելու, ինչպէս նաև աշխատավարձի յաւելման պահանջներն անհնարին դարձնելու նպատակով։

ԼՈՏՈՍ (Լոտուս), ԼՄ. — Եզիպտոսի մէջ բուրումնաւէտ բոյս, որի արմատներն իբր ուտելիք են գործածում, իսկ ծաղիկներից պատրաստում է անուշահու իւղ։ Հին Եզիպտացիների համար նիփրական բոյս էր, ճօնւած իզիսին, իբր խորիրդանիւը պտղաբերութեան։

ԼՈՐԴ, ԱՅ. — 1) «Տէր» (Աստւած). 2) Բարձրաստինան ազմւական՝ տոհմական իրաւունքներով. 3) Բարձր պատօննեայի տիտղոս, ինչպէս՝ Լորդ Մէյքլ՝ բաղաբարեալ։

ԼՈՒՄԱ, ԱՅ. — Ամենափոքր դրամական չափը Հրէաստանում եւ Ասորիեում, հազիւ մէկ տասներորդ սէնքին հաւասար։

ԼՈՒՄՊԵՆ-ՓՐՈՒՆՏԱՐ, ԳՐ. ԼՄ. — Գործելուն անընդունակ սեփականազուրկ, որն ոչինչ չունի իր գոյութիւնը քարե տալու համար։ Լումպեն-պրոլետար են կոչում բոլոր նրանք, որոնք այլեւայլ պատնասներով դուրս են նետւած աշխատանքի ռուկայից, չեն կարող եւ յանախ չեն ուզում գործել, ապրում են աշխատող պրոլետարների ըրջանում եւ նրանց մակաբոյժ եղած են։

ԼՈՒՎՈՐ, ՖԲ. — Փարիզի նախկին արքայական պալատ, ներկայիս աշխարհի ամենից հարուստ քանգարանը, հազրագիւտ հաւաքածուներով։

ԼՈՅԾԸՐ, ԱՅ. — Թափառաքրչիկ. ծոյլ. անպէտ։

Խ

ԽԱԶԵԻՆ, ՌԱ. — Նախայեղափոխական Ռուսաստանում գործառէր (Խազեանի) :

ԽԱԽՈԼ, ՌԱ. — Ռուբայնայի գեղջուկներին տրած ածական :

ԽԱՄՈՒՏ, ՌԱ. — Զիերի վզնոց — անուր :

ԽԱՆ, ՄՅ. — 1) Մյծ իշխան. միապետ. քաջազր. 2) Թաքարական ցեղերի մէջ եւ Պարսկաստանում՝ ազնքական ծագում ունեցող անձ :

ԽԱՇԻՆ (Հաշիս), ԹՐ. — Բուսական նիւթերից, գըլխաւրապէս նոյնայնուն տունկից պատրաստած քմբեցուցիչ, որը գործ է ածւում ծխախոտի հետ, դեղահաներավ կամ հեղուկային վիճակի մէջ՝ սրսկումով՝ մորթու տակ: Վնասակար քոյն լինելով՝ արգիլած է ամեն տեղ. Զինաստանից զատ, ուր անզիփացի վանառական մերը տարեկան 1200 միլիոն տալէր արժողութեամբ ներածում են, Հնդկաստանից բերելով: Բժշկութեան մէջ գործ է ածւում այլեւայլ պարագաներում:

ԽԱՄԻԴԻԶՄ (Խուսիդիզմ), ՀՐ. — Խարայէլ Բետ անունով մի խախամի (Քարքի) կողմից հիմնած հրէական ծայրայիշ պահպանողական աղամդ: Խասիդիզմի հիմնաքար են զգայնական տպաւորութիւնները, տրամա-

բանուրեան կամ բանականուրեան երկրորդական կարեւորութիւն տալով։ Ընդունում է կախարդուրիւնները, հաւատում է հրաշքներին։ Խասիդների արտաքին երեւոյթը ցուցադրում է իրենց աղանդը — այրերը մեղք են սևպում մկրատ կամ ածելի դիպցնելու իրենց դէմքին, խոկ կիմներն ամուսնուրեան նախօրեալին ածիլում են զըլովնը եւ կեղծծամ դնում։ Լեհաստանի, Հռոմգարիայի, Աւստրիայի եւ Ռումանիայի մէջ են տարածւած։

ԽԱՅ-ՓՈՒԻՇ, Պս.— Պարսկական ժաղաքներում գործազուրկ արհեստաւորների, հողազուրկ գիւղացիների եւ անվաստակ աշխատաւորների մերկ, անօրի, ծայրայեղ բււառ դասակարգ։

ԽԱՐԻԲԴԱ, ՅՅ.— Տե՛ս Սցիլլա։

ԽԵԴԻՎ, Աբ.— Եգիպտոսի միապետի տիտղոս, քաղաւոր իմաստով։

ԽԻՄԵՐԱ, ՅՅ.— 1) Ցոյն դիցարանուրեան մէջ՝ այլամդակ նիւաղ՝ առիւծի զլխով, այծի մարմնով, վիշապի պոչով, բերանից կրակ ու բոց ժայր-քող։ 2) Գրական իմաստով՝ հրէային մտապատկեր, որ իրականուրեան մէջ չէ կարող գոյուրիւն ունենալ։

ԽԼԻՍՏՆԵՐ (Խլիստումներ), Ռս.— Ռուսաստանում կրօնական մի կասկածելի աղանդ, զիշերային տօնախըմբուրիւններով եւ ծիսական օտարոսի ձեւերով։ Վերջին ցարուհու սիրահարը՝ լիտի Ռասպուտինը Խլիստուն էր։

ԽՆՈՒԽ, Եգ.— Հին Եգիպտական ստեղծիչ աստւած-ներից մէկը։ Պատկերացւում էր խոյի երեւոյթով։

ԽՈՐ, ՅՅ.— Երգեցիկ խումբ։

ԽՈՐԱՅԻՆ, ՅՅ.— Խմբական (Երգ)։

ԽՈՐԵԱ, ՅՅ.— Զդային անքուժելի մի հիւանդուրիւն, երբ ենթակամ ակամայ գօրաւոր ցնցումներ է ունենում

դեմքի, վզի, ձեռքի վրայ եւ այլն:

ԽԾՈՆՇՈՒԳԻԱՅԻԱԼ, Յն.— Պարագիտուրիւն. պարելու
արւեստ:

ԽԾՈՆՇՈՒԳԻԱԼ (Քրոնիկ), Յն.— 1) Պարբերական, ժամա-
նակ առ ժամանակ: 2) Կրկնող:

ԽԾՈՆՇՈՒԳԻԱԼ, Յն.— Ժամանակագրուրիւն.— պատ-
մական դեպքերի արձանագրուրիւնը ժամանակագրական
կարգով:

ԽԾՈՆՇՈՍ. Յն.— Ժամանակի աստւած, Զեւսի հայր
(նոյնը Քրոնոս կամ Կրոնոս):

Կ

ԿԱԲԲԱԼԱ. Հր.— Հրեայ բախտագուշական «Խորհըր-
դաւոր Գիտուրիւն», հմայուրիւններով, բարի եւ չար
ողիների հետ հաղորդակցելու զաղտնիքներով եւ այլն:

ԿԱԲԱԼԻԵՐՈ, Սպ.— Ազնիւ պարոն. ասպետ. ազնւա-
տոհմիկ:

ԿԱԲԵԼ. Հլ.— Ընդծովեայ հեռագրաքել: Կաբլեգ-
րամմ — ընդծովեայ քելով դրկւած հեռագիր:

ԿԱԲԻՆԵՏ. Ֆր.— 1) Գրասենեակ. 2) Պահարան. 3)
Բնագիտական թանգարանում սրահ՝ չորցրած բոյսերի,
ուկորների եւ համբային նմոյշներով. 4) Պիտական վար-
չական կամ նախարարական դիւանատուն:

ԿԱԳԱԼ, Հր.— 1) Հրեայ աշխարհական համայնքի ներկայացուցիչների ժողով. 2) Ծաղրական իմաստով՝ աղմլալի, խառնաշփոր հաւաքոյր:

ԿԱԴԵՏ, Ֆր.— «Էրտսեր».— 1) Զինուրական միջնակարգ դպրոցի սան. 2) Յարիզմի օրով՝ Ռուսաստանում՝ բուրժուակավիտայիստական ռամկավար կուսակցութիւն:

ԿԱԴՐ, Ֆր.— Պահեստի ոյժ բանակի համար:

ԿԱԴՐԻՆ, Ֆր.— Պարի մէկ տեսակ, մի քամի զայգերի կողմից:

ԿԱԶԱԿ (Կօզակ), Թր.— Ռուս զինուրական ցեղերի ընդհանուր անուն, որոնց մէջ ամեն արու անշատնառ են-քակայ է զինուրական ծառայութեան: Մօտ 15 միլիոն ժողովուրդ լինելով՝ քածնւած են եօրը զիշաւոր ցեղերի, որոնց մէջ ամենից մեծը՝ Դօն զետի կազակներ, այնուհետեւ հիւսիսային Կուլիկաում՝ Կուրան և Թերէֆ Դիտերի հովիտների կազակներ, Աստրախանի, Սիրիիրի և այլքն: Գլխաւորապէս հեծեալ զութդեր են կազմում, ժիշ քառվական դաշտային քերեւ քնդանօրաձիգ և հետեւակներ ունենալով: Իբր ռազմական ոյժ՝ անմրցելի են:

ԿԱԶԵՄԱՏ, Խու.— Վտանգաւոր ռնբազործներին կամ քաղաքական կալանաւորներին յատկացւած քանուային ռառնանացած խուց:

ԿԱԶԻՆՈ, Խու.— Բախտախաղին յատկացւած յատուկ շէմֆ, «Վրբւած» Ֆրամսիայում, Մօնտեկարլօյում և այլ տեղերում:

ԿԱԶՈՒԱԼԻԶՄ, Լու.— Դիպւածապատութիւն.— Փիլիսոփայական աշխարհայեացք, որի համաձայն պատահած ամեն դէպէերը միմիայն որու դիպւածքների արդիւմն են:

ԿԱԶՈՒԻՍՏԻԿԱՆ, Հա. — 1) Կեանքի մասնակի դեպքերը (կազուաները) ընդհանուր բարոյագիտական, կրօնական եւ իրաւական տեսակետներով բացասրելու եղանակ. 2) Բարոյական, կրօնական եւ իրաւական տեսուրիւմների խեղաքիւրում՝ սեփական շահի համար:

ԿԱԹԵԳՈՐԻԱՆ. (Կատեգորիա), Յն. — կարգ, շարք, դասաւորութիւն:

ԿԱԹՈԼԻԿՈՒԹԻՒՆ, Յն. — Կարողիկ-ընդհանրական, կամ Հռոմեական եկեղեցի: Ունի 350 միլիոն անւանական հետեւորդներ: Եկեղեցոյ գերագոյն պետն է Պապ, իր բնակալայրն ունենալով Վատիկանի պալատը Հռոմում, ուր կենտրոնացած է նաև Կարողիկ եկեղեցու ընդհանուր վարչութիւնը: Ֆաւիստ դիկտատոր Մուսուլիմին Վատիկանը անկախ պետութիւն հռչակեց, Պապին զաւեստական անկախ կառավարութեան առանձնահումներ տալով:

ԿԱԼԵՑԴՈՍԿՈՊ, Յն. — 1) Այլեւայլ գեղատեսիլ գոյներ ցուցադրող գործիք. 2) Բազմազան տեսարանների յաջորդական շարք:

ԿԱԼԼԻՖՐԱԾԻԱՆ, Յն. — Գեղագրութիւն — գեղեցիկ ձեռագրով գրելու արևատ:

ԿԱԼԼԻՌՈՊԵ, Յն. — Դիցագմներգութեան եւ նարտասանութեան մուսա՛ Յոյն դիցարանութեան մէջ:

ԿԱԼՎԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Յտ. Ա. — Ժան Կալվինի կրօնական տեսուրիւմների հետեւողութիւն: Եկեղեցական բարենորդիչներից մէկն է համարում Կալվին (1509-1564): Կալվինականութիւնը ծխակատարութեան չի հաւատում, մերժում է աւանդութիւմները, նախախնամութիւնը եւ այլն:

ԿԱԿԱՆ (Ամերիկեան Հնդիկների բառ). — Կենտրոնա-

կան եւ Հարաւային Ամերիկայում անող բոյս, որի պը-
տուղները սուրբի ձեւով գործածում են համանուն սը-
նընդարար ըմպելիք պատրաստելու համար:

ԿԱԿՑՈՒՍ, ՅԱ. — Հասարակածային բազմատեսակ
տուների եւ ծառերի ընդհանուր անուն:

ԿԱՄԱ, ՍԱ. — Հնդկական սիրոյ աստւած:

ԿԱՄԱՐԻԼԱ, ՍՊ. — Միապետների պալատներում
սլքտացող ռողովորք դրամիկների խումբ:

ԿԱՄԵԼԻԱ. — 1) Ճապոնական գեղեցիկ տունի մէկ
տեսակ՝ բազմերանգ եւ բուրումնաւէտ ծաղիկներով. 2)
Թիբեւսօլիկ, կիսաշխարհիկ բայց սիրոդ կին՝ Ալեքսանդր
Դիմայի «Կամելիազարդ Տիկին» դրամայի անունով:

ԿԱՄԷՌ, ՖԲ. — Ֆրանսիայում քերքերի, խաղալիք-
ների եւ այլ աժան առարկաների փողոցային մանրավա-
ճառ: Կամլոները սրամիտ, գլարք դասակարգ են, նման
թիֆլիսի կինոռոներին:

ԿԱՄՈՐՐԱ, ԽՈ. — Աւազակային գաղտնի կազմակեր-
պուրիւմ խոալիայում, հազարաւոր նիւղաւորութիւննե-
րով: Կոչում է նաև «Սեւ Զեռք»:

ԿԱՄՊԱՆԻԱ, ՖԲ. — 1) Արեաւ. 2) Ռազմական գոր-
ծողութեան սկիզբ. 3) Գիտական կամ զրուանքի համար
կազմակերպւած արեաւ:

ԿԱՆԱԼ, ՖԲ. — Ջրանցք:

ԿԱՆԱԼԻՉԱՑԻԱ, ՖԲ. — Կոյուղիների սիստեմ:

ԿԱՆԴԻՏԱՏ, ԼՏ. — 1) Թիկնածու. 2) Համալսարա-
նական ըրջանաւարտներից լաւագոյններին տրող գիտա-
կան առաջին աստիթամ:

ԿԱՆԿԱՆ, ՖԲ. — Անապարկեսու պարի մէկ տեսակ:

ԿԱՆՆԻԲԱԼ, ՍՊ. — Խր նմանին ուտող. մարդակեր.

կենդանական տեսակների մէջ նոյն իմաստով, օրինակ՝ կաննիրալ մժեղ — մժեղների մէկ տեսակ, մարդկանց համար անվնաս, եւ որոնք որում են եւ ուտում վնասակար մժեղներին։ Ամերիկեան կառավարութիւնը ներկայիս փորձեր է անում կաննիրալ մժեղների տեսակներն Աֆրիկայից բերելու եւ անեցնելու, մալարիայի առջեւն առնելու համար։

ԿԱՆՆԻԲԱԼԻՀՁՄ, Սպ.— Մարդակերութիւն. Ամանակերութիւն։

ԿԱՆՈՆ, ՑԲ.— 1) Կրօնական օրէնք, հրահանգ. 2) Որոշում. վնիու. 3) Կրօնական գրքերի հաւաքածոյ. 4) Կարգապահական օրէնքների եւ հրահանգների ամբողջութիւն։

ԿԱՆՑՈՆ, ՑԲ.— Զվլիցերական իմքնավար դաշնակցական նախանգակ։

ԿԱՆՑԵԼԵԱՐԻԱ, Լտ.— 1) Վարչական հաստատութիւն. գրասենեակ. 2) Վարչական հաստատութեան պատոմէութիւն։

ԿԱՊԻՏԱԼ, Լտ.— 1) Դրամագլուխ. շարժական եւ անշարժ կայֆի ամբողջութիւն. ընդհանուր հարստութիւն. 2) Անհատի, ընկերակցութեան, համայնքի կամ պետութեան ընքացիկ ծախսերը զոցելուց յետոյ՝ մնացած յաւելածական հարստութիւն. 3) Դրամական եւ արդիւնարերական կամ այլ հարստութիւն, որը գործ է ածում դրամատէր անհատի կամ ընկերութեան կողմից, վարձելու համար ընչազուրկ գործաւոր ձեռքեր, նրանց աշխատանքի արդիւնքը բարդելու համար արդէն իր ունեցած հարստութեան վրայ. 4) Կանխիկ դրամ. 5) Անհատի մէջ՝ մտաւոր-իմացական պաշար։

ԿԱՊԻՏԱԼԻՀՁՄ, Լտ.— 1) Դրամատիրութիւն. 2) Ար-

դիւնարերական եւ նարտարարեստի արտադրութիւնների եւ նրանց սպառման այնվիսի դրութիւն, ուր բացարձակ սեփականատէր է համըլիսանում սակաւարիւ դրամատէրերի խումբը, իր նիւրական ոյժի ու բարեկեցութեան իրք ազրիւր ծառայեցնելով ընչագուրկ, օրւայ վաստակով ապրող մեծամասնութեան աշխատութիւնը:

ԿԱՊԻՏԱԼԻՍ, Լտ.— 1) Գրամատէր. 2) Մեծահարուստ անձ. 3) Գրամագլուխի ոյժով աշխատաւորութիւնը տահագործոյ:

ԿԱՊԻՏԱՆ, Լտ.— 1) Բանակի մէջ՝ վաստի հրամանատար. 2) Նաւապետ:

ԿԱՊԻՏՈՒԼԱՑԻԱ, Լտ.— Անձնատութիւն.— Կուի միջոցին զէնքը վար դնելու եւ հակառակորդին յանձնելու հարկադրամեթ:

ԿԱՊՐԻԶ, Ֆր.— Քմանանոյք, տարօրինակ արարէ կամ վարելակերպ. անհատի մէջ արտառոց յատկութիւն:

ԿԱՍՏԱ, Փր.— Ամիսովիած, աւանդական սովորոյթներով ապրող դասակարգ: Կաստայական ընրտաւորումների ամենից բարդ ձեւերը Հնդկաստանն է ներկայացընում (Տե՛ս Բրահմանիզմ):

ԿԱՍՏՐԱԿՑԻԱ, Լտ.— Մարդկանց կամ կենդանիների ներքինիացում՝ նրանց սեռային կարողութիւններն ոչնչացընելու համար (Տե՛ս Ստերիլիզացիա):

ԿԱՏԱԼԵԿՏ, Յն.— Դասական հեղինակների ընտիր գրւածքների հաւաքածու:

ԿԱՏԱԼԵՊՈՒԱ, Յն.— Զգայնականութեան եւ զիսակցութեան կարուստ. ւարում. ապուացում. քարացած վիճակ:

ԿԱՏԱԿԱԼԻԶՄ, Յն.— Հեղեղ. ջրհեղեղ. բնական մեծ աղէտ:

ԿԱՏԱԿՈՑԻՉՄ, Յն.— Ատենախօսութեան մէջ՝ նուրբ եւ նաւակաւոր ոն:

ԿԱՏԱԿՈՇԲ, Լտ.— Քաղաքների տակ, ժայռերի մէջ եւ այլ տեղեր փորւած ստորերկրեայ ներքնուղիներ եւ գաղտնի քաղաքոցներ, արգիլած պատամունքներին կամ աւազակային հաւախոյը ներին յատկացւած։ Հռոմի մէջ քրիստոնէութեան նախնական շրջանում հալածւած քրիստոնեանները ընդարձակ կատակումբներ փորեցին, ուրոնի տասնեակ մզոնների երկարութիւն ունեն։ Աւկրայնայի մէջ, Կիեվի հոչակաւոր կատակումբները (Փեշօրը) Համայնավարմների կողմից գրաւեցին եւ հարիւրաւոր ըսուրբերից ոսկորները հաւաքւելով՝ ոչնչացւեցին։

ԿԱՏԱԿՈՇՐՈՅ, Յն.— Մեծ աղէտ, արհաւիրք։

ԿԱՏԵԳՈՐԻԱ, Յն.— 1) Դաս. շարք. 2) Իրերը կամ հարցերը հետեւողաբար դասաւորելու եղանակ. 3) Գաղափարների հետեւողական շարք։

ԿԱՏԵԽԻԶԻՍ, Յն.— Քրիստոնէական հաւատալիքների հիմնական սկզբունքները հարց ու պատասխանների ձեւով ներկայացւած։

ԿԱՐԱԽԻԶՄ, Հր.— Հրեական աղանդ, զլխաւորապէս Ղրիմի քերակղզում, որը մերժում է Թալմուդը, բառացի կերպով ընդունելով Հին Կոտակարանը։

ԿԱՐԱՆՑԻՆ, Լտ.— Քուերայով, ժամտախտով եւ կամ այլ սարափոխիկ հիւանդութեամբ վարակւած օքանից ուղեւորների եւ ապրանքների ժամանակաւոր արգիլում, բժշկական հսկողութեան տակ։

ԿԱՐԴԻՆԱԼ, Լտ.— 1) Կարողիկ քարձրագոյն կղեւական, եպիսկոպոսի աստիճանին համապատասխան. 2) Գլխաւոր, առաջնակարգ. օրինակ՝ կարդինալ հարց — զլխաւոր հարց։

ԿԱՐԻԵՐԻՍՏԱՏ, Ֆր.— Արոռամոլ. պատօնամոլ:

ԿԱՐԻԿԱՏՈՒՐԱ, Խու. — Նաղրանիկար:

ԿԱՐՄԱՆԿՈԼ, Խու. — 1) Ֆրանսիական գւարք եւ ոգեշունչ երգ, Մեծ Յեղափոխութեան ժամանակ ժողովրդականացած, համանուն պարի ընկերակցութեամբ. 2) Խոտալական մի գւարք երգ:

ԿԱՐՆԱՎԱԼ, Խու. — Բարեկենդան. — Մեծ պահքից առաջ ժողովրդական գւարք տօնախմբութիւնների տարբ արեւմտեան Եւրոպայում:

ԿԱՐՏՈՅԵԼ, Գր.— Գետնախնձոր (փարարէս):

ԿԱՖԵՇԱՆՏԱՆ, Ֆր.— Թերեւ հանոյքներով քատրոն. մակերեսային ժամանցի տեղ:

ԿԱՖԵՇԵՐ.— Աֆրիկայի հարաւարեւելեան ըրջանի սեւամորքներ:

ԿԵԼՏԵՐ.— Հնդկա-Գերմանական ցեղերի մի մեծ նիւղաւորութիւն, որ Յախապատմական ըրջանում հաստատւեց Արեւմտեան եւ հարաւային Եւրոպայում:

ԿԵՆԳՈՒՐՈՒ (Պապուաների լեզուով). — Աւստրալիայի մէջ խոտակիր մի կենդանի, մասամբ եղչերուին նմանող, առջեւի ոտքերը կարճ, ետեւինն՝ երկար, հաստ երկար պոչով: Էզը փորի վրայ գրամանի պէս պարկ ունի, որի մէջ պահում է իր ձագերին, մինչեւ որ վարժուին բալելու: Երկու մետր բարձր է երբեմն:

ԿԵՆՏԱՎՐՈՒ (Յենտավլը), Յն.— Դիցարանական երեւակերպ արարածներ Թիսսալիայում (Յունաստան): Զիու մարմնով, մարդու կուրծքով, գլխով եւ ձեռքերով հըսկաներ էին:

ԿԵՍԱՐ (Յեղար), Լու. — Յուլիոս Կեսարի (101-44 Ք. Ա.) անունով Հռոմի միապետներին տրւած տիտղոս՝

իմբնակալ, միապետ իմաստով, եւ ապա ընդհանրացած Եւրոպայի պետութիւնների մէջ : (Կայսրութիւն — կեսարութիւնից ծագած է) :

ԿԵՅԻԾ, Թք.— Յատուկ սունկերի եւ բոյսերի միջոցով մակարդւած կովի կար, զազային յատկութեամբ, որ Սիրիրի եւ Շուտաստանի մէջ զործ է ածւում իբր առողջարար ըմպելիք :

ԿԵՑ, ՅԱՆ.— Յուրաք ծովերի վիրխարի կենդանի, երբեմն 150-175 քըն ծանրութեամբ : Զրի մէջ ապրելով՝ դուրսի օդովն է ճնշում, եւ սուզելով ալիքների տակ՝ հազիւ կարող է 5-6 քոպէ մնալ : Զազերին ծնում է եւ կարով կերակրում : Խր խղը մեժենաների համար է գործածում :

ԿԻԿՈՂՊ, ՅԱՆ.— Դիցարանական հսկաներ, նակատի վրայ մէկ աչեռվա ապրում էին Սիցիլիա կղզու վրայ եւ կտնա հրաբուխի կրակներն էին խառնում :

ԿԻՆՈ (Սինեմա), Թք.— Շարժապատկեր :

ԿԻՆՏՈ, Վք.— Թիֆլիսի փողոցի մանրավանաների գլաքար, կենսութեակ, ընկերական եւ շատ սրամիտ դասակարգ :

ԿԻՐԳԻԶ, ՅԱՆ. Ա.— Արեւմտեան Սիրիրում ապրող մոնղոլական վաշկառուն մի ցեղ :

ԿԻՒՊԻԴ (Կուսիդոն).— Նոյնը Ամուռ.— Սիրոյ աստած՝ Յոյն եւ Հռոմէական դիցարանութեան մէջ, պատերազմի ասուած Մարսի (Հրատ) եւ Վենիսի (Ափրոդիտէ — Հայկական Աստղիկ) որդի : Ամուռը ներկայացւում էր իբր չարամնի փոքրիկ տղայ, որ նետերով խոցում էր պատահեների եւ դեռատի աղջիկների սիրուերը, սիրոյ վերքեր բանալով նրանց մէջ :

ԿԱԱՆ, ԱՅՆ.— Յեղ. տոհմ սերումդ. շառաւիդ :

ԿԱԱՍՍ, Լտ.— Կարգ, շարք, դասակարգ:

ԿԱԱՍՍԻԿ, Լտ.— 1) Դասական հեղինակ, զեղարւեստագիտ, պատմաբան եւ այլն.— հին Յունական, Լատինական եւ առ հասարակ նախա-միջնադարեան գրական-գեղարւեստական արտադրութեան հեղինակ. 2) Դասական արտադրութիւնների մասնագէտ:

ԿԱԱՍՍԻՑԻԶՄ, Լտ.— 1) Դասականութիւն.— նախամիջնադարեան ըրջանի գրական-գեղարւեստական կամ պատմագրական ուղղութիւն. 2) Օրինակելի, անքերի գրական-զեղարւեստական ոճ:

ԿԼԵՊՏՈՄԱՆԻԱ, Յն.— Հոգեկան հիւանդութիւն, երբ ենթական ակամայ զողութիւններ է անում:

ԿԼԵՐԻԿԱԼ, Յն.— 1) Կղերական պատօնեայ. 2) Կղերական դասակարգի կողմնակից:

ԿԼԵՐԻԿԱԼԻԶՄ, Յն.— 1 Կղերականութիւն. հոգեւորականութիւն. 2) Կղերականութեան կողմնակից հոսանք, ուղղութիւն. 3) Կրօնական տիրապետութեան կողմնակցութիւն՝ զանգւածների հասարակական, ժաղավական, տնտեսական եւ մտաւոր կենցաղի մէջ:

ԿԼԻԵՆՏ, Լտ.— 1) Առեւտուրի մէջ՝ յանախորդ. 2) Պատմական Հռոմում՝ ազնւականների (Պատրիկների) հայանաւորութիւնը վայելող աղքատ քաղաքացիներ (Պլերէյներ), որոնք իրենց ստացած նւրբների, դրամի եւ ամենօրեայ սնունդի համար պաւուպանում էին իրենց հովանաւորողների (Պատրոնների) շահերը՝ բւշաւութեան կամ այլ պարագաների մէջ:

ԿԼԻՄԱ, Յն.— Օդերեւութեական պայմանների վիճակը որու երկրամասում, եւ նրանց ազդեցութիւնը տեղական կենդանական եւ բռւսական կենցաղի վրայ:

ԿԼԻՄԱՔՍ, Յն.— 1) Բարձրացում. վերելք. 2) Ատե-

նախօսութեան մէջ տօսափւած նիւրի նկարագրութեան քարձագոյն աստիճան. 3) Խօսակցութեան կամ նառի մէջ՝ նախորդ նախադասութեան վերջին բառի կրկնումը յաջորդ նախադասութեան սկզբում:

ԿԱՀՆԵԿԱ, Յն.— Բժշկական աշխատանոց. բուժաբան:

ԿՈՌՈՒԻՆ, Ան.— Կրկեսային խեղկատակ. միմոս:

ԿՈՎԱԼԻՑԻԱ, Լտ.— 1) Համաձայնութիւն. իրար մօտեցում. 2) Քաղաքական կեանքի մէջ՝ տարրեր, իրար հակամարտ կուսակցութիւնների կամ պետութիւնների ժամանակաւոր համաձայնութիւն՝ որու խնդիրների մէջ իրար գործակցելու:

ԿՈԲՐԱՆ.— Հնդկաստանում վտանգաւոր օձ, նազակոչած տեսակից. տարեկան քանի հազարից աւելի մարդիկ են մեռնում Կորրայի խայրումից:

ԿՈԳՈՐԾ (Կոհորտ), Լտ.— Հռոմեական Լեզեռնի տասներորդ մաս, 500–600 զիմւորով:

ԿՈԴԵՔԸ, Լտ.— Օրինագիրք:

ԿՈԶԱԿ.— Տե՛ս կազակ:

ԿՈԼԼԵԿՑԻԱ, Լտ.— 1) Հաւաքածու — համանման կամ տարրեր առարկանների համախմբում. 2) Հեգնական իմաստով՝ աններդաշնակ մարդկանց հաւաքոյք:

ԿՈԼԼԵԳԱ, Լտ.— Պատոնակից. արհեստակից. ընկեր — (կրթած անհատների համար):

ԿՈԼԼԵԳԻԱ, Լտ.— Որու նիւղի արհեստակիցների միութիւն, համախմբում:

ԿՈԼԻՁԵՌԻՆՄ, Լտ.— Պատմական Հռոմի հսկայական կրկես. 90.000 հանդիսականների համար, ուր տեղի էին ուժենում ձիարշաւմներ, ըմբիւամարտութիւններ, սուսերամարտիկների արիւնալի կոփիներ, սորուկների եւ մահ-

ւան դատապարտւածների յուսումներ՝ վայրի գազան-ներից, եւ ուր Ներոն կայսրի հրամանով տասնեակ հա-զարաւոր քրիստոնեաներ՝ մարդ, կին եւ մանուկ՝ գա-զաններից պատառութեցին կամ խարոյկների վրայ ողջ-ողջ այրւեցին:

ԿՈԼԵՆԿՏԻՎ, Լու. — Հաւաքական. խմբական. միա-համուռ:

ԿՈԼԵՆԿՏԻՎԻԶՄ, Լու. — Հաւաքականութիւն. հաւա-քականացում. — արդիւնարերութեան եւ նարտարեսութ այնպիսի դրութիւն, ուր արտադրութեան միջոցները արտադրող խմբի կամ համայնքի անմիջական սեփակա-նութիւնն են, այն է՝ հողը, կենդանիները, գործիքները, իսկ գործարանային — արհեստակցական նիւդերի մէջ՝ ռէնքերը, մեժենաներն եւ այլն: Հաւաքական արդիւնա-րերական դրութեան տակ արտադրութեան արդիւնքի եւ շահարածնի մէջ իրաւունք ունեն միայն նրանք, որոնք մասնակից են արտադրական աշխատանքին, իրենց վատ-նած ժամանակի եւ օգտակարութեան չափով: Հաւաքա-կան արդիւնարերութեան դրութիւնը ներկայիս որդե-գրւած է և. Միութեան մէջ:

ԿՈԼՈՍՍ, Յն. — 1) Հսկայ, մեծ արձան. 2) վիրխա-րի մարդ. 3) Ռոդոս կղզու համանուն քաղաքի նաւահան-գրստի մուտքի մօտ Ապոլլոնի վիրխարի պղնձէ արձան, աւելի քան հարիւր ոսք բարձրութեամբ, որի երկու ոս-քերը յենւած էին երկու եզերքների վրայ: Նրա տակից կարող էին անցնել ամենամեծ նաւեր: Չորրորդ դարի, Ք. Ա. արձանագործական իրաւութիւն էր համարւում:

ԿՈԼՈՍՍԱՆ, Յն. — Անբնականօրէն խուռը. վիրխարի:

ԿՈԼՈՐԻՍ, Յբ. — Բազմերանգ ներկերի հմատ նկա-րիչ:

ԿՈՂՈՐԻՑ, Ֆր.— 1) Գումաւորում. 2) Այլազան գոյների գործածութիւն. 3) Գոյների հաւաքոյր. 4) Իրենց բողած տպաւորութիւն:

ԿՈՂԵՑ, Ֆր.— 1) Կոտրատող կին. «Բազ ծախող». այրերին հանելի լիմելու ձգող. 2) Կիսաշխարհիկ, քերեւարարոյ կին:

ԿՈՄԲԱՑՆ, Լտ.— Համանման կամ իրար չմմանող նիւրերի, ոյժերի, պայմանների կամ հաստատութիւնների համախմբում:

ԿՈՄԲԻՆԱՑ.— Տե՛ս Կոմբայն:

ԿՈՄԲԻՆԱՑԻԱ, Լտ.— 1) Համադրութիւն.— տարրեր նիւրերի, պայմանների, դրութիւնների միացում, հաւաքոյր. 2) Զաւետական իմաստով՝ խենքերի եւ խելացիների ծիծաղելի խումբ:

ԿՈՄԵԴԻԱ, Յն.— Կատակերգութիւն:

ԿՈՄԻԿ, Յն.— 1) Կատակերգակ. գւարնալի դեր կատարող դերասան. 2) Զւարնալի տեսակ:

ԿՈՄԻ-ԻՆ-ԶՈՒՆ, Զն.— Զինական ժաղաքակամ ներքին պատերազմին մասնակցող հոսանքներից մէկը, չափաւոր-ազգայնական ուղղութեամբ, «Քրիստոնեայ Գեներալ» անունով նաև շահուած Յանգ-իւ-Սիանգի դեկավարութեան տակ:

ԿՈՄՄԻՍԱՐ, Լտ.— 1) Յանձնակատար, գործակալ. 2) Վարչական որու հաստատութեան վարիչ պատօնեայ. 3) Խ. Միութեան մէջ նաև նախարար:

ԿՈՄՄԻՍԱՐԻԱԾ, Լտ.— 1) Վարչութիւն. բարձրագոյն պատօնութիւն. 2) Նախարարութիւն:

ԿՈՄՄԻՍԻՍԱՐ, Լտ.— 1) Յանձնակատարութիւն. 2) Միջնորդութիւն ապրանքի առ ու ծախի մէջ՝ որու տռկոս ստանալու համար:

ԿՈՄՄԵՆՏԱՐԻԱ, Լտ.— 1) Բացատրութիւն. լուսարանութիւն. 2) Գրականութեան ու գեղարվեստի մէջ անհատի կարծիք. դիտողութիւն. 3) Ցիւատակագիր:

ԿՈՄՄՈՒՆԱ (Կոմմունա), Լտ.— Համայնք.— 1) Բընակչութեան մէկ որու մաս. 2) Ընդհանուր բնակչութիւն որու երկրամասի մէջ. 3) Ընդհանուր բնակչութիւն ամբողջ աշխարհի մէջ. 4) Պետական-քաղաքական իմաստով՝ համայնքների գումար, սիստեմ, (Գերմանիայի՝ Gemeinwesen):

ԿՈՄՄՈՒՆԱԼ, Լտ.— Համայնքին պատկանող. համայնական:

ԿՈՄՄՈՒՆԱՐ, Լտ.— Համայնական կազմի անդամ:

ԿՈՄՄՈՒՆԻԶՄ, Լտ.— Համայնավարութիւն.— քաղաքական-տնտեսական պայմանների դասաւորում, ուր անհատական սեփականատիրութեան փոխարէն տիրում է հաւաքական սեփականատիրութիւն, եւ ուր պետական-վարչական մեքենան կառավարում է համայնքի կողմից, իր ներկայացուցիչների միջոցով: Համայնավարական իրաւակարգի մէջ արտադրութեան բոլոր միջոցներն ու արտադրած նիւթերը պատկանում են աշխատաւորութեան, որը տէր է նաև ռուկայի, ապրանքների փոխանակութեան, վաճառքի, արտածման եւ ներածման բոլոր աղբիւրների: Համայնավարութեան նպատակը լինելով աշխատաւորութեան բարեկեցուրեան աստիճանական բարձրացումը՝ ճգույն է ապահովելու աշխատող տարրերի ապրուստի պայմանները, տնտեսական զրագմունք հայքայքելով նրանց, գործազրկութեան պարագային նիւթապէս օժանդակելով համայնական գանձից կամ ապահովագրութեամբ. հիւանդութեան եւ ծերութեան

դէպքերի համար ապահովագրութեամբ եւ այլ միջոցներով : «Մէկը բոլորի համար եւ բոլորը մէկի համար» նը-
շանարանն ունենալով՝ համայնավարութիւնը աշխատում
է ընդհանուր ներդաշնակութիւն հաստատելու մարդկա-
յին ընտանիքի բոլոր անդամների միջեւ, չեզոքացնելով
աշխատանքից խուսափող, իրենց դրամագլխի կամ այլ
միջոցներով սնանող բոլոր տարրերը : Համայնավարու-
թիւնը դէմ է ներկայիս տիրող պետական անջատ եւ իրար
հակամարտ սիստեմների, եւ ամերածեատ է համարում
վերացնել ազգերն իրարից զատող արևեստական պատ-
ճէմներն ու սահմանները, կերտելու համար մի նոր —
համաշխարհային ընդհանուր համայնք, ուր ինքնարերա-
րար պիտի լուծւին եւ չժաման պետական ամեն ձեւի կազ-
մերը, երբ համայնքը հասնի ինքն իրեն կառավարելու
աստիճանին : Խ. Միութիւնը ներկայիս միակ երկիրն է,
որը դիմում է դէպի համայնավարական սկզբունքների
լայն իրականացումը՝ Մարքսի, Լնգելսի եւ Կենինի առա-
ջադրած ուղիղով :

ԿՈՄՊՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ, Լու.— «Համայնա-
վարական իրովատակ» .— Գիտական Համայնավարու-
թեան երկու մեծ առաջնորդների՝ Կարլ Մարքսի և Ֆրիդ-
րիխ Էնգելսի կողմից 1847 թուին գրած կոչը՝ ուղղած
աշխարհի բոլոր համայնավարներին, որի մէջ բացատըր-
ւած են տնտեսական-պետական հարցերի լուծման ձեւերը
համայնավարական տեսակետով : Այդ կոչի էական մա-
սերը խտացւած կարելի է համարել հետեւեալ տողերի
մէջ .— «Նկատի առնելով պրոլետարիատի զարգացման
ընդհանուր ըրջանները՝ մենք հետեւում էինք գոյութիւն
ունեցող հասարակութեան մէջ կատարող ժիշ քէ շատ
օղարկւած ժաղաքացիական կուին, մինչեւ այն կէտք,

երք այդ բաղաբացիական կոփւը բացարձակ յեղափոխութեան է վերածուում եւ պրոլետարիատը բուրժուազիայի խորտակման միջոցով իր տիրապետութիւնն է հաստատուում։ Պրոլետարիատն իր բաղաբացիան տիրապետութիւնն օգտագործելու է այնպէս, որ յոլէ բուրժուազիայից նրա ամբողջ դրամագլուխը, արտադրութեան բոլոր միջոցները կենտրոնացնէ պետութեան ձեռքում, այն է՝ իր տիրող դասակարգ կազմակերպւած պրոլետարիատի ձեռքում, եւ հմարաւորութեան չափով արագօրէն աւելցնէ արտադրական ոյժերի համագումարը»։

ԿՈՄՊԼԵԿՏ, Լտ.— Ամբողջութիւն. ստուգւած բանակ։

ԿՈՄՊԼԵՔՍ, Լտ.— 1) Ամբողջական թիւ. ընդհանուր բանակ. 2) Անհատի արտաքին երեւոյք։

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ, Լտ.— 1) Երաժշտական գործերի հեղինակ. 2) Գրաւարեստական արտադրութիւնների մէջ նիւթերի ներդաշնակ դասաւորում. 3) Տարբեր առարկաների եւ նիւթերի յարմար խմբաւորում. 4) Գրաւարութիւն։

ԿՈՄՊՐՈՄԻՍ, Լտ.— 1) Երաժշտական հեղինակութիւն. 2) Գեղարևստական արտադրութիւնների մէջ նիւթերի ներդաշնակ դասաւորում. 3) Տարբեր առարկաների եւ նիւթերի յարմար խմբաւորում. 4) Գրաւարութիւն։

ԿՈՄՊՐՈՄԻՍ, Լտ.— 1) Տարակարծիք կողմերի համաձայնութիւն՝ վիճելի հարցը փոխադարձ զիջումներավ կարգադրելու. 2) Վիճող կողմերի համաձայնութիւն՝ վիճելի հարցը չեղող ատեանին յանձնելու. 3) Փոխադարձ զիջողութիւն։

ԿՈՄՖՈՐՏ, Ան.— Համգատութիւն. ամդորրաւթիւն. համելի եւ համգատաւէտ պայմանների համադրութիւն։

ԿՈՆԴՈՒՄԵՌԱՏ, Լտ.— 1) Տարբեր մետաղների միաւորում որեւէ շաղախի օգնութեամբ. 2) Խառնածփոք զանգըւած. 3) Աներդաշնակ մարդկանց հաւաքոյք։

ԿՈՆԳՐԻՍ, Լտ.— 1) Համագումար. աւագ ներկայացուցիչների ժողով. 2) Ծերակոյտ. նահանգական ներկայացուցիչների օրէնսդիր մարմին:

ԿՈՆԿՈՒՐՍ, Լտ.— Մրցումին մասնակցում:

ԿՈՆԿՐԵՏ, Լտ.— 1) Խրական. որու. հաստատապէս գոյուրին ունեցող. 3) Առանձին մասերից բաղադրւած ընդհանուր զանգւած:

ԿՈՆՍԵՐՎ., Լտ.— 1) Պահւած. պահեստի դրւած.

3) Պահածոյ ուտելիք:

ԿՈՆՍԵՐՎԱՑԻՎ, Լտ.— Պահպանողական. հնաւանդ. ետամբաց:

ԿՈՆՍԵՐՎԱՑՈՒԻՎ, Լտ.— Երաժշտական բարձրագոյն դպրոց. երաժշտանոց:

ԿՈՆՍՈՒԼԱՏՈՒՏ, Լտ.— Խորհրդակից:

ԿՈՆՍՈՒԼԱՏՈՒՄ, Լտ.— Խորհրդակցութիւն:

ԿՈՆՍՊԻՐԱՑԻՎ, Լտ.— Դաւադրական:

ԿՈՆՍՊԻՐԱՑԻՎ, Լտ.— Դաւադրութիւն:

ԿՈՆՍԻՍՈՒԹԻՒՆ, Լտ.— 1) Սահմանադրութիւն.— պետական վարչածեւ, ուր բնակչութիւնն իր ներկայացուցիչների միջոցով մասնակցում է օրէնսդրական գերազոյն մարմնին, կամ այդ ներկայացուցիչներով կազմում է օրէնսդրական մարմին. 2) Կազմ. օհնւածք:

ԿՈՆՎԵՆՏ, Լտ.— 1) Կրօնական միաբանութեան բընակալայր — վանք. 2) Պետական բարձրագոյն մարմնի հաւաքատեղ. 3) Ֆրանսիական յեղափոխութեան ըրջանում ժամանակաւոր ազգային ժողով՝ 1792-ից մինչեւ 1795 թ.:

ԿՈՆՎԵՆՏ, Լտ.— 1) Պետութիւնների միջեւ կմբըւած դաշնագրութիւն. 2) Տարբեր հատուածների միջեւ համաձայնութիւն:

ԿՈՆՏՈԿՈՐԵՆՏ, Խու. — Ընթացիկ հաշիւ:

ԿՈՆՏՐԱԲԱՆԴԻ (կանտրաբանդ), Խու. — Մաքսախոյս ապրանք — առանց մաքս վճարելու օտար երկրից գաղտնի մերմուծւած:

ԿՈՆՏՐԱԲԱՆԴԻՍ, Խու. — Մաքսանենգ. մաքսախուս:

ԿՈՆՏՐԱԿՏ, Լու. — Պայմանագրութիւն:

ԿՈՆՏՐԱՅԱԿՑԻԱ, Լու. — 1) Գրական գործերի կեղծիք. 2) Հեղինակի կամ գեղարվեստագէտի իրաւումի յափշտակութիւն:

ԿՈՆՏՐՈԼ, Լու. — Անհատի կամ պատունէութեան գործառնութիւնների վրայ նշանակուած վերհսկողութիւն:

ԿՈՆՏԵՐՏ, Ֆըր. — Երգահանդէս. նազարահանդէս:

ԿՈՆՖԵՆԵՇԵՐԱՑԻԱ, Լու. — Մի ժանի նահանգների կամ պետութիւնների դաշնակցութիւն:

ԿՈՆՖԵՆԵՇԿԱՑԻԱ, Լու. — Պետութեան կողմից ստացւածքի բռնագրաւում. պետականացում:

ԿՈՆՖԵԼԻԿՏ, Լու. — 1) Ընդհարում. բաղխում. 2) Տարակարծիքութիւն. անհամաձայնութիւն. գժում:

ԿՈՆՖՈՒՑԻՈՆ (կունգ-ֆու-ցէ). — Չինաստանի մեծանուն փիլիսոփայ, բարոյագիտական անուանի ֆարոզիչ, որի ուսուցմունքը հսկայ ազդեցութիւն գործած է Չին ժողովրդի մտաւոր-բարոյական կենցաղի վրայ: Ծնվեց 551-ին, մեռաւ 479-ին Ք. Ա.):

ԿՈՌՊԵՐԱՏԻՎ, Լու. — Համագործակցական:

ԿՈՌՊԵՐԱՑԻԱ, Լու. — Համագործակցութիւն. 1) Մի խումբ անձերի հաւաքական աշխատանքով առաջ տարւած գործ. 2) Աշխատաւոր միութիւնների համագործակցութիւն, միութեան անդամներին պէտք եղած կենսական բոլոր պիտոյ բները հայրայրելու. սեփական արդիւնա-

բերութեամբ կամ արտադրութեամբ, եւ կամ մեծաքանակ, զեղչած զիներով ուրիշ համագործակցականներից զնելով, եւ ծայրայեղ պարագային միայն՝ արտաքին խանութեներից։ Համագործակցականն աժան զներով պէտք եղած պիտոյ բները զնելով՝ իր սեփական խանութեներում ծախում է իր անդամներին նւազագոյն շահով, միաժամանակ շահարածին տալով նրանցից իւրաքանչիւրին, տարեկան ընդհանուր արդիւնքից, իր դրած բաժնի բաղասութեամբ՝ համագործակցականի հիմնական դրամագլխի մէջ։ Համագործակցականները իրենց անդամներին կենսական ամեն կարգի պիտոյ բները հայրայրելով՝ մատչելի զներով՝ ազատում են նրանց, այսինքն սպառող տարրերը՝ մեծաքանակ եւ փոքրաքանակ բնկերութիւնների, խանութապահների եւ նրանց զործակալների շահարկութիւնից, չեզոքացնելով երկրորդ եւ երրորդ ձեռքերի շահարկող միջնորդութիւնը արտադրողի եւ սպառողի միջեւ։ Համագործակցականների ամենից լայնածաւալ դրութիւնը ներկայիս հաստատւած է և. Միութեան մէջ, ուր անհատական առեւտրական բոլոր ձեռնարկներն արդէն անհետացած են եւ հատ ու կտոր մնացածներն էլ անհետանալու վրայ են։

ԿՈՍՄԱՐԵՆԻԱ., Յն.— Համաշխարհային միացեալ մէկ կառավարութիւն։

ԿՈՍՄՈԴԻԵՆԻԱ., Յն.— Տիեզերագիտութիւն.— տիեզերքի (աստղերը, մոլորակները) ծագման եւ զարգացման պայմաններն ուսումնասիրող գիտութիւն։

ԿՈՍՄՈԴԻԵՆԻԱ., Յն.— Տիեզերագրութիւն.— տիեզերքի նկարագրութիւն։

ԿՈՍՄՈՊՈԼԻՏ, Յն.— Աշխարհաքաղաքացի։

ԿՈՍՄՈՊՈԼԻՏԻԶՄ, Յն.— Աշխարհաքաղաքացիու-

թիւմ. — մերժում սեփական հայրենիքի, ցեղի, ազգային շահերի՝ ընդհանուր մարդկութեան շահերին ծառայելու համար:

ԿՈՍՄՈՍ, ՅԱ. — Աչխարհ, երկրագունդ. տիեզերք:

ԿՈՐԱԼ, ՅԱ. — Շովային բուստ, կենդանական պոլիպ-ների սերումդից:

ԿՈՐԱԼԵԱՆ ԿՊԶԻՆԵՐ, ՅԱ. — Անհաճիւ քանակով մեռած բուստերի զերեզմաններ, որոնք միլիոնաւոր տարիների ընթացքում հետզինտէ անելով, իբր այդ փոքրիկ արարածների հաւաքական գամբարաններ՝ ովկիանոսի անդումդներից բարձրացած են, ջրային մակերեւոյթից վեր ելած եւ կղզիներ գոյացրած: Խաղաղ ովկիանոսի կղզիների մեծ մասը կորակիան ծագումն ունեն, ծածկը արեւադարձային հրաշալի բուսականութեամբ: Նիւ Եորքից 650 մղոն արեւելք, Ատլանտիան ովկիանոսի մէջ, Բերմուդեան կղզիների փոքրիկ խումբը, հաւաքար հազիւ 80 քառակուսի մղոն տարածութեամբ, 5000 ոտք անդունդից բարձրացած օտարոտի աւտարակների պէս գուրս են ցցւած ջրային զանգւածի միջից: Զրի մակերեւոյթից ամենաբարձր կէտը 300 ոտք է:

ԿՈՐՊՈՒՍ, ԼԱ. — 1) Մարդկային կամ կենդանական մարմին. կազմ. 2) Վարչական պատումէութեան կազմ. 3) Զինտրական միջնակարգ դպրոց. 4) Զօրաբաժին:

ԿՈՐՏԵՍ, ՍՊ. — Սպամիայի եւ Պորտուգալիայի (Փորքուկալ) մէջ՝ ազնւականութեան, կղերի եւ քաղաքների Անրկայացուցիչների խան ժողով:

ԿՈՒԼԱԿ, ՌԱ. — «Ռոռունցք» — հարւածող, ննուղ, հարստահարող իմաստով. Խ. Միութեան գիւղական օքքաններում ունեւոր գիւղացիութիւն, որը չքաւոր տարբերի տահագործումով գրադաւած է:

ԿՈՒԼԻ. Հն.— Ասիայի արեւելեան երկրներում եւ Հնդկաստանում՝ բեռնակիր գործաւոր:

ԿՈՒԼԻ. Ձր.— 1) Թատերական քեմի ետեւի, հանդիսականների համար անտեսանելի մաս. 2) «Կուլիսների ետեւ» դարձածքը խօսակցութեան կամ զրականութեան մէջ՝ նշանակում է վարագոյրի ետեւ, ծածուկ, մուրի մէջ կատարւած գործ:

ԿՈՒԼՏՈՒՐԱ. Լտ.— 1) Մշակոյր. ընդհանուր զարգացում. 2) Տնտեսական, ֆաղաքական եւ մտաւոր առաջդիմութիւն. վերելք:

ԿՈՒԼՏՈՒՐԾՐԵԳԻՆ. Լտ. Գր.— 1) Մշակոյր տարածող. 2) Հեգմօրէն՝ կեղծ-քաղաքակրթութեան ժարողիչ:

ԿՈՒՆԿՈՒՆՔՍ-ԿԱՆ.— Ամերիկեան զաղտնի կազմակերպութիւն, պատահական կերպով ծնունդ առած եւ կարճ միջոցին վերածված հակա-Նեզքր մի վտանգաւոր հոսանքի: Կ. Կ. Կ.-ից առաջ Միացեալ Նահանգներում գոյաւրիւն ունենալի համանման զաղտնի միութիւններ, իմշակ՝ «Սպիտակ Կամելիաների Ասպետներ», «Սպիտակ Եղբայրութիւն», «Սպիտակ Լիզա», «Գումար Դէմքեր», «1776-ի Ընկերակցութիւն», «Սեւ Հեծեալներ», «Սպիտակ Վարդ» եւ այլն: Կ. Կ. Կ.-ը կազմուեց Տեսնեսսի Նահանգի Պուլասկի աւանի մէջ 1865 թին, մի խումբ զբարձասէր երիտասարդների կողմից, իրը ժամանցի համար մի ակումբ: Օտարոտի ու անմիտ ծէսեր եւ տարօրինակ զգեստաւորութիւն որդեգրեցին նորակազմ ակումբի անդամները: Երբ տեսան որ իրենց խորհրդաւորութիւնն ու արտաքին երեւոյը ը երկիւլ էր ազդում բընակչութեան վրայ՝ ֆաջալերւեցին եւ արագ նիւղաւորութիւններ տւին Հարաւային նահանգներում: Քաղաքային

պատերազմի ժամանակ գերութիւնից ազատագրվի փորձող սեւամորքներին սարսափի մէջ պահելու համար նեղբերի կողմից սպիտակ կանանց պատահական կամ կեղծ բռնարարութիւնների դէպքերը սկսեցին իր տոիր գործածիլ անհատ նեղբերի կամ գանգւածների ջարդերի համար : Կ. Կ. Կ.-ը հրապարակ նետաց սեւերի դէմ, իր խաչակիրների մի կազմակերպւած բանակ, ձեռք ընկած յանցաւոր սեւամորքներին խուժանային դատաստանով պատժելու, կախելով կամ ողջ ողջ այրելով : Լինչի օրէնքը գործածելով (Տե՛ս Լինչի Օրէնք) իր կտրուկ միջոց՝ սեւամորքների հետ հաւեյարդարութեան համար՝ Կ. Կ. Կ. սանձարձակ արարքներով համբային եւ կառավարութեան միջամտութիւնն իր վըրայ հրաւիրեց : 1871-72 թ. պետական օրէնքները իրը թէ գաղտնի կազմակերպութիւնների առջեւը պատճեններ կամգնեցրին, եւ հարիւրաւոր Կ. Կ. Կ. անդամներ ճերպակալւեցին եւ բանտերը նետացին : Կազմակերպութիւնը սակայն մնաց կենդանի, եւ ներկայիս երկու միլիոնից աւելի ամւանական անդամներ ունի, զլխաւորապէս հարաւային եւ արեւմտեան նահանգներում : Իր գործունէութեան ծրագրի մէջ մտնում են հետեւեալ կէտերը .— Հալածանք սեւերի, Հրէաների եւ Կարոլիկների դէմ. հալածանք ամերիկեան կառավարութեան բոլոր ներքին եւ արտաքին քւնամինների դէմ. անբարեացակամութիւն օտարածին գաղթականների հանդէպ : Կամնի անդամ կարող են լինել միայն 100% զուտ Ամերիկացինները : Զնայած վերջին սահմանափակումին՝ մի ժամի Հայեր նարայիկութիւնն ունեցած են կազմակերպութեան անդամ լինելու եւ նոյն իսկ կարեւոր աստիճաններին հասնելու : Օտարածին ժողովուրդներից Կ. Կ. Կ.-ի մասնաւոր հակա-

բանքի տռարկայ եղած են Յոյները, որոնք 1924-25-ին
Արեւմտեան նահանգներից մէկի կենտրոնական մարմնի
գաղտնի օրչարերականուվ «անբաղձալի բաղաբացիներ»
որակուած էին, մեղադրւելով, որ բազմարիւ Յոյներ «Ա-
մերիկեան մասուր արիւնը ապականում են, անբարոյա-
կանուրիւն տարածելով Ամերիկացիների մէջ, սրիկաց-
նում են անմեղ պատանիներին, իրենց կիրքերի համար,
եւ կ. կ. կ.-ը դէմ է որպէսզի Յոյներն Ամերիկուիների
հետ ամուսնական կապերով միանան» եւ ալն: Կ. Կ.-ի
կազմակերպական ձեւը.— Կամները իրենց ազդեցութեան
մի ժամի օրջաններ ունեն, որոնց մէջ հզօրազոյնն է հա-
րաւայինը՝ «Ամտեսանելի կայսրուրիւն» անունով: Ընդ-
հանուր հրամանատարի տիտղոսն է «Միծ Կախարդ»:
զատ նահանգը կոչում է «Թագաւորուրիւն», իր պետը
վայելում է «Միծ Վիշապ» տիտղոսը: Գաւառային մաս-
նանիւղի պետը կոչում է «Միծ Հոկայ»: Փոքր օրջան-
ները — «Որչեր» են անւանում, «Միծ Կիկլոպ»-ի ղե-
կավարութեան տակ: Պատոսնեաները նոյնչափ նոյն տիտ-
ղոսներ ունեն — «Համեար», «Հիդրա», «Ֆուրիա», «Ռ-
գի», «Գիւերային Բու», «Մող», «Վարդապետ», «Թուրք»:
Պարզ անդամները նամաչւած են Գառլ անունով: Արեա-
ւանքի ժամանակ կանսմէնները (Կ. Կ. Կ.-ի անդամները)
գերադասում են հեծեալ խումբերով յայտնւել որուած
տեղը, յանկարծակի, փորորիկի նման, առեւանգել յան-
ցաւորին եւ փախցնելով մի ամայի տեղ՝ որուած պա-
տիճը տալ: Հազնում են երկար սպիտակ շապիկներ, սպի-
տակ վեղաբուլ, կրծքին խաչ եւ դէմքին դիմակ: Գիւե-
րային արքաւանքի ժամանակ յանախ ձողերի վրայ ունե-
նում են մարդկային գանգեր, մէջը վառւաղ նրազով, աչ-
երից լոյս ցայտող, ինչպէս նաև տողբակների մէջ ոս-

կորներ, որոնց ցնցումով երկիւղ ազդող ձայներ են հանում, տպաւորութիւնը գօրացնելու համար:

ԿՈՒՄԻՍ, Թբ.— Բուսական մակարդով պատրաստած ճիռ կար, առողջարար յատկութեամբ:

ԿՈՒՐՈՐԾ, Յբ.— Համբային ջրերի բուժարան:

ԿՈՒՐԾ, Լտ.— 1) Դպրոցական դասընթացք. 2) Նուի ուղղութիւն. 3) Հիւանդի ապահինման համար անհըրաժեւ ժամանակաշրջան. 4) Դրամների եւ արժեքուղբերի ընթացիկ արժեք:

ԿՎԱՐՏԱԼ, Լտ.— 1) Քաղաքամաս. Թաղ. 2) Չորրորդ մաս, օրինակ՝ տարւայ կվարտալ — 3 ամիս:

ԿՎԱՐՏԵՏ, Լտ.— Չորս անձով երգ կամ նւագ:

ԿՎԻՆՏԵՏ (ՔՎԻՆՏԵՏ), Լտ.— Հինգ անձով երգ կամ նւագ:

ԿՐԵՍՈՍ, Յտ. Ա.— Լիդիայի թագաւոր (560-548 Ք. Ա.) որի անքաւ հարստութիւնն առասպելի շարքն անցած էր: Յաղթեց Պարսկական կայսրութեան հիմնադիր Կիւրոսից, որը գերի տարաւ նրան եւ իր խորհրդականը դարձրեց: Ներկայիս մէկին Կրեսոս կոչել՝ Առանակում է հեթաքային հարստութեան տէր մարդ անւանել:

ԿՐԵՈԼ, Սպ.— Ամերիկայում կամ Աֆրիկայում ծընած Եւրոպացի, (Եւրոպացի ծնողների զաւակ):

ԿՐԻԶԻՍ, Յն.— Ճգնաժամ. վտանգաւոր, բախտորութիւն:

ԿՐԻՑԻԿԱՆ, Յն.— Քննադատութիւն. որեւէ բանի հասարակական արժեքի որոշում:

ԿՐԻՑԻՔԱԿԱՆ, Յն.— 1) Քննադատական. 2) Ճգնաժամային. սպանական. վտանգաւոր, օրինակ՝ բռյէ, կացութիւն եւ այլն:

ԿՐՈՒԱՍԱԴ. Ձր. (Խաչակրուրիւն) .— Կարոլիկ կղերականուրեան առաջնորդուրեամբ Եւրոպացիների ուրը յաջորդական արքաւաննեները Սարակիմոսների (Արարթների) դէմ: 1096-ից 1248 թ. Երուսաղեմը ազատազրելու համար մահմեդական լծից: 152 տարի տեսող պատերազմների մէջ անհաշիւ զոհեր տվին Երկու կողմն էլ, եւ Երուսաղեմը դարձեալ մնաց Խալամի գերիշխանուրեան տակ: Խաչակրական արքաւանները ամենից վիպական արկածախնդրուրիւնների շարքն եղան Եւրոպացի ազնւատուիմիկ ասպետների, դուքսերի եւ քաջաւորների համար, որոնք Երազում էին արեւելքի մէջ փառքի եւ Խոչակի դափնիներ վաստակելու, միաժամանակ կրօնական քմբեցուցիչ ներքնչումների իրականացումը վայելել «Փրկչի գերեզմանի» ազատագրումով: Բայց եւ չընայած զործած մնծ զոհողուրիւններին՝ Մահմեդի սուրբ Խաչից գօրաւոր յայտնւեց:

Հ

ՀԱԲՍԲՈՒՐԴ, Յտ. Ա.— Աւտրո-Հումգարական Վերջին կայսերական ընտանիքի տոհմական անուն:

ՀԱԴԻՍ (ԱԴԻՍ), Յն.— 1) Յոյն դիցարանուրեան մէջ դժոխվի քաջաւոր, Զեւսի եղայր, համապատասխան Հռոմէական Պլուտոնին. 2) Դժոխվ:

ՀԱՄԱԴՐԻԱՆ, ՅՅ. — Տե՛ս Դրիադ:

ՀԱՄԼԵՏԻԶՄ, Յտ. Ա. — Շէյքսպիրի համանում երևակաւոր դրամայի եերոս Համլէտի անունով՝ կասկածոտ, ամվատակ վերաբերում ըրջապատի հանդէա՝ անոռու, տատանուող թէեւ զննող, խորհող եւ վսեմ նկարագրի տէր անհատի կողմից, որը հօգեկան մի հիւանդու վիճակի մէջ գտնելով՝ փնտռում է լուծելու «լինել թէ չինելու» եղերական հարցը:

ՀԱՅԴՈՒԿ, ՀՅ. — 1) Թիւրք բռնակալուրեան դէմ կուող Հունգարական կամաւոր ժերդ դարում. 2) Ներկայիս որեւէ պետուրեան դէմ ապստամբ կամաւոր՝ Բալկանեան քերակղզիում:

ՀԱՇԻՇ, Տե՛ս Խաչիւ:

ՀԱՅԻ, Ար. — 1) Մելլա՞ Մահմեդի գերեզմանին ուխտի զնացած զերմեռամդ հաւատացեալ. 2) Նրուսադեմ՝ Քրիստոսի գերեզմանին ուխտի զնացած Հայ, որի արտաքին նշաններն են ձեռքերի վրայի մորքենկարները (տատույները):

ՀԱՏՈՐ, Եգ. — Եգիպտական դիցարանուրեան մէջ երրորդուրիւմը կազմող աստւածներից մէկը: Ցանախ ներկայացւում էր կովի երեւոյքով:

ՀԱՐԱԿԻՐԻ, Ճպ. — Տե՛ս Սեպպուկի:

ՀԱՐՄՈՆԻԱ, ՅՅ. — 1) Համաչափուրիւն, ներդաշնակուրիւն երզի կամ նւազի մէջ. 2) Զայնական համաչափուրիւնն ուսուցանող երաժշտական զիտուրիւն:

ՀԱՐԵՄ, Ար. — Կանանց. — Բազմակին ցեղերի մէջ կանանց յատկացւած տան յարկարաժին, զոց եւ անմատչելի այրերին, բացի այդ կանանց տէրն եղող անձից:

ՀԱՐՈՒՆ-ԵԼ-ՌԱՇԻԴ. — Բաղդատի հռչակաւոր ժողովրդական խալիֆ, «իմաստուն» կոչւած. «Հազար եւ մէկ

զիւերներ» արարական հետեարմերի մէջ ներբողանելով
յիւած է, իբր լայն ժողովրդականութիւն վայելող անձ:

ՀԱՐՊՈԿՐԱՏԻՍ, Յն.— Յոյն դիցարանութեան մէջ
լուսութեան աստւած, որը ներկայացւում էր իբրեւ մի
զեղանի պատանի, աչ՝ ձեռքի ցուցամատը օքքունին
սեղմած:

ՀԱՐՑԱԼ, Հն.— 1) Հնդկաստանում՝ գործադուկ. 2)
Ասեւուրի ընդհատում:

ՀԱՐԻՄ, Ար.— Դատաւոր:

ՀԵՓԵՄՈՆԻԱ, Յն.— Մի պետութեան գերիշխանու-
թիւն ուրիշ պետութեան վրայ:

ՀԵԼԼԵՆԻԶՄ, (Հելլեն – Յոյն).— 1) Յունական գրա-
կան-զեղարւեստական ուղղութեան հետեւողութիւն. 2)
Յունասիրութիւն:

ՀԵԼԼԵՍՊՈՆՏ, Յն.— Դարդանելի նեղուցի պատմա-
կան անուն:

ՀԵԼԻԿՈՆ, Յն.— Յունաստանի թէորիա զաւափի մէջ
սրբազն լեռ, Մուսաների բնակալայր (Տե՛ս Մուսա-
ներ):

ՀԵԼԻՈՍ, Յն.— Արեւ, որը խորհրդանիւն է Ապոլլո-
նի, իր հրեղէն նժոյզմերը լծած ոսկէ կառքով:

ՀԵԼՎԵՏԻԱ.— Զվիցերիայի պատմական անուն:

ՀԵՂԻՆԵ, Յն.— Զեւսի եւ Լեդայի աղջիկ, Տրովա-
դայի պատերազմի պատճառը (Տե՛ս Լեդա եւ Տրովադայի
պատերազմ):

ՀԵԶՈԱ (Հեջիր), Ար.— Մահմեդի փախուստը Մեք-
ֆայից Մեդինա, Յուլիս 5-ին, 622 թւին Ք. Յ.։ Մահմե-
դական տոմարը այդ քւականիցն է սկսւում:

ՀԵՑԵՐԱ, Յն.— Հին Յունաստանում կիսաշխարհիկ
կիմ:

ՀԵՏՄԱՆ (Գետման), Գր.— 1) Լեհաստանում պատերազմական նախարարի, ինչպէս նաև քանակի հրամանատարի տիտղոս. 2) Ռւկրայնայի կազակ գօրքերի հրամանատար :

ՀԵՐԱ, Յն.— Յոյն դիցարանութեան մէջ քոյր եւ կին Զեւսի, երկրի պատոպան մայր աստւածուհի (Համապատասխան Հռոմէական Խւնոնային կամ Հայկական Անահիտին) :

ՀԵՐԱԿԼԻՍ (Հերկուլէս), Յն.— Դիցարանական մեծագոյն հերոս եւ դիցազն, Զեւսի եւ իր սիրուհի Ալկմենայի որդի: Հերան, Զեւսի կինը, իր ամուսնու անհաւատարմութեան վրայ զայրացած՝ երկու հսկայ օձեր դրկեց՝ նորածին Հերակլէսը սպանելու, սակայն մանուկը երկուսին էլ խեղդեց: Մեծանալով՝ անմախընթաց քաջագործութիւններ գործեց, որոնցից տասներկուսը բացառիկ տեսակի:

ՀԵՐԵՑԻԿՈՍ, Յն.— Ճշմարիտ կրօնն ուրացող. աղանդաւոր. հերձւածող:

ՀԵՐՄԱՆՅՐՈԴԻԾ, Յն.— 1) Երկսեռ.— Կենդանական եւ բուսական աշխարհում արուի եւ էզի գործարաններ ումեցող տեսակներ. 2) Այն անհատ, որը թէ արական եւ թէ իգական գործարաններով օժտւած է:

ՀԵՐՄԵՍ, Յն.— Զեւսի եւ Մայեա յաւերժահարսի որդի. աստւածների սուրհանդակ, պատոպան գրականութեան, նարտասանութեան եւ զիրերի հնարիչ: Ռւկւորների եւ վանառականների հովանաւորն էր: Համապատասխան Հռոմէական Մերկուրիոսին:

ՀԵՐՈՍՏՐԱՏ, Յն.— Փառասէր քայց աննարակ արձանագործ, որն իր ընտրած նիւղին մէջ չկարողանալով հոչակ վաստակել՝ երդեհեց նվեսոսի (Յունաստան) մէջ

Դիմանա ասուածուեու հոյակապ տաճարը, որն աշխարհի լուսորդ երաւալիքներից մէկն էր համարւում, 356 թվին
։ Ա. : Հերոստրատ այդ չարիքը գործեց, ուզելով իր անանունն անմահացնել պատմութեան մէջ, սակայն ե-
ղիքիսոսի ծերակոյտն արգիլեց նրա անւան յիշատակութիւ-
ցնը : Սերունդներ անցնելուց յետոյ միայն հասկացւեց իր
լիով լինելը :

ՀԵՐԲԻԿԻՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. — Հերբիւլէսին (Հերակ-
լէսին) միայն մատչելի աշխատանք. — Խոկայ, վիրխարի
մօձեռնարկ :

ՀԵՐԲԻԿԻՆԱՆ ՍԻՒՆՆԵՐ. — Առլանտեան Ովկիանոսը
ԱՄԻՉԵՐԿՐԱԿԱՆ ծովի հետ կապող Գիրրալտար նեղուցի ե-
րգերքին վիրխարի ժայռեր, որոնք Յոյների կարծիքով
ՀՀԵՐԿԻՎԼԵԱԾ պրկել էր հեռաւոր լեռներից եւ բերել, այդ-
ուանդ էր կանգնեցրել :

ՀԵՍՊԵՐԻԴՆԵՐ, ՅԱ. — Յոյն դիցարանութեան մէջ
Ալլուլասի (Տե՛ս Ալլաս) երեք գուստրներ, չբնալ յաւեր-
ճահարաններ, որոնք Ալլասի լեռներում, հիւսիսային ԱՓ-
որիկա՝ մի դիւրական պարտէզ ունեին. ուր բուսնում
էին ոսկէ խմանքներ :

ՀԵՓԵՍՏՈՍ, Տե՛ս Վուլկան :

ՀԵՖԻՄ, Աք. — Բժիշկ :

ՀԻԴՐԱ, ՅԱ. — 1) Առասպելական նիւադ, ինը գլուխ-
ներով, որոնցից իւրաքանչիւրը երէ կորուկ' նորն էր
դրուսնում: Սպանեց Հերակլէսից: Փոխարերական իմաս-
տով՝ անվերջանալի չարիք :

ՀԻԴՐՈԹՈՐԻԱ, ՅԱ. — Զրավախութիւն. — Կատղած
ան խայրումից առաջացած վտանգաւոր հիւսնդութիւն :

ՀԻԵՐՈԴԼԻԽՆԵՐ (Երոգլիֆներ), ՅԱ. — Պատկերա-
գրեր. — Հին Եգիպտական գրութեան ձեւ, որի մէջ գա-

դափարները փոխանակ զիրերով արտայայտւելու՝ Ակար-
ներով եթ Յերկայացւած:

ՀիՄԻՆԸ, ՅԱ. — 1) Ապոլլոնի տղայ, ամուսնութեան
աստւած Յոյն դիցարանութեան մէջ. 2) Հիմինի կողմից
միացած՝ Աւանակում է ամուսնացած:

ՀիՄՆ, ՅԱ. — Օրհներգ. Աերբողական երգ. ազգային
երգ. ռազմերգ:

ՀիՊՆՈԶ, ՅԱ. — Հոգեկան դրութիւն, երբ Ենթական
արևստական ձեւով, Անրենչմամբ կամ այլ միջոցով քը-
նացւելով՝ Ենթարկում է երկրորդ անձի կամքին, եւ
արքանանալուց յետոյ, անզիտակից կերպով՝ գործում է
այն ամենը, որ երամայւած է կամ Անրենչւած իրեն՝ այդ
երկրորդ անձի կողմից:

ՀիՊՆՈԶԵԼ, ՅԱ. — Ուրիշի կամքը իրեն Ենթարկել-
ուրիշին ստիպել անելու որեւէ՞քան, անզիտակից վիճա-
կում:

ՀիՊՆՈՏԻԶՄ, ՅԱ. — Հիպնոզի բնախօսական եւ հոգե-
քանական երեւյթներն ուսումնասիրող գիտութիւն:

ՀիՊՈԴՐՈՄ, ՅԱ. — Զիարեաւներին, ըմբիւսամարտու-
թեան, գազանների ցուցադրումին, կրկէսային մեծ Անր-
կայացումներին յատկացւած խուռը ռէնք:

ՀիՊՈԹԷԶ, ՅԱ. — 1) Ենթադրութիւն, որը կարու է
ապացոյցի. 2) Ալեղծւած:

ՀիՊՊՈՊՈՏԱՄ, ՅԱ. — Աֆրիկայի գետերի մօտ ապրող
խոտակեր հսկայ, վտանգաւոր կենդանի — գետաձի:

ՀիՊՈԽՈՆԴՐԻԱ, ՅԱ. — Շայրայեղ, հիւանդու մե-
լամաղառտութիւն, մեծ մասամբ առողջութեան իրական
կամ երեւակայական խանգարման պատճառով:

ՀիՍՏԵՐԻԱ, ՅԱ. — 1) Զդային զօրաւոր յուզումներին
Ենթակայ վիճակ, ծիծաղից յանկարծակի լացի անցնող,

կամ ընդհակառակը, յանախ ուշարափուրեամբ. 2) Գրականուրեան մէջ՝ կիսախելազար իմաստով է գործածում:

ՀԻՏԻՏՆԵՐ (Հերեններ, Խիրեր).— Քրիստոնէական ըքչանից հազար հինգ հարիւրից աւելի տարիներ առաջ Փոքր Ասիայի եւ Հայաստանի նախնի ժողովուրդ, որոնք հզօր պետուրին հիմնած էին. իրենց ոյժը զգացնել տալով նոյն իսկ եզիպտոսի Փարատններին եւ Ասիայի դրացի մեծ պետուրիւններին: Հիտիտների կայսրուրեան տնկումից յետոյ Հայաստանի թնիկներն եղան Ուրարդացիներ եւ Նայիրցիններ, մինչեւ որ բուն Հայ ցեղը յաջորդեց վերջիններին, երվանդի դեկալարուրեամբ առաջին հայ պետուրինը հիմնելով հայկական բարձրաւանդակի վրայ, ուրերորդ դարի վերջերում, Ք. Ա.

ՀԻՒՄՈՐ (Խւմոր), Ան.— Անվնաս հեզնանք:

ՀՈԲՈ, Ան.— Թափառաքրջիկ:

ՀՈՀԵՆՑՈԼԵՐՆ.— Գերմանական քազազուրկ կայսերական ընտանիքի անուն, ներկայիս իշխանուրիւնից քւած:

ՀՈՄԵՐԱԿԱՆ, Յն.— Արտասովոր կերպով ուժեղ, վիրխարի, տարրերային, ինչպէս Հոմերոսի հերոսների մօտ, օրինակ՝ Հոմերական ձայն կամ ծիծաղ, որից լեռները սկսում էին դողալ ու ցնցել:

ՀՈՄՈՍԵՐԱԿՈՒԱԼԻԶՄ, Յն.— Համասեռուրիւն, համասեռականուրիւն.— Հոգեկան հիւանդուրիւն, երբ ենթական իր սեռին պատկանող անհասի հետ սեռային մըտերմուրիւն է ունենում: Արուազիտուրիւն՝ այրերի մէջ, եւ իգազիտուրիւն (Սափիզմ) կանաց մէջ:

ՀՈՄ-ՌՈՒԼ, Ան.— Տեղական, ներքին ինքնալարուրիւն.— Իրանդացինների բաղաժական ճգուտմներն արտայայտող ամուն:

ՀՈՅԲՈՒՆ, Քր.— Քիւրդ յեղափոխական կազմակերպութեան անուն, «Անկախութեան Դաշնակցութիւն» իմաստով։ Քիւրդերը Թիւրք կառավարութեան հետ ճեղքածութիւն կայերին կոտորելուց յետոյ՝ այժմ փորձում են անկախ պետութիւն ստեղծելու Հայերից գատարկւած նահանգներում։

ՀՈՒՆԵՐ (Հուններ).— Կասպից ծովի եզերքներից հուժկու եւ վայրագ մի ցեղ, որը հինգերորդ դարում հեղինեց ամբողջ Եւրոպան, վորորիկի նման ամեն ինչ բանդելով եւ գերեզմանի վերածելով։ Հունների առաջնորդը՝ Աստիլան (434 Ք. Յ.) «աշխարհի պատիմը» տիտղոսին արժանացաւ սարսափահար ազգերի կողմից։ Իր իսկ խօսքով՝ իր ձիու ոտքերով տրորւած հողի վրայ յաւիտեան խոտ չէր կարող բուսնել։

ՀՈՆՈՐԱՐ, Լտ.— Մտաւոր աշխատութեան վարձատրութիւն, օրինակ՝ գրագետի, յօդւածազրի վեարում։

ՀՈՊԻ — ՕԶԱՊԱՐ.— Ամերիկեան կարմրամորք Հոպի Հնդիկների կողմից ամեն տարի Օգոստոսին տօնուղ ցեղային աւանդական տօնակատարութիւններ, երգերով, խաղերով եւ օճերի պարով։ Վերջինը՝ բռժութաւոր (շառաչուն) քունաւոր օճերը բերանով բռնած վիճակում մի խորհրդաւոր պար է, կրօնական իմաստով։

ՀՈՐԴԱՐ, ՄՅ.— 1) Թափառական ցեղերի բնակալայր։ 2) Կիսավայրենի ցեղերի խուժան, վայրագ աւերիչ եւ աւզգակ։

ՀՈՐԻԶՈՆ, ՅՅ.— 1) Տարածութեան այն մասը, որը մատչելի է տեսողութեան։ 2) Երկնակամարի տեսանելի տարածութիւնը։ 3) Անհատի նկատմամբ մտաւոր սահմանափակ շրջան։

ՀՈՐՈՒՍ, ԵԳ.— Արեւի աստւած իին Եգիպտական դի-

ցարանուրեան մէջ, Օգիրիսի եւ Խզիսի զաւակ: Ի պատիւ Հորուսի սարքւած պաշտամութենիքն ու տօնակատարութիւնները տեղի էին ունենում Դեկտեմբերի ամսին, կենդանի պատկերով — Խզիս ախոռի մսուրի մէջ պառկած նորածին Հորուսի մօտ կանգնած դրուրեամբ: Եզիպտական դիցարանուրեան այդ աւանդավկապը կրկնած ենք տեսնում Քրիստոսի ծննդեան զրոյցի մէջ, հազարաւոր տարիներ Հորուսից յետոյ:

ՀՈՒԳԵՆՈՍՆԵՐ. Տե՛ս Բարդուղիմէոսեան Գիւեր:

ՀՈՒՄԱՆԻԶՄ. Լու.— 1) XV-XVII դարերի ընթացքում Խոալիայի մէջ սկսւած զրական-զեղարւեստական-փիլիսոփայական վերելք, որ պատմուրեան մէջ յայտնի է Վերածնուրեան Շրջան անունով (Ռենեսանս): Հումանիզմը տարածւեց Կենտրոնական եւ Արեւմտեան Եւրոպայում, նոր զաղափարների նանապարհ բանալով Կաթոլիկուրեան ժարացնող շումչից ազատազրիլ ճըգտող զանգւածների համար: Խմացական-ազատական նոր հոսանքներ ծնունդ առին Հումանիզմի ընորիիւ, որոնք կոչումն ունեցան յետազայ սերութեները աւելի տիրական նաևումներին մղելու: 2) Անհատի մէջ՝ մտաւոր-բարոյական հակումների բարձրացում՝ մարդասիրուրեան մաքուր եւ վսեմ ոզիով. 3) Լայն իմաստով՝ մարդասիրուրիւն:

Մ

ՄԱԳ, ՅՅ. — Կախարդ. իրաւագործ. ճեռնածու:

ՄԱԳԹԱՂԻՆԸ, Յտ. Ա. — 1) Աւետարանական գղջացող անառակութի — Մարիամ Մագքաղենացի. 2) ԺԲ-բդ դարում Գերմանիայում եւ Ֆրանսիայում դարձի եկած անառակութիների միաբանութիւն, որոնք աղքատների եւ եկամուների հոգատարութեամբ գրադաւած էին. 3) Ընդհանուր առումով՝ անառակութիւնից իրաժարւած եւ վայելուչ կենցաղ ոկած կին:

ՄԱԳԻՍՏՐՈՍ, Լտ. — 1) Հին Հռոմեական բարձրագոյն կառավարչի տիտղոս. 2) Միջին դարերում կրօնական վարչութեան պետ. 3) Պապի դիւտանատան պետի տիտղոս. 4) Մի քանի երկրներում զիտական բարձր աստինան, օրինակ՝ Մագիստրոս լեզուազիտութեան — հմուտ, վարպետ իմաստով :

ՄԱԳՆԱՏ, Լտ. — 1) Հռոմեարիայի եւ Լեհաստանի մէջ՝ տոհմիկ բարձր ազնւական. 2) Հռոմեարական պարլամենտի (ներկայացուցչական տան) մէջ՝ բարձր ազնւականութեան պատգամաւոր :

ՄԱԳՆԵՑԻԶՄ, Լտ. — Մագնիսականութիւն. — Մագնիսի քառղական ոյժ, որով դէպի իրենն է քառում երկարը, պողպատը եւ այլ նիւթեր: Մագնիսային երկարից ոյժը փոխանցւելով՝ մագնիսացւում են երկարն ու պողպատը, ինչպէս նաև կողմնացոյցի սլաքին հաղորդքւելով՝ վերջինը ցոյց է տալիս մէկ ծայրով հիւսիսային, միւսով հարաւային քեւեռների ուղղութիւնը, ազդը և լույլ հիւսիսային քեւեռի մագնիսական հսկայ ոյժից:

ՄԱԳՆԻՍ, Լտ. — Մետաղային համեմ, օժտւած ազդական ոյժով, որով դէպի իրենն է քառում երկարը, պողպատը կամ այլ նիւթեր:

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ, Խո.— 1) Քաշողական. 2) Փոխարեցական իմաստով՝ հրապուրիչ, դիւրող, անդիմադրելի, օրինակ՝ մազնիսական աչքեր :

ՄԱԴԱՄ, Ֆր.— «Իմ տիկին» . տիկին :

ՄԱԴԱՐՈԶԻՍ, Յն.— Թարրիչների և յօների մագերի բափելու հիւանդուրին :

ՄԱԴԱՐՈՒՆԱԶԵԼ, Ֆր.— Օրիորդ :

ՄԱԴԱՌՆԱԱ, Խո.— 1) Իմ տիկին . տիրուեի. 2) Աստածամայր. 3) Գեղանի և առաջինի կին :

ՄԱԴՐԻԳԱԱ, Սպ.— Սպանիսական քերեւ սէրերգ կամ գաւետական երգ :

ՄԱԵՍՏՐՈ, Խո.— 1) Վարպետ. 2) Ուսուցչապետ. 3) Երաժշտապետ :

ՄԱԶԴԻԱԿԱՆՈՒԹԻՒՆ (Մազդէկզմ) .— Իրանական ցեղերի — հին Պարսիկների, Բակտրիացիների, Պարքեւների և հիւսիսային Միջազետքի մէջ տիրող կրօն : Ըստ Մազդէականուրեան՝ գոյուրիւմ ունեցող բոլոր էուրինները զոնտում են երկու հակոսնեայ ոյժերի գերիշխանուրեան տակ . առաջինն է Որմիզդը (Ահուրամազդա), բարուրեան և բոլոր առաջինուրիւնների աղրիւրը, աշխարհի արարիչը, և երկրորդն է Ահրիմանը, չարիշի և խաւարի իշխանաւորը : Ահուրամազդան և Ահրիմանը մւտական պայֆարի մէջ են տիեզերքի տիրապետուրեան համար, բայց ապահովարար Ահուրամազդային է պատկանում վերջնական յաղը-անակը : Այն ժամանակ աշխարհը կը խաղաղւի, և ամեն ինչ երջանիկ ու անդորր քնոյրկ'առնէ (Տե՛ս Զրադաւականուրիւն) :

ՄԱԶՈՐԵՑՆԵՐ, Հր.— Հրեաների թաքելոնական գերուրեան ժամանակ «մեծ զիտուններ», որոնց իրենց ժամանակը տւած էին հաւելու քէ հին կտակարանի մէջ

ֆանի՞ գիր կայ, եւ իւրաքանչիւրը ֆանի՞ անզամ գործածւել է։ Հայ Մազորետները աւելի համեստ գտնւելով՝ կարողացած են հաւել թէ «Հայր-մեր»-ի մէջ ֆանի՞ այր կայ...։

ՄԱԶՈՒՏ, Թբ.— Զգուած նաւք, ֆարիւլ:

ՄԱԶՈՒՐԿԱ, Լի.— Լեհական ազգային ժմորհալի պար։

ՄԱԹԵՄԱԹԻԿԱՆ, Յն.— Հաւելական գիտութիւնների ընդհանուր անուն։

ՄԱԹԵՄԱԹԻԿՈՍ, Յն.— Մարեմարփիկայի մասնագէտ։

ՄԱԹՈՒՍԱՂԱ, Հր.— Ըստ Աստուածամչի՝ Նոյ նահապետի պապ, որը 969 տարի ապրած է։ Մարռւսաղայի պէս ծեր՝ Առանակում է ամեաւատալի տարիի ունեցող։

ՄԱԺՈՐ, Խու.— Երաժշուութեան մէջ ուժգին ճայն, հնչիւմ։

ՄԱԼԱԿԱՆ, Ռու.— «Կաքնակեր»։— Ռուս կրօնական աղանդաւորների մի նիւգաւորութիւն, Կովկասում հաստատած, որոնք Օքքոդու Ռուս և կեղեցուց եւ ցարական բանակալութիւնից վայրագ հալածանքի ենթարկվելով 1892-93-ին, զանգւածօրէն գաղքեցին Ամերիկա։ Ցրւած են Վիթիպեգ, Կանադա, Սամ Ֆրանսիսկօ եւ Լու Անջելոս՝ Քայլիֆորնիա, եւ Հիւսիսային Մեքսիկօ։ Մի ֆանի տասնեակ ընտանիք Կովկասահայ մալականներ եւս հաստատած են Լու Անջելոսում։ Գաւանաքանական պարզ եիմքերի վրայ հաստատած համայնք է։

ՌԱՍՍ, Ֆր.— 1) Ցեղ. տոհմ. շառաւիղ. 2) Մարդկային ռասա — երկրագնդի ընդհանուր քնակչութիւն, իր ցեղային բոլոր նիւդաւորութիւններով, այն է՝ Սպիտակ կամ Կովկասեան — (Երրոպական բոլոր ցեղեր, Հայեր, Վրացիներ, Պարսիկներ, Հնդիկներ եւ այլն). Դեղին ցեղ — (Զինացի, Ճափոն, եւ Ասիայի Հարաւ Արևելեան, Սիրիի եւ Անդրկասպեան երկրների ժողովուրդներ, Թաքարներ եւ Թիւրքեր), նոյնը Մոնղոլական. Երովական (Հարեւեներ, Նեգրեր եւ Աֆրիկայի բնիկ ցեղեր), Կարմրամորքներ — Ամերիկեան ցամաքների բնիկներ: 3) Կենդանիների ռասա, օրինակ՝ կատուների (առիւծ, վագր, եղագուար, լեռպարդ եւ սովորական կատու). Ճիերի ռասա — (Ճի, էտ, գերը) եւ այլն:

ՌԱՏԻԹԻԿԱՑԻԱ, Լտ.— Պետութեան կողմից հաստա-

տում մի դաշնագրութեան կամ պայմանագրութեան, որը կիրած է իր ներկայացուցչի կողմից ուրիշ պետութեան հետ:

ՌԱՅՃԱՌԻՋ, Գր.— Գերմանիայում՝ ժաղաքային վարչութիւն:

ՌԱՅՃԱՌՆԱԼԻԶՄ, Լտ.— 1) Փիլիսոփայական աշխարհայեացք, որի համաձայն որեւէ երեւոյրի նօմարիտ է՝ ուրիշն ըմբռնելու համար անհրաժեշտ է զործածել պարզ տրամարանութիւն, խուսափելով զգայնական արտադին տպաւրաւթիւններից. 2) Մերժում այն ամեն բանի, որի մէջ կայ իրավեների կամ խորհրդաւոր ոյժերի մասնակցութեան զաղափար:

ՌԱՅՃԻՌՆԱԼԻՑԱՑԻԱ, Լտ.— Նորագոյն իմաստով՝ մենական եւ զիտական միջոցներով երկրի տնտեսութիւնը բարձրացնելու սխտեմ:

ՌԵԱԲԻԼԻՑԱՑԻԱ, Լտ.— Վերականգնում.— կորցրած պատուի, ստացւածքի եւ իրաւումների վերագրաւում:

ՌԵԱԿՑԻԱ, Լտ.— 1) Յետադարձ շարժում. 2) Քաղաքական կեանքի մէջ հակառանք նոր գաղափարների դէմ. յետադիմական շարժում. ձգում պահպանելու հին ձեւերը. 3) Ոյժերի ծայրայեղ լարման եւ ոգեւորութեան յաջորդող հոգեկան եւ մտաւոր անկում. 4) Քիմիարանութեան մէջ որու նիւրի դէմ հակագդեցութիւն ուրիշ նիւրի պատճառով:

ՌԵԲՈՒՍ, Լտ.— Հանելուկ՝ քւերի, նկարների զիծերի եւ այլն ձեւով:

ՌԵԳԱԼԻԱ, Լտ.— 1) Արքայական արտաքին նօաններ, ինչպէս՝ քագ, գայիսն, քղամիդ եւ այլն:

ՌԵԳԼԱՄԵՆՏ, Լտ.— Վարչական մարմնի կողմից հըրաման. իրահանգ. ուղեցոյց:

ՌԵԳՐԵՍ, Լու. — Թեքում դէպի ետ. վերադարձ դէպի հինը. յետադիմութիւն:

ՌԵԴՄՄՅՑԻՈՆԵՐ, Ան. — Ամերիկա գաղբած օտարական, որը ուրիշի դրամով եկած էր նոր աշխարհը եւ պարտաւոր էր նաևապարհածախսը վճարելու իր աշխատավարձով:

ՌԵԴՄԻՅՑ. Թժ. — Թիւրք պահեստի զօրախումբ:

ՌԵԴՄԵՆ, Ան. — (Կարմրամորքներ — Ամերիկեան Հնդկիներ). — Ամերիկեան մեծ ցամաքը կոլումբոսի կարծիքով Հնդկաստան էր, եւ 1493-ին նոր Աշխարհից գրած իր մէկ նամակում բնիկներին կոչած է «Ինդիոս» — Հընդիկներ: Կոլումբոսի ժամանակ Ամերիկան հարիւրաւոր ցեղերով բնակեցւած էր, որոնց մեծամասնութեան հետքն անգամ չէ մնացած այսօր: «Նիւ եռք Թայմզ»-ի կարծիքով Ամերիկեան ցամաքի վրայ ապրում էին 75 միլիոնից աւելի կարմրամորքներ, երբ Եւրոպացիները առաջին անգամ յայտնեցին այս երկրում, իրք «Ժաղաքակրթութեան ջահակիրներ»: Չորս հարիւր տարւայ ընթացքում փոխանակ տասնապատկելու՝ այսօր հազիր 7,000,000 քիւ են ներկայացնում, որից 500,000-ը Մ. Նահանգներում եւ Քանադայում, իսկ մնացածը Մեքսիկօյում եւ Հարաւային Ամերիկայում: Սպանիացի աշխարհակալները — Պիգարրօ եւ Կորտէս՝ Պերուի եւ Մեքսիկօյի մէջ Լենկրէմուրեան նաևակով արեան ահաւոր բաղանիքներ սարքեցին, անպատճան կարմրամորք ցեղերն ոչնչացնելով: Այդ խեղն ժողովուրդների վրայ արշաւանքներ էին գործւում նապաստակներ սպանելու ժամանցի ձեւով: Գործւած խժդժուրիւնները, բռնաբարումները, կողոպուտը նախամարդու վայրագութեամբ՝ ամեն չափն ու սահմանն անցան: Միայն Հայիքի կղզու մէկ միլիոնից աւելի

Կարմրամորքները տասնեւինգ տարւայ ընթացքում
60,0000-ի իջան, իրէային անզրուրեամբ ամեն օր ջար-
դըւելու հետեւանքով : Քալիֆօրնիան, երբ Սպանիացի-
ներն ուժը դրին այնտեղ՝ 150,000 կարմրամորքներ ու-
նելը, որոնցից ներկայիս հազիւ 15,000 են մնացել : Քա-
նատան հարիւր տարի առաջ 700,000-ից աւելի կարմրա-
մորքներ ունելը . ներկայիս միայն 115,000 : Երազական
աւազակային հօրդաները Ամերիկան զրաւելով եւ տաս-
նեակ միլիոններով բնիկներ կուտրելով՝ աժան զնով տէրն
եղան Ամերիկեան վիրխարի ցամաքների, ազնացեղ ա-
մերիկացիների սերունդներ ստեղծելով — կարմրամորք-
ների գերեզմանների վրայ հանգիստ ու երջանիկ ապրե-
լու : — Մ. Նահանգներում, զլլաւորապէս Հարաւային եւ
Արեւմտեան նահանգներում եւ Ֆլորիդայում ներկայիս
ապրում են հազիւ 400,000 կարմրամորքներ, հարիւրաւոր
մանր ցեղերի բաժնած : Դրանք են — Զիրոքի, Իրոքիս,
Սիու (կամ Դակիոտա), Խէչի, Արապահու, Զակոն, Կա-
լապուտա, Կիտունահա, Սաստի, Ալզոնէվին եւ այլ բազ-
մարիւ նիւղաւորուրի իւններով : Խօսած բարբառները մօտ
58-60 : Կարմրամորքները բնապաւու են, ոմանք քրիս-
տոնեայ այլ եւ այլ աղանդներին փարած են : Քաղաքա-
կրպական բացառիկ վերելքի ոչ մէկ երեւոյքներով կա-
րողացած են աչքի ընկնիլ : Ցեղերից ոմանք, նոյն իսկ
Մ. Նահանգների մէջ, ապրում են նախապատմական կեն-
ցաղ, կղզիացած մեծ կենտրոններից : Հարաւային Ամե-
րիկայի կարմրամորքների դրուրիւնը ծայր աստիճան
արգահատելի է, կէս-նորտական երեւոյք ներկայացնե-
լով : — Կարմրամորքների կենցաղին մօտից ծանօթ Հայն է
Պուլսեցի Ցովիհաննէս Վարդանեան, համակրելի «Ցովիհան-
նէս ամին», հարիւրամեայ ծերունին, Սան Ֆրանսիսկօ.

Վիեննայի Միհրաբեան Վանքից, հմուտ հանքարան եւ լեզրագէտ, որի հանքային հոյակապ հաւաքածուները զարդարում են Մ. Նահանգների տասնեակ քանգարանները։ Աւելի քան քառասուն տարիներ Սիերրա Նեվադայի հանքային տեսակների հետախուզումների մէջ մասած եւ կոլորադօ Գետի անզուգական վիրխարի հովտի — Գրէնտ Քէնընի ամայի անդունդների մէջ մենաւոր քափառական։ Հայ արկածախնդիրը Գրէնդ Քէնընի Ներկրւած Անապատի (Painted Desert) Սուպպայի կոչւած Կարմրամորքների հետ մտերմանալով՝ ցեղապետ ընտրւած է նրանց կողմից եւ մի քանի տարի այդ փոքրիկ վայրենի ցեղը կառավարած։ Սուպպայները ցաւով անշատւելով իրենց այդ պատահական «զունատ» (Կարմրամորքների կողմից սպիտակամորքներին տրւած ածական) ցեղապետից՝ ձեռակերտ արձանով պատւած են նրա յիշատակը, իրենց բնավայրի հրապարակում։

ՌԵԴՎԱԼՈՒԴ, ԱՅ. — Շիկափայտ — կարմիր փայտ։ Ժողովրդական անուն Կենտրոնական Քաղիփորնիայի հընչակաւոր անտառների, 300—325 ոտք քարձութեամբ վիրխարի ծառերով, բուսական աշխարհի մէջ ամենից խուռները։ 5—7,000 տարեկան ծառեր կան Եղեմիքի անտառների մէջ, լաւ պահպանւած, մի քանի հազար տարի եւս ապրելու հաւանականութեամբ։

ՌԵԶԵՐՎ, Ֆր. — 1) Պահեստի բանակ. 2) Պահեստի որեւէ ոյժ. 3) Որեւէ պահեստ։

ՌԵԶԻԼԻՄԵ, Ֆր. — Որեւէ զրբի կամ յօդւածի համառու ամփոփում։

ՌԵԶՈՆԵՌՈՐ, Ֆր. — Խելքից փչող. երկարապատում, ձանձրացուցիչ բացարութիւններով լսողի գլուխն ուղեցնող անձ. չումեցած տրամաբանութեան ապաւինող։

ՌԵԺԻՄ, Ֆր.— 1) Պետական տիրող վարչաձեւ. 2) Որեւէ հաստատութեան մէջ տիրող կարգ ու կանոն, ընդհանուր ուղղութիւն. 3) Անհատի կենցաղի մէջ իր առողջական վիճակ. մասնաւորապէս սննդառութեան եղանակ:

ՌԵԺԻՄՆԱԼ, Ֆր.— Շրջանային. որու օրգանին վերաբերեալ:

ՌԵԺԻՄՆԱՐ, Ֆր.— Բնեմադրող. քատրոնական խումբի վարիչ. դերերը բաժնող եւ դերասաններին սպառեցնող:

ՌԵԼԱ, Ան.— Երկարուղագիծ:

ՌԵԿԱԱՄ, Լտ.— 1) Խօսքով կամ մամուլի մէջ զովեստ մի ապրանքի՝ շահադիտական նպատակով. 2) Միանձի գովեստ որու նպատակով:

ՌԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ, Լտ.— Վերաշինութիւն:

ՌԵԿՈՒԶԻՑԻՑԻԱ, Լտ.— Բանակին պէտք եղած պատրի բռնագրաւում բնակչութիւնից, վճարումով կամ անվընար:

ՌԵԿՈՒՑՈՐ, Լտ.— 1) Համալսարանի վերատեսուչ. 2) Անզլիական եկեղեցու քարոզիչ:

ՌԵԿՐՈՒՏ, Ֆր.— Նորակոչ զիմուր:

ՌԵՆԵԳԱՏ, Լտ.— 1) Դաւանափոխ. կրօնական դաւանանքից հրաժարող, մէկ ուրիշին հետեւելու համար. 2) Քաղաքական կեանքի մէջ՝ իր սկզբունքներից հրաժարող, նոր համոզումների անունով:

ՌԵՆԵՍԱՆՍ, Ֆր.— Մտաւոր-գեղարւեստական վերածնունդ տասնեւեկինգերորդ դարում, որը սկսւեց իտալիայում, ազդելով Կենտրոնական եւ Արեւմտեան Եւրոպայի գրեթէ բոլոր ժողովրդների վրայ: Ստեղծւեց վերամորոգչական մի հոսանք՝ նախ մկարչութեան, արձա-

նազործութեան եւ նարտարապետութեան մէջ : Հրապարակ ելան մեծ արւեստագէտներ, որոնք սկսեցին փորձեր անել վերակենդանացնելու հին յունական դասական արւեստները, սակայն աւելի աշխոյժ եւ կենսունակ ձեւերով : Տիրող կրօնի — Կաքոլիկութեան ննիչ մբնոլորտի մէջ, այդ արւեստագէտները ստիպւած էին մեծ չափով ենթարկելու իրենց ապրած ըրջանի պահանջներին, իրենց ստեղծագործութիւնների համար նիւթեր զատելու երկու կտակարաններից, եւ դասական կենցաղից եւ աւանդութիւններից, եւ ֆիչ անզամ մօտենալով կեանքի մեծ աղքիւրին — ժողովրդին : Վերածնունդի հարիւր տարի եւ աւելի տեւող վերելքի մէջ երեւան եկան հտալիայում մեծ արւեստագէտներ, ինչպէս նարտարապետներ՝ Բրիւնելսկօ, Ալբերտի, Բրամանտէ, Պալլադիո արձանագործներ՝ Դոմիտրելլօ, Զակորօ Դելլա Բվերչչա, Գիրերտի, Վերրոկիի, Պոլլաջուոլօ, Միքել-Անջելօ. Աըկարիչներ՝ Ռաֆայէլ, Լեօնարդօ Գը Վինչչի, Կարպակի, Ֆարրիանօ, Մասսակի, Բուտիչելլի, երկու Բելինիներ եւ այլն : Ֆրանսիան, Սպանիան եւ Հոլլանդիան եւս ենթակըւեցին հտալական ազդեցութեան, ականաւոր արւեստագէտների շարքեր տալով : Այդ արւեստագէտների գործերից շատերը ներկայիս միլիոննաւոր դալերների արժէք ունեն : — Վերածնունդի ըրջանը միաժամանակ մտաւոր խմորումների սկիզբը դրեց Եւրոպայում, ժողովրդական մեծ զանգւածների արգահատելի վիճակի վրայ ժամանակից «մարդասէր» դասակարգի ոււշադրութիւնը գրաւելով : Վասսալական (աւատական) դրութեան տակ տառապող զիւղացիութեան, ինչպէս նաեւ բաղաժնների մանր արիեստաւորների եւ գործաւորների խաւերի մէջ սկըսւեց դանդաղ, բայց նոմարելի արքնացում դարերի ժա-

բացնող քունից, աստիճանարար մտերք պատրաստելու ազգերի իրական մեծ վերածնությի համար :

ՌԵՆՈՍԻ, Ֆր.— Վարդ. պատիւ. ամուն՝ վատ կամ լաւ նշանակուրեամբ :

ՌԵՆՏԱ, Ֆր.— 1) Կալւածքներից կամ դրամագլխից ստացւած եկամուտ. 2) Պետական փոխառուրեան արձերուղը :

ՌԵՊԱՐԱՍԽՈՂՆ, Լտ.— Վճարմերի հատուցում:

ՌԵՊԵՐՏՈՒԱՐ, Ֆր.— 1) Թատրոնական տարերջանի ընթացքում ներկայացւելիք կամ ներկայացւած բատերգուրիւմների ընդհանուր ժամակ. 2) Մի դերասանի կամ դերասանուհու խաղած դերերի ընդհանուր ամրողութիւն :

ՌԵՊՏԻԼ ՖՈՆԴ (Ֆընդ).— Պետուրեան գաղտնի ծախսելիք գումար, ներքին և արտաքին մամուլը կաշառելու համար :

ՌԵՊՐԵՍԱԼԻԱ, Լտ.— 1) Թէմայու պատճառած վճասի համար փոխվրէժ՝ նոյնպէս վճառվ. 2) Մի պետուրեան կողմից հակառակորդ պետուրեան դէմ վճասակար միջոցների գործադրութիւն :

ՌԵՊՐՈԴՈՒԿՑԻԱ, Լտ.— Վերարտադրութիւն :

ՌԵՍՈՒԲՐ, Ֆր.— 1) Ապրուսի միջոց. աղրիւր. 2) Որեւէ հաստատուրեան կամ պետուրեան եկամուտի աղրիւր :

ՌԵՍԱՎՐԱՑԻԱ, Լտ.— 1) Վերականգնում. վերանորոգում. 2) Քանդած եւ աղնատած իրերն ու չէնքերը նախկին վիճակին դարձնելու աշխատանք :

ՌԵՎԱՆՇ, Ֆր.— Պատճառած վճասի փոխարէն վըրէժխնդրութիւն :

ՌԵՎԻԶԻՋԻՌՆԻԶՄ, Լտ.— Քաղաքական-տնտեսական

գիտութիւնների մէջ աջակողմեան մի հոսանք, որն ընդունելով հանդերձ Մարքսիան տեսութիւնների հիմնական տեսակէտները՝ համամիտ է «վերաբննելու» նրանց, որու ձեւափոխութիւններին ենթարկելու, ժամանակակից պահանջներին յարմարցնելու համար։ Ռեվիզիոնիստները հաւատում են քէ հնարաւոր է կապիտալիստ դասակարգի հիմք ֆազգր լեզու գոնել, տնտեսական պայֆարը խաղաղ միջոցներով լուծելու համար։

ՌԵՑԵՊՏ, Լու. — Դեղագիր։

ՌԵՑԻԴԻՎ, Լու. — 1) Նախապէս գործւած յանցանքի նման մէկ նոր յանցանքի կրկնութիւն. 2) Նախապէս ունեցած հիւանդութեան կրկնութիւն։

ՌԵՖԵՐԱՑ, Լու. — Հրապարակային տեղեկագրութիւն որեւէ հարցի ռուրջ զեկոյց։

ՌԵՖԵՐԵՆԴՈՒՄ, Լու. — Օրէնսդրութիւն համաժողովրական ժւկով։

ՌԵՖԵՐԵԲՍ, Լու. — Անդրադարձում, ցոլացում։

ՌԵՖՈՐՄ, Լու. — Բարենորոգում. վերականգնում։

ՌԵՖՈՐՄԱՑԻԱ, Լու. — ԺԶ-րդ դարում կենտրոնական եւ Արեւմտեան Եւրոպայում կրօնաբարոյագիտական իմաստով մեծ շարժում, որը ուղղւած էր պապական իշխանութեան եւ ընդհանուր առմամբ կարողիկ կղերականութեան ծայրայեղ ապականութեան դէմ։ Այդ շարժման հետեւանքը Բողոքականութիւնն եղաւ եւ Հռոմից ապստամբուղ ուրիշ յարանւանութիւնները։

ՌԵԱԼ, Լու. — Իրական. հաստատապէս գոյութիւն ունեցող. իսկական։

ՌԵԱԼԻԶՄ, Լու. — 1) Փիլիսոփայական աշխարհայեցք, որի համաձայն Աիւթական, մատչելի աշխարհը միմիայն իրական է. 2) Գրականութեան եւ գեղարվեստի

մէջ պատկերացում նիւքական, տեսանելի, օօօափելի առարկաների եւ իրողուրիւնների. 3) Ընթացիկ կեանքում՝ դրական իրողուրիւնների ըմբանում, հեռու ամեն երազկուուրիւնից եւ խորհրդապատական տևեալներից:

ՌէՅԵԱ. Լտ.— Ռէյեա Սիլվիա — Հռոմի հիմնադիրներ Ռումուլուսի եւ Ռեմուսի մայր (Տե՛ս Ռումուլուս):

ՌէՅԵԱՄՐԱԾ (Ռայխսրատ), Գր.— Աւստրիական ներկայացուցչական պալատ. պարլամենտ:

ՌԻԳՈՐԻԶՄ, Լտ.— 1) Ծայրայեղօրէն խիստ գաղափարների որդեգրում. 2) Խստակեացուրիւն:

ՌԻԳՎԵԴԱ. Սս.— Ճնդկական Բրահմինական սըրբազան չորս զրժերից — Վեդաներից առաջինը, սանսկրիտերէն լեզուվ զրւած, որը առատ լոյս է սփռում նախնի Ճնդիկների կրօնական-ընկերային կազմի վրայ:

ՌԻԹՄ, Ցն.— Երաժշտուրեան կամ տտենախօսուրեան մէջ հնչիւնների հետեւողական լեւէջ:

ՌԻՕ, Սպ.— Սպամիերէն լեզուվ՝ գետ:

ՌԻՍԿ, Ֆր.— Որու ակնկալուրեան համար վտանգը կամ կորուստը յանձն առնելու վթողականուրիւն:

ՌԻՏՈՒԻԿԱ, Ցն.— 1) Ճուտորուրիւն. նարտասամուրիւն. 2) Ճարտասամուրեան արւեստ:

ՌԻՏՈՒԱԼԱ, Լտ.— Ծիսական. կրօնական արարողուրիւնների համապատախան:

ՌԻՏՈՒԱԼ ՍՊԱՆՈՒԹԻՒՆ.— Ճակակրէայ խուժանի կարծիքով Ճրէաների կողմից փախցւած Քրիստոնեայ մանուկների գաղտնի սպանուրիւն, նրանց արիւնը գործածելու համար մեծ պահեին, Մացայի (բաղարն հացի) մէջ:

ՌԻՏՈՒԻՐՆԵԼ, Ֆր.— Երեք տողնոց տումերով բանաստեղծուրիւն, որի առաջին եւ երրորդ տողի վերջին

յանգերը ներդաշնակում են իրար, եւ առաջին տաճ երկրորդ տողը երկրորդ տաճ երկրորդ տողին:

ՌՈԲԻՆԶՈՆ ԿՐՈՒԶՈՅՑ, Յտ. Ա.— Անգլիացի վիպագիր Գանիել դը Ֆոյէի (1660-1731) գրած հոչակաւոր վեպի հերոս։ Խորինզոնը մի նաւարեկուրեան զոհ գնալով՝ յայտնւեց մի անմարդաբնակ, վայրենի կղզու վրայ, ուր կարողացաւ ոչ միայն իր գոյուրիւմը պահել, այլ եւ ժնորիիւ իր հնարամտուրեան՝ տանելի պայմաններ ստեղծեց իր համար։ Պատանեկական ընթերցանուրեան ամենից ժողովրդական գրքերից մէկն է ընդունած համաշխարհային գրականուրեան մէջ։ Հեղինակը մեռաւ բաղցից։

ՌՈՁԵՆԿՐԵՑՑԵՐՆԵՐ, Գր.— Գերմանիայում եւ Աւստրիայում 1610-ին ստեղծւած գաղտնի կազմակերպուրեան անդամներ, որոնք կրօնական եւ ֆաղաքական բարենորդչական ծրագիրներ ունեին։ Հաւատում էին չար եւ բարի ոգիներին ու կախարդուրիւններին եւ օտարոտի ծիսակատարուրիւններ ունեին։ Իրենց ուսուցմունքը պարունակող հոյակապ, արտասովոր կերպով ցեղ հրատարակուրիւններ գոյուրիւն ունեն, ոմանք մի ֆանի հարիւր դալէր արժողուրեամբ, Սողոմոնի «Խմատուրիւնների» եւ իին օրերի կախարդների գրուրիւններից ընդօրինակումներով, արտառոց նիւազների պատկերներով ու խորհրդապատական խայտանամուկ նկարներով։ Կազմակերպուրիւնը մինչեւ այժմ գոյուրիւն ունի, հարիւրաւոր նիւպատրուրիւններով մասնաւրապէս Մ. Նահանգների եւ Անգլիախօս ուրիշ երկրների մէջ։

ՌՈՄԱՆՈՎՆԵՐ, Յտ. Ա.— Ցարերի տոհմ, որը իշխեց Ռուս ժողովրդի նակատագրի վրայ 1613-ից մինչեւ 1917-ը սամարձակ բռնապետուրեամբ։

ՌՈՄԱՆՏԻԶՄ, Լտ.— Նախորդ դարի սկզբներում Յրանիայի մէջ ծաղկած գրական-գեղարւեստական նոր հոսանք : Ռոմանտիզմը մերժում էր իրապատ մտածելակերպը, իրը չոր եւ անախործ փնտռում էր գաղափարական, անրջային գեղեցկուրիւններ, հաւատալով թէ կեանիքի մէջ հնարաւոր է մարմնացնել այն ձգուում էր գերբնական, վերացական երջանկուրիւններին, արւեստի մէջ դնելով հոգեկան յափշտակուրիւնների քափանցիկ գոյներ : Ռոմանտիզմը ազդեց բոլոր ազգերի իմացական վերելքի վրայ, եւ մինչեւ վերջերս շարումակում էր մընալ տիրական դիրքի մէջ, մինչեւ որ Ռէալիստական (Իրապատական) գրական-գեղարւեստական հոսանքները սկսեցին նրա հիմքերը խախտել :

ՌՈՄԷՕ ԵՒ ԶԻՒԼԵՏ, Յտ. Ա.— Մեծազոյն քատերագիր Շէքսպիրի սրտառուչ դրամայի հերոսներ, անհունօրէն իրար սիրող մի պատասի եւ իր տարփուիին, որոնք զոհ գնացին իրենց ծնողների հակամարտուրեան եւ քմահանոյքին : Ռոմէօ եւ Զիւլէտ անունները մնում են իրք խորհրդանիւր սիրոյ համար մեռնող մի տարախտ գոյգի :

ՌՈՄՈՒԻԼՈՒՍ, Լտ.— Հռոմի հիմնադիր, Լատինական մի աւանդուրեան համաձայն, 753-715 թ. Ք. Ա. : Իր եղայր Ռեմուսի հետ տակաւին նոր ծնւած՝ անհայր վիճակում՝ ամայի մի վայրը նետւեցին, ուր մի էզ գայլ, իր ձագերը կորցրած՝ սննեց նրանց : Յետազային Ռոմուլուս սպանեց իր եղրօրը : Գայլը խորհրդանիւն եղաւ Հըռոմի պատվանուրեան :

ՌՈՅԵԱԼԻՍ. Լտ. Թբր.— Արքայական իշխանուրեան կողմնակից, համակիր :

ՌՈՍՏՐԱ, Լու. — Պատմական Հռոմի հրապարակում կառուցւած պատւանդան (Ռոստրում), որի վրայից բաղական գործիչներ, հոետորներ եւ բանաստեղծներ խօսում էին ժողովրդին:

ՌՈՒԴՅԱՆԻ (Ռուհանի — Արաքերէն՝ հոգի). — Հոգով ներքնչող. հոգով փրկող: Կրօնական մի ազանդ, որը վերջերս սկսել է հող գտնել Սիւրիայի, Յունաստանի եւ Ամերիկայի Հայերի մէջ, Եւրոպացի եւ Ամերիկացի բարոգիչների ջամփերով: Մայրայեղօրէն միակողմանի, մըտաւոր խղճալի, սահմանափակ հորիզոնի տէր անհատներ են Ռուհնիականները, իրենց մտքից տրամաքանութիւնը հալածող, գերբնական յափետակութիւնների մը-ընւեմների մէջ տարուրերող հոգեկան հիւանդներ: Մարդու կիմ' ամքողջովկին մերկանդամ մրկտում են զետերում: Ռուհնիութիւնը կրօնական հաւաքական խելագարութեան երեւոյքներից մէկն է:

ՌՈՒՍԱԼԿԱ, Ռու. — Ռուս ժողովրդական երեւակայւթեամբ ջրային չքնաղ յաւերժահարսներ, զետերի մէջ ապրող: Ռուսականների շուրջ գոյութիւն ունեցող աւանդալիպերն իրը ներքնչման աղքիւր ծառայած են ռուս բազմարիւ հեղինակների համար:

ՌՈՒԲԻԿՈՆ, Ցոտ. Ա. — Մի փոքրիկ գետ Խոտալիայի եւ Գալլիայի (պատմական Ֆրանսիայի) միջեւ, Ալպեան լեռների մօս: Ցուլիսս կեսարը Հռոմէական բանակով անցաւ Ռուբիկոն գետը, բացականչելով. — «Վիճակը նետւած է», եւ վճռական հարւածը տւեց քամամուն: Ներկայիս ասելքէ մէկը «Ռուրիկոնն անցաւ», նշանակում է շետել, քէ ակնարկւած անձը վճռական մի բայլ գործեց:

ՌՈՒՏԻՆԱ, Ֆր. — Հնաւանդ սովորութիւնների կոյր հետեւողութիւն:

Ա

ՍԱԲԷՒԶՄ, Աբ.— Պատմական Արարիայի Սարա կոչ-
ւած նահանգում տիբրող կրօնի անուն, որի պատամունքի
առարկայ էին՝ արեւը, լուսինն ու տատղերը:

ՍԱԲՈՒՑԱԺ, Ֆր.— 1) Հողարքափների (տնային կի-
սակօչիկների) պատրաստութիւն. արտադրութիւն. 2)
Գործաւորի կողմից իրեն վստահւած ապրանքի փնացում.
3) Դիտումնաւոր վնաս որեւէ անձին կամ հաստատու-
թեան:

ՍԱԳ (Սազա), Շվ.— Եւրոպայի հիւսիսային ցեղերի
(Շվեդացի, Նորվեգացի եւ այլն) հերանոսական աւան-
դավէպերի հաւաքածու, կրօնական-դիւցազներգական բո-
վանդակութեամբ:

ՍԱԴԻԶՄ, Յտ. Ա.— Սեռային խելագարութեան մէկ
տեսակ. Մարկիզ դը Սադի անունով կոչւող, որմ առաջին
անգամ նկարագրած է այդ երեւոյքը: Սադիզմին ենթա-
կայ անհատը հանոյք է անում իր վաւասութեան ա-
ռարկայ եղած անձը տանչելով եւ օտարութի, վայրագ ձե-
ւերի դիմելով: Լինում է ներգործական եւ կրաւորական:

ՍԱԴՈՒԿԵՑԻՆԵՐ, Յտ. Ա.— Բարելոնի գերութիւնից
յետոյ Հրէայ աղանդաւորներ, որոնք մերժում էին հոգու
անմահութեան գաղափարը:

ՍԱԴՐԱԶԱՄ, Պս.— Ներկայ Պարսկաստանում վար-
չապետ. նախարարապետ. երկրորդ անձը Շահից յետոյ:

ՍԱԶԱՆԴԱՐ, Պս.— Պարսկաստանում եւ Կովկասում
տեղական գործիչներով երածութախումբ:

ՍԱԼԻՆԵՐ, Լտ.— Հռոմի մէջ Մարս աստուծոյ տանարի քուրմեր, որոնք հանդիսաւոր քափօրմների մէջ բակալու փոխարէն պարում էին եւ ցատկուտում, ուզմական շարժումներով։

ՍԱԼՈՆ, Թբ.— 1) Շենդ սրահ. հիւրասենեակ. 2) Գրական-գեղարւեստական եւ հանրային գործիչների ժողովասեղ. 3) Փարիզի մէջ ամեն տարի կրկնուղ գեղարւեստական գործերի արւեստահանդէս։

ՍԱՄԱՐԻԱՅԻՆԵՐ, Ցտ. Ա. — Հրէաստանի մէջ Սամարիա բաղադի բնակիչներ, համանուն գաւառակի մէջ։ Սամարիացիները Ասորիների եւ Հրէաների խառն ամուսնութիւնից առաջացած փոքրիկ ցեղ էին, եւ ուղղափառ Հրէաների կողմից հալածւում էին իբր «աղիղծ», «անմաքուր» ժողովուրդ։

ՍԱՄՈՒՄ, Ար.— Աֆրիկայի մէջ հիւսիս-արեւմտեան հեղձուցիչ քամի։

ՍԱՄՈՒՐԱՅԻ, Ճպ.— Ճապոնական ժողովրդական իդէան է ասպետ (սամուրայի) լինել, որը կայանում է աւանդական առաքինութիւններն անաղարտ պահելու մէջ, պապերից մնացած յիշատակները յարգելով եւ հետեւելով նրանց պատուիրած բարոյագիտական հրահանգներին։

ՍԱՄՍՈՆ, Հր.— Հին Կոտակարանի մէջ՝ Փղտացիների դէմ գործած իբր բաջազործութիւններով հերոսացած հսկան, որն իբր դաւադիր սիրուհու — Դալիլայի մատնութեանը զոհ գնաց։

ՍԱՆԱՏՈՐԻՈՒՄ, Լտ.— Բուժաբան. հիւանդանոց։ Սովորաբար սանատորիումներն աշխատում են հիմնել խոռոք բաղադրից հեռու, կլիմայական ընտիր միջավայրում։

ՍԱՆԴԱԼ, Յն.— Հին Յունա-Հռոմեական կօժիկներ, մէկ կտոր փայտից, առանց կրունկների, ժապաւէնով կապւող ուժի հետ։ Ներկայիս սանդալ են կոչւում կանանց քերեւ կիսակօժիկներ, առանց կրունկների։

ՍԱՆԻՑԱՐ, Լտ.— Առողջապահական վարչութեան պաշտօնեայ, բժիշկ, օգնական եւ այլն։

ՍԱՆԻՑԱՐԱԿԱՆ, Լտ.— Առողջապահական։

ՍԱՆԿՑԻԱ, Լտ.— Վարչական որեւէ որուման հաստատում։ օրինականացում։

ՍԱՆՁԱԳԸ-ՇԵՐԻՖ, ԹՌ.— Մարզարէի (Մահմեդի) դրօւակ, որը սուլթանութեան օրերում պահուում էր Պոլայ մէջ, եւ հրապարակ էր հանուում Քրիստոնէաների դէմ կրօնական պատերազմ յայտարարելու պարագային, խուժանային կրօնական մոլեռանդութիւն ստեղծելու համար։

ՍԱՆՍԿՐԻՑԵՐԵՆ.— Հնդկաստանի գրական նոխ եւ մշակուած լեզու, ԺԵ-րորդ դարից մինչեւ Բ-Գ-րդ դարը Ք. Ա.։ Հին հնդկական բոլոր կրօնա-ֆիլիսոփայական եւ դիցազներգական հեղինակութիւնները գրւած են Սանսկրիտերէն լեզուվ։ Համեմատական լեզվագիտութեան համաձայն հայ բառամբերի մի նկատելի մասը սանսկրիտ ծագումն ունի։

ՍԱՊԵՌՈՒ, Ֆր.— Բանակի մէջ նարտարապետական եւ մեժենագիտական գօրամաս, ինչպէս՝ քերդեր եւ կամուրջներ չինող, հեռագրաբել, խրամատներ, եւ այլ աշխատանքներ կատարող եւ այլն։

ՍԱՏԵԼԼԻՏ, Յն.— 1) Արրանեակ. մի մոլորակի տուրք դարձող մի ուրիշ աւելի փոքր մոլորակ, ինչպէս լուսինը մեր երկրի համար։ Կան մոլորակներ, որոնք մէկի փոխարէն մի ժամի արրանեակներ — լուսիններ ունեն։ Մեր երկրի լոյսի եւ տաքութեան աղբիւրն եղող արեւը,

ինչպէս յայտնի է, ուրը մոլորակներ ունի, որոնք դառնում են իր ռուրջը զանազան հեռաւորուրիւնների վրայ: Արեւի ամենից մօտ մոլորակն է Մերկուրին, որը լուսին չունի. յաջորդն է Վենիս, նոյնպէս անլուսին մոլորակ, երրորդն է մեր բնակած երկիրը, մէկ լուսինով. չորրորդն է Մարս՝ երկու լուսիններով. հինգերորդն է Խոպիտեր՝ ուրը լուսիններով. վեցերորդն է Սատուրն՝ տասը լուսիններով. եօթներորդն է Ուրանուս՝ չորս լուսիններով, եւ ուրմերորդն է Նեպտուն՝ միայն մէկ լուսինով: 2) Մի զօրաւոր անձի ռուրջը սողոսկացող անձ:

ԱԱՏԻԱԳՐԱԲԱ, Հն.— Հնդկաստանում անգլիական գերիշխանութեան դէմ սկսւած ներկայ բաղաքական պայքարի մէջ գործադրուող «խաղաղ դիմադրուրիւն»:

ԱԱՏԻՐԱ, Յն.— Գրականութեան մէջ սուր հեզմանք, քննական նուրբ ոնով՝ պետութեան, հաստատութեան կամ անհատի քերութիւնների մասին:

ԱԱՏԻՐԻԱԶԻՍ, Յն.— Այր մարդու մէջ ծայրայեղ իգամոլութիւն:

ԱԱՏԻՐՆԵՐ, Յն.— Յոյն դիցարանութեան մէջ Բաքոսի (Գինաբրուէի աստուծոյ) ուղեկից կիսաստածներ, այծի ոտքերով, գլխին կոտուներ, հմուտ կերպով նւազող սրինգի վրայ: Զարանի էին, արագաւարժ, ծայրայեղ հետասէր, եւ աշխատում էին անզգոյն կիններին հրապուրել:

ԱԱՏՈՒՐՆ, Լտ.— 1) Հռոմէացինների ժամանակի աստուծ: 2) Արեգակային սիստեմի վեցերորդ մոլորակ — հեռաւորութեամբ, եւ երկրորդը — իր մեծութեամբ:

ԱԱՏՈՒՐՆԱԼԻԱ, Լտ.— Պատմական Հռոմում աշման տօնախմբութիւնների շարք, ի պատիւ Սատուրն աստուծոյ, ցոփ ու սանձարձակ ուրախութիւններով:

ԱԱՏՐԱՊ, Յն.— Նախամահմեդական՝ Պարսկաստանում անսահման լիազօրութիւն ունեցող նահանգապետ, ոսվորաքար ամխիզն կեղեցիչ եւ բռնապետ։

ԱԱՐԱԿԻՆՈՍՆԵՐ, Լտ.— Եւրոպացիմերի կողմից Արարմերին տրած անուն, միջին դարերում։

ԱԱՐԱՍՎԱՏԻ, Աս.— Հնդկական դիցարանութեան մէջ Բրահմայի կին, գետերի աստւածուի, գեղարւեստի պատուան։

ԱԱՐԲԱԶ, Պս.— Պարսիկ հետեւակ զինուոր, որ երբեմն էլ ոստիկանի պատօնն է վարում։

ԱԱՐԴՈՒՆԻԿ, Յն.— 1) Զարամտօրէն հեզնական. մադճառու. բունաւոր. 2) Սարդոնիկ ծիծաղ — հիւանդու ծիծաղ՝ մարմնի ցնցումներով։

ԱԱՐԹԵՐ, Մն.— Խ. Միութեան մէջ, Անդրկասպեան շրջանում ապրող մոնղոլական ծագումով ցեղերի ընդհանուր անուն։

ԱԱՐԿՈՒՆԱԳ, Յն.— 1) Տապանաքար. 2) Միակտոր ֆարլից դագաղ։

ԱԱՐՄԱԹԱՑԻՆԵՐ, Յտ. Ա.— Ներկայ Եւրոպական Ռուսաստանի նախնական քմակիչներ, վայրագ եւ պատերազմիկ, որոնք յանախ կովկասեան լեռնաշղթան մեղքած են, Վրաստանն ու Հայաստանն ասպատակելու։ Հայոց Տիգրան Մեծ թագաւորի եւ Պոմտացի Միհրդատ Նվպատորի բանակներին միացած, իրը վարձկան օօրքեր, մասնակցեցին նրանց պատերազմներին։ Հռոմէական լեզեռների դէմ, Կապադովկիայի մէջ։ Սարմարացիմերը Ք. Յ. երրորդ դարում ջախջախւեցին Գորական ցեղերից, եւ ապա ձուլւեցին Սլաւոնական մեծ ժողովրդի — Ռուսների հետ։

ՍԱՐԱՐԹՎԵԼՈ, Վ.Բ.— Արացերէն լեզով՝ Վրաստան:

ՍԱՖԻԶՄ, ՅԱ. Ա.՝ Կամանց մէջ համասեռական հիւանդութ հակում (ինչպէս այրերի մէջ՝ արւագիտուրիւն), իին Յունաստանի մեծագյն քանաստեղծութիւնը Սափոյի (Է-Զ դարում, Ք. Ա.) անունով, որը մեղադրուում էր այդ բերութեան մէջ:

ՍԵԱՆՍ, Ֆր.— 1) Կարն ժողով. Ախտ. 2) Գիտական փորձին յատկացւած կարն միջոց:

ՍԵԲ, ԵԳ.— Եգիպտական գլխաւոր — հայր աստւած, որից ծագումն առին բոլոր աստւածներն ու աստւածութիմերը: Իր շառաւիզմերն էին Գետ՝ երկրի աստւած, եւ Նէիտ՝ երկնիքի աստւածութիւն, որոնք իրար հետ ամուսնաթալով՝ ունեցան երկու տղայ — Սետ եւ Օգիրիս, եւ երկու աղջիկ՝ Իզիս եւ Նեֆրիս: Նեֆրիս նախապէս Օգիրիսի սիրութիւն եղաւ, մինչեւ որ Օգիրիս լինեց իրեն եւ ամուսնացաւ Իզիսի հետ: Սետը նախանձելով Օգիրիսին՝ դաւադրութեամբ սպանեց Արան, եւ մարմինը դագաղի մէջ դնելով՝ Նեղոս գետը նետեց: Իզիս գտաւ դագաղը ծովի մէջ, Սիւրիայի մօտ եւ ետ բերեց Եգիպտոս: Սետը ներա ձեռքից յափետակեց Օգիրիսի մարմինը եւ տասնեւշորս կտորի բաժնելով՝ տասնեւչորս տարրեր տեղերում քաղեց: Իզիս գտաւ կտորները, իրար միացրեց, եւ մեծն աստւած՝ Ամոն-Ռա՝ կեանք տուեց Օգիրիսի մարմինն, որ այնուհետեւ նեանակւեց անդրգերեզմանային աշխարհի դատաւոր-աստւած: Իզիս ունեցաւ Օգիրիսից մի զաւակ՝ Հորուս, որ եղաւ արեւի աստւած: Եգիպտական դիցարանութեան երրորդութիւնը կազմեցին Օգիրիս, Իզիս եւ Հորուս: Կային նաեւ ուրիշ աստւածներ եւ աստւածութիմեր՝ Հիւսիսային եւ Հարաւային Եգիպտոսում, իրարից անցատ, ինչպէս՝ Դեմքերայում՝ Հատոր, կով-աստւածու-

մի. Խնում — մարմնացած Խոյի (դոչ) ձեւով. Հերմոպա-
խում՝ Թառւը — լուսնի աստւած, կապիկի երեւյրով
մարմնացած, Ֆայում՝ ջրային Սորիկ աստւած, կոկոր-
գիլոսի երեւյրով մարմնացած. Բէխ, Երկնքի աստւա-
ծուհի. Անուրիս՝ Շնազայլի երեւյրով, Թոր, արագիլի
ձեւով մարմնացած. Վերջինը մեռեալմերի աշխարհում հո-
գիներին կռող, իբր Օգիրիսի օգնական:

ՍԵԶՈՆ, Թր.— 1) Տարւայ որու ըրջան, օրինակ՝ ա-
մառւայ սեզոն, ձմեռւայ եւայլն. 2) Որու ժամանակամի-
ջոց որեւէ բանի, օրինակ՝ նորաձեռութեան, հանոյքի,
հանքային ջրերում բժշկութեան, ներկայացումների եւ
այլն:

ՍԵԼԱՆԻ, Պա.— Հեղեղ:

ՍԵԼԵԿՑԻԱՆ (կամ Բնական Ընտրութեան Ցեսուրիմ).
ՄԵծանուն անգլիացի բնագէտ Դարվինի տեսութիւն, որի
համաձայն կենդանական եւ բուսական աշխարհում միայն
այն տեսակներն են զարգանում եւ բազմանում, որոնք
կարողանում են յարմարւել իրենց ըրջապատի պայման-
ներին բնական ընտրութեամբ:

ՍԵԼԵՆԱ, Տե՛ս Դիանա:

ՍԵԿՈՒԳՐԱՖԻԱՆ, Լտ.— Յն.— Ուռուցիկ տառերով մաս-
ճաւոր տպագրութիւն կոյրերի համար, որոնք մատների
ռափումով կարդում են գրութիւնները:

ՍԵԿՈՒԼԵԱՐԻԶԱՑԻԱՆ, Լտ.— 1) Կրօնական ազդեցու-
թիւնից ազատում՝ աշխարհական ազդեցութեան ենթար-
կուելու համար. 2) Մտաւոր-իմացական ազատագրութիւն
կրօնական-դաւանական ազդեցութիւնից, գիտութեան եւ
ֆալաքրակրութեան եետեւելու նպատակով:

ՍԵԿՎԵՍՏՐ, Լտ.— Ստացւածքի վրայ դատական արգելք, ժամանակաւոր կերպով:

ՍԵԿՏՈՐ, Լտ.— 1) Երկրաչափութեան մէջ ըրչագծի կենտրոնից դէպի ըրչագիծն երկարող երկու ուղղաձիգ գիծների միջեւ եղած տարածութիւն. 2) Ընդհանուր ամբողջութեան մէջ առանձին մաս. 3) Վարչական կամ կազմակերպական մարմնի գատ նիւղ, բաժանմունք:

ՍԵԿՏԱՆՏ, Լտ.— Աղանդաւոր:

ՍԵԿՑԻԱ, Լտ.— 1) Վարչական հաստատութեան մէջ որու մասնամիւղ. 2) Բաժանմունք. մաս:

ՍԵՄԱԿԱՆ ՑԵՂԵՐ, Յտ. Ա.— Ասորիներ, Արարներ, Հրեաներ, Միջագետքի եւ Լիքանամի մանր ցեղեր:

ՍԵՄԵՍՏՐ, Լտ.— Համալսարաններում եւ քալէջներում տարեկան դասընթացի կեսը, Սեպտեմբերից մինչև Դեկտեմբեր կամ Յունիարից մինչև Յունիսի ըրչան:

ՍԵՆԱՏ, Լտ.— 1) Պատմական Հռոմում օրէնսդրական եւ վարչական գերագոյն խորհուրդ («Ճերակոյտ»). 2) Ներկայիս բազմարիւ երկրներում օրէնսդրական գերագոյն մարմին:

ՍԵՆԱՏՈՐ, Լտ.— Սենատի անդամ:

ՍԵՆ-ԲԵՐՆԱՐ, Յտ. Ա.— Զվլիցերիայում համանուն լեռան մօտ մի կարոլիկ միաբանութեան ընտիր, խոռոր տեսակի ռումեր, որոնք Ալպեան լեռների ձիւնի եւ սառնամանիքների մէջ մոլորած ուղեւորներին գտնելու եւ օգնութիւն հասցնելու համար են մարզւած:

ՍԵՆԵԳԱԼԷԶ, Յտ. Ա.— Արեւմտեան Աֆրիկայի Սենգալ ըրչամի գիմւորմեր, Փրանսիական բանակում, վայրագ եւ անգութ: Համաշխարհային վերջին պատերազմի ժամանակ աչքի ընկան իրենց խժգժութիւններով. իրենց

սպամած գերմանացիների ժիրերն ու ականջները զրպան-ների մէջ լցրած՝ ծախում էին Փարիզի սրբառաններում, նորազգաց հայրենասէր Ֆրանսիացիներին:

ՍԵՆՏ-ԶԵՅՄՍ. Յտ. Ա.— Արքայական պատմական պալատ Անգլիայում:

ՍԵՆՏ-ԶԵՅՄՍ. Լտ.— 1) Արտասովոր յուզում. 2) Հի-ացմունիքի փորորիկ:

ՍԵՆՏ-ԶԵՅՄՍ. Լտ.— Զգայնական:

ՍԵՆՏ-ԶԵՅՄՍ. Լտ.— Փիլիսոփայական աշխարհայեացք, որի համաձայն անհատի վրայ ազդող տպաւուրիւմներ արդիւմնն են իր զգայնակամուրեան, եւ մըտածողուրիւմն ինքնին զգայնակամուրիւմն է: Սենտուալիզմի հետեւորդների համոզումով անհատի մէջ գոյուրիւմն ունեցող բոլոր ճգուռումները միմիայն մարմնական — զգայնական ինքնն ունեն եւ բնագդաբար այդ անհատը ճգուռում է նրանց գոհացում տալու, որը իր կենսական պայքարի միակ արդարացումն է:

ՍԵՆՏ-ՑԵՅՄՍ. Ֆր.— Զգայում, ռուտ յուզող, լալիկան:

ՍԵՆՏ-ՑԵՅՄՍ. Ֆր.— Նախորդ դարում զրական հոսանք, զգայուն յուզումների եւ տպաւորուրիւմների ռուտնով եւ մարդասիրական լայն բայց պարապ տըրամադրուրիւմներով, յանախ լալկամուրեան դրումով:

ՍԵՊԱՐԱՑԻԶՄ. Լտ.— 1) Պետուրիւմից անջատւելու եւ ինքնավար լինելու ճգուռում. 2) Կրօնական կամ այլ հաստատուրիւմից բաժնելու եւ որոյն կենցաղ ստեղծելու ճգուռում. անջատողակամուրիւմ:

ՍԵՊԱՐԱՑԻՑ. Լտ.— Անջատողական:

ՍԵՊԱՐԱՑՈՐ. Լտ.— 1) Ցորենը յարդից զատող մեթենայ. 2) Սերը կարից զատող զործիք:

ՍԵՊՈՒԿԻ (Սեպուկու), ձպ. — Չինացիներից ընդօրինակւած նապոնական ինքնապատժի մի ձեւ — պատոյ անձնասպանութիւն: Ենքական իր նախնիների եւ ապրող շառափակմերի պատիւը փրկելու համար՝ որոշում էր ինքնիրեն սպանել իր գործած մի ծանր յանցանեքը բաւելու նպատակով, եւ սովորաբար, իր սիրելիների հետ վերջին անգամ սեղանի նստելուց եւ ապա նրանց երաժեւտ տալուց յետոյ՝ առանձնանում էր մեռնելու համար: Ընդունած ձեւն այն էր, որ ծունկի էր զալիս մի փոքրիկ անիւի առջեւ, սուր դամակով նեղքում էր իր փորք, եւ աղիքի ծայրը գտնելով՝ փարարում էր անիւի վրայ, եւ ապա սկսում էր դարձնել այն գանդաղօրէն, մինչեւ որ ամբողջ փորոտիքը անիւի վրայ փարարէր, եւ ինքն էլ ուժապա՛ մեռնէր: Պատիւը պահանջում էր որպեսզի ոչ մէկ նիչ, ոչ մէկ հառաջանեք չարձակէր այդ ահուելի գործոցութեան ընթացքում: Ճապոնական մեծազոյն բարենորդիչն ու օրէնսդիրը՝ Խէյասուն մօտ երեք հարիւր տարի առաջ արգիլեց այդ վայրագ ինքնասպանութիւնը, բարոյապէս անարժէք յայտարարելով այն, սակայն մինչեւ ներկայ օրերն էլ գործ է դրւում, քէեւ ֆիչ անգամ, այն էլ մեղմացած ձեւերով: Ներկայ նապոնական Միկադոի հօր բաղման օրը ահազին աղմուկ հանեց Ռուս-Ճապոնական պատերազմում մեծ անուն հանած գեներալ Նոգիի ինքնասպանութիւնը, որ չուզեց բաժնուել իր միապետից: Նոգին փոխանակ իր աղիքներն անիւի վրայ փարթելու՝ սուրով նեղքեց իր փորք ամբողջ երկարութեամբ եւ աղիքները ամբողջովին դուրս բափեց եւ մեռաւ: Իր կինը յաջորդ սենեակում իր կոկորդը կտրեց: Խնդնասպանութեան նապոնական ձեւը յայտնի է նաեւ Հարակիրի ժողովրդական անւան տակ: — Եթէ հաւատանք մեր պատ-

մազիր Մովսէս Խորենացու առասպելախառն զրոյցներիմ՝ հիմ Հայեր եւս ունեցած են Հարակիրին յիւնեցնող սովորյացքներ։ Այսպէս, Արտաւէս Հայկազեան քագաւորի բարմ զերեզմանի վրայ այնքան ինքնասպանութիւններ տեղի ունեցան, որ արքայազուն Արտաւազը հօրն ուղղեց կտումբանի բառեր. — «Մինչ դու զնացիր եւ ամբողջ աշխարհը ժեզ հետ տարար, ես աւերակների վրայ ի՞նչպէս քագաւորեմ»։ Եւ հօր զայրացած ուրականը նըգովեց անրարիւտ որդուն։

ՍԵՐԵՆԱԴԻ, Խու. — 1) Յայզերգ. — Երեկոյեան երգ կամ նւազ, սովորաբար «սրտի հատորին» ուղղւած։ 2) Խտալիայում եւ մանաւանդ Սպանիայում սիրուեռ պատուհանի տակ երգւած սէրերգ՝ զիտարի ընկերակցութեամբ։

ՍԵՐՊԱՆՏԻՆ. Ֆեր. — Օճի շարժումներն ընդօրինակող հետաւետ պարի մէկ տեսակ։

ՍԼԵՄ (Ընէքը-Սէմ). — «Ամերիկայի Քեռի Սէմ» — Միացեալ Նահանգները խորհրդանուղ երեւակայան անձնաւորութիւն, որին ներդաշնակում են երկրի անւան սկզբանաւորը՝ U. S. A. (United States of America) — U. S. A. (Uncle Sam of America)։

ՍԼՅԹԻՑԻՆԵՐ, Հն. — Ժերդ դարում Նահանք անունով Հնիկի զիտնականի հետեւորդները Հիւսիսային Հնդկաստանում, որոնք կրօնա-քաղաքական մի պետութիւն կազմեցին Համայնալարական հիմների վրայ։ Նրանց համբաւութիւնը, սակայն, ոչնչացւեց Ամզլիացիների կողմից նախորդ դարի սկզբներում։

ՍԼՅՄ, Լհ. — 1) Լեհ ազնւականութեան եւ հարուստ հողատէրերի ժողով. 2) Մի քանի երկրներում ժողովրդական ներկայացուցիչների ժողով։

ՍԵՆՍԻՄՈՆԻԶՄ, Յտ. Ա.— Ընկերվարական տեսութիւն, Ֆրամսիացի կոմս Կլօդ դը Ռուվրէ Սէն Սիմոնի անունով կոչւած։ Ազատական հայեացգների տէր՝ Սէն Սիմոնը (1760—1825) ընկերային պայմանները յեղաբարձելու մտքով իր ուսումնասիրութիւնների եւ դիտողութիւնների վրայ յենւած նոր ծրագրներ առաջադրեց, որոնք ունեցան հետեւորդներ։ Իր տեսութեամբ աշխատանքի արդիւնքն պէտք է վայելին նրանք միայն, որոնք մասնակից են այդ աշխատանքին։ Օրէնսդրութիւնն ու պետութեան դեկը աշխատառութեան ձեռքը պէտք է անցնեն։ Գրիստոնէական եկեղեցին բաժին պէտք է ունենայ այդ բարենորդումների մէջ։ Սէնսիմոնիզմը քէեւ իր ժամանակ մտենրի խմբում ստեղծեց, սակայն չկարողացաւ որեւէ գործնական արդիւնք տալ։ Նա մնաց պարփակւած եւ անգործնական, նման ուրիշ երազատես (ուտոպիստ) տեսութիւններին։

ՍԻԲԱՐԻՑ, Յտ. Ա.— Սիբարիս քաղաքի բնակիչ, Հարաւային Խոտալիայում, կործանաւած 510 ք.ին Ք. Ա.։ Սիբարիսի բնակիչները հռչակւած էին իրենց արտասովոր վաֆկակենցաղութեամբ, որ առակի ձեւն առաւ, եւ Սիբարիս անունը ածականի պէս էր գործածուում։ Ոչ ոքին զարմանք չէր պատճառում, երէ Սիբարիսցի մէկը վարդի քերքիկներից պատրաստւած անկողնի մէջ մնէր։

ՍԻԲԻԼԼ, Յն.։ Հեքանոս Յոյների եւ Հռոմէացիների մեհեմական գուշակուիի։

ՍԻԴԵՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ, Յն.։ Արեւի տուրքը իր կատարած քոփչի մէջ երկրագնդի վերադարձը տարածութեան այն կտոի վրայ, որտեղից անցած է նախապէս, 365 օր, 6 ժամ, 9 րոպէ եւ 8.97 վայրկեան (մէկ տարի) յետոյ։

ՍիԶԻՑԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ, Յն.— Անօգուտ, պարապ
եւ տանջալից աշխատանք։ Յոյն դիցարանուրեան մէջ՝
կորնքացոց բազաւոր Սիզիֆի իր գործած վայրագուրիւն-
ների համար դատապարտուց դժոխվում մի հսկայ ժայռ
բարձր լեռան զլուխը բարձրացմելու տաժանեու աշխա-
տանքին, եւ ամէն անզամ երբ հասնում էր լեռան կա-
տարին՝ ժայռը զլորւում էր դէպի անդումդ, եւ Սիզիֆ
ոսիպւած էր դարձեալ վեր հանել, եւ այդպէս-յաւիտ-
եան։

ՍիԼՈՒԵՏ, Ֆր.— Դիմաստուեր. դէմքի կողքից երե-
ւացող կէս մասի նկար, ինչպէս երեւում է ստուրի մէջ։

ՍիԼՎԱՆ, Լտ.— Հռոմէական անտառների եւ կենդա-
նիների պատոպան աստւած. պատկերացւում էր մարդ-
կային մարմնով եւ այծի ոսքերով։

ՍիԼԳԵՐ, ՍիԼԳԻՒԴՆԵՐ, Յն.— Միջին դարերում եւ-
ւապական ցեղերի աւանդուրիւններով՝ օդային քեւաւոր
ոգիներ, երազներ ներքչող, մանուկների եւ ուղեւորների
պատոպան։ Երկու սեռի էակներ էին, եւ յայտնուում էին
լուսնիայ գիւերով, օդի մէջ պար բռնած, թերեւ ու զրա-
ւիչ։

ՍիԿՈՑԱՆԾ, Յն.— Մատնիչ. դաւադիր. լրտես։

ՍիՄԲԻՈԶ, Յն.— Իրար չնմանող կենդանիների եւ
բայսերի միատեղ կենցաղ, փոխադարձ օգտակարու-
թեամբ. օրինակ՝ կամ պատառուկի բռսիի տեսակներ,
որոնք ծառերի շուրջն են փաքրւում, նրանցից սնումդ
առնում, եւ փոխադարձարար պատոպանում նրանց ցուր-
տից կամ տաքից, ինչպէս նաև վնասակար միջատներից.
կամ Աֆրիկեան կոկորդիլոս, որի ատամների շուրջը հա-
ւաքւող որդերին եւ տղրուկներին ուտում են փոքրիկ
բռչումներ, կոկորդիլոսի բաց թերանի մէջ մտմելով։

ՍԻՄԵՏՐԻԱԼ, Յն.— Համաշափուրիւն, օրինակ՝ մարմնի համաշափուրիւն, երբ բոլոր մասերը զարգացած են ներդաշնակ համեմատուրեամբ :

ՍԻՄՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Յտ. Ա.— Միջին դարերում կարողիկ կղերական պատոնների հրապարակային անուրդ :

ՍԻՄՊՏՈՄ, Յն.— 1) Որեւէ ծածկած իրողուրեան արտաքին նշան. 2) Հիւանդուրեան արտաքին նշան :

ՍԻՄՎՈԼԻԶՄ, Յն.— Նախորդ դարում ծնունդ առած գրական-գեղարւեստական ուղղուրիւն՝ խորհրդապատուրիւն: Սիմվոլիզմի հետևողուրեամբ դէմքերն ու երեսյրմերը պատկերացւում են գեղարւեստական նոր եւ նուրք գոյներով, եւ փոխանակ իրական գիծերի՝ խորհրդապատական ձեւերով, ստիպելով որպէսզի ընթերցողը կամ դիտողը իր մտքի նկունուրեամբ քափանցէ արւեստագէտի ստեղծագործուրեան խորհուրդի մէջ :

ՍԻՄՎՈԼԻԿԱԼ, Յն.— Զգացմունքի կամ զաղափարների խորհրդապատական արտայայտուրիւն:

ՍԻՄՖՈՆԻԱԼ, Յն.— Բազմանդամ նւազախմբի կողմից նւագւած երաժշտական արտադրուրիւն:

ՍԻՆԱԳՈԳ, Յն.— Հրեայ-Մովսիսականների աղօքառուն. տանար:

ՍԻՆԴԻԿԱԼԻԶՄ, Յն.— Գործաւորական արհեստական միուրիւմների մի հոսանք, որը հաւատում է քենարաւոր է դասակարգային պայֆարի կննիունները լուծել խաղաղ միջոցներով, լոկ աշխատաւոր շարժերը իրար մօտ քիրելով եւ միջին նանապարհներ գտնելով՝ աշխատաւորուրիւնն ու դրամատէր դասակարգը իրար հետ հաշտեցնելու համար: Սիմդիկալիստները աշխատաւորուրիւնը հեռու են պահում քաղաքական պայֆարից, նկատե-

լով այն մի վտանգաւոր արգելք իրենց հետապնդած նը-պատակների իրազործման համար։ Հաւատում են միայն գործադուլմերի միջոցով ննչում բանեցնելուն։

ՍԻՆԵՈՐ. Սպ.— Սպանիերէն՝ պարոն. Սիմեորա՝ տի-կին. Սիմեորիտա՝ օրիորդ։

ՍԻՆԹէԶ, ՅԱ. — Տրամարանական եղանակ՝ պարզ գաղափարներից պարզ գտնելու, փոխանակ անալիզի՝ ո-րը բարդ գաղափարները տարրալուծելով՝ գտնում է պարզ գաղափարներ։

ՍԻՆՈՒ, ՅԱ. — Բարձրագոյն հոգեւոր վարչութիւն։

ՍԻՆՈՒՆԻՄ, ՅԱ. — Հումանիտ բառ։

ՍԻՆԽՐՈՆԻԶՄ, ՅԱ. — Պատմական տարրեր դէպֆերի զուգադիպուրիւն միեւնոյն ժամանակ։

ՍԻՌՆԻԶՄ, ՀՐ. — Սիրնականութիւն (Սիրն բլուրի անունով)։ Նախորդ դարի վերջերը կենտրոնական Եւ-րոպայում սկսուած եւ կարն միջոցում ամբողջ աշխարհի Հրէաների մէջ նիւղաւորութիւններ նետուած Հրէայ ազ-գային-հայրենասիրական շարժում, որը հետապնդում է աստիճանաբար Հրէայ զաղթականներ փոխադրելու Պա-դեստին, ապագայ ազգային պետութեան հիմք դնելով Յորդանամի մօտ։ Սիրնականները վերջին բարասուն տա-րիների ընթացքում մի քանի տասնեակ զաղթավայրներ հիմնեցին իրենց նախահայրերի հայրենիքում։ Արաբների եւ իրենց մէջ ծագած հակամարտութիւնը, սակայն, վեր-ջերս կանգնեցրեց Հրէայ նոր զաղթականների հոսանքը դէպի Պադեստիմէ։

ՍԻՍՄՈԳՐԱՖ. ՅԱ. — Երկրաշարժի սկիզբը, տեւողու-թիւնն ու ցնցումների ուժգնութիւնն արձանագրող Փի-զիքական գործիք։

ՍԻՍՏԵՄ, ՅԱ. — 1) Կարգ. շարք. ուղղութիւն. 2) Գաղափարների, երեւոյքների, դէպքերի կամ առարկաների կամոնաւոր գասաւորութիւն, որով հնարաւոր է նըրանց էութիւնն ու արժեքն ըմբռնել: 3) Մարմնի սիստեմ — կազմածքի տարրեր մասերի ամբողջութիւն. 4) Արեգակային կամ տարրեր աստեղախմբերի սիստեմ — կենտրոնական մեծ մոլորակ, իր ազդեցութեան ենթակայ ուրիշ աւելի փոքր մոլորակներով. 5) Պետութեան սիստեմ — կառավարական որու վարչաձեւը պատկերացնող տրեալների ամբողջութիւն:

ՍԻՎԱ, ՍԱ. — Բրահմինական Հնդիկ կրօնի մէջ երրորդութիւնը կազմող աստιածներից մէկը — չարութեան եւ աւերի մարմնացում:

ՍԻՐԵՆՆԵՐ, ՅԵ. — Ծովային յաւերժահարսներ՝ Յոյն դիցարանութեան մէջ, կանացի մարմնով եւ ձկան պռչով, որոնք անփորձ նաւորդներին դիւրում էին իրենց երգերով, եւ անդունդները տանելով՝ սպանում: Փոխարքական իմաստով՝ վտանգաւոր գեղուիներ:

ՍԻՒԶԵՐԵՆ, ՖՐ. — 1) Միջնադարեան նրոպայի աւատական ըրջանում հարուստ հողատէր (Տե՛ս Ֆէռդալիզմ). 2) Մի պետութիւն կամ միավիտ, որն իր պատպահութեան տակ է առնում մի տկար փոքր պետութեամբ:

ՍԻՒԺԵ, ՖՐ. — Գեղարւեստական կամ երաժշտական ստեղծագործութեան նիւթ, բռվանդակութիւն:

ՍԼԱԽԱԿԱՆ (Սլաւոնական ցեղեր). — Ռուսներ, Ռւկայինցիներ, Լեհեր, Զեխեր, Սերբեր, Մոնտենեգրոցիներ (Զերեագորիացիներ), Բոլգարներ, Ռուսիններ, Ռուսիններ, եւ այլն:

ՍԼՈԳԱՆ, ԱՅ. — Յանկերգ. նշանաբան. մարտակոչ:

ՍԽԵՄԱ, ՅԱ. — Յատակագիծ. արտաքին երեւոյք մի բանի, մի զաղափարի, որի վրայ պիտի կառուցը համապատասխան էութեամբ ամբողջուրիւնը:

ՍԽԵՄԱ.ՏԻԶՄ, ՅԱ. — Մտածելակերպ, որը հիմնած է որու, ձեւաւրուած զաղափարների վրայ:

ՍԽՈՂԱՍՏԻԿԱ, ՅԱ. — Միջին դարերում ծագումն առած փիլիսոփայական դպրոց, որի նպատակն էր հաւտեցնել գիտուրիւնը աստածարամուրեան հետ, մանաւանդ կարողիկուրիւնն ու պապականուրիւնը գիտական հիմերի վրայ հաստատած ձեւացնել: Դատարկարամուրիւններից զատ ոչ մեկ ուրիշ արժանիք չունեցաւ, եւ ծաղրելի եղաւ նոյն խոկ ժամանակակիցների կողմից: Մխոլաստիկ անձը հոմանիւ է խմաստակի, անհիմն տւեալ-մերով նոռումարանողի:

ՍԿԱՊՑԻ, ՌԱ. — Ռուս աղանդաւորներ, որոնք յանցանք են համարում «Ադամայ մեղքը» զործել, եւ այդ պատճեռով ամուսնանալուց յետոյ հազիւ մի ժամի տարի «մեղքը» զործելով՝ անդամահատում են այր եւ կնոջ մարմնի ծննդական մասերը, սեռային զգացումը սպանելու համար: Նախայեղափոխական ըրջանում խիստ հալածանքի ենքարկւեցին կառավարութեան կողմից, եւ մեծ քւով Ռումանիա զաղքեցին: Այդ աղանդը շատ ին ծագում ունի, եւ ենքադրուում է քեւ Մաքեոս առաքեալի կողմից հիմնած է:

ՍԿԵՊ (ՍՔԵՓ), ԱՅ. — 1) Գործադուլը խանգարող: 2) Իր պատկանած դասակարգին դաւանանող:

ՍԿԵՊՑԻԿ, ՅԱ. — Թերահաւատ. միայն տեսածին հաւատացող. ամեն բանի վրայ կասկածով նայող, ժանի որ անհերքելի փաստեր չունի ձեռքում:

ՍԿԵՊՏԻՑԻԶՄ, Յն.— Փիլիսոփայական մտածելակերպ. քէ գոյուրիւն չունի մի նույարտուրիւն, որն անհերքելի կերպով հիմնաւոր լինի:

ՍԿԻՒԹՎԱՑԻՆԵՐ, Յտ. Ա.— Ներկայ Սիրիրի Արեւմտեան մասում եւ Եւրոպական Ռուսաստանի Արեւելեան եւ Հիւսիսային շրջաններում ապրող նախնի կիսավայրենի, քափառական եւ վայրաց ցեղեր, որոնք վերջը ճուկւցին մի նոր ժողովրդի — Սարմաքացիների մէջ: Սկիւթացիները մի ժամի անզամ նեղքեցին Կովկասեան լեռները եւ ասպատակեցին Վրաստանն ու Հայաստանը:

ՍԿՈՂԻՌՁԻՍ, Յն.— Ողնաշարի հիւանդուրիւն, երբ ծուռում է, աղեղնաձեւ երեւոյք առնելով:

ՍԿՈՏԼԱՆԴ ԵԱՐԴ, Ան.— Լոնդոնի ոստիկանական բաժանմունք, հոչակած իր զադունի ոստիկանական «ամենատես» պատօնիկուրեամբ:

ՍԿՈՏՈՎՈԴ, Ռու.— Անասնապահ:

ՍԿՈՒՊՉԻՆԱ, Ար.— Սերբիայի (Խւզո-Սլովակիայի) Անրկայացուցչական պալատ:

ՍՆՈԲ, Ան.— Սնամէջ, անարժէք անձ, որն աշխատում է կարեւոր մէկը ճեւանալ:

ՍՈԴԻՌՄԱԿԱՆ, Յտ. Ա.— Արւագէտ. Տե՛ս Գոմոր:

ՍՈԼԱՐԻՈՒՄ, Լտ.— Բացօքեայ բուժարան, արեւի նառագայթներով հիւանդներին դարմանելու համար:

ՍՈԼԻԴԱՐԻԶՄ, Լտ.— Հաստատուն վիճակ. համերաշնուրիւն. միուրիւն. գաղափարական գործակցութիւն:

ՍՈԼԻՏԵՐ, Ֆր.— 1) Ստամոքսի որդ. երբեմն մինչեւ ժամ ուտք երկարուրեամբ, որը մարդու եւ կինդանիների մէջ է առաջանում: Դիւրուրեամբ կարելի է ազատել նրամից յատուկ դեղերով:

ՍՈԿՈԼ (Սլաւական լեզումներով՝ բազէ). — Մարմնամարզական միուրիւններ Բոհեմիայում եւ Սերբիայում, հայրենասիրական մքնուրտի մէջ դաստիարակւող :

ՍՈՄԵԼԻ. — Վրացերէն՝ Հայ :

ՍՈՄԵԼԻ. — Վրացերէն՝ Հայաստան :

ՍՈՄԵԼԻ. — Լու. — Լուսնոտուրիւն. Խոզեկան հիւանդուրեան մէկ տեսակ, երբ ենթական քնած վիճակում պտտում է, խօսում, տանիքների վրայ ելնում, մանաւանդ լուսնիայ գիշերները :

ՍՈՎԱՏ (Սոնատա), Խու. — Երաժշտական ստեղծագործուրիւն, երեք կամ չորս տարրեր կտորներից կազմած, սակայն ներքին որու ներդաշնակուրեամբ : Սոնատի մէջ մտնում են՝ մէկ allegro (գւարթ), մէկ adagio (ծանր) կամ andante (միջակ), մէկ finale (վերջանւագ), եւ երրեմն մէկ menuet (պարերդ) կամ scherzo (թևեւանւագ) :

ՍՈՊՐԱՆՈ, Խու. — Երգեցողուրեան մէջ՝ կանացի ամենաբարձր ձայն :

ՍՈՎԵՏ, Ռու. — 1) Ռուսերէն՝ խորհուրդ. խորհրդակցիու տեղ. խորհրդարան. 2) Խորհրդակցական վարչուրիւն. խորհրդային պատօնմէուրիւն: — Խորհրդային Միուրեան մէջ Սովետ, Սովետական անուններն ընդհանրացւումն են պատօնական բնոյր կրող բոլոր վարչական մարմինների եւ հաստատուրիւնների, առանց աստիճանների կամ դասաւորուրեան խտրուրեան: Այսպէս՝ գիւղի սովիետ — որու գիւղի բնակիչների խորհուրդ. գիւղացիական սովիետ — մի քանի գիւղերի, կամ ամբողջ գաւառի, նահանգի, անջատ հանրապետուրեան եւ կամ Միուրեան բոլոր բաղկացուցիչ մասերի համագիւղացիական խորհուրդ :

ՍՏԱՆԴԱՐԴ, ԱՅ. — 1) Հիմնաչափ. փորձաչափ. օրինական չափ երկարութեան, ծանրութեան եւ այլն. 2) Դրօսակ:

ՍՏԱՆԴԱՐԴԱԿ, ՌԱ. — Կազակների գիւղ. աւան:

ՍՏԱՆՍ, ԽԱ. — Բանաստեղծութիւն 3-12 տողից, ազատ չափով գրւած, իւրաքանչիւր տողը ամբողջացած մի գաղափար պարունակող:

ՍՏԱՏՈՒՏ, ԼՄ. — Հիմնական օրէնք. կանոն:

ՍՏԱՑԻՈՆԱՐ, ԼՄ. — Կայուն. մնայուն. հաստատուն:

ՍՏԵՆՈԽՐՈՄԻԱ, ՅԱ. — Բազմագոյն տպագրութիւն:

ՍՏԵՏՈՍԿՈՊ, ՅԱ. — Բժշկական ձայնական գործիք՝ հիւմանդի սրտի բարախումն ու բուժերի վիճակը հասկանալու համար:

ՍՏԵԹԻԼԻՉԱՑԻԱ, ՖԲ. — 1) Քիմիաբանութեան մէջ վիճասակար կամ քունաւոր նիւթերն անվճառ դարձնելու ձեւ. 2) Ներքինիացում. կենդանիների կամ մարդկանց ծննդական կարողութեան ոչնչացում: Ամերիկեան մի քաղաքի նահանգներում գոյութիւն ունի օրէնք, որը բոյլատրում է այլասերւած ոնքազործների ներքինիացում, օրինակ՝ փոքրահասակների բանարարութեան, արւագիտութեան եւ սեռային անթեական հակումների համար:

ՍՏԻԳՄԱՏ, ՅԱ. — 1) Հին ազգերի մէջ գոյութիւն ունեցող սովորութիւն՝ ստրուկների մարմնը տաք երկարով դրումնելու, իբր նւանց նրանց ստրկութեան. 2) Ռուս բռնապետ ցարերի օրով՝ Սիրիր աքսորող տաժանակիր աւխատանքի դատապարտւած կալանաւորների նակատը ժիկացրած **Կ** տառով դադելու սովորոյք, որը նւանակում էր «կատորժմիկ» — տաժանակիր. 3) Ստիգմատի յատուկ ձեւ, տատույով (**Տե՛ս Տատույ**), իբր ստրկութեան նւան՝ գործադրւեց տասնեակ հազարաւոր հայ կի-

ների եւ աղջիկների վրայ Արարների եւ Աֆրիկայի Բեդուինների կողմից, քրքահայ բնակչութեան տեղահանուրեան եւ ոչնչացման արխւնու օրերում՝ մեծ պատերազմի ընթացքում եւ Խզմիրի ջարդից յետոյ, Քեմալական բանակների կողմից։

ՍՏԻԼԵՏ, Խու. — Խոսական դառնյն։

ՍՏԻԼԻՍՏ, Յն. — Ոնարան. ոնագէտ. — ընտիր, մըշակւած ոնով զրոյ հեղինակ։

ՍՏԻԽԻԱ, Յն. — 1) Տարր. — Հիմ Ցոյների համոզումով նիւրական աշխարհը կազմող նախնական տարրեր — ջուր, հող, օդ եւ կրակ. 2) Բնուրեան անգիտակից ոյժերի ամբողջուրին. 3) Անհատի ընդհանուր ըրջապատ։

ՍՏԻՄՈՒԼ, Լու. — Ներքին դիդապատճառ։

ՍՏԻՐԱԾ, Յն. — Անդրզերեզմանային աշխարհի սահմանի վրայ մի գետ, Ցոյն դիցարանուրեան մէջ, որի եզերքի մօտ նաւակար Քարոն սպասում էր նորեկ մեռելների ուրականներին, Երանց իր նաւակով միւս աշխարհը փոխադրեու։ Նոյնը՝ Ավերոն։

ՍՏՈՒԿ, Յն. — Ձենոն յոյն փիլիսոփայի (ծնւած 490-ին Ք. Ա.) հետեւող, որը սովորեցնում էր թէ կեանքի գերազոյն նպատակն է աշխատանք եւ առաքինուրիւն. սէր եւ զոհարերուրին ընկերոջ համար. տոկումուրիւն, փորձառուրեան օրերում. պաղարիւնուրիւն՝ տառապանքի մէջ. Ժիշով զոհացում եւ խուսափում կենսական խարուսիկ վայելքներից։ Ձենոնը իր առակերտներին դասաւանդում էր մի սիմազարդ զափրի մէջ — (յունարէն՝ սոյշեա), եւ այդ պատմառով իր ուսուցմունքը Ստօիկեան կոչուեց։

ՍՏՈՒԹԻԶՄ, Յն. — Ստօիկուրիւն. ստօիկեան կենցաղ, ստօիկեան աշխարհայեացքի հետեւղուրիւն։

ՍՈՒԲԻԵԿՏ, Լու.— 1) Անձ. անհատ. 2) Գործօն ոյժը յայտնաբերող. Անբգործական անհատականութիւն, հակառակ օրիենտիվի (օրժեկտիվ), որը կրաւորական, առարկայական ենթակայութիւնն է. 3) Խօսակցութեան կամ գրականութեան մէջ՝ անարգական ածական մէկ անձի, որի անունն արժանի չեն գտնում տալու, զրեք է նման հայկական ձեւերին.— «յայտնի արարածը», «մի ինչ որ ոչնչութիւն» եւ այլն:

ՍՈՒԲԻԵԿՏԻՎԻԴՅՄ, Լու.— 1) Անհատականութիւն. իրերի եւ երեւոյթների ժննութեան եղանակ՝ անհատական դիտողութեան եւ տպաւորութիւնների հիման վրայ. 2) Ճաշակի, ըմբռնումների եւ գործելակերպի ինժնուրոյնութիւն որու անհատի մէջ. 3) Փիլիսոփայական մտածելակերպ, որի համաձայն ընդհանուր նւյարտութիւնները պէտք է ներդաշնակեն անհատի անձնական տեսակէտներին՝ տևալ հարցի ուրաք:

ՍՈՒԲՈՐԴԻՆԱՑԻԱԼ, Լու.— Հնագանդութիւն պատոսի մէջ մեծաւարին կամ հրամանատարին. Ենթակայութիւն:

ՍՈՒԲԻՄԻԴԻԱԼ, Լու.— Նիւթական օժանդակութիւն:

ՍՈՒԴՐԱԸ, Հն.— Բրահմինական Հնդիկների ամենից ստոր կաստան (դասակարգը), ծայրայեղ քւառ, արհամարիւած եւ մնուած:

ՍՈՒԻԹՀԱՐԹ, Ան.— Սիրահար. սիրուիի:

ՍՈՒՄԵՐԱԿԱՆ ԼԵԶՈՒ, Յու. Ա.— 4,000 տարի Գ. Ա. Միջագետում գործածող լեզու, որը մինչեւ տասներորդ դարը, Գ. Ա. տիրող լեզուն եղաւ: Վերջերս, Զապունա անունով մի քաղաքի աւերակներից հնախոյզները դուրս հանեցին ազիւսների վրայ վեցլեզուվ մի մեծարծէք բառարան՝ Հին-Սեմական, Սումերական, Միքանական, Հիտիտների, Եգիպտացիների եւ Քաղդիացիների

(Բարելոնի) լեզուներով : Աշխարհի հմագոյն գործն է իր տեսակին մէջ :

ՍՈՒՎԵՐԵՆԻՏԵՏ, Ֆր.— 1) Գերիշխանութիւն .— պետութեան գլուխը կամցնած անձի կամ բուն կառավարութեան բացառիկ իշխանական իրաւունքներ . 2) Վասսալ պետութեան վրայ տիրող ուրիշ պետութեան կամ միավետի ունեցած զերիշխանական լիազօրութիւն . 3) Մի կառավարութեան անկախ գործունեութիւն իր սահմանների մէջ :

ՍՈՒԻՏԵՆԵՌ, Ֆր.— Վատահամբաւ մի կմոջ կամ անուականոցի հովանաւոր, դրամական վարձատրութեան փոխարէն :

ՍՈՒԻՏՏԻ, Սա .— Հնդկաստանում Քալի աստւածունու պատամունքի անունով մեռած ամուսնու դիակի հետ ողջ կմոջ այրում :

ՍՈՒԻՑԻԶՄ, Ար .— Հնդկաստանի Մահմեդականների մէջ ծագումն առած կրօնական աղանդ, որի հետեւորդները հաւատում են թէ տիեզերական բոլոր էուրիւնները մէկ աղբիւրից ծագած են, թէ մարդը աստւածութեան մէկ մասնիկն է, եւ իր երկրաւոր զոյուրթիւնից յետոյ դարձեալ պիտի վերադառնայ նախնական աղբիւրին — ձուլւելու աստւածութեան մէջ :

ՍՈՒԻՑԼԵՌ, Ֆր.— Ներկայացման ընթացքում դերասաններին իրենց դերերը յիւեցնող անձ — յոււարար :

ՍՈՒԻՑՐԱՃԻՍՏ, Ֆր.— Կամանց իրաւահաւասարութեան համար պայքարող կին :

ՍՊԱԶՄԱ, Յն .— Մկանային կծկում մարմնի մէջ, ցնցումներով :

ՍՈՒՑԵՍՑՈՒԹԻՒՆ, Յն .— Պատմական Յունաստանում կեղծ-տրամարանական մի եղանակ, երեւոյրներն ու

դէպքերը ներկայացնելու դրական կամ բացասական իմաստով, նայած վայրկեանի պահանջին։ Բառախաղութիւնները, նախադասուրիւնների նարպիկ, խորամանկ եւ մանւածապատ դասաւորութիւնը սովիետական արևստի միջոցներ էին։ Ներկայիս սովիետ ասելով հասկացւում է մի անձ, որն իր անձնական շահի անունով պատրաստ է փաստերը խեղարիւրելու, ամեն գումաւորումների դիմելով եւ կեղծելով։

ՍՊԱՐՏԱ, Յտ. Ա. — Հին Յունաստանի Լակոնիա գաւառում հռչակաւոր քաղաք, իիմնւած մօտ 1000 տարի Փ. Ա.։ Սպարտացինները անւանի եղած էին իրենց պետական եւ ընթացիկ կենցաղի մէջ պարզութեամբ, զաված, խոտարարոյ քնոյթով եւ քաջարիութեամբ։ Սպարտական ապրելակերպ — պարզ, զաված կեանք։ Սպարտական քաջութիւն — ինքնամոռաց, անձնելոր քաջութիւն։ Սպարտական խօսակցութիւն — կարճ, սեղմւած քառերով միտքն արտայայտելու ձեւ, յայտնի Լակոնական ոն անունով (Լակոնիա զաւառի անունով)։ Օրինակ՝ Փիլիպոս Մակեդոնացու սպառնալիքին, որ Սպարտան անձնատուր լինելու իրեն, երեւ ոչ ինքը զէնքի ոյժով պիտի զրաւելոր քաղաքը եւ հիմնայատակ կործանելոր՝ սպարտական ծերակոյտը պատասխանեց մէկ քառ — «Երեւ» — (Երեւ կարողանաս զրաւել)։

ՍՊԱՐՏԱԿՈՒՄ, Յտ. Ա. — Հին աշխարհի ամենից անւանի յեղափոխականն ու ստրուկների ազատագրական շարժման առաջնորդ։ Ծնունդով Թրակէացի (Յունաստան), երիտասարդ տարիքի մէջ մի խումք ըմբուստների գուլխն անցաւ, Հռոմէական ասպատակ լեզենականների դէմ կուտելու, որոնք աւերում էին իր ծննդալայրը եւ խժդժութիւններ գործում անպատճան բնակչութեան վը-

րայ : Սպարտակուս կարողացաւ մի առ ժամանակ յաջող ընդհարումներ ունենալ Հռոմէացիների դեմ, մինչեւ որ ծուղակի մէջ ընկնելով՝ բանեց եւ գերութեան ծախւեց : Կապուա (Խոտալիա) տարւելով՝ իր հուժկու եւ քաջառողջ երիտասարդ՝ սուսերամարտիկների (Տե՛ս Գլադիատոր) դպրոցը դրկւեց, ուր մարզւեց կրկեսային կուի համար : Զգալով որ իր վախճանն ուրիշ քան չէր, քան խող-խողուել խուժանի ժամանցի համար՝ ուրիշ տասնեակ հազարաւոր իրեն վիճակակից սուսերամարտիկների նման՝ յաջողեցաւ իր շուրջը հաւաքելու եօր-անասուն սուսերամարտիկներ, եւ դպրոց-բանտից վախչելով՝ ապաստանեց վեզուվ երարուխի ծերպերում : Իր վախուստի լուրը տարածւեց ամբողջ Խոտալիայում, եւ տասնեակ հազարաւոր ամեն կարգի եւ ամեն ազգերի ու ցեղերի ստրուկներ՝ սկսեցին խոյս տալ իրենց տէրերի մօտից եւ համախմբւել Սպարտակուսի շուրջ : Կապուայից իր դեմ դրկւած մի գօրամաս զինաքափ անելով՝ ետ նամքեց : Այնուհետեւ կլողիուսի երամանատարուրեամբ Հռոմէական մէկ ուրիշ գօրամաս, 3000 զինուրներից՝ ջախջախւեց : Կարճ միջոցում Սպարտակուսի երամանի տակ յայտնւեց աւելի քան 100,000 ստրուկների մի քազմութիւն՝ տգէտ, շարած, անօրի, անկարգապահ եւ իրար լեզու չհասկացող : Գերմարդկային ջամեներով լեզունների վերածեց այդ քազմութիւնը, կողոպտւած քաղաքներից զէնի եւ ուտելիք հայրայրելով նրանց : Քաղաքները իրար ետեւից սկսեցին ընկնել նրա գրոհին առջեւ եւ ամբողջ հարաւային Խոտալիան ապստամբ ստրուկներին ենթարկւեց : Սպարտակուս սակայն շատ լաւ էր հասկանում իր դրութիւնը. նա զիւէր, որ խելագարութիւն էր յուսալ քէ հնարաւոր էր շարունակել պայքարը աշխարհի մեծագոյն զինուրական

պետութեան դէմ։ Նա փորձեց համոզելու իր բանակի հը-
րամանատարներին՝ նեղքելու Խտալիան ամբողջ երկարու-
թեամբ եւ Ալպիան լեռներն անցմելով՝ ցրւելու գերինե-
րին, իրենց ծննդավայրները։ Սակայն քերեւ յաղքա-
նակներից եւ կողոպստներից յղքացած գերիները մեր-
ժեցին նրա առաջարկը, պահանջելով ուղղակի Հռոմի վը-
րայ արքաւել։ Սպարտակուս ընկերած սրտով մնաց Վե-
գուլի մօտ, սակայն մերժեց Հռոմի վրայ արքաւելու
պահանջը, այդ տկար եւ մասամբ միայն զիմեած խաժա-
մուժով։ Գրեք երկու տարի (72-71) կարողացաւ
Հռոմէական վիքխարի ոյժերը իրար ետեւից ջախջախել,
մինչեւ որ իր դէմ դրկւեց մեծանուն գօրավար Մ. Լի-
ցիմիուս Կրասսոս։ Սպարտակուս պաշարւելով՝ ապաս-
տանեց Ռեգիում կոչւած փոքրիկ քերակղզու վրայ, եւ
տեսնելով որ իր անկումն անխուսափելի էր՝ յուսահատ
գրոհով նեղքեց Հռոմէական տարքերն եւ լեռները մտնե-
լով՝ դիմեց արքեւելք։ Իր ծրագիրն էր Բրինդիզիում հաս-
նել, Անդրխատիքի խտալական նաւահանգիստը, գրաւել
այնտեղ խարսխած նաւերը եւ անցմել դիմացի եզերքները,
Բալկանները մտնելու եւ այնտեղ իր ոյժերը ցրւելու հա-
մար։ Բրինդիզիում չհասած՝ լուր առաւ քէ Խաչակաւոր
գօրավար Լուկուլոս՝ Հայոց Տիգրան Մեծ Թագաւորի
դէմ յաղքական արքաւից վերադարձած՝ իր Լեգէոններով
այդ նաւահանգիստն ելած էր։ Սպարտակուս նահանջեց,
եւ իրեն հետապնդող կրասսոսից պաշարւելով՝ Սերվիլի
մօտ՝ յուսահատ նակատամարտի մէջ սպանւեց եւ իր բա-
նակը ամբողջովին ոչնչացւեց, 71-ին, Ք. Ա.։ Սպար-
տակուսի անունը պատմութեան մէջ մնում է իր նիկրա-
կան խորհրդանիւը բոլոր ազատատենչ տարբերի համար։
Խտալիան իր եօթը միլիոն բնակչութեամբ ահաւոր տան-

չարամն եղած էր բան միլիոն սորուկների համար, եւ Սպարտակեան յեղափոխութիւնը Հռոմի վայրագ բռնապետուքեան դէմ մի բողոքի ցոյց եղաւ, քէեւ անյաջող եւ աղետալի, հարիւր հազարաւոր ըմբռատ զերիների համար, որոնք երկրի մէջ, մէկ ծայրից միւսը, անխնայ կոտորւեցին։ Անհատապէս բարձր նկարազրի տէր, զինուրական հագւաղդէպ կարողութիւններով եւ անհումապէս նիբրւած իր հետապնդած ազատազրական շարժման։ Սպարտակուս միւս կենդամի պիտի մնայ ազգերի յիշողուրեան մէջ, իոզ չէ քէ վաճառուղ մամուլն ու քերեւ ձեռքի պատմարամները ջանան մրտելու նրա դէմքը, զող եւ աւազակ նրան ներկայացնելով։— Սպարտակուսի անունով կոչում էր մեր օրերի Գերման Համայնավարների մը մասը, որոնք ներկայիս ձուլւած են Գերման Համայնավարական կուսակցութեան մէջ։

ՍՊԱՐՏԱՑԻՆԵՐ, Յտ. Ա.— Պատմական Յունաստանում Սպարտա հանրապետուքեան բաղաբացիներ, յայտնի եղած իրենց խստակեաց, պարզ եւ բաշարի նկարազրով։

ՍՊԵԿՈՒԼԵԱՆՏ, Լտ.— 1) Առեւտրական շահարեր գործառնութիւններով զրադւող անձ. 2) Ապրանքների եւ արժեքների առուծախով զրադւող, որի շահը հիմնած է նրանց գինների վերելքի եւ անկման վրայ. 3) Արգիլած առեւտրով զրադւող։

ՍՊԵԿՏՐ, Լտ.— 1) Երեւոյք. տեսողական ձեւ, կերպարան. 2) Ճառագայք. 3) Արեգակային նառագայքների գումաւոր պատկերացում, լոյսի տարրալուծմամբ։

ՍՊԵՏԿՐՈՍԿՈՊ, Լտ.— Ճառագայք-ալոյժ։ Ֆիզիքական գործիք լոյսի նառագայքները տարրալուծելու հա-

մար :— Արեւի լոյսն եօրը գոյներից բաղկացած է, որոնք միանալով կազմում են այն լոյսը, որով ըջապատած ենք : Արեւի նառագայթները տարրալուծում են ծխածածանի մէջ, ներկայացնելով այն գոյները, որոնք արձակւած են արեւից իր նառագայթների միջոցով : Սպեկտրոսկոպի օգնութեամբ հնարաւոր եղած է մանրագննին տարրալուծելու արեւի եւ ուրիշ մոլորակների նառագայթները, երեւան համելով նրանց զանգւածը կազմող այլեւայլ համեմատական չափով : Լոյսի տարրալուծման այդ եղանակը կոչւում է սպեկտրալ անալիզ — նառագայթային տարրալուծում :

ՍՊԵՐՄԱՏՈԶՈՒԹ, Յն .— Կենդանական սերմի մէջ կենսաւնակ մասնիկ, քեղմնաւորութիւն առաջացնող :

ՍՊԵՑԻՖԻԿ, Լտ .— Ցատուկ . ինքնայտուկ . առանձնայտուկ . մասնակի, օրինակ՝ քոքախտի սպեցիֆիկ միկրոք . սպեցիֆիկ տափութիւն եւ այլն :

ՍՊԻՇԱԿ ԳԵՐՈՒԹԻՒՆ .— Տե՛ս Պրաստիտուցիա :

ՍՊԻՐԻՏԻԶՄ, Լտ .— Հոգեհարցութիւն . հոգեխօսութիւն .— փորձնական զիտութիւն, որի համապատասխան է յարաբերութիւն հաստատել մեռած անձերի հոգիների հետ, տեսմել նրանց մարմնացած կամ երեային երեւոյթով, խօսել նրանց հետ, հարցումներ տալ եւ պատասխաններ ստանալ : Այդ քանի համար անհրաժեշտ է երրորդ անձի (մեդիումի) միջնորդութիւնը, որոնց հետ մեռածների ուրականները հանոյնով հաղորդակցութեան մէջ են մտնում, անդրզերեզմանային գոյութեան նորութիւնները յայտնելով :— Զնայած Սպիրիտիզմի ռուրջ գրւած հազարաւոր գրքերին՝ զիտականօրէն նշուրած ոչինչ չկայ նրա մէջ :

ՍՊԻՐԻՑՈՒԱԼԻԶՄ, Լտ.— Հոգեպատութիւն.— Փիլսոփայական մտածելակերպ, որի համաձայն բնուրեան մէջ նիւրական առարկաներն ու երեւոյրները միայն պարզ միջոցներն են հոգեկան արտայայտութիւնների համար։ Նիւրական աշխարհը հոգեկան աշխարհի արտաքին պատկերացումն է միայն։

ՍՊՈԼԻԱՑԻԱ, Լտ.— 1) Ուրիշի ստացւածքի յափեսուակուրթիւն։ 2) Գրական բանագողութիւն։

ՍՊՈՐԱ, Յն.— Բուսական բջիջներ, որոնք առաջացնում են բոյսների յատուկ տեսակներ, որոնք ոչ ծաղիկ ունեն եւ ոչ սերմ, օրինակ՝ սումկ։

ՍՊՈՐԱԿԴԻԿ, Յն.— Ուրոյն անջատ։

ՍՊՈՐԾ, Ան.— Ժամանցի եւ առողջապահական խաղերի տեսակներ, ինչպէս՝ մարմնամարզ, ըմբիւսամարտ, կոփամարտ, զնդակախաղ, ձիարշաւ, լողալու մրցում, վազելու եւ ցատկելու խաղեր եւ այլն։

ՍՏԱԲԻԼԻԶԱՑԻԱ, Լտ.— 1) Կայունութիւն։ հաստատում դրութիւն։ 2) Բնական վիճակից ևելւած մի բան կրկին բնական վիճակի դարձնելու գործողութիւն։

ՍՏԱԴԻԱ, Յն.— 1) Որեւէ երեւոյրի զարգացման ըրջանի մէջ՝ զատ միջոց, աստիճան, փուլ։ 2) Հին Յունական հեռաւորութեան չափ, — 125 ժայլ։

ՍՏԱԴԻՈՒՄ, Յն. Լտ.— Կրկէսային կամ մարմնամարզական խաղերին յատկացւած վայր, էկն։

ՍՏԱԺ, Ֆր.— Որեւէ նպատակի համար կատարած նախապատրաստական աշխատանքի համար պէտք եղած ժամանակամիջոց։

ՍՏԱԼԱԿՑԻԿ, Յն.— Ստորերկեայ բնական անձաւներ, յանախ վիրխարի մեծութիւններով, բիւրեղային օտարութիւն և բարակարումներով։ Երբեմն հարիւրաւոր ոտք

Խորութեամբ՝ այդ անձաներն ունենում են ստորերկրեայ լիներ, կոյր ճուկերի եւ գորտերի տեսակներով, հետեւանք այն բանի, որ լոյսը յաւիտենապէս անմատչելի եղած է իրենց:

ՍՏՐԿՈՒԹԻՒՆ (Գերութիւն, նորտութիւն).— Անցեալ.— Գրեթէ բոլոր հին ազգերը պատերազմական գերիներին ենթարկում էին ստրկական վիճակին, աւելի օգտակար նկատելով բռնի աշխատանքով շահագործել նըրանց, քան կոտորել: Թափառական ցեղերը ժամանակաւրապէս օգտւելով գերիների աշխատանքով՝ տեղափոխութեան ժամանակ ոչնչացնում էին նրանց: Ծեր, հիւանդ եւ տկար կազմ ունեցող գերիներին կոտորելը սովորական երեւոյք էր նախնական ցեղերի մէջ: Հրէաստան.— Հրէաները օտար եւ հրէայ գերիներ պահելու սովորոյք ունեին: Իր պարտով չկնառող Հրէան պարտաւէրին անհատապէս գերի էր դառնում իր ընտանիքի միւս անդամները: Որեւէ գումարի համար պարտաւէրին գերի եղած Հրէան եօթը տարուց յետոյ ազատ էր արձակուում: Ստրկութեան ըրջանում տէրը կարող էր ծեծել նրան, բայց այդ վիճակից ազատ էին մնում իր ընտանիքի միւս անդամները: Որեւէ գումարի համար պարտաւէրին գերի եղած Հրէան եօթը տարուց յետոյ ազատ էր արձակուում: Ստրկութեան ըրջանում տէրը կարող էր ծեծել նրան, բայց սպանելու իրաւունք չունէր: Օտարածին գերին, սակայն, իր կեանքով ենթակայ էր իր Հրէայ տիրոջ կամայականութեան: Եզիատոս.— Հին Եզիպտոսում գերիների դրութիւնը վատթարագոյն երեւոյք ունէր: Ծանր աշխատանքների համար գործածելով՝ անխնայ կոտորում էին չնչին պատմաներով: Բուրգերի ժիմութեան համար գործ էին ածւում հարիւր հազարաւոր գերիներ, որոնց տառապանքը սոսկալի էր: Յունաստան.— Հին Յունական համապետութիւններից Սպարտան մասնաւորաբար հռչակւած էր գերիների անտանելի դրութեամբ: Սպարտական Հե-

լուր (գերին) ամեն կերպ ենքակայ էր իր տիրոջ ժմահանոյ ժին, որը կարող էր նրան սպանել, առանց որեւէ պատասխանատուուրեան։ Թեսալիայի գերիները (Պենեստաններ) մասամբ պատպանուած էին օրէնսդրական մի շարք կարգերով։ Յոյն բանատեղծների եւ փիլիսոփաների մէկ մասը հաւա աչով էին նայում գերբուրեան վրայ։ Արիստոտելէս կարծում էր որ մարդկանց մէկ մասը բնուրեան կողմից դատապարտուած էր սոսոր վիճակին եւ գերբուրինից աւելի լաւ բախտին արժանի չէր։ Պատոնը դէմ էր, որպէսզի Յոյները սորկուրեան մատնէին, բայց հակառակ չէր որպէսզի «բարբարոսները» (օտարները) Յոյներին գերի դառնային։ Ստոյիկեան փիլիսոփայուրեան հետեւորդները հակառակ էին սորկուրեան, ընդունելով, թէ մէկ անհատը իրաւումք չունի իշխելու ուրիշ անհատի կամքի կամ կեանքի վրայ։ Ընդհանուր առումով իին Յունաստանի բոլոր ականաւոր դէմքերը պահանջում էին աւելի մեղմ, մարդասէր վերաբերում գերիների հետ, եւ նրանց ազդեցուրեամբ հետզհետէ մը-շակւցին օրէնքներ, որոնք զգալիօրէն թերեւացրին զերիների դրուրիւնն ամբողջ Յունաստանում։ Ստրկուրիւնը ինքնարեարար անհետացաւ, փոխարինելով նոր դը-րուրեամբ — ձարտուրեամբ։ Հելու, Պենեստա եւ Բիւ-զանդինի (յետազային՝ Կ. Պոլիս) Բիրինիացի կոչող գերիների սերունդները՝ փոխանակ բռնի աշխատանքի մկնելու, իրաւումք ստացան կապալով հողեր վարձելու եւ մշակելու, սովորաբար բերքի երկու երրորդը կամ ե-րեք ժառորդը տիրոջ եւ մնացածը մշակողին յանձնելու պայմանով։ Ստրկուրիւնը յարատեւեց Բիւզանդինի կայսերական շրջանում, մի շարք կայսրների հրովարտակներով օրինականացւելով։ Քրիստոնէուրիւնը մուտք

գործելով Յոյների մէջ՝ նշանաբանն ընտրեց «կայսրինը կայսեր տուր, եւ Աստծունը՝ Աստծուն», եւ երբէք չփորձեց զերացնելու այդ չարիքը, գոհանալով «Եղբայրական» վերաբերումի ֆարոզչութեամբ ստրուկների հետ։ Յունական Ուկեդարի ըրջանում (Ե-րդ եւ Դ-րդ դարում, Ք. Ա.) արգիլած էր զերիների վանառք երկրից դուրս, ինչպէս նաեւ օրէնքի դէմ էր որպէսզի մէկ զերին իր ընտանիքից անջատւէր։ Միայն Ատտիկայի նահանգը իր 130,000 բնակչութեան դէմ 400,000 զերիներ ունէր, իսկ Յունական միւս ըրջանները երեք անգամ աւելի։ Եւ տարերինակ է որ Քրիստոնեայ Յոյն կայսրներից ումանի փոխանակ եին դրութիւնը մեղմացնելու՝ աւելի վայրագ վիճակ ստեղծեցին նւանած երկրներից Յունաստան հաւող պատերազմական զերիների համար։ Հռոմ.—Հռոմէական օրէնքով ամեն մարդ ազատ էր ծննում, սակայն պատերազմական գերին ենթակայ էր ստրկութեան ծախւելու։ Աշխարհակալական պատերազմների հետեւանքով նւանած երկրներից միլիոնաւոր երկսեռ անձեր ծախւում էին հրապարակով։ Հռոմէացիները Յունաստանը ընկնելով՝ Խարիւր հազարաւոր անձեր գերութեան ծախւեցին։ Հայստան եւս շարունակ տուժում էր Հռոմէական լեզենների արքաւանների ժամանակ եւ հայ զերիներով հեղեղւեց ամբողջ Խոսլիան, Ք. Ա. առաջին դարից սկսած։ Յունական Եպիրոս նահանգի նւանմամբ, կայսրութեան առաջին ըրջանում՝ 150,000 բնակչուներ զերութեան ծախւեցին, Էմիլիուս Պավլուսի հրամանով։ Աքվա Սեւստայի նակատամարտից յետոյ 90,000 Տեւտոններ եւ 60,000 Կիմբրեր (նախնի Գերման ցեղեր) ծախւեցին։ Յուլիոս Կեսարը 63,000 Գոլեր (նախնի Ֆրանսիացիներ) անուրդով ծախւեց։ Հռոմէական պետութեան մէջ, Խոսլիա-

յում՝ Ալեքսանդր Սեվերոսի օրով (208–235 թ. Յ.) ամեն մէկ ազատ բնակչի դէմ երեք ստարածին ստրուկներ կային. իսկ կավդիուսի հրամանով կատարւած վիթակագրուրեամբ 20,832,000 ստրուկներ: Գերիների մեծ ապրատամբուրիւմներ եղան, առաջին անգամ Սիցիլիայում, 133-ին թ. Ա. Խվնուսի դեկավարուրեամբ, որը շատ դրժարուրեամբ ննււեց: Երկրորդ ապստամբուրիւմը Թրիփոյի եւ Արենիոյի դեկավարուրեամբ, եւ նոյն միջոցին Սպարտակուսի (Տե՛ս Սպարտակուս) ապստամբուրիւմը, որը ննււեց Սերվիլի պատերազմով:— Հայաստան.— Նախնի Հայերը ստրուկներ պահելու սովորուրիւն չունեին, բայց զիւղացիուրիւնը ապրում էր նորտական կենցաղ. նախարարական սիստեմը ուրիշ բան չէր, քան աւատականուրիւն (Տե՛ս Ֆէռդալիզմ): Դժբախտաբար որուտեալներ չունենք հայ նորտական դրուրիւնը պարզ ձեւով ներկայացնելու համար: Հայ աշխարհակալ միապետները նւաճնած երկրներից պատերազմական գերիներ բերելով Հայաստան՝ ցրում էին երկրի զանազան մասերում: Տիգրան Մեծ երկու անգամ հրէական մեծ բազմուրիւններ բերեց Վան, Տարոս (Մոււ) եւ Տիգրանակերտ: Վերջինը — մայրաքաղաքը՝ կառուցեց յոյն գերի վարպետներով եւ գործաւորներով:— Ընդհանուր վիճակ.— Գերիները զատում էին իրենց յատկանիւնների եւ կարողուրիւնների համեմատ եւ յարմար գործերի մէջ գըրւում: Գեղանի կիները ծախւում էին հարներ լինելու համար եւ կամ անառականուններում իրենց մարմնի վանառով զբաղւելու, իրենց տէրերի օգտին: Նաւերի վըրայ՝ թիավարները ողբայրած էին նստած տեղը. տան պահապանը նոյնպէս ողբայրում էր դրան մօտ: Հռոմէացիները ծեր եւ գործին անկարող ստրուկներին կամ սպա-

նում էին, կամ տանում Տիրեր զետի մի փոքրիկ ամայի կղզի, սովամահ լինելու համար։ Առեւտրական գործերի մէջ աշխատող զերիները ստանում էին փոքրիկ աշխատավարձ *peculium*, որը խնայելով՝ կարող էր փրկազիմ լինել, զերութիւնից ազատագրւելու համար։ Օգոստոս հեթանոս կայսրը մի շարք օրենքներով աւելի մարդասէր յայտնւեց, քան չորս հինգ դար յետոյ քրիստոնեայ կայսրները։ Կոստանդին կայսրը արտօնեց աղքատ ծնողներին իրենց զաւակները ծախելու։ Ցուստինիանոս կայսրը իր հոչակաւոր սահմանադրութեամբ (529 թ. 3.) նիկրագործեց ստրկութիւնը։ Թէ Հռոմում եւ թէ Միջնադարեան Եւրոպայի զանազան մասերում զերիները կարող էին ազատագրւել, եթէ որու փրկազին վճարէին իրենց տէրերին։ Փրկազինի չափը տէրը պէտք է որուէր։ Քրիստոնէութեան ըրջանում Կենտրոնական Եւրոպայում սովորութիւն եղաւ եկեղեցիներում զանձանակ պտտցնելու՝ զերիների փրկազինի անունով, որը սակայն խղճակի միջոց էր, համատարած մի չարին արմատախիլ անելու համար։ Միջին դարերում ընդհանուր Եւրոպան նորտական դրութիւն որդեգրեց։ Խողագուրկ զիւղացիութիւնը կապալով մշակում էր ազնւականութեան եւ հարուստ կալւածատէրերի հողերը, կիսաքաղց ֆարս տալով իր գոյութիւնը։ Քաղաքներում ազատանած արհեստաւոր դասակարգի վիճակը նոյնպէս արգահատելի էր։ Ճարտական սիստեմը լայն կերպով օրինականացւած էր նաեւ Թիւրքական բռնապետութեան ըրջանում։ Խողագուրկ Հայ զիւղացիութիւնը գործում էր Քիւրտ եւ Թիւրք բէկերի եւ աղաների համար, ամեն կերպ ենթակայ նրանց կամայականութեան։ Գարեգին Եպիսկոպոս Սրբանձատեանցի վկայութեամբ մինչեւ 1830-1840 թւականները ոյժի մէջ

էր մնում Թիւրքական Հայաստանի շատ տեղերում մի անարդ սովորոյք, որով ամեն հայ աղջկայ կուտուրեան իրաւունքը պատկանում էր հողատէր Թիւրք կամ Քիւրդ աղային. հարսանիքին նախօրեակին հարսը պիտի յանձնելու նրան եւ «երջանիկ» փեսան յաջորդ օրը միայն կարող էր իր ամուսնական իրաւունքների մէջ մտնել: Այդ ձեւը ծանօթ էր նաեւ Եւրոպական աւատականուրեան օրերում, “*Jus primae noctis*”— առաջին գիշերւայ իրաւունքը անունով: Ռուսական կայսրուրեան մէջ, ազնւական եւ կալւածատէր (Պամեչչիկ) դասակարգը նոյն իրաւունքով լայնօրէն օգտուում էր սանձարձակ լրբուրեամբ: Ֆրանսիական Մեծ Եղափոխուրինը հոչակեց մարդ անհատի ազատուրինը. նորտական դրուրինը վերջ գտաւ. ամբողջ Եւրոպայում գիւղացիուրինն ազատագրւելով. գէրանիւանապէս՝ հողազուրի, ծայրայեղ քւառ եւ չքառորդամուրինը մի համայնտառարած տեսարան պարզեց: «Ազատ» մարդիկ, որոնք ոչինչ չունեին այդ ազատուրինը վայելելու:— Ռուսական լայնածաւալ տափաստանների վրայ սփուած բազմամիլիոն գիւղացինուրինն Եւրոպայի նորտերի ազատագրուրինից յետոյ տակաւին տասնեակ տարիներ մի արգահատելի վիճակ ունեցաւ, մինչեւ որ 1861 թ. Փետրվար 19-ի կայսերական հրովարտակով Ալեքսանդր Բ-ի կողմից ազատագրւեց, եւ 21.625.609 նորտեր գէր անւանապէս «ազատ» հոչակւեցին:— Նեզրերի Գերուրին.— Ամերիկայի գիւտը մէկ կողմից Եւրոպայի աւելցուկ բնակչուրինների համար նոր եւ հարուստ զաղթավայրներ հաստատելու պատեհուրին ստեղծեց, սակայն միւս կողմից ահաւոր պատուհաս եղաւ երկու մեծ ցեղերի համար. Ամերիկեան Կարմանորդները ամենից զաղանային անզրուրեամբ տաս-

նեակ միլիոններով կոտորւեցին աշխարհակալ սպիտակամորքներից, եւ միլիոնաւոր սեւամորքներ — նեզրեր՝ իրենց ծննդավայրից յափէտակւելով՝ Նոր Աշխարհը բափւեցին, ընչափաղց Եւրոպացիներին զոհ դառնալու համար։ Նեզրերի որսորդութեան օրջանը հանդիսացաւ Աֆրիկայի արեւմտեան եզերքը, Վօլտա գետից մինչեւ Նիզեր գետի քերանը։ — Նեզրերի գերութեան առաջին ռահվիրան եղաւ Պորտուգալացի Անրամ Գոնսավլէս, իշխան Հենրի Շովագնացի սպաններից մէկը։ 1442-ին մի փոքրիկ նաւատորմիզով Աֆրիկայի արեւմտեան եզերքներում հետախուզումներ կատարած ժամանակ՝ Գոնսավլէս մի քանի Մավրեր բռնեց եւ իր հետ տարաւ։ Իշխանը երամայեց նրան եւ տանել գերիներին եւ ազատ արձակել։ Գոնսավլէս այդ Մավրերն իրենց ծննդավայրը տարաւ, բայց փոխանակ ազատ արձակելու, տասը Նեզրերի փոխանակեց, միաժամանակ բաւականաչափ ոսկի աւագ ստանալով։ Նեզրերին Սպանիա տարաւ եւ լաւ զնով ծախսեց։ Իր ընկերներն ոգեւորւեցին, ինչպէս նաեւ բազմարիւ արկածախընդիրներ, որոնք նաւեր պատրաստելով՝ սկսեցին արշաւամքներ գործել Աֆրիկայի անպատճան եզերաբնակների վրայ եւ բռնելով Սպանիա եւ Պորտուգալիա տանելու ծախսել։ Ստեղծւեց կանոնաւոր գերեվանառութիւն։ Աֆրիկայի եզերքներում բերդեր եւ կայաններ հաստատւեցին, ուր համախմբում էին «ապրանքը» եւ այնուեւեւեւ արտահանում։ Կոլումբոսը Հայիոի հանդիպելով՝ իր նաւերի վրայ ումեցած կարիքեան սեւամորք գերիները անասունների հետ փոխանակեց։ Նոր Աշխարհում Սպանիացիները սկսեցին կարմրամորք հնդիկներին որսալ, ստրկական նպատակներով։ Կոլումբոս 1494-ին 500 կարմրամորք գերիներին ազատ արձակեց, որոնք նախապէս

սահմանած էին Սպանիա դրկելու համար : Հայիտիք նահանգապետ Նիկոլա դէ Օվանդօ 1502-ին Սպանիայից քրիստոնեայ նեզրեր քերեց, համեմում աշխատեցնելու : 1510-ին Ֆերդինանդ բազաւորը իրամայեց նեզրերի խումբեր տանել Հայիտիք, համերի համար : Կարուս բազաւորը արտօնութիւն տւեց տարեկան 4000 նեզրեր տանելու Հայիտիք, կիւրա եւ Պորտո-Ռիկո : Առաջին Անգլիացին էր Սըր Ջան Հավկիմս, բարեպատ քրիստոնեայ որը 1620-ին Գլիմեայից Հոլանդական մէկ նաւով նեզրերի մի խումբ քերեց Հիւսիսային Ամերիկա, եւ Զէյմատառնի մէջ ծախսեց Վիրչիմիա նահանգի ծխախոտի ազարկատութերին նախապէս աղօրելով : Այդ առեւտուրը շարունակւեց սաստկացող բափով : 1790-ին Վիրչիմիա նահանգն արդէն 200,000 սեւամորք գերիներ ունէր : Գերեվաճառութեան ամենամեծ ընկերութիւնն եղաւ Աֆրիկեան ընկերութիւն կոչւածը, որը 1680-ից մինչեւ 1700 բարկանը 140,000 նեզրեր քերեց Ամերիկա . ուրիշ ընկերութիւնները նոյն ըրչանում 160,000 նեզրեր : Անգլիապատկան Զամայկա կղզում 1700-ից մինչեւ 1786 բարկանը 610,000 նեզրեր քերւեցին : Անգլիապատկան Ամերիկեան զաղութները հաւաքարար 1680-1786 բարկաններում 2,130,000 գերիներով հարստացան : 192 Անգլիական նաևեր զբաղւած էին Աֆրիկայից Ամերիկա ստրուկներ փոխադրելով : Աֆրիկայում 1791-ին գոյութիւն ունէին Եւրոպացիների գերիներ որալու 40 կայաններ, որոնց մէջ Անգլիական՝ 14 կայան, նոյն բարկանին 38,000 գերի արտահանող, 3 Ֆրանսիական կայան՝ 20,000 գերիներով, 15 Հոլանդական՝ 4000 գերիներով, 4 Պորտուգալական՝ 10,000 գերիներով, 4 Դանիական՝ 2000 գերիներով, գումար՝ 74,000 գերիներ, մէկ տարւայ մէջ : Ֆրանսիական

Ան Գոմինգյում 1791-ին կային 480,000 սեւամորք ստրուկներ, 30,000 սպիտակամորքների դիմաց։ Կիւրայում 1843-ին 436,000 սեւ գերիներ, 1867-ին 605,461։ Սիացեալ Նահանգներում 1800-ին 839,041 նեզր գերիներ կային, 1860-ին 3,953,760։ Գերեվանառութեան մէջ շահաբաժններ ունեին անգլիական միապետներ եւ քաջմարիւ լօրդեր։ Գերեվանառութեան դէմ ժողովուրդների խիդնը սակայն ընդվզումի ենք-արկւեց։ Մեծ Յեղափոխուրիւնից յետոյ, 1794-ի Փետրվար 4-ին Ֆրանսիան ոչընչացրեց ստրկուրիւնն իր զաղուրներում։ Այդ քւականից շատ առաջ գերութեան դէմ զօրաւոր շարժում արդէն սկսւած էր Մ. Նահանգների մի քանի շրջաններում։ Քվակէր աղանդաւորները Պենսիլվանիայում յատուկ մարմին ստեղծեցին 1696-ին, գերութեան դէմ կուելու։ 1754-ին ընդհանուր կոչ ուղղեցին ժողովրդին նոյն իւմասով, իսկ 1776-ին եկեղեցուց արտաքսել սկսեցին գերիներ պահող իրենց անդամներին։ Անգլիայի Քվակէրներ եւս շարժւեցին 1783-ին, գերութեան դէմ սկսւած պայքարին մասնակցելով։ Լորդ Մանսֆիլդ դրանից առաջ, արդէն մտքերի վրայ ազդեցուրիւն ձգած էր Սումերսետ անունով մէկ նեզրի աղմկարար դատավարութեամբ, 1772-ի Յունիս 22-ին։ Սումերսետ իր տիրոջ կողմից Անգլիա բերւած էր իբր գերի, բայց դատաւորը՝ Մանսֆիլդ՝ ազատ արձակեց նրան, յայտարարելով որ մէկ գերին Անգլիայ հողի վրայ ոտք դնելով՝ ազատ է դառնում։ Անգլիայում 1787-ին յատուկ ընկերութիւն հիմնւեց գերութեան դէմ պայքարելու։ Շարժման գլուխն անցան ականաւոր քաղաքական դէմքեր՝ Թ. Կլարկսոն, Գրէյնվիլ Շարպ, մեծանուն Վիլբերֆորս, Զ. Մակոլեյ եւ ուրիշներ։ 1808-ի Մարտ 1-ի օրէնքով Անգլիան արգիլեց գերե-

վաճառուրիւնը իր զաղուրներում, իսկ 1833-ի Օգոստոս
28-ի օրէնքով ազատ արձակւեցին բոլոր զերիները: Նե-
րանց տէրերին կառավարուրիւնը վնարեց 20,000,000
տմզլիական ոսկի. «Վնասների» համար:— Միացեալ Նա-
հանգներում զերուրեան դէմ զօրաւոր շարժում սկսւց
երկրի առաջադէմ տարրերի կողմից: Շարժման մեծ ռահ-
վիրաների մէջ էին Բենժամին Լուիզի (1789-1839), Վ.
Լոյդ Գարրիսոն (1805-1879), Էլիա Լովչոյ (1802-1837),
Զան Բրուոն, այդ դատի համար կախազանի վրայ նա-
հասակւած 1859-ին: Ականաւոր մտաւորականներ, բա-
նաստեղծներ, վիպագիրներ բողոքի ձայն բարձրացրին
Սեւերի ազատազրուրեան համար: Տիկին Հերրիէտ Բի-
չեր Ստոր իր զողորիկ «Քենի Թումասի Տնակը» վեպով
փորորիկ ստեղծեց հասարակուրեան լայն խաւերում: Արրահամ Լինքլինի նախազահ ընտրւելը պատերազմի ազ-
դանաւանն եղաւ: Հարաւային Նահանգները, որոնք Նեգ-
րիրի զերուրեան որչեր էին՝ զէնֆի դիմեցին, իին դրու-
րիւնը պաւուպաններ համար: Քաղաքային արիւսահեղ
պատերազմը վերջացաւ Ապրիլ 9-ին 1865 թ. Ապառա-
տուխի յաղթանակով. Հիւսիսային Նահանգների կողմից,
սակայն օրինաւորապէս զերուրիւնը վերջացած էր յայ-
տարարւած դրանից առաջ. Կոնգրէսի որոշումով:— Գե-
րիների վաճառքը բաղակային պատերազմից առաջ, 1808-
ին արդէն արգիլւած էր Մ. Նահանգներում, բայց զերի-
ները մնացին զերի. իրենց տէրերի ձեռքում, մինչեւ
1865-ը: Եւրոպական պետուրիւններից Պորտուգալիան
արգիլեց վաճառքը 1815-ին. Սպանիան 1817-ին. Բրազիլ՝
1830-ին: 1842-ից ծովային պետուրիւնները յատուկ նա-
ւասորմիղներ սկսեցին պահել Աֆրիկայի եզերներում,
ծովահեններին հալածելու համար: Գերեվաճառուրիւնը

գաղտնի շարումակաց մինչեւ անցեալ դարի սկիզբները։ Գերիններով բարձւած նաւերը երէ բանեէին՝ զերինները ազատ էին արձակուում, բայց նաւերը ընկդմուում էին, իրենց պատօննեաների հետ։ Գերիններով բարձւած նաւերը յանախ ծովն էին քափում իրենց «ապրանքը» հետապրութան դէպքում, յանցանի հետքերը անհետացնելու համար։ Գերութիւնից ազատազրւած նեզրերը, սակայն, մի բացառիկ երջանկութեան չտիրացան։ Թււառ, տգէտ, ապրուստի եւ օրեւանի տարրական միջոցներից գուրք, նրանք մնացին դարձեալ զերի, տնտեսական պայժարի մէջ՝ ողորմելի վարձկանների դերում։ Գերութիւնը շարունակուում է մինչեւ այժմ, աշխարհի այլեւայլ մասերում։ Բելժիքական Կոնգոյում Լէոպոլդ Բ. Թագաւորի կամքով նա օրէնի մէջ մնաց մինչեւ 1894-95-ը։ Ռուսները կենտրոնական Ասիան գրաւելով, 1882-ին Բուխարայում եւ Խիվայում ազատազրեցին 40,000 զերիններին։ Ներկայիս հաւուում են զանազան երկրներում մօտ 4-5 միլիոն զերիններ — Արարիայի Հեջասում, Պորտուգալիան Անգոլայում, Մոզամբիկում եւ Հարեւիստանում (Երևանիա)։ Այդ վերջին երկրում հաւուում են երկու միլիոնից աւելի գերիններ, քէեւ այդ երկրի քրազաւորների քազաւորից կառավարութիւնը ժընեվի Ազգերի Լիգայի հակագերական դաշնագրութիւնը ստորագրած է։ Մեր ազնիւ ցեղի մէջ եւս ունենում ենք երբեմն զարտուլած տիպեր... այսպէս։ Հարեւիստանի Հայերի մէջ կամ մի քանի հարներ եւ զերիններ պահող երջանիկներ։ Նրանցից մէկը, իր հարնից երեք զաւակների տէր՝ մէկ օր էլ որուելով հայ աղջկայ հետ ամուսնանալ՝ ազատ է արձակուում իր քիչամորք սիրուեռն, հինգ ոսկի տալով իրեն, իսկ զաւակներին ծախում, մէկի համար ստանալով երկու

ոչխար, միւսի համար մէկ եռք, իսկ երրորդի համար մի իւու քուռակ: Եւ այնուհետեւ, խաչով-տէրտէրով՝ ժրիստոնէական ծէսով ամուսնանում հայ օրիորդի հետ: — Գերութեան ատրոււանի վրայ անփոխարիմելի կորուստներ տւեց մեր ժողովուրդը՝ էնվէր-Թալէադական տեղահանուրեան եւ Քէմալական հօրդաների աւերմերի հետեւանեով: Հայ զերիներ, մանաւանդ կին սերունդից, տասնեակ հազարներով քւեցին հարեմներում եւ անառականցներում փուելու համար, քաղաքակիրք ազգերի աչքին առջեւ:

ՍՏՈՐԾԻՆԳ. Շվ.— Նորվեգիայի մէջ պարլամենտ, — ժողովրդական ներկայացուցիչների ժողով, որը ներկայացնում է Վերին եւ Ստորին պալատներ: Ստորին պալատում օրինազիծներ են առաջարկուում, ֆնանսներում եւ Վերին պալատին ներկայացնում: Վերջինը հաստատում է կամ մերժում:

ՍՏՈՒԴԻՕ. Լտ.— 1) Նկարչի, արձանագործի կամ արևստագէտի աշխատանոց. 2) Շարժապատկերի աշխատանոց:

ՍՏՐԱՏԵԳԻԱ. Ցն.— Ռազմագիտուր եան նիւդ, որը կայանում է բանակի տարրեր մասերի յարմար դասաւորման մէջ, սկսւելիք զործողուրիւնը վարելու համար:

ՍՏԵՆԱՐԻՍՏ. Լտ.— Շարժապատկերի համար հեղինակուրիւն գրող:

ՍՏԵՆԱՐԻՕ. Լտ.— Շարժապատկերի համար գրւած հեղինակուրիւն:

ՍՏԵՆԱՐԻՈՒՄ. Լտ.— Թատրոնական թեմի նկարիչ-գարդարող:

ՍՅԻԼԱ. Եհ ԽԱՐԻԲԴԱ, Ցն.— Զբային վտանգաւոր յերանել Սիցիլիայի նեղուցի մէջ, Խոալիայում: Նաւերը

յանախ ենքակայ են կամ յօրանիքի մէջ խորտակւելու եւ կամ Սցիլլա անունով ժայռին զարկւելու եւ փըրւելու վտանգին. այդտեղից ծագումն առաւ ասացւածքը Սցիլլա եւ Խարիբդա — «Երկու կողմն էլ կործանում» իմաստով :

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ., կտ.— 1) Ընկերային, հանրային, հասարակական, հանրութեան վերաբերեալ. 2) Ընկերվարական (Սոցիալիստական). 3) Սոցիալական գիտութիւններ — մարդկային ընկերութեան մէջ գոյութիւն ունեցող փոխ-յարաբերութիւնները, նրանց հետեւողական զարգացման փուլերն ու ազդեցութիւնները հասարակագիտական, տնտեսական եւ բաղաբական տեսակետով ուսումնասիրող գիտութիւններ :

ՍՕՑԻԱԼԻԶՄ., կտ.— Ընկերվարութիւն.— տնտեսական-բաղաբական գիտութիւն, որը ֆնինելով տիրող իրաւակարգի ծագման, զարգացման եւ նրա ստեղծած չարիքների պատճառները՝ ձգում է տապալելու այդ իրաւակարգը. ստեղծելու համար կենցաղի արդար եւ տանելի պայմաններ աշխատաւոր զանգւածների համար, վերացնելու դասակարգային շերտաւորումները եւ հաւաքական աշխատանիքով ստացւած արդիւնքը բաժնելու բուն աշխատող տարրերին: Ճնշողի եւ ճնշւածի, հարուստի եւ ընշագուրկի միջեւ տիրող փոխ-յարաբերութիւնները դարեր առաջ զբաղեցրած են այլեւայլ ցեղերի խորհող մըտներին: Նրանցից հարիւրաւորները արտայայտած են օրինականացած անարդարութիւնների դէմ իրենց հասկացած եղանակով, եւ միջոցներ առաջադրած են ճնշւած եւ կեղեւած զանգւածների տառապանքը մեղմացնելու համար: Նախաքրիստոնէական ըրջանի յոյն փիլիսոփանների կամ միջնադարեան «մարդասէր» կոչւած մտաւորական-

ների տեսութիւնները դասակարգային ամարդարութիւնների դէմ, նիւտ է, չկարողացան գոյութիւն ունեցող պայմանների վերացման արմատական լուծումը գտնել, սակայն նրանք մեծ չափով պատճառ եղան մտքերի խմբում ստեղծելու եւ աստիճանաբարար պատրաստելու զանգածները ապագայ նւահումների համար : Աւոտպիստ (Երազատես) նամշցւած մի օարք գրողներ, ինչպէս Թամբու Մօր, Էտիկն Կարէ, Շառլ Ֆուրիէ, Սէն-Սիմոն, Ռարիտ Օուէն, Բելլամի եւ ուրիշներ այլիւայլ գրական գործերով անկարող եղան որեւէ դրական յեղաբարձում ըստեղծելու մարդկային հասարակութեան մէջ : Բայց անուրանալի է իրենց ազդեցութիւնը իրենց ժամանակակիցների մտքերի վրայ :— Սօցիալիզմը զիտական հիմների վրայ դրւեց Կառլ Մարքսի եւ Ֆրիդրիխ Էնգելսի սնորիիւ, որոնք ներկայ ընկերվարական հոսանքների մեծագոյն ուսուցիչներն են նաևաչւած (Տե՛ս Մարքսիզմ, Կոմունիզմ) : Մարքսիստ ընկերվարութիւնը ձեւաւորւած համայնավարութեան հիմնաֆարն է ժամանակակից համայնավարական զանգածների համար, որի գործնական իրականացումը ներկայիս տեղի է ունենում և . Միութեան սահմաններում : Այդ երկրի մէջ տիրող պետական վարչածեւը կառուցւած է համայնավարական սկզբունքների վրայ : Սօցիալիզմը, սակայն, յանախ ունի իր հատւածային բաժանումները, որոնք ընդունած են այլիւայլ երկրներում տարբեր գումարութիւններ, նոյն իսկ այդ անւան տակ հասկացւում է բացարակ սպասարկութիւն դրամատիրական դասակարգին, ի վճառ այն տարբերի, որոնց շահերի պաշտպանութեան անունով նրանք երապարակ իշած են :

ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ, Լտ. Յն.— Քաղաքական կուսակցութիւն, հիմնաւած Գերմանիայում 1864 թին:

ՍՕՑԻԱԼ-ՑԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ. — Քաղաքական կուսակցութիւն, հրապարակ իշած գլխաւորաբար գիւղացիութեան տահերի պատվանութեան անունով։ Վտիտ եւ անկենդան հոսանք լինելով՝ չկարողացաւ արմատներ նետել նոյն իսկ հողագործական լայն զանգւածներ ունեցող երկրներում։ ԶԵԽՕ-ՍԼՈՎԱԿԻԱՅԻց զատ ամեն երկրում գրեթէ գոյութիւնից դադրած է։

ՍՕՑԻՈԼՈԳԻԱ, Լու. Յն. — Սօցիալական հարցերն ու սումմախրող գիտութիւն։

ՍՖԵՐԱ, թ. — 1) Որեւէ գումարի արտաքին մակերեւոյթ։ 2) Երկրի կամ մի մոլորակի արտաքին մակերեւոյթ։ 3) Մի մոլորակի ըրջանաձև ուղղութիւն։ 4) Անհատի գործնէութեան ըրջան։ 5) Որեւէ ըրջան, օրինակ դիւանագիտական, գիտական եւ այլն։

ՍՖԻՆՔՍ, Եգ. Յն. — Եգիպտոսի մէջ բազմարիւ ժարեղն արձաններ, առիւծի մարմնով, կնոջ կրծքով եւ գլխով, որոնց մէջ ամենից մեծն է Գիգէի մօտ անապատի մէջ հսկայ Սֆինքսը։ Սֆինքսն արեւի խորհրդանիւս էր իին Եգիպտացիների համար։ Յոյները Սֆինքս անւան տակ հասկանում էին մի օտարոտի նիւադ, առիւծի գլխով, տան մարմնով, կնոջ կրծքով եւ արծիւի քեւերով։ Ճամբարդներին կանգնեցնում էր, համելուկներ առաջարում եւ յարմար պատախան չտողին՝ լափում։ Այսպէս՝ Էդիպ քագաւորին հարցրեց. — «Այդ ի՞նչ կենդանի է, որ առաւոտը չորս ոտքով է ժալում, կէսօրին երկուսով, իսկ իրիկումը երեքով։» Էդիպ պատախանեց. — «Մարդը, որը մանկութեան օրերում չորս ոտքով է սողում, եր մեծանում է, երկու ոտքերով է ըրջում, եւ ծերութեան ժամանակ՝ փայտով է ման զալիս։»

Ա.

ՎԱՐԴԱԲՈՆ, Լու. — Թափառաքրջիկ:

ՎԱՐԴՈՆԵՑԿԱ, Ֆր. — Ապրանքատար փոքր կառք:

ՎԱԼՀԱԼԱ, Շվ. — Սկանդիմաւական ցեղերի գերազայն աստւած Օդինի պալատ, անդրգերեզմանային աշխարհում, ուր հիւրասիրում էին առաքինի մարդկանց եւ մեռած հերոսների հոգիները գարեջրով եւ կաքնուկով:

ՎԱԼԻ, Թթ. — Թիւրքիայում — նահանգապետ:

ՎԱԼԻԻՏԱ, Խո. — 1) Թղրադրամի եւ արծարի օրւայ արժեքը ոսկիով. 2) Մուրհակով տրւած գումար. 3) Դըրամ:

ՎԱԼԿԻՐԻ, Շվ. — Սկանդիմաւական ցեղերի (Շվեյցարի, Նորվեգացի, Ֆինլանդացի), դիցարանութեան մէջ գեղանի յաւերժահարսներ, որոնք ծառայում էին հերոսներին անդրգերեզմանային աշխարհում:

ՎԱԼՊՈՒՐԳԵԱՆ ԳԻՇԵՐ, Գր. — Մայիս մէկի գիւեր Գերմանական աւանդութեամբ, երբ չար ոգիներն ու վը-հուկները հաւաքում են Բրոկին լեռան վրայ խնջոյք սարքելու եւ պարելու, մեծ սատանայի — Մեֆիստոփելէսի ռուրջը:

ՎԱԼՍ, Ֆր. — Պարի մէկ տեսակ, երբ պարող զոյզը դառնում է ինքն իր ռուրջը:

ՎԱԿԻՆ, Տե՛ս Բաֆոս:

ՎԱԿԻԱՆԱԼԻԱ, Յն. — 'ի պատիւ Վակլիսի (Բաքոսի) սարքւած հանդէսներ իին Յունաստանում, զինարքութով եւ պատ Վայելֆներով:

ՎԱԿԻԱՆՈՒՀԱ, Յն.— 1) Վակյսի մեհեանի քրմուհի, մշտագւարք անառակուիլ. 2) Վաւառու կին:

ՎԱՄՊԻՐ, Լտ.— Հարաւային Ամերիկայում չղջիկի մէկ տեսակ, որը բնած մարդու կամ կենդանու վրայ քառելով, քամում է նրա արիւնը, մէկ կողմից քեւերով իր զսիին հովհարելով, քունը հանելի դարձնելու համար: Փոխարերական իմաստով՝ Վամպիր մականունով այն կիսերին են կոչում, որոնք նիւթապէս կործանում են իրենց ամուսիններին կամ սիրահարներին, կամ նրանց քւառական պատճառ են դառնում սիրոյ մէջ դաւանանութեամբ եւ անառակութեամբ:

ՎԱՆ. Հոլլանդացիների մէջ՝ անւան առջեւը դրւող մակդիր, որը մատնանում է անձի ազնւական ծագումը, — աղաւաղում Գերմանական «Փօն» մակդիրի, նոյն իմաստով:

ՎԱՆԴԱԼ, Յտ. Ա.— Գերմանական վայրագ ցեղերի ընդհանուր անուն, որոնք Խոտալիան հեղեղեցին հինգերորդ դարում, եւ քարդից ու կողոպուտից զատ՝ աւերելով ու կործանելով արևստի ու քաղաքակրթութեան ամեն յիշատակարաններ: Վանդալ բառը հոմանիւն եղաւ կուտ, կոպիտ եւ վայրենի անձի, որը տղիտարար ոչընչացնում է քաղաքակրթական արժեկ ունեցող ամեն բան:

ՎԱՆԴԵՍԱ, Թր.— Թրանսիայի մի գաւառի անուն, որի բնակիչները տղիտարար ապստամբւեցին Մեծ Յեղափոխութեան դէմ, 1793 թւին:

ՎԱՆԻԼԱ, Սպ.— Արեւադարձային բոյսի մէկ տեսակ, ծզնօտածեւ ոստերով, չափազանց բուրումնաւէտ. զործ է ածում անուշեղէնի եւ խմիչքների մէջ:

ՎԱՍՍԱԼ (Կելտացոց լիգով՝ հողատէր).— Եւրոպա-

յի կենտրոնական եւ Արևմտեան երկրներում Միջին Դարերի աւատապետուրեան (Ֆեոդալիզմի) որչամում կապալառու հողատէր: Երկրի հողերի տէրը միապետն էր — քաջաւոր, իշխան կամ դուքս: Նա իր հողերը տալիս էր վարձու վասարաներին, վերջինները երկրորդական վասարաներին, եւ այդպէս յաջորդաբար: Հողը մօակող հողագուրի գիւղացիուրիւնը նորտական վիճակում գտնւելով՝ ամեն կերպ ենթակայ էր իր անմիջական վասարի կեղեցումին եւ բռնուրեան, ոչ մէկ ձեւով պատպանւած չլինելով: (Տե՛ս Ֆեոդալիզմ):

ՎԱՏԻԿԱՆ, Յտ. Ա.— Հոռմի վատիկան բլուրի վրայ համանուն պալատ, կարուիկ եկեղեցու պետ Պապի պալատով, կրօնական հաստատուրիւնների ամեն կարգի վարչուրիւններով, Սր. Պետրոսի հոյակապ եկեղեցիով, հարուստ մատենադարանով, իին ձեռագիրների մեծ մասամբ տակաւին չքննւած մեծարժէք հաւաքածուներով եւ Բելվեդերեան հոչակաւոր քանօքարանով: Վատիկանի չենքերի ցանցը բռնում է մի քանի մզոն տարածուրիւն, 20.000-ից աւելի սենեակներով եւ օֆեղ սրահներով: Իր պատերն ականատես եղած են դաժան եւ արիւնու տեսարաններին, անցեալի մըռուրեան մէջ ծածկւած: Խտալիայի եւ քերեւս ամբողջ աշխարհի ամենամեծ անառականցն եղաւ քաջամարիւ պապերի օրով: Ներկայիս Փաքստ դիկտատոր Մուսուլմանիի օմորիիւ «անկախ պետութիւն» հոչակւած է, կարուիկուրեան հմայքը գօրացնելու համար եւ իբր գօրավիզ ծառայեցնելու տիրող բռնապետուրեան:

ՎԱՐԻԱՆՏ. Լտ.— Որու դէպէի կամ նիւթի ուրջ զոյուրիւն ունեցող մի քանի զրքերից կամ պատմութիւններից իւրաքանչիւրը. իբր առանձին ամբողջուրիւն:

ՎԱՅԳ, Ար.— Ներկայ Եզիպտոսում ազգայնական կուսակցութիւն:

ՎԵԴԱՆՏԱ, Սս.— Հնդկական կրօնա-փիլիսոփայական աշխարհայեացք, որի համաձայն մարդ էակի գոյութեան նպատակը գիտակցութեան բարձրագոյն աստիճանին հասնելուն մէջն է, եւ դրա միջոցը առաքինի եւ մաքուր կենցաղն է միայն: Մարդկային հոգին յաւիտենական է, եւ չի կարող երբէք անհետանալ. նա մի մասնիկն է տիեզերական համապարփակ հոգեկան էութեան, յաւերժական եւ անվախտան: Մարդը մեռնելով իր հոգին չի մեռնում, այլ զնում է փոխանցւելու ուրիշ էութեան, եւ այդպէս շարունակ. մինչեւ որ բոլորովին բիւրեղանայ եւ վերադառնայ դէպի այն յաւիտենական ազրիւրը, որից ծագած է:

ՎԵԴԱՆԵՐ, Սս.— Հնդիկ Բրահմինական կրօնի ուսուցմունիքը պարունակող սրբազն գրքեր: Նրանց մեկնարանութիւնների շարքը կոչւում են Պուրանաներ եւ Սուտրաներ:

ՎԵԶԻՐ, Ար.— Բարձրագոյն պաւումնաների ընդհանուր անուն, Մահմեդական երկրներում: Նախարար: Մեծ Վեզիր — նախարարապետ. միապետի փոխանորդ:

ՎԵՆԴԵՏՏԱ, Խու.— Արեան վրէժխնդրութիւն Խուլացիների մէջ. արեան փոխարէն արիւն:

ՎԵՆԵՐԱ, Տե՛ս Ավրոդիտէ:

ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ.— Վեներայի (Վենիւս-Ավրոդիտէ) ախտեր, սեռային հիւանդութիւնների ընդհանուր անուն:

ՎԵՍՏԱ, Խու.— Հռոմէական տնային պահապան աստւածութի, պաւուպան ամուսնութեան եւ ընտանեկան երջանկութեան:

ՎԵՍՏԱԼԵԱՆ ՔՐՄՈՒՀԻՆԵՐ. — ՀԱՌՄԵԼԱԿԱՆ ՎԵՍՏԱ
ԱՍՏԱՃՈՒԽՈՒ ՄԱՅԱՐԻ ՖՐՄՈՒԼԻԲՆԵՐ: ԸՆԹՐԱՊՈՄ ԷՒԹ յա-
ճախ 6-10 ՄԱՐԵԼԱԿԱՆ ԽԱՍԱԼՈՒՄ յԱՅՄԵՆԻ ընտանիքներից եւ
երդում էին կոյս մնալու իրենց պաւունավարութեան
ԺԱՄԱՆԱԿԱԾՔԱՆՈՒՄ որը տեւում էր 30 ՄԱՐԻ: Պաւունը
լրացնելուց յետոյ իրաւունք ունի ամուսնակալու: Իրենց
պաւուն էր նաեւ տանարում աստւածուին նւիրած
ասրուեանի մէջ վառող կրակը անձէջ պահելու հոգա-
տարութիւնը: Անփոյք ֆրմուլին ենթակայ էր ողջ բաղ-
ւելու պատժին: Նոյն պատիժն էր ստանում նաեւ իր ամա-
րատութեանը հոգ չտանող ֆրմուլին: Այդ վերջին յան-
ցանքը սակայն բացառիկ մէկ դէպք էր, եւ ՀԱՌՄԵԼԱԿԱՆ
ԽԱՆՔԱՎԵՏՈՎԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԱԿ, ամբողջ վեց-եօր-
դար, նման դէպքեր հազիւ մէկ-երկու անգամ տեղի ու-
նեցան: Կայսրութեան օրջանում, սակայն, երբ ապա-
կանութիւնը համակեց բնակչութեան մեծագոյն մասին՝
ՎԵՍՏԱԼՈՒԼԻԲՆԵՐ եւս զերծ չմնացին ընդհանուր ցոփու-
թիւններից: Բնակչութեան յարգանքն այնքան մեծ էր ի-
րենց հանդէպ, որ օրէնքը նոյն իսկ ընկնւում էր իրենց
հմայքի առջեւ. — Երեւ պատահէր որ ՎԵՍՏԱԼԵԱՆ մի
ֆրմուլի փողոցից անցած միջոցին հանդիպէր մահան
դատապարտած մի ոնքագործին, դէպի կառափնարանը
առաջնորդւած վայրկեանում՝ իր մատի մէկ շարժումը
բաւական էր եղենագործը ազատ արձակելու համար:

ՎԵՍՏԵՐՆԻԶԱՑԻԱՆ, Ամ. Լու. — Արեւմտականացում.
արեւմտեան (Եւրոպական) ժաղաքակրթութեան ազդեցու-
թեան ենթական:

ՎԵՏԵՐԱՆ, Լու. — 1) Մառայութիւնից արձակւած
զիմւռական կամ ժաղաքացիական պաւունեայ. 2) Հին
գործիչ:

ՎԵՏԵՐԻՆԱՐ, Լտ.— Անասնաբոյժ:

ՎԵՏՕ, Լտ.— Լատիներէն — «Արգիլում եմ».— այդ բառով Հռոմի տրիբունները (ժողովրդական ներկայացուցիչները) բեկանում էին ծերակոյտի (Սենատի) կողմից հաստատած որեւէ օրէնք, եթէ համամիտ չգտնելին: Ներկայ սահմանադրական երկրներում միապետը օգտընում է վետոի իրաւումքով, ինչպէս նաև նախազարդ համբայետութեան մէջ:

ՎԵՏԻՆ ՊԱԼԱՏ.— Սահմանադրական երկրներում օրէնսդրական մարմինը բաղկացած է Վերին և Ստորին Պալատներից: Անգլիայի մէջ Վերին Պալատը կազմում է լորդերի ժողովը — բարձր ազնւականութիւնը, Ստորին Պալատը ժողովրդական ներկայացուցիչների ժողովը (պարլամենտը): Համբայետութիւնների մէջ երկու պալատների ընտրելիններն են ժողովրդի — բնակչութեան կողմից են բնէարկուում:

ՎԵՐՍԱՅԻ, Յտ. Ա.— Ֆրանսիայի միապետ Լուի ԺԴԻ-ի կողմից կառուցած հոյակապ պալատ, Փարիզից 18 կիլոմետր հեռու: Պատմական մեծ դէպֆերի կենտրոնավայրն եղաւ: Վերսայլում ստորագրւեց վերջին համաշխարհային պատերազմից յետոյ խաղաղութեան դաշտները Գերմանիայի հետ Յունիս 28-ին, 1919: Անւանի է իր բանգարանով:

ՎԻԲՐԱՑԻԱՆ, Լտ.— 1) Օդի քերեւ տատանում որեւէ առարկայի շարժման հետեւանելով. 2) Երգչի ձայնի բրբռում՝ երգած ժամանակ:

ՎԻԶԱ (Վիզէ), Լտ.— Մի պետութեան հիւպատոսի կողմից նանապարհորդին տրւած արտօնութիւն՝ իր ներկայացրած երկիրը մտնելու համար:

ՎԻԼԱՑԵԹ, Թր.— Թիւրքիայում՝ նահանգ:

ՎԻՇՈՅՈՒԹԻՒՆ. Լտ. Յն.— Ատելուրիւմ, գգւանք՝ զինու եւ ոգելից ըմպելիքների դէմ:

ՎԻՇՆՈՒ. Սս.— Հնդիկ Բրահմինական կրօնի երրորդուրիւնը կազմող աստւածներից երկրորդը:

ՎԻՇԱԼԻԶՄ. Լտ.— Բնախօսական տեսակէտ՝ թէ մարդկային բռլոր Փիզիքական գործառնուրիւնների մղիչ ոյժը մարմնի մէջ պահւած կենսունակուրիւնն է:

ՎԻՇՏՈՍԻ ՊԱՐ. Յտ. Ա.— Հիւանդուրիւմ, երբ ենթական ջղային ուժգին ցնցումներ է ունենում — դէմքի ծամածուրիւն, կազմւածքի դողդողում եւ այլն: Միշին դարերում կարոլիկ վարդապետները համոգի էին հաւատացեալներին թէ այդ կարգի հիւանդները Սուրբ Վիտոռոսին աղօրելով միայն կարող էին բուժուել: Հիւանդուրիւնը Սբ. Վիտոռոսի պար անունը ստացաւ:

ՎՈՒԱՆ, ԾՎ.— Երրոպայի Հիւսիսային ժողովուրդների եւ Գերմանացիների հայր աստւած, պատերազմի պատոպան:

ՎՈՒԵԿԱՆ (ՎՈՒԵՎԻԼ), Ֆբ.— Զաւետու մէկ կամ երկու արարւածով:

ՎՈՒԿԱՆ, Ռս.— Ռուսական օդի:

ՎՈՒ ՍՏՐԻՏ. Ան.— «Պատի փողոց» — Նիւ Եորքի եռչակաւոր փոքր., կարմ փողոց, ուր կենտրոնացած են սակարանն (Բորսա — Բիրժա), եւ արժեքուրդերի առուժախով զրազուղ մեծ ընկերուրիւնների գրասեննեակները — Ամերիկայի ժողովրդի ճակատագիրը իրենց նաև կերպի մէջ պահող:

ՎՈՒԼԳԱՐ, Լտ.— Ամբոխային. կուտ. գևեհիկ:

ՎՈՒԼԿԱՆ. Լտ.— 1) Հրաբուխ. — ստորերկրեայ կրպակներ դուրս ժայթ-քող լեռ. 2) Կրակի եւ մետաղների աստւած Հռոմէական դիցարանուրեան մէջ, իւպիտերի եւ

իւնոնյի (Զեւս եւ Հերա) որդի, Վենիւսի ամուսին։ Երբ ծնւեց, մայրը տեսաւ որ անմոռնի երեւոյք ունէր եւ Ռլիմպոս լեռան կատարից վայր նետեց նրան։ Մանուկ Վուլկանը ընկաւ Լեմնոս կղզու վրայ։ Երբ մեծացաւ, գնաց Սիցիլիա, ուր էտնա հրարուխի մէջ դարրնոց հաստատեց, իրեն օգնական առնելով Կիկլոպներին — միակամի հսկաներին։

S

ՏԱԲՈՐ, Թ.ր. — 1) Թափառական գնչուների ժամանակաւոր կայան։ 2) Գնչուների մի ժամի ընտանիքներ, միասին հաւած։

ՏԱԲՈՐԻՑՆԵՐ, Յտ. Ա. — Բոհեմացի (Չեխ) հռչակաւոր բարենորոգիչ Յովլիաննես Հուսի հետեւորդներ, որը Հռոմի Ալեքսանդր Հինգերորդ պապի հրամանով խարոյկի վրայ ողջ-ողջ այրւեց, 1415-ին։ Տարորիտները իրենց մեծ ուսուցչի նահատակութիւնից յետոյ՝ երկար պատերազմներ մղեցին կարողիկ միապետականների դէմ, որոնք տեւեցին մինչեւ 1471 թ.։ Տարորիտները (Հուսեանները) ժաղաքական համոգումներով համայնավար հանրապետականներ էին։

ՏԱԲՈՒԻ. — Աւստրալիական վայրենի ցեղերի՝ Պապուաների մէջ բուրմի կողմից «արգելվ» որեւէ առարկայի կամ անձի վրայ։ Տարուին ենթարկւած իրը կամ անձը անմերձենալի է, նոյն իսկ վրան նայելը յանցանք է։

ՏԱԼԱՆՏ (Տաղանդ), Լտ. — 1) Գիտութեան, գրականութեան կամ արևեստների մէջ անհատի յայտնաբերած մեծ կարողութիւն. ձիրք. (Հանճարը տաղանդի գերագոյն աստիճանն է, հազարէպ, բացառիկ մեծութիւնը

ցուցադրող). 2) Հին Յունական արծարի դրամական չսփ, 26 կիլո ծանրութեամբ, մօտ \$1200, խոկ ոսկիով՝ տասն անգամ աւելի:

ՏԱԿԾ., Լտ. Յն.— 1) Վարւելակերպ. հասարակութեան մէջ վայելուչ, պատշաճ ձեւով պահելու եւ յարմար լիզուով խօսելու ձիրք. խելացի, հեռատես կերպով գործելու կարողութիւն. 2) Երածոտութեան մէջ՝ ձայնական չափ, ոիր-մ:

ՏԱԿՏԻԿԱ., Յն.— 1) Ռազմագիտութեան մէջ ոյժերը համախմբելու, դասաւորելու եւ զործողութեան մղելու ևստուրի իւն. 2) Կուսակցական պայքարի մէջ հակառակորդ հոսանքը հաւեյարդարի ենթարկելու նարպիկ եւ խելացի եղանակ: 3) Խոհեմ, հեռատես վարւելակերպ:

ՏԱՄՄԱՆԻ ՀՈԼ (Թէմմընի Հոլ), Յտ. Ա.— Նիւ Եորդի մէջ ժաղաքական բախտախնդիրների կազմակերպութիւն, որը կարողացած է գրաւել Գեմոկրատ կուսակցութեան դեկը, յանախ ամբողջ երկրի նակատագրի վրայ ազդելով: Կենտրոնավայրն եղած է ժաղաքական դիմակի տակ անձնական շահերը հետապնդող ամեն կարգի մուրտարքերի:

ՏԱՅԳԱ., Մն.— Սիրիրի ընդարձակ ամտաների ընդհանուր անուն:

ՏԱՆՏԱԼ., Յն.— Լիդիացոց քագաւոր՝ Յոյն դիցարանութեան մէջ, որը ասուածների ամենազիտութիւնը հասկանալու համար. իր հարազատ տղային Պելոպսին մորքեց եւ նրա միսերից կերակուր պատրաստելով՝ ասուածներին հիւրասիրեց: Զեւսը դժոխքը նետեց նրան:

ՏԱՎԱՐԻՇՉ, Ռս.— Ընկեր:

ՏԱՎՏՈԴՐԱՄՄԱ., Յն.— Բանաստեղծութիւն, որի մէջ ամեն տող սկսում է նոյն տառով:

ՏԱՎՏՈԼՈԳԻԱԸ., Յն.— Նախադասութեան մէջ միեւնյն բառի յանախակի կրկնութիւն:

ՏԱՏՈՒՑ (Տահիտի վայրեմիների լեզուվ) .— Դէմքի եւ մարմնի մորքու վրայ գունագեղ նկարներ զծելու սովորոյք, անջնջելի ներկերով: Սովորոյքը տարածւած է նաև սպիտակ ցեղերի քերեւ դասերի — մասնաւորաբար նաւաստիների, կրկեսային միմուների եւ խեղկատակների մէջ :

ՏԱՐԱՆ., Յն.— Յոյների եւ Հռոմէացիների պատերազմական հսկայ մեքենայ, պատարած քաղաքի պարիսպները քանդելու համար: Հին Հայերը «Ճի» անուն էին նըրան տալիս, ումանի «Էւ»:

ՏԱՐՊԵՑԵԱՆ ԲԼՈՒԾ, Յտ. Ա .— Պատմական Հռոմում հսկայ բլուրի անուն, որի ետեւը անդնդախոր մի ձոր էր բացւում: Մահւան դատապարտւած ոճրագործներին բըլուրի վրայից նետում էին վար, ժայռերի վրայ ջախչախւելու:

ՏԱՐՏԱՐՈՍ., Յն.— Յոյն դիցաբանութեան մէջ դըժոխ, նոյնը Հադէս:

ՏԱԾ, Զն.— Տիեզերքի արարիչ մեծ աստւած՝ Զինական դիցաբանութեան մէջ :

ՏԵԼԵՊԱԼՏԻԱԸ, Յն.— Երկու անձերի միջեւ մտերի եւ զգացմունքների փոխանակութիւն, առանց իրար հետ խօսելու, յանախ իրարից հարիւրաւոր մղոններով հեռու եղած վիճակում:

ՏԵԼԵՍԿՈՊ, Յն.— Հեռադիտակ: Հռչակաւոր իտալացի աստղագէտ Գալիլեյի (1564—1642) հնարած գործիք՝ աստղերը դիտելու եւ ուսումնասիրելու համար: Հեռադիտակի գիտը տեղի ունեցաւ 1609 թին, եւ Գալիլեյի պարզ գործիքի փոխարէն ներկայ աստղագէտներն իրենց

տրաժադրութեան տակ ումնեն վիրխարի հեռադիտակներ, որոնք հնարաւորութիւն են սուեղծում քափանցելու անսահմանութեան հեռաւոր հորիզոններ եւ ուսումնասիրելու միջինաւոր մոլորակների շարժումները, հեռաւորութիւնը, մեծութիւնը եւ այլն։ Աշխարհի մեծագոյն հեռադիտակը Քալիֆորնիայի Վիլսոնի լեռան աստղագիտական դիտարանումն է, Լոս Անջելըսի մօտ, 100 մատնաչափ տրամագծով։ Նոյն հաստատութեան համար Ծերկայիս պատրաստումն է մի նոր հեռադիտակ, 200 մատնաչափ տրամագծով. \$12.000.000 արժողութեամբ, որի ընորհիւ կարելի պիտի լինի երկինքը շատ աւելի մատից ուսումնասիրել։

ՏԵՂԵԿԱԶԻԱ., Յն.— Հեռազրարելով պատկերը փոխանցելու արիեսուն։

ՏԵԽՆԻԿԱ., Յն.— 1) Արիեսունի որեւէ նիւղի մէջ պէտք եղած ձեւերի գործադրութիւն։ 2) Արդիւնաբերական արտադրութիւնների մշակման ձեւ։ Վիճակ. քարձորութիւն։

ՏԵԽՆԻԿՈՒՄ., Յն.՝ Լու.՝ Արևստագիտական դպրոց։

ՏԵՄԲՐ., Ֆր.՝ Երգի կամ նւազի մէջ ձայնական ուռույն դրում։

ՏԵՄՊ., Խու.՝ Ուժգնութիւն. քափ։

ՏԵՄՊԵՐԱՏՈՒՏԻՒՆ., Լու.՝ Անհատի մտաւոր եւ զգայնական աշխարհը կազմող ներքին յատկութիւնների ամբողջութիւն։

ՏԵՐՊՍԻԳՈՐ., Յն.— Պարի մուսա՛ Յոյն դիցարանութեան մէջ։

ՏԵՆԴԵՆՑԻԱ., Ֆր.՝ 1) Անհատի ներքին մզումների եւ ձգումների արտայայտութիւն. 2) Գրակամութեան մէջ՝ հեղինակի միտում իր գործը որու նպատակին ծառայեցնելու համար։

ՏԵՇԻՑՆՑԻՈԶ, Ֆր.— Դիտումնաւոր, որու նպատակ հետապնդող:

ՏԵՇՈՐ, Խոտ.— Երգեցողութեան մէջ տղամարդու բարձր, զիլ ձայն:

ՏԵՎԾՈՆ, Դր.— Գերման ցեղերի պատմական անուն:

ՏԵՐՄԻՆ, Լտ.— Գիտութեան, արևստների, գրականութեան եւ բաղաքականութեան մէջ որու երեւոյրմերն ու իրերը բնորոշող բառ, անուն:

ՏԵՐՄԻՆՈՂՈԳԻԱ, Լտ. Յն.— Տերմինների ուսումնասիրութիւն:

ՏԵՐՄԻՏՆԵՐ, Լտ.— Աֆրիկայի մէջ սպիտակ, խուռոր մրջուններ, համայնական կազմակերպութեամբ, միլլիոններով միասին ապրով: Մղոնների երկարութեամբ ստորերկրեայ Աերքնուղիներ են փորում, յարձակումներ գործելու կամ նամքորդելու համար: Փայտաշէն ամբողջ էկմիեր կարով են ուտելով ոչնչացնել: Գիւատիչ տերմինների մի սերունդ եւս գոյութիւն ունի, որոնք կարող են յանկարծակի յարձակումով ըսմեցնել ամենից խուռոր կենդանիներին, ծի, առիւծ, վազք եւ այլն եւ մէկ երկու ժամւայ մէջ ուտել, ոսկորները միայն բողնելով: Վայրեթի ցեղերի մէջ մահապատժի մէկ ձեւն է՝ դատապարտըածը տանել եւ կապւած վիճակում նետել տերմինների բոյնի վրայ:

ՏԵՐՄՈՄԵՏՐ, Յն.— Զերմաչափ:

ՏԵՐՐԻՏՈՐԻԱՆ, Լտ.— Որու հողամաս. երկրամաս:

ՏԵՐՐՈՐ, Լտ.— 1) Սարսափ. ահարեկում. 2) Քաղաքական սպանութիւն:

ՏԻՄՈԿՐԱՏԻԱ, Յն.— Հարստավարութիւն. հարստապետութիւն.— պետական վարչածեւ, որը գտնուում է հարուստ դասակարգի գերիւշանութեան տակ: Միացեալ

Նահանգները բացարձակ տիմոկրատիա են ներկայացնում։

ՏԻՊ, ՅԱ. — 1) Առարկաների մէջ՝ որու ձեւ, երեւոյք եւ բովանդակուրիւն. 2) Անհատների մէջ՝ ինքնայտուկ նկարագրի կամ երեւոյքի տէր. 3) Կենդանական աշխարհի մէջ որու տեսակին պատկանող. 4) Սովորական կենցաղի մէջ՝ արտառոց անձ, արտաքինով, շարժումնեւով կամ մտայնուրեամբ։

ՏԻՏԱՆՆԵՐ, ՅԱ. — 1) Ցոյն դիցարանուրեամ մէջ երկնելի եւ երկրի զաւակներ — արտասովոր հսկաներ, որոնիք աստուածների դէմ ապստամբւելով՝ լեռները լեռների վրայ սկսեցին դնել, մինչեւ երկինքը հասնելու եւ աստուածների զահերը խորտակելու մտքով՝ բայց Զեւսը ժանրահարեց նրանց եւ ոչնչացրեց. 2) Արտասովոր խոտոր, վիրխարի։

ՏԻՐԱԺ, ՖԲ. — 1) Վիճակահանուրիւն. 2) Գրքի, պարրերաբերքի կամ այլ երատարակուրեամ տպագրւած օրինակների ժամակ։

ՏՈԴԱ, ԼՄ. — Հոռմէտացիների գործածած արտաքին հագնելիք, սաւամի պէս սպիտակ ժաքան, որի մէջ փարքւում էր տողայի տէրը, նրա մէկ ծայրը ձախ ուսի վրայ նետենվ։ Ցոզա գործածելու իրաւունքը ստանում էին պատանեկուրիւնից երիտասարդուրեամ ըրջանը քեւակոխող Հոռմէտացիներ։

ՏՈՒՆ, ՅԱ. — 1) Խօսակցուրեամ մէջ որու քնոյք, օրինակ՝ բարեկամական, քշնամական, երկչուտ, համարձակ տոն եւ այլն. 2) Նկարչուրեան մէջ զոյների քնոյք. 3) Զայնի հնչական եղանակ. 4) Զայնի աստիճան։

ՏՈՒՆՆԵԼ (Թըմել), ԱԲ. — Ներքնուղի. ստորերկրեայ համապարի։

ՏՈՊՈԳՐԱՖԻԱ. Յն.— 1) Տեղագրութիւն.— որու երկրամասի աշխարհագրական նկարագրութիւն. 2) Քարտէսով պատկերացում:

ՏՈՏԵՄԻԶՄ.— Կենդանապատութիւն. Հին ազգերի, ինչպէս նաև ներկայ Մ. Նահանգների կարմրամոք Ճնդիկների բնապատական արտայայտութիւններից մէկը:

ՏՈՒ. Շվ.— Շվեդացիների, Նորվեգիների եւ Ֆինլանդացիների դիցարանական կայծակի եւ որոտի աստιած. Օդին հայր-աստուծոյ որդի: Տորը պատպան աստιածն էր բաղաբարք-ութեան:

ՏՈՐԵԱԴՈՐ, Սպ.— Սպանիական կրկէսում՝ ցուլամարտիկ:

ՏՈՐԻՆԵՐ, ԱՅ.— Անգլիական պարլամենտի ամենից պահպանդական, հնաւանդ անդամներ:

ՏՈՐՆԱԴՈ, Սպ.— Արեւադարձային կատաղի մրրիկ. որը յաճախ ամրող օքաններ է աւերռում:

ՏՈՐՅ.— Ճահիճային բոյսերի կարծրացած զանգւած, ընտիր վառելիք:

ՏՈՒՆԴՐԱ (Ֆինլանդերէն).— Հիւսիսային ցուրտ երկրներում յաւիտենապէս սառած օքաններ, ուր ոչ մէկ բուսականութիւն գոյութիւն չունի:

ՏՈՒՐՆԵ, Թբր.— 1) Ճամբորդութիւն. պտոյտ. 2) Դերասանների պտոյտ տարբեր բաղաբներում, ներկայացումներ տալով:

ՏՈՒՐՆԻՐ, Գր.— Միջնադարեան ասպետների հանդիսաւոր խաղեր եւ մրցումներ:

ՏՐԱԳԵԴԻԱ, Յն.— 1) Ողբերգութիւն — քատերական գրական հեղինակութիւն, լուրջ եւ ողբերգական բովանդակութեամբ. 2) Դժբախտութիւն. ցաւալի դէպք:

ՏՐԱԴԻՑԻԱ. Լտ. — Հինաւուրց սովորոյք. աւանդուրիւն. սերունդից սերունդ պահւած զաղափար. ապրելակերպ. ըմբռնումներ:

ՏՐԱԽՈՄԱ. Յն. — Աչքի կոպերի վարակիչ հիւանդուրիւն:

ՏՐԱԿՏ. Լտ. — ձանապարհ. փոստային նամապարհ:

ՏՐԱԿՏԱՏ. Լտ. — 1) Պետութիւնների միջեւ կնքւած տաեւտրական կամ բաղաժական դաշնագրութիւն. 2) Առու հարցի գիտական զրաւոր վերլուծում:

ՏՐԱՆՁԻՑ. Լտ. — 1) Մէկ երկրից միւսը նամբորդութիւն երրորդ երկրի միջով, առանց վերջինի մէջ կանգ առնելու. 2) Ապրանքի փոխադրութիւն նոյն ձևով:

ՏՐԱՆՍԳՐԵՍՍԻԱ. Լտ. — Ծովեզերեայ հողամասերի կլանում ծովի կողմից. հողային խաւերի վար իշնելու հետեւանենով: Հոլլանդիայի մէկ մասը ենքակայ է այդ վտանգին. բայց նրա առաջն առնւած է դարերի յամա աշխատանքով. կառուցած վիրխարի ամբարտակների ժնորհիւ:

ՏՐԱՆՍՊՈՐՏ. Ֆր. — 1) Ապրանք. այեւայլ մքերքներ. գինուրական պաշար. 2) Փոխադրութիւն. փոխադրական միջոցներ. 3) Պատերազմական նաւ՝ գօրքի եւ պաշարի փոխադրութեան համար:

ՏՐԱՆՍՖՈՐՄԻԶՄ. Լտ. — Բնագիտական տեսութիւն. որի համաձայն կենդանական եւ բուսական որու տեսակներն ենքակայ են ձեւափոխման. նոր տեսակներ առաջանելու. բնական ընտրութեամբ, միջավայրի եւ պայմանների ազդեցութեան տակ:

ՏՐԱՎՄԱՏԻԶՄ. Յն. — Վերքերի կամ ոսկորների փըրւելու հետեւանենով մարմնի մէջ առաջացած բարդութիւններ:

ՏՈՊՈԳՐԱՖԻԱ, ՅԱ. — 1) Տեղագրութիւն. — որու երկրամասի աշխարհագրական նկարագրութիւն. 2) Քարտէսով պատկերացում:

ՏՈՏԵՄԻԶՄ. — Կենդանապատութիւն. Հիմ ազգերի. ինչպէս նաև Աերկայ Մ. Նահանգների Կարմրամոք Հնդիկների բնապատուկան արտայայտութիւններից մէկը:

ՏՈՒ. Շվ. — Շվեդացիների. Նորվեգացիների եւ Ֆինլանդացիների դիցարանական կայծակի եւ որոտի ասուած. Օդին հայր-աստուծոյ որդի: Տորը պատպան ասուածն էր քաղաքակրթութեան:

ՏՈՒՀԱԴՈՐ, Սպ. — Սպանիական կրկէսում՝ ցուլամարտիկ:

ՏՈՒԻՆԵՐ, Ան. — Անգլիական պարլամենտի ամենից պահպանողական, հնաւանդ անդամներ:

ՏՈՒՆԱԴՈ, Սպ. — Արևադարձային կատաղի մրրիկ. որը յանախ ամրող ըրջաններ է աւերում:

ՏՈՒՅ. — Ճահճային բոյսերի կարծրացած զանգւած, ընտիր վառելիք:

ՏՈՒՆԴՐԱ (Ֆինլանդերէն). — Հիւսիսային ցուրտ երկրներում յաւիտենապէս սառած ըրջաններ, ուր ոչ մէկ բուսականութիւն գոյութիւն չունի:

ՏՈՒՐՆԵ, Թր. — 1) Ճամբորդութիւն. պտոյտ. 2) Դերասանների պտոյտ տարբեր քաղաքներում, ներկայացումներ տալով:

ՏՈՒՐՆԵՐ, Գր. — Միջնադարեան ասպետների հանդիսաւոր խաղեր եւ մրցումներ:

ՏՐԱԳԵԴԻԱ, ՅԱ. — 1) Ողբերգութիւն — քատերական գրական հեղինակութիւն, լուրջ եւ ողբերգական բովանդակութեամբ. 2) Դժրախտութիւն. ցաւալի դէպֆ:

ՏՐԱԴԻՑԻԱ, Լտ.— Հինաւուրց սովորոյք. աւանդուրիւն. սերունդից սերունդ պահւած զաղափար, ապրելակերպ, ըմբռմումներ :

ՏՐԱԽՈՄԱՅԱ, Յն.— Աչքի կոպերի վարակիչ հիւանդուրիւն :

ՏՐԱԿՑ, Լտ.— Ճանապարհ. փոստային ճանապարհ :

ՏՐԱԿՏԱՏ, Լտ.— 1) Պետուրիւնների միջեւ կմքւած տանեւրական կամ քաղաքական դաշնագրուրիւն. 2) Որու հարցի գիտական զրաւոր վերլուծում :

ՏՐԱՆՁԻՑ, Լտ.— 1) Մէկ երկրից միւսը ճամբորդաւրիւն երրորդ երկրի միջով, առանց վերջինի մէջ կանգ տանելու. 2) Ապրանքի փոխադրուրիւն նոյն ձեւով :

ՏՐԱՆՍԳՐԵՍՍԻԱ. Լտ.— Ծովեզերեայ հողամասերի կլանում ծովի կողմից, հողային խաւերի վար իշնելու հետեւանքով : Հոլլանդիայի մէկ մասը ենթակայ է այդ վտանգին. բայց նրա առաջն առնւած է դարերի յամառախատանքով, կառուցւած վիրխարի ամբարտակների ժնորիիւ :

ՏՐԱՆՍՊՈՐՏ. Ֆր.— 1) Ապրանք. այեւայլ մքերքներ. գինուրական պաշար. 2) Փոխադրուրիւն. փոխադրական միջոցներ. 3) Պատերազմական նաւ՝ զօրքի եւ պաշարի փոխադրուրեան համար :

ՏՐԱՆՍՖՈՐՄԻԶՄ, Լտ.— Բնագիտական տեսուրիւն, որի համաձայն կենդանական եւ բուսական որու տեսակներն ենթակայ են ձեւափոխման. նոր տեսակներ առաջացնելու, բնական ընտրուրեամբ, միջավայրի եւ պայմանների ազդեցուրեան տակ :

ՏՐԱՎԱՄԱՏԻԶՄ, Յն.— Վերքերի կամ ոսկորների փշրւելու հետեւանքով մարմնի մէջ առաջացած բարդուրիւններ :

ՏՐԵԼ. Յբ.— Երգի մէջ գեղգեղանք. դայլայլիկ:

ՏՐԵՍՏ (Թրըսր), Ան.— 1) Առեւտրական մեծ հաստատութիւն. 2) Մենատիրական նպատակով կազմակերպւած առեւտրական խուռոր ընկերութիւն:— Մ. Նահանգների արդիւնաբերութեան աւելի քան կեսը քրըսրների նամկերի մէջն է, որոնք քամում են բնակչութեան կենսութակութիւնը:

ՏՐԵՑԴԻՒՆԸՆ, Ան.— Անգլիայի գործաւորական արհեստակցական միութիւնների ընդհանուր անուն: Կազմակերպւած են 1825-ին, զուտ տնտեսական եւ փոխադարձ օգնութեան հիմների վրայ: Պահպանողական, քաղաքական ըմբռնումներից հեռու ընկած զանգրածներն են, խաղալիք եղած պետական տիրող հոսանքների ձեռքում, եւ խոչնդու են հանդիսանում ընկերային կենցաղի բարեմորոգչական, հիմնական բնոյք ունեցող բոլոր տարծումներին: Նոյնը Ամերիկայում:

ՏՐԻԲՈՒ (Տրիբուս), Լտ.— Մի քանի համարիւն ընտանիքների հաւաքոյք — ցեղ: Օրինակ՝ Վայրենիների որու ցեղ. Քիւրդ որու աշիրէք (ցեղ), Մամիկոնեան, Արծրունիների նախարարական ցեղ. Կազակների ցեղեր եւ այլն:

ՏՐԻԲՈՒՆ, Լտ.— 1) Ցեղի գլխաւոր. պետ. կառավարիչ. 2) Հռոմի մէջ Պլեբէյների (Տե՛ս Պլեբէյ եւ Պատրիկ) ներկայացուցիչներ, քւով երկու. 3) Հռոմէական բանակի մէջ գունդի (լեգէոնի) վեցերորդ մասի հրամանատար. 4) Ներկայիս տրիբուն բառի տակ հասկացուում է ժողովրդի համար գործող. 5) Հրապարակային ատեմախօս. 6) Բևմ, որի վրայից ատեմախօսը իր խօսքն է ուզգում ունկնդիր բազմութեան:

ՏՐԻԲՈՒՆԱԼ, Լտ.— 1) Դատական մարմին, բարձր

հեղինակաւորութեամբ. 2) Յեղափոխական տրիբունալ — յեղափոխութեան օքանում հաստատւած դատական արտակարգ իրաւունքներով ատեան:

ՏՐԻԽԵՆԱ, Յն.— Կենդանիների, մասնաւորապէս խոզի աղիքներում բոյն դնող միկրոբի մէկ տեսակ, որը մարդու ստամոքսի մէջ փոխադրւելով, կերած մսի միջոցով՝ կարող է մահացու լինել, եթէ անմիջապէս առջելը չառնել:

ՏՐԻԼՈԳԻԱ, Յն.— Երեք անջատ քատերական հեղինակութիւնների շարք, ներքին որու կապով իրար հետ:

ՏՐԻԾՈՆ, Յն.— Ծովերի աստւած Պոսէյդոնի եւ Ամֆիտրիդի որդի:

ՏՐԻՄՈՒՐՏԻ, Սս.— Հնդիկ Բրահմինական կրօնի երրորդութիւն — Բրահմա՝ արարիչ, ստեղծող աստւած, Վիշնու՝ պահպանող, եւ Սիվա՝ կործանող:

ՏՐԻՕ, Խտ.— Երեք անձից երգ կամ նւագ:

ՏՐՈԳԼՈԴԻՑ, Յն.— 1) Յոյների համոզումով անձաւներում ապրող կէս-մարդ կէս-կապիկ արարածներ. 2) Փոխարերաբար՝ վայրենի արարած. Ետամնաց. հինգած մտայնութեան տէր:
